

ԻՐԱՎԱԿԱՆ

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ԿԱՆԱՆՑ ԶԱՄԱՐ

ԵՐԵՎԱՆ 2013



ՀՏԴ 340:396.2(03)
ՊՄԴ 67.91g2
Ի 894

Երկրորդ՝ լրամշակված հրատարակություն

Գիրքը լույս է տեսնում «Միջազգային համագործակցության գերմանական ընկերություն» ՍՊԸ-ի (GIZ GmbH) ֆինանսական աջակցությամբ:

Այս հրատարակության մեջ առկա տեսակետները, եզրակացությունները և պարզաբանումները չպետք է ընկալվեն որպես «Միջազգային համագործակցության գերմանական ընկերություն» ՍՊԸ-ի (GIZ GmbH) կարծիք:

Հեղինակ-փորձագետներ՝

- Իոեն Սարգսյան*
- Լիզա Գրիգորյան*
- Մերի Խաչատրյան*
- Լիանա Մանուկյան*
- Գայանե Մարության*

Մասնագիտական խմբագիր՝ Արման Խաչատրյան


Ի 894 Իրավական տեղեկատու կանանց համար / Ի. Սարգսյան, Լ. Գրիգորյան, Մ. Խաչատրյան, Լ. Մանուկյան, Գ. Մարուքյան; Մասն. խմբ.՝ Ա. Խաչատրյան, 2–րդ՝ լրամշակ. հրատ.— Եր.: «Ժողովրդավարության և իրավունքի կենտրոն» ՀԿ, 2013.— 208 էջ:

Այս իրավական ուղեցույցի նպատակն է կանանց ծանոթացնել իրենց իրավունքներին և պարտականություններին, իրավունքների իրացման և պաշտպանության եղանակներին:

ՀՏԴ 340:396.2(03)
ՊՄԴ 67.91g2

ISBN 978–99941–2–846–4

© Ժողովրդավարության և իրավունքի կենտրոն, 2013
© «Միջազգային համագործակցության գերմանական ընկերություն» ՍՊԸ, 2013



ԱՌԱՋԱԲԱՆ

Ձեզ ներկայացվող իրավական ուղեցույցը ստեղծվել է՝ հաշվի առնելով կյանքում առավել հաճախ պարզաբանման կարիք ունեցող հարցերը:

Կյանքը բազմերանգ է, և, իհարկե, անհնար է բոլոր խնդիրներին անդրադառնալ այս իրավական ուղեցույցում և տալ պարզաբանումներ:

Այս իրավական ուղեցույցի նպատակն է օգնել կողմնորոշվելու առավել հաճախ հանդիպող իրավիճակներում:

Տարբեր տարիքային և սոցիալական խմբերի պատկանող կանանց հետ մեր տարիների աշխատանքը թույլ է տալիս եզրակացնել, որ այս իրավական ուղեցույցը կնպաստի իրավական կրթության ձեռք բերմանը, կօգնի ծանոթանալ համապատասխան օրենսդրությանը, իրավունքների և պարտականությունների իրացմանը:

Իրավունքների իրացման և պաշտպանության ոլորտում ցանկալի արդյունքի կարելի է հասնել միայն հետևողական և գրագետ քայլերի դեպքում: Իրավական ուղեցույցը տալիս է իրավական քայլերի իրականացման ճանապարհը և պարզաբանում հնարավոր հետևանքները:

Այստեղ պարզաբանվել են ընտանեկան, աշխատանքային և առողջության պահպանման իրավունքին առնչվող առավել հաճախ հանդիպող հարցերը: Բացատրվել են նաև բռնությանը և քրեական պատասխանատվությանը վերաբերող խնդիրներ: Այդ բոլոր պարզաբանումներին տեղյակ լինելով՝ դուք կարող եք Ձեզ ապահով և վստահ զգալ որոշակի իրավիճակներում:


Իրավական ուղեցույցը ներկայացված է հնարավորինս մատչելի լեզվով՝ խուսափելով իրավական բարդ արտահայտություններից, անհրաժեշտության դեպքում նաև տրվել են իրավական հասկացությունների բացատրությունները: Ուղեցույցին կից կա էլեկտրոնային սկավառակ, որտեղ զետեղված են դիմումների և հայցադիմումների ձևեր, ձևաթղթերի օրինակներ, ինչպես նաև օրենքներ և կառավարության որոշումներ:


Պետք է նկատի ունենալ, որ օրենսդրությունը հաճախ փոփոխվում է, ուստի կիրառելուց առաջ խորհուրդ ենք տալիս ստուգել օրենքի վերջնական տարբերակը: Դա կարող եք անել՝ խորհրդակցելով իրավաբանի հետ կամ դիմելով այն պետական մարմիններին, որոնք իրավասու են տալու այդ տեղեկատվությունը, կամ կարող եք գտնել այդ օրենքները Ինտերնետում: Իրավասու մարմինների և ինտերնետ կայքերի հասցեները ներկայացված են ուղեցույցի վերջում:

Հարգելի ընթերցող, բնական է, որ կանանց իրավունքներին առնչվող բոլոր հարցերը հնարավոր չէ ընդգրկել մեկ ուղեցույցում, քանի որ դրանք բազմաշերտ են և տարբերվում են ըստ իրավիճակների: Կան խնդիրներ, որոնք դեռևս օրենսդրական կարգավորում չունեն և այստեղ ներկայացվել են միջազգային փորձի կամ Հայաստանի Հանրապետության այսօր գործող օրենքների կարգավորման շրջանակում՝ հնարավոր լուծումներով: Մենք ուրախ կլինենք ստանալու դիտողություններ և առաջարկություններ, ինչպես նաև կպատասխանենք բոլոր հարցերին՝ մեզ դիմելու դեպքում:

*«Ժողովրդավարության և իրավունքի կենտրոն»
հասարակական կազմակերպություն*

ԸՆՏԱՆԻՔԸ ԵՎ ԿԱՆԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ





Ընտանիքն ու ընտանեկան հարաբերությունները ողջ կյանքի հիմնական և ամենանշանակալի բաղադրիչներից են: «Սահմանադրությամբ սահմանվում է, որ ընտանիքը հասարակության բնական և հիմնական բջիջն է: Մինևույն ժամանակ Սահմանադրության 14.1 հոդվածով երաշխավորվում է իրավունքների հավասարությունը կանանց և տղամարդկանց միջև: Դա նշանակում է, որ բոլոր մարդիկ հավասար են օրենքի առջև: Հետևաբար անհրաժեշտություն է առաջանում թե՛ կանանց, թե՛ տղամարդկանց մոտ սույն ոլորտում ձևավորել իրավական մշակույթ և բարձրացնել իրավագիտակցությունը, որը կհանգեցնի ամուսնաընտանեկան կյանքի առավել ամրության:


ԱՄՈՒՍՆՈՒԹՅՈՒՆ

Բոլորիս հայտնի է, որ ընտանիքի ձևավորումը սկսվում է ամուսնությամբ: «Ամուսնություն» հասկացությունը ոմանք ընկալում են որպես ընդամենը մարդկանց համատեղ կեցություն, ոմանք անհրաժեշտ պայման են համարում ամուսնությունը գրանցել օրենսդրության պահանջներին համապատասխան: Ամուսնության ընացքում կամ դրա դադարումից հետո ծագած խնդիրների լուծման ուղղությամբ քայլեր կատարելիս շատերը հասկանում են իրավական կարգավորումների արժեքը, ավանդ, արդեն իրենց իրավունքների պաշտպանության հնարավորությունները բաց թողնելու գնով: Այստեղ մենք հնարավորինս կներկայացնենք Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այն կանոններն ու պայմանները, որոնց ժամանակին կիրառումը կարող է ապահովագրել իրավունքները հնարավոր խախտումներից:

«Ընտանեկան օրենսգրքի 9-րդ հոդվածի համաձայն՝ ամուսնությունը կնքվում է քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցում իրականացնող մարմիններում (ՔԿԱԳ)՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով՝ ամուսնացող անձանց պարտադիր ներկայությամբ:

Ինչպես տեսնում ենք, օրենքը, որպես պարտադիր պայման, ամուսնությունը կապում է գրանցման փաստի հետ: Տղամարդու և կնոջ միջև երկար տարիների կյանքը՝ կողմերի համատեղ կեցությունը, չի կարող գնահատվել որպես ամուսնություն, անգամ եթե այն տևում է երկար տարիներ, բացի այդ, այն չի հանգեցնում իրավունքների և պարտականությունների (գույքային, ինչպես նաև անձնական ոչ գույքային) ծագմանը: Բացի այդ, համատեղ կյանք վարելու պարագայում կողմերը գրկվում են իրենց միջև ծագած հարաբերություններին իրավական կարգավորում տալուց:

Ամուսինների իրավունքներն ու պարտականությունները ծագում են քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցում իրականացնող մարմիններում ամուսնության պետական գրանցման պահից:



● ԱՄՈՒՄՆՈՒԹՅԱՆ ԿՆՔՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

ԱՄՈՒՄՆՈՒԹՅԱՆ ԿՆՔՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ: ՀՀ Սահմանադրությամբ սահմանված է, որ ամուսնական տարիքի հասած կինը և տղամարդը իրենց կամքի ազատ արտահայտությամբ ունեն ամուսնանալու և ընտանիք կազմելու իրավունք: Այսինքն՝ ամուսնության կնքման համար անհրաժեշտ են հետևյալ երկու պայմանները՝ ամուսնացող տղամարդու և կնոջ փոխադարձ կամավոր համաձայնությունը և ամուսնական տարիքին հասնելը:

Կանանց համար ամուսնական տարիքը տասնյոթ տարեկանն է, իսկ տղամարդկանց համար՝ տասնութե տարեկանը¹: Սա նշանակում է, որ նշված տարիքի չհասած անձինք ամուսնանալու իրավունք չունեն:


Ամուսնության կնքման համար մյուս պարտադիր պայմանը ամուսնացող տղամարդու և կնոջ փոխադարձ կամավոր համաձայնությունն է: Սահմանադրությամբ և ՀՀ ընտանեկան օրենսգրքով սահմանվում է, որ ամուսնությունը կարող է կնքվել միայն ամուսնացողների կամքի ազատ արտահայտությամբ: Արգելվում է որևէ մեկի ամուսնանալ ստիպելը մյուս ամուսնացողի, նրա ծնողների կամ որևէ այլ անձի կողմից: Անհրաժեշտ է իմանալ նաև, որ ամուսնանալու նախնական համաձայնությունը կամ նշանադրությունը չի առաջացնում հետագայում պարտադիր կերպով ամուսնանալու պարտավորություն: Նույնիսկ նշանադրությունից հետո կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի հրաժարվելու ամուսնությունից:

● ԱՄՈՒՄՆՈՒԹՅԱՆ ԳՐԱՆՑՈՒՄԸ

Ինչպես արդեն վերը նշեցինք, ամուսնությունը կնքվում է ՔԿԱԳ մարմիններում՝ «Քաղաքացիական կացության ակտերի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով՝ ամուսնացող անձանց պարտադիր ներկայությամբ, իսկ ամուսնացող անձանց ցանկությամբ ամուսնության պետական գրանցումը կարող է կատարվել հանդիսավոր պայմաններում:

Ամուսնության պետական գրանցումը կատարում է ամուսնացողներից մեկի բնակության վայրի ՔԿԱԳ մարմինը՝ **ամուսնացող անձանց համատեղ գրավոր դիմումի հիման վրա:** Համատեղ դիմումի մեջ պետք է հաստատվի ամուսնության փոխադարձ կամավոր համաձայնությունը և ամուսնական տարիքի հասնելը, ամուսնությանն արգելք հանդիսացող հանգամանքների բացակայության փաստը: Ամուսնությունը կնքվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով՝ ամուսնացող անձանց պարտադիր ներկայությամբ: Ամուսինների իրավունքներն ու պարտականությունները ծա-

¹ Շրջանառության մեջ է գտնվում ՀՀ օրենքի նախագիծը, որը նպատակ ունի կարգավորելու գենդերային հավասարության խնդիրը, այսինքն՝ կանանց և տղամարդկանց համար սահմանվում է միևնույն ամուսնական տարիքը՝ 18 տարին:



գում են՝ քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցում իրականացնող մարմիններում ամուսնության պետական գրանցման պահից սկսած (դիմումի թիվ 13 ձևը՝ կից սկավառակում):

«Քաղաքացիական կացության ակտերի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանվում է, որ ՔԿԱԳ մարմինը քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցումն իրականացնում է ՔԿԱԳ մարմին փաստաթղթերի ներկայացման օրը, եթե օրենքով այլ ժամկետներ նախատեսված չեն: Տվյալ դեպքում նշված օրենքով նախատեսվում է ամուսնության գրանցման այլ ժամկետներ, մասնավորապես՝ օրենքի 27-րդ հոդվածով սահմանվում է, որ ամուսնության պետական գրանցումն իրականացվում է ՔԿԱԳ մարմին ամուսնացող անձանց ներկայացրած համատեղ դիմումում նշված օրը, սակայն ոչ շուտ, քան դիմումը ներկայացնելու օրվան հաջորդող 10-րդ օրը, և ոչ ուշ, քան երեք ամիսը: Ամուսնացող անձանց համատեղ դիմումի հիման վրա ամուսնության պետական գրանցման 10-օրյա ժամկետը կարող է կրճատվել հարգելի պատճառների առկայության դեպքում:

Ամուսնության գրանցման հետ կապված՝ ամուսնացողներին տրվում է ամուսնությունը հավաստող փաստաթուղթ՝ սահմանված նմուշի ամուսնության վկայական:


Անհրաժեշտ է հաշվի առնել այն հանգամանքը, որ եթե ՔԿԱԳ տարածքային մարմինը մերժել է գրանցել ամուսնությունը, նրա այդ որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ ՀՀ վարչական դատարանում:

Իսկ ամուսնության գրանցումը կարող է մերժվել ամուսնության կնքման արգելք հանդիսացող հանգամանքների առկայության դեպքում: Ամուսնությունն արգելվում է՝

- ա) այն անձանց միջև, որոնցից թեկուզ և մեկը գտնվում է օրենքով սահմանված կարգով գրանցված մեկ այլ ամուսնության մեջ (այլ կերպ ասած՝ ՀՀ-ում արգելվում է բազմակնությունը, որի համար նախատեսված է քրեական պատասխանատվություն):
- բ) մերձավոր ազգականների (ուղիղ վերընթաց ու վարընթաց ազգականների՝ ծնողների ու զավակների, պապի, տատի ու թոռների, ինչպես նաև հարազատ և համահայր կամ համամայր եղբայրների ու քույրերի, մորաքրոջ, հորաքրոջ, հորեղբոր և մորեղբոր զավակների) միջև.
- գ) որդեգրողների և որդեգրվածների միջև.
- դ) այն անձանց միջև, որոնցից թեկուզ և մեկին դատարանը ձանաչել է անգործունակ:

Վերը թվարկվածով սահմանափակվում է անձանց միջև օրենքով սահմանված ամուսնության կնքումը, իսկ այդ հանգամանքներից թեկուզ և մեկի առկայության դեպքում ՔԿԱԳ մարմնի ղեկավարը պարտավոր է մերժել ամուսնության պետական գրանցումը:

Անհրաժեշտ է նկատի ունենալ, որ անագատության մեջ գտնվող անձը գրկված չէ ամուսնանալու իրավունքից: Դատապարտված, ձերբակալված կամ կալանավորված անձի (այսուհետ՝ ազատագրված անձ) հետ ամուսնանալ ցանկացող անձը ամուսնանալու վերաբերյալ դիմում է տալիս իր մշտական բնակության վայրի կամ ուղղիչ հիմնար-



կի գտնվելու վայրի քաղաքացիական կացության ակտերի գրանցման տարածքային բաժին:

Ազատագրկման վայրերում պահվող անձանց հետ ամուսնության գրանցման կարգը սահմանված է ՀՀ արդարադատության նախարարի 02.04.2003 թ. կից 153-Ն հրամանով (տե՛ս կից սկավառակի հավելված 1-ը):

● **ԱՄՈՒՍՆՈՒԹՅՈՒՆ ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ, ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅՈՒՆ ՉՈՒՆԵՅՈՂ ԱՆՁԱՆՑ, ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՄՇՏԱՊԵՏ ԲՆԱԿՎՈՂ ՀՀ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ՀԵՏ**


Հայաստանի Հանրապետությունում օտարերկրյա քաղաքացիների, քաղաքացիություն չունեցող անձանց, օտարերկրյա պետությունում մշտապես բնակվող Հայաստանի Հանրապետության քաղաքացիների ամուսնության հետ կապված իրավական կարգավորումը տրված է «Քաղաքացիական կացության ակտերի մասին» ՀՀ օրենքում:

Հայաստանի Հանրապետությունում օտարերկրյա քաղաքացիների, քաղաքացիություն չունեցող անձանց, օտարերկրյա պետությունում մշտապես բնակվող Հայաստանի Հանրապետության քաղաքացիների ամուսնությունը միմյանց և Հայաստանի Հանրապետության քաղաքացիների հետ ամուսնության գրանցման վերաբերյալ **դիմումները ներկայացնում և ամուսնության գրանցման մասին թույլտվություն են ստանում Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությունից:**

Օտարերկրյա քաղաքացիները, օտարերկրյա պետությունում բնակվող ՀՀ քաղաքացիները և քաղաքացիություն չունեցող անձինք Հայաստանի Հանրապետությունում ամուսնություն գրանցելիս ներկայացնում են անձնագիրը և տվյալ պետության իրավասու մարմինների կամ դեսպանության (հյուպատոսության) կողմից տրված ընտանեկան կարգավիճակը հաստատող փաստաթուղթ (տեղեկանք, թույլտվություն, հայտարարություն և այլն)՝ վավերացված Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության դիվանագիտական կամ հյուպատոսական մարմիններում, եթե այլ բան նախատեսված չէ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով:

Օտարերկրյա պետության իրավասու մարմինների կողմից տրված փաստաթուղթը (փաստաթղթերը) և քաղաքացու կամ քաղաքացիություն չունեցող անձի անձը հաստատող փաստաթուղթը թարգմանվում են հայերեն և թարգմանությունը հաստատվում է նոտարական կարգով:

Հայաստանի Հանրապետությունում օտարերկրյա քաղաքացիների, քաղաքացիություն չունեցող անձանց, օտարերկրյա պետությունում մշտապես բնակվող Հայաստանի Հանրապետության քաղաքացիների ամուսնությունը միմյանց և Հայաստանի Հանրապետության քաղաքա-



ցիների հետ գրանցվում է ՀՀ արդարադատության նախարարության ՔԿԱԳ գործակալության պետի թույլտվության հիման վրա՝ ՔԿԱԳ մարմնում (տե՛ս կից սկավառակում՝ ՀՀ արդարադատության նախարարի 2007 թվականի մայիսի 14-ի N 97-Ն հրաման):

Օտարերկրյա պետություններում ապրող Հայաստանի Հանրապետության քաղաքացիների քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցումները իրականացնում են այդ պետություններում գտնվող Հայաստանի Հանրապետության հյուպատոսական հիմնարկները՝ «Քաղաքացիական կացության ակտերի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով:

Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս ամուսնություն գրանցելու համար անձը ներկայացնում է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության կողմից տրված տեղեկանք՝ ընտանեկան կարգավիճակի վերաբերյալ (տե՛ս թիվ 3 և 4 դիմումի ձևերը կից սկավառակում):

● ԱՄՈՒՍԻՆՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Կնքելով ամուսնություն՝ երկու ամուսիններն էլ ստանձնում են անձնական և գույքային իրավունքներ ու պարտականություններ: Ամուսինները պարտավոր են բարեխղճորեն և լրիվ ծավալով կատարել այդ պարտականությունները և օգտվել իրավունքներից ամուսնության ողջ ընթացքում:


Ընդ որում՝ ընտանեկան հարաբերություններում ամուսիններն օգտվում են հավասար անձնական և գույքային իրավունքներից և կրում են հավասար պարտականություններ:

Արգելվում է ամուսնանալիս և ընտանեկան հարաբերություններում սոցիալական, ռասայական, ազգային, լեզվական կամ կրոնական պատկանելության և այլ հատկանիշներով քաղաքացիների իրավունքների որևէ սահմանափակում:

● ԱՆՁՆԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ

Ամուսիններից յուրաքանչյուրն ազատ է աշխատանք, գրադմունք, մասնագիտություն, բնակության վայր ընտրելու հարցում: Մայրության, հայրության, երեխաների դաստիարակության և կրթության, ինչպես նաև ընտանեկան կյանքի այլ հարցեր ամուսինները լուծում են համատեղ՝ չլնելով ամուսինների իրավահավասարության սկզբունքից:

Ամուսիններն ընտանիքում պարտավոր են իրենց հարաբերությունները կառուցել փոխադարձ օգնության և հարգանքի վրա, նպաստել ընտանիքի ամրությանը, հոգ տանել իրենց երեխաների բարեկեցության ու զարգացման համար:



Ամուսնանալիս ամուսինները, ըստ իրենց ցանկության, կարող են ամուսիններից մեկի ազգանունն ընտրել որպես ընդհանուր ազգանուն կամ պահպանել մինչամուսնական ազգանունը: Ամուսնալուծվելիս ամուսիններն իրավունք ունեն պահպանելու ընդհանուր ազգանունը կամ վերականգնելու իրենց մինչամուսնական ազգանունը:

● **ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ**

Ամուսինների գույքային իրավունքները և պարտականությունները կարևոր են նրանով, որ հենց գույքի օգտագործման և տնօրինման պայմանները ընտանեկան կյանքի նյութական հիմքն են կազմում:

Օրենքը տարանջատում է ամուսինների **անհատական և ընդհանուր** սեփականության ձևերը:

Մինչև ամուսնությունն ամուսիններից յուրաքանչյուրի գույքը, ինչպես նաև ամուսնության ընթացքում ամուսիններից մեկի նվեր կամ ժառանգություն ստացած գույքը նրա սեփականությունն է: Տվյալ դեպքում այդ գույքը չի բաժանվում երկուսի միջև, և յուրաքանչյուրն իր գույքը լիարժեք տնօրինում, օգտագործում և տիրապետում է իր հայեցողությամբ:


Անհատական օգտագործման գույքը (հագուստը, կոշիկը և այլն), բացառությամբ թանկարժեք իրերի և պերձանքի առարկաների, եթե նույնիսկ այն ձեռք է բերվել ամուսնության ընթացքում ամուսինների ընդհանուր միջոցների հաշվին, համարվում է այն ամուսնու սեփականությունը, որն այդ գույքն օգտագործել է:

Ընդհանուր է համարվում ամուսնության ընթացքում ամուսինների ձեռք բերած գույքը, եթե օրենքով կամ ամուսնական պայմանագրով այլ բան սահմանված չէ:

Ամուսիններից յուրաքանչյուրի գույքը կարող է ձանաչվել նրանց համատեղ սեփականություն, եթե պարզվի, որ ամուսնության ընթացքում ամուսինների ընդհանուր գույքի կամ մյուս ամուսնու անձնական գույքի հաշվին կատարվել են ներդրումներ, որոնք նշանակալի չափով ավելացրել են այդ գույքի արժեքը (օրինակ՝ հիմնական վերանորոգում, վերակառուցում, վերասարքավորում և այլն), եթե այլ բան նախատեսված չէ ամուսինների միջև կնքված պայմանագրով:

Անհրաժեշտ է նկատի ունենալ, որ ամուսնության ընթացքում, երբ ամուսիններից մեկն աշխատում է և ստանում եկամուտ, իսկ մյուս ամուսինը զբաղվում է տնային տնտեսությամբ կամ երեխաների խնամքով, ապա այս աշխատող ամուսնու եկամտի հաշվին ձեռք բերված գույքը ևս հանդիսանում է ամուսինների համատեղ սեփականությունը:

Համատեղ սեփականություն կարող է հանդիսանալ ինչպես շարժական, այնպես էլ անշարժ գույքը: Սակայն պետք է հաշվի առնել, որ անշարժ գույքի նկատմամբ ցանկացած գործարք պահանջում է նոտա-



րական վավերացում, և դրա նկատմամբ իրավունքները ծագում են համապատասխան մարմնում՝ ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեում դրա գրանցման պահից: **Պետք է հիշել, որ եթե դուք կնքել եք անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիր, այն ստացել է նոտարական վավերացում, և վճարել եք վաճառողին պայմանագրով նախատեսված գինը, սակայն գույքը չեք գրանցել ձեր անվամբ, ապա դուք դեռևս չեք հանդիսանում այդ գույքի սեփականատերը:**

Մեկ այլ կարևոր հանգամանք ևս, որը պետք է հաշվի առնվի: Համատեղ կյանքի ընթացքում, եթե ամուսինը գնում է որևէ գույք և այն գրանցում բացառապես իր անվամբ, ապա դա չի հանգեցնում կնոջ իրավունքների սահմանափակման, քանի որ կինը ևս ունի հավասար իրավունքներ այդ գույքի նկատմամբ: Գույքը տնօրինվում և տիրապետվում է համատեղ համաձայնությամբ:

Սակայն խնդիր է առաջանում, երբ ամուսինը միանձնյա տնօրինում է գույքի ձակատագիրը, ասենք՝ վաճառում է այն: Ինչպես պետք է վարվի կինը նման պարագայում:

Իհարկե, կինն իրավասու է դատական կարգով վիճարկելու ամուսնու կողմից կնքված գործարքը և այն անվավեր ձանաչելու: Սակայն դատական պրակտիկան, ցավոք սրտի, ցույց է տալիս, որ դատարանը ոչ միշտ է ի օգուտ կնոջ վճիռ կայացնում՝ հաշվի առնելով գույքի բարելսիդձ ձեռքբերողի առկայությունը: Այսինքն՝ անձ, ով բոլորովին տեղյակ չի եղել, որ վաճառող-ամուսինը գտնվել է գրանցված ամուսնության մեջ:


Միննույն ժամանակ, պետք է հիշել, որ թեկուզ և այդ դեպքում կինը չի զրկվում իրեն հասանելի բաժնեմասի գումարը պահանջել ամուսնուց՝ հայց ներկայացնելով ամուսնու դեմ:

Այսպիսով՝ վերը նշվածը հաշվի առնելով՝ պետք է նկատի ունենալ, որ անկախ ասեն ինչից, համատեղ կյանքի ընթացքում ձեռք բերված գույքի կեսը հանդիսանում է կնոջ սեփականությունը: Հետևաբար, անշարժ գույք ձեռք բերելիս պահանջեք, որ ձեր իրավունքները ևս ստանան պետական գրանցում, քանի որ դուք հանդիսանում եք այդ գույքի համատեղ սեփականատերը:

● ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՄԱՏԵՂ ԳՈՒՅՔԻ ԲԱԺԱՆՈՒՄԸ

Ընդհանուր համատեղ գույքը կարող է բաժանվել ամուսիններից թեկուզ և մեկի պահանջով ինչպես ամուսնության ընթացքում, այնպես էլ ամուսնալուծվելուց հետո, որն իրականացվում է փոխադարձ համաձայնությամբ, իսկ վերջինիս բացակայության դեպքում՝ դատական կարգով:

Պետք է նկատի ունենալ, որ ամուսինների ընդհանուր բաժինը գույքի նկատմամբ հավասար է: Սակայն առկա են մի շարք բացառություններ, երբ ամուսիններից մեկի բաժնեմասն ավելանում է՝ կախված մի շարք



հանգամանքներից, օրինակ՝ եթե նրա հետ է բնակվում անչափահաս երեխան, կամ ինքն անգործունակ է և այլ դեպքեր:

Ամուսինների ընդհանուր պարտքը ևս կիսվում է նրանց միջև հավասարապես: Եթե պարտքը վերցված է ամուսիններից միայն մեկի կողմից, ապա այն կարող է մարվել ամուսինների ընդհանուր համատեղ գույքից, եթե ապացուցվում է, որ վերցրած պարտքն օգտագործվել է ողջ ընտանիքի ընդհանուր շահերի համար:

● **ԱՄՈՒՍԻՆՆԵՐԻ՝ ՄԻՄՅԱՆՑ ԱՊՐՈՒՍՏԻ ՄԻՉՈՑՆԵՐ ՀՈԳԱԼՈՒ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**


Ամուսինները պարտավոր են նյութապես օժանդակել միմյանց: Այդպիսի օժանդակությունը մերժվելու և ալիմենտ վճարելու վերաբերյալ ամուսինների միջև համաձայնության բացակայության դեպքում դրա համար անհրաժեշտ միջոցներ ունեցող մյուս ամուսնուց դատական կարգով ալիմենտ պահանջելու իրավունք ունի՝

- ա) անաշխատունակ անապահով ամուսինը,
- բ) կինը՝ հղիության ընթացքում, ինչպես նաև ընդհանուր երեխային խնամող ամուսինը մինչև երեխայի երեք տարին լրանալը,
- գ) անապահով ամուսինը, որ խնամում է մանկուց հաշմանդամ ընդհանուր երեխային կամ առաջին խմբի հաշմանդամ չափահաս զավակին:

Այստեղ անհրաժեշտ է նկատի ունենալ, որ կարիքի մեջ գտնվող անգործունակ ամուսինը շարունակում է պահպանել օգնություն ստանալու իրավունքը ամուսնալուծվելուց հետո ևս, եթե վերջինս անգործունակ է դարձել դեռևս ամուսնության ընթացքում:

Միևնույն ժամանակ, դատարանը կարող է ամուսնուն ազատել մյուս անաշխատունակ անապահով ամուսնուն օգնություն ցույց տալու պարտականությունից կամ սահմանափակել այդ պարտականությունը որոշակի ժամանակով ինչպես ամուսնության ընթացքում, այնպես էլ ամուսնալուծությունից հետո, եթե օգնության կարիք ունեցող ամուսնու անաշխատունակությունը վրա է հասել՝

- ա) ոգելից խմիչքի, թմրամիջոցի և (կամ) թունամիջոցի չարաշահման կամ նրա կողմից դիտավորյալ հանցագործություն կատարելու հետևանքով,
- բ) ամուսինների՝ միմյանց հետ ամուսնության մեջ գտնվելու մեկ տարուց ոչ ավելի ժամանակահատվածում,
- գ) ալիմենտի վճարում պահանջող ամուսնու՝ ընտանիքում հակաբարոյական վարքագիծ (ամուսնական դավաձանություն, մոլախաղերով զբաղվել և այլն) ցուցաբերելու հետևանքով:



● ԱՄՈՒՄՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

Ժամանակակից աշխարհում լայն տարածում ունի ամուսնական պայմանագիրը, որի միջոցով մի շարք հարցեր ստանում են իրենց կարգավորումը կողմերի համաձայնությամբ: Հայաստանի Հանրապետությունում տարածված չէ ամուսնական պայմանագիր կնքելը, քանի որ ըստ տարածված ընկալման՝ ավանդապաշտ հայ ընտանիքները սիրո և համաձայնության վրա են կազմվում, ինչը մի կողմ է մղում ամուսնական պայմանագրի կնքումը՝ չկանխատեսելով վերջինիս բացակայության հետևանքով ծագած մի շարք հարցերի կանոնակարգման անհնարիությունը:

Ամուսնական պայմանագիրը ամուսնացող անձանց համաձայնությունն է կամ ամուսինների համաձայնությունը, որով որոշվում են ամուսինների գույքային իրավունքներն ու պարտականությունները ամուսնության և (կամ) այն լուծվելու ընթացքում:


Պետք է ուշադրություն դարձնել այն հանգամանքին, որ ամուսնական պայմանագրով սահմանվում է ոչ միայն անձնական, այլև գույքային իրավունքներն ու պարտականությունները:

Ամուսնական պայմանագիրը կարող է կնքվել ինչպես մինչև ամուսնության պետական գրանցումը, այնպես էլ ամուսնության ցանկացած ժամանակահատվածում: Ընդ որում՝ ամուսնության պետական գրանցումից առաջ կնքված ամուսնական պայմանագիրն ուժի մեջ է մտնում ամուսնության պետական գրանցման պահից:

Անհրաժեշտ է նկատի ունենալ, որ ամուսնական պայմանագիրը կնքվում է գրավոր և ենթակա է նոտարական վավերացման: Այսինքն՝ պայմանագիրը կնքելու ձևի չպահպանումը հանգեցնում է պայմանագրի անվավերության:

Ամուսնական պայմանագրով ամուսինները կարող են փոփոխել ընդհանուր սեփականության շրջանակը, սահմանել համատեղ, բաժնային կամ յուրաքանչյուրի սեփականություն՝ ամուսինների ողջ գույքի, դրա առանձին տեսակների կամ ամուսիններից յուրաքանչյուրի գույքի նկատմամբ: Ամուսնական պայմանագիրը կարող է կնքվել ինչպես ամուսինների առկա, այնպես էլ հետագայում ձեռք բերվելիք գույքի նկատմամբ:

Բացի այդ, ամուսիններն իրավունք ունեն ամուսնական պայմանագրով որոշելու միմյանց ապրուստը հոգալու իրենց փոխադարձ իրավունքներն ու պարտականությունները, միմյանց եկամուտներից մասնակցելու եղանակները, իրենցից յուրաքանչյուրի կողմից ընտանեկան ծախսեր կատարելու կարգը, այն գույքը, որ պետք է հանձնվի իրենցից յուրաքանչյուրին ամուսնալուծվելիս, ինչպես նաև իրավունք ունեն ամուսնական պայմանագրով նախատեսելու իրենց գույքային հարաբերություններին վերաբերող ցանկացած այլ նորմեր:



Էական է այն հանգամանքը, որ ամուսնական պայմանագիրը չի կարող սահմանափակել ամուսինների իրավունակությունը¹ կամ գործունակությունը², իրենց իրավունքների պաշտպանության համար դատարան դիմելու նրանց իրավունքը, կարգավորել ամուսինների միջև անձնական ոչ գույքային հարաբերությունները, երեխաների նկատմամբ ամուսինների իրավունքներն ու պարտականությունները, նախատեսել անաշխատունակ անապահով ամուսնու ապրուստի միջոց պահանջելու իրավունքը սահմանափակող նորմ, ներառել այլ պայմաններ, որոնք ամուսիններից մեկին դնում են անբարենպաստ իրավիճակի մեջ կամ հակասում են ընտանեկան օրենսդրության հիմնական սկզբունքներին:

Ամուսնական պայմանագիրն ամուսինների համաձայնությամբ կարող է փոփոխվել կամ լուծվել ցանկացած ժամանակ: Անհրաժեշտ է նկատի ունենալ, որ ամուսնական պայմանագրի կատարումից միակողմանի հրաժարում չի թույլատրվում:

Ամուսնական պայմանագրի գործողությունը դադարում է ամուսնության դադարման պահից, բացառությամբ այն պարտավորությունների, որոնք ամուսնական պայմանագրով նախատեսված են ամուսնությունը դադարելուց հետո ընկած ժամանակաշրջանի համար:


Այսպիսով՝ ամուսնական պայմանագրի կնքմամբ ամուսինները մի շարք հարցեր փոխադարձ համաձայնությամբ լուծում են և գերծմնում անհարկի վեձերից: Ուստի խորհուրդ է տրվում երիտասարդ գույզերին իրենց ամուսնությունը նախ և առաջ գրանցել համապատասխան մարմնում, քանի որ միայն գրանցված ամուսնությունն է, որ առաջացնում է մի շարք իրավական հետևանքներ, ինչպես նաև կնքել ամուսնական պայմանագիր՝ հստակեցնելով կողմերի իրավունքներն ու պարտականությունները, գույքային և անձնական ոչ գույքային հարաբերությունները:

● ԱՄՈՒՄՆՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐՈՒՄԸ

«Նրանց ամուսնական օրենսգրքով սահմանվում են ամուսնության դադարման հիմքերը: Դրանք են՝ ամուսնության դադարումը ամուսիններից մեկի մահվան կամ նրան դատարանի կողմից մահացած ձանաչելու հետևանքով, ինչպես նաև ամուսնալուծվելու դեպքում:

¹ Քաղաքացու իրավունակությունը՝ քաղաքացիական իրավունքներ ունենալու և պարտականություններ կրելու ունակությունը (քաղաքացիական իրավունակություն), բոլոր քաղաքացիների համար ճանաչվում է հավասարապես: Քաղաքացու իրավունակությունը ծագում է նրա ծննդյան պահին և դադարում է մահվամբ (տե՛ս ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 20-րդ հոդվածը):

² Քաղաքացու գործունակությունը՝ իր գործողություններով քաղաքացիական իրավունքներ ձեռք բերելու և իրականացնելու, իր համար քաղաքացիական պարտականություններ ստեղծելու ու դրանք կատարելու քաղաքացու ունակությունը, (քաղաքացիական գործունակություն) լրիվ ծավալով ծագում է չափահաս, այսինքն՝ տասնութ տարեկան դառնալու պահից (տե՛ս ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 24-րդ հոդվածը):



● ԱՄՈՒՄՆԱԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Ամուսինները ցանկացած ժամանակ կարող են ամուսնալուծվել, բացառությամբ այն դեպքի, եթե կինը հղի է:

- Օրենքով նախատեսված է ամուսնալուծության երկու տարբերակ՝
 - ամուսնալուծություն քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցում իրականացնող մարմիններում,
 - ամուսնալուծություն դատական կարգով:

Դատական կարգով ամուսնալուծությունն իրականացվում է, եթե կողմերի միջև առկա է վեճ՝ գույքային, երեխաների խնամքի հետ կապված:

Պետք է հիշել, որ ամուսնալուծված ամուսինների նոր ամուսնության պետական գրանցում չի կատարվում առանց ամուսնալուծության վկայականի առկայության:

● ԱՄՈՒՄՆԱԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ ՔԿԱԳ ՄԱՐՄԻՆՆԵՐՈՒՄ


Ամուսնալուծվելու վերաբերյալ փոխադարձ համաձայնության դեպքում ամուսնալուծությունը կատարվում է քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցում իրականացնող մարմիններում:

Այստեղ ամուսնալուծությունն իրականացվում է բացառապես ամուսինների դիմումի հիման վրա: Դիմումում ամուսիններն արտահայտում են իրենց ցանկությունը ամուսնալուծվելու և վեճի բացակայության վերաբերյալ (տե՛ս դիմումի թիվ 14 ձևը կից սկավառակում):

Ամուսիններից միայն մեկի դիմումի հիման վրա ամուսնալուծությունը կատարվում է քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցում իրականացնող մարմիններում, եթե մյուս ամուսինը՝

- ա) դատարանի կողմից ձանաչվել է անհայտ բացակայող,
- բ) դատարանի կողմից ձանաչվել է անգործունակ,
- գ) դատապարտվել է ազատազրկման՝ երեք տարուց ոչ պակաս ժամկետով (տե՛ս դիմումի թիվ 15 ձևը կից սկավառակում):

Այս դեպքում դիմող կողմը պետք է միևնույն ժամանակ ներկայացնի ապացույց (դատարանի օրինական ուժի մեջ մտած վճիռ) այն մասին, որ մյուս ամուսինը դատարանի կողմից ձանաչվել է անհայտ բացակայող, անգործունակ, ինչպես նաև ազատազրկվել է երեք տարուց ոչ պակաս ժամկետով: Ընդ որում՝ ամուսնալուծությունից հետո անհայտ բացակայող ձանաչված ամուսնու հայտնվելու դեպքում դատարանի վճիռը ենթակա է անվավեր ձանաչման:



Ամուսնությունը, որը լուծվում է քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցում իրականացնող մարմնում, համարվում է դադարած ամուսնալուծության պետական գրանցման պահից:

Պետք է նկատի ունենալ, որ ՔԿԱԳ մարմիններում ամուսնալուծության պետական գրանցումն իրականացվում է ամուսնալուծության մասին դիմում տալու օրվանից մեկ ամիս անցնելուց հետո, բայց երեք ամսից ոչ ուշ, երկու ամուսինների ներկայությամբ կամ ամուսիններից մեկի պարտադիր ներկայությամբ և մյուսի՝ սահմանված կարգով վավերացված համաձայնությամբ:

Ամուսինների կողմից ամուսնալուծության վերաբերյալ դիմումները առանձին հայտարարություններով ձևակերպելու դեպքում նախատեսված մեկամսյա ժամկետի հաշվարկը սկսվում է ՔԿԱԳ մարմին ամուսնալուծության մասին երկրորդ հայտարարությունը տալու օրվանից:

● ԱՄՈՒՄՆԱԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ ԴԱՏԱԿԱՆ ԿԱՐԳՈՎ

Հաճախ ամուսինները չեն կարողանում հասնել ամուսնալուծության վերաբերյալ համաձայնության, մասնավորապես, երբ խոսքը վերաբերում է գույքի բաժանությանը, երեխաների հետագա խնամքի հանձնմանը և այլ հարցերի: Հետևաբար, միակ ձանապարհը մնում է դատական կարգով լուծել վեճը:

Ամուսնալուծությունը կատարվում է դատական կարգով, եթե՝


ա) բացակայում է ամուսնալուծության մասին ամուսիններից մեկի համաձայնությունը, բ) ամուսիններից մեկը, չնայած առարկության բացակայությանը, խուսափում է ամուսնալուծությունը քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցում իրականացնող մարմիններում կատարելուց, գ) ամուսինները ցանկանում են փոխադարձ համաձայնությամբ ամուսնալուծվել դատական կարգով:

Եթե դուք ցանկանում եք դատական կարգով լուծել ամուսնությունը, ապա անհրաժեշտ է խորհրդակցել իրավաբանի հետ և հստակեցնել ձեր իրավունքների և պարտականությունների շրջանակները, պարզել, թե ինչպես պետք է դիմել դատարան, մոտավորապես որքան ժամանակ է ձեզ հարկավոր, ինչպիսի ելքի է հնարավոր հասնել դատական կարգով վեճը լուծելիս և այլ անհրաժեշտ հարցեր:

Ներքոչարադրյալով կփորձենք հակիրճ ներկայացնել այն հիմնական ուղղությունները, որոնք անհրաժեշտ են իմանալ դատական կարգով վեճերի լուծման ընթացքում:

Առաջին՝ անհրաժեշտ է իմանալ, թե որ դատարան պետք է դիմել:

ՀՀ-ում դատական համակարգը ներառում է առաջին աստիճանի ընդհանուր իրավասության, վերաքննիչ և վճռաբեկ դատարաններ: Ձեզ անհրաժեշտ է դիմել ձեր կամ ձեր ամուսնու բնակության վայրի առաջին աստիճանի ընդհանուր իրավասության դատարան: Այնուհետև, եթե չհա-



մաճայնվեք առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի վճռի հետ, ապա այն կարող էք բողոքարկել ՀՀ վերաքննիչ դատարան, իսկ դրանից հետո՝ ՀՀ վճռաբեկ դատարան:

Երկրորդ՝ դատարան պետք է դիմել համապատասխան հայցադիմում ներկայացնելու միջոցով (ձևը՝ կից սկսվառակում):

Երրորդ՝ դատարան դիմելուց պետք է հայցադիմումին կից ներկայացվի պետական տուրքը վճարելու վերաբերյալ անդորրագիրը (առաջին ատյանի դատարան դիմելու համար «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքով պետական տուրքի չափ սահմանված է 4.000 ՀՀ դրամը, ՀՀ վերաքննիչ դատարան դիմելու համար՝ 10.000 ՀՀ դրամը):

Անհրաժեշտ է նկատի ունենալ, որ ալիմենտի՝ որպես կայուն դրամական միջոցի բռնագանձման հայց ներկայացնելիս դուք ազատվում եք պետական տուրք վճարելու պարտականությունից, սակայն պետական տուրքի վճարումը ամուսնալուծության դեպքում պարտադիր է: Ի դեպ, դուք կարող եք ամուսնալուծության և ալիմենտի բռնագանձման պահանջները ներկայացնել միևնույն հայցադիմումում:

Ինչ վերաբերում է պետական տուրքի պարտադիր վճարմանը, ապա հարկ է իմանալ, որ դուք հարկադրված չեք հայցադիմումին կցել պետական տուրքի վճարման անդորրագիրը, փոխարենը կարող եք ձեր հայցադիմումում ներկայացնել միջնորդություն՝ խնդրելով դատարանին պետական տուրքի վճարումից ազատել (համապատասխան հանգամանքների առկայության դեպքում) կամ վճարումը տարածամկետել և այն բռնագանձել վերջնական դատական ակտով:


Դատարանում գործի քննությունն իրականացվում է հետևյալ կարգով.

Ամուսիններից մեկի դիմումով ամուսնալուծության գործեր քննելիս դատարանն իրավունք ունի միջոցներ ձեռնարկելու ամուսիններին հաշտեցնելու համար և իրավունք ունի գործի քննությունը հետաձգելու՝ հաշտվելու համար ամուսիններին տրամադրելով մինչև երեքամսյա ժամկետ: Այս դեպքում ամուսնալուծությունը կատարվում է, եթե ամուսինները (նրանցից մեկը) պնդում են ամուսնալուծվելու համար:

Ամուսնալուծության համար ամուսինների փոխադարձ համաձայնության առկայության դեպքում դատարանը լուծում է ամուսնությունը ամուսինների կողմից ամուսնալուծության մասին դիմում տալու օրվանից ոչ ուշ՝ մեկամսյա ժամկետում:

Ամուսինների ընդհանուր գույքի բաժանման, անաշխատունակ անապահով ամուսնու ապրուստի միջոցը հոգալու վերաբերյալ վեճերը, ինչպես նաև երեխաների պատճառով ամուսինների միջև ծագող վեճերը քննարկվում են դատական կարգով՝ անկախ քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցում իրականացնող մարմիններում ամուսնությունը լուծելուց:

Նման պայմաններում ամուսինները կարող են դատարան ներկայացնել համաձայնություն այն մասին, թե նրանցից ում հետ են ապրելու երեխաները, երեխաներին և (կամ) անաշխատունակ անապահով ամուսնուն պահելու համար ապրուստի միջոցները հոգալու կարգի, այդ միջոցների չափերի կամ ամուսինների ընդհանուր գույքի բաժան-



ման մասին, իսկ նման համաձայնության բացակայության դեպքում դատարանը պարտավոր է՝ ա) որոշել, թե ամուսնալուծությունից հետո ծնողներից ում հետ պետք է ապրեն երեխաները, բ) որոշել, թե որ ծնողից և ինչ չափով պետք է ալիմենտ (ապրուստավձար) բռնագանձվի, գ) ամուսինների (ամուսիններից մեկի) պահանջով կատարել նրանց ընդհանուր սեփականությունը համարվող գույքի բաժանումը, դ) ամուսնուց ապրուստի միջոց ստանալու իրավունք ունեցող մյուս ամուսնու պահանջով որոշել այդ միջոցների չափը:

Պետք է հիշել, որ դատարանի կողմից հայցադիմումի ընդունումը և գործի քննությունը դեռևս չի հանգեցնում ամուսնալուծության դադարեցման, քանի որ ամուսնությունը, որը լուծվում է դատական կարգով, համարվում է դադարած դատարանի վճիռն օրինական ուժի մեջ մտնելու պահից: Իսկ դատական կարգով կատարված ամուսնալուծությունը ենթակա է պետական գրանցման ամուսիններից մեկի բնակության վայրի ԲԿԱԳ մարմնում:

Դատարանի վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից մեկ ամիս հետո: Ամուսնալուծության մասին դատարանի վճիռն օրինական ուժի մեջ մտնելու պահից երեք օրվա ընթացքում պարտավոր է այդ վճիռի քաղվածքն ուղարկել ամուսնության պետական գրանցման վայրի քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցում իրականացնող մարմին:

Ամուսնալուծությունից հետո դուք կարող եք պահպանել Ձեր ամուսնու ազգանունը կամ վերցնել մինչամուսնական ազգանունը:

Ամուսնությունն անվավեր ձանաչելու դեպքում բարեխիղճ ամուսինն իրավունք ունի պահպանելու ամուսնության պետական գրանցման ժամանակ ընտրված ազգանունը:


● ԱՄՈՒՄՆՈՒԹՅԱՆ ԱՆՎԱՎԵՐՈՒԹՅՈՒՆԸ

Ամուսնությունը կարող է ձանաչվել անվավեր, եթե խախտվել են ամուսնության համար օրենքով սահմանված պայմանները: Անհրաժեշտ է տարանջատել ամուսնալուծությունը ամուսնությունն անվավեր ձանաչելուց, քանի որ եթե ամուսնալուծվելիս ամուսնությունն իրականում եղել է և այն առաջացրել է իրավական հետևանքներ, ապա անվավեր ձանաչված ամուսնությունը որևէ իրավական հետևանքներ չի առաջացնում, այսինքն՝ ամուսնությունը չի կայացել:

Ամուսնությունը կարող է անվավեր ձանաչվել միայն դատարանի կողմից:

Անվավեր է ձանաչվում՝

- ամուսնությանն արգելք հանդիսացող հանգամանքների առկայությանը կնքված ամուսնությունը,



- այն ամուսնությունը, երբ ամուսիններից մեկը չի հասել ամուսնական տարիքին,
- բացակայում է կողմերի համաձայնությունը,
- ամուսինները գտնվում են օրենքով արգելված ազգակցական կապի մեջ,
- ամուսիններից մեկն արդեն իսկ գտնվում է գրանցված ամուսնության մեջ,
- ամուսիններից մեկը դատական կարգով ձանաչվել է անգործունակ,
- ամուսինները կամ նրանցից մեկը ամուսնությունը գրանցել են առանց ընտանիք ստեղծելու մտադրության (կեղծ ամուսնություն):

Եթե ամուսնացած անձը մյուս ամուսնուց թաքցրել է ամուսնության պետական գրանցման պահին իր մոտ սեռավարակի (ընդ որում՝ մարդու իմունային անբավարարության վիրուսի), ինչպես նաև հոգեկան հիվանդության և թմրամոլության, թունամոլության առկայության փաստը, ապա մյուս ամուսինն իրավունք ունի ամուսնությունն անվավեր ձանաչելու համար դիմելու դատարան:

Դատարանը կարող է մերժել ամուսնացող անձի հետ կնքված ամուսնությունն անվավեր ձանաչելու մասին հայցը կնոջ հղիության կամ երեխա ծնվելու դեպքում, կամ եթե դա են պահանջում անչափահաս ամուսնու շահերը, ինչպես նաև ամուսնությունն անվավեր ձանաչելու մասին անչափահաս ամուսնու համաձայնության բացակայության դեպքում:


Դատարանը չի կարող ամուսնությունը ձանաչել կեղծ, եթե նման ամուսնություն գրանցած անձինք մինչև դատարանի կողմից գործի քննությունը, փաստորեն, ընտանիք են կազմել:

Ամուսնության դադարումից հետո ամուսնությունը չի կարող անվավեր ձանաչվել, բացառությամբ ամուսինների միջև օրենքով արգելված ազգակցական կապի առկայության կամ ամուսնության պետական գրանցման պահին ամուսիններից մեկի կողմից այլ չլուծված ամուսնության մեջ գտնվելու դեպքերի:

Դատարանի կողմից անվավեր ձանաչված ամուսնությունից հետո համատեղ ձեռք բերված գույքի նկատմամբ կիրառվում են բաժնային սեփականության մասին քաղաքացիական օրենսդրության նորմերը:

Հարկ է նկատել, որ ամուսնությունն անվավեր ձանաչած անձանց կնքած ամուսնական պայմանագիրը, որպես կանոն, ևս ձանաչվում է անվավեր: Ամուսնությունն անվավեր ձանաչելը չի ազդում այդպիսի ամուսնությունից ծնված կամ ամուսնությունն անվավեր ձանաչելու պահից հետո՝ երեք հարյուր օրվա ընթացքում, ծնված երեխաների իրավունքների վրա:

Եթե անվավեր ամուսնության արդյունքում բարեխիղճ կողմին պատճառվել է գույքային վնաս, ապա ամուսնությունն անվավեր ձանաչելու դեպքում այդ կողմն իրավունք ունի պահանջելու վնասի հատուցում վնաս պատճառող կողմից: Դատարանը կարող է բարեխիղճ կողմին, ով տեղյակ չի եղել ամուսնությանն արգելք հանդիսացող հանգամանքների մասին, հնարավորություն տալ մյուս կողմից ստանալու ալիմենտ՝ համատեղ կյանքի ընթացքում ձեռք բերված գույքի կետը:



Ամուսնությունն անվավեր ձանաչելու դեպքում բարեխիղճ ամուսինն իրավունք ունի պահպանելու ամուսնության պետական գրանցման ժամանակ ընտրված ազգանունը:

Անհրաժեշտ է հիշել, որ ամուսնությունն անվավեր ձանաչելը արգելք չէ անձին նորից ամուսնանալու համար:


ԾՆՈՂՆԵՐԻ ԵՎ ԶԱՎԱԿՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ամուսինները միմյանց հանդեպ իրավունքներ և պարտականություններ ունենալուց գատ նաև ունեն որոշակի պատասխանատվություն իրենց երեխաների հանդեպ: Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 36-րդ հոդվածի համաձայն՝ ծնողներն իրավունք ունեն և պարտավոր են հոգ տանել իրենց երեխաների դաստիարակության, առողջության, լիարժեք ու ներդաշնակ զարգացման և կրթության համար: Ծնողները պատասխանատվություն են կրում իրենց երեխաների դաստիարակության և զարգացման համար: Նրանք պարտավոր են հոգ տանել իրենց երեխաների առողջության, ֆիզիկական, հոգեկան, հոգևոր և բարոյական զարգացման մասին:

Ծնողները, երեխաների կարծիքը հաշվի առնելով հանդերձ, ունեն կրթական հաստատության և երեխաների ուսուցման ձևի ընտրության իրավունք մինչև երեխաների հիմնական ընդհանուր կրթություն ստանալը: Երեխաների իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը դրվում է նրանց ծնողների վրա:

Ծնողները համարվում են իրենց երեխաների օրինական ներկայացուցիչները և նրանց իրավունքների ու շահերի պաշտպանությամբ առանց լիազորագրի հանդես են գալիս ֆիզիկական և իրավաբանական անձանց հետ ցանկացած հարաբերություններում, ինչպես նաև դատարանում:

Ծնողների՝ միմյանցից առանձին ապրելու դեպքում երեխաների բնակության վայրը որոշվում է ծնողների համաձայնությամբ: Համաձայնության բացակայության դեպքում ծնողների միջև վեճը լուծում է դատարանը՝ ելնելով երեխաների շահերից և հաշվի առնելով տասը տարին լրացած երեխայի կարծիքը: Ընդ որում, դատարանը հաշվի է առնում երեխայի կապվածությունը ծնողներից յուրաքանչյուրի, քույրերի ու եղբայրների հետ, երեխայի տարիքը, ծնողների բարոյական և անձնական այլ հատկանիշներ, ծնողներից յուրաքանչյուրի և երեխայի միջև գոյություն ունեցող հարաբերությունները, երեխայի դաստիարակության ու զարգացման համար պայմաններ ստեղծելու հնարավորությունը (ծնողների գործունեության (աշխատանքի) բնույթը, նրանց գույքային ու ընտանեկան դրությունը և այլն):



Երեխայից առանձին ապրող ծնողն իրավունք ունի երեխայի հետ շփվելու, նրա դաստիարակությանը մասնակցելու, երեխայի կրթություն ստանալու հարցերը լուծելու:

Ծնողներն ունեն հավասար իրավունքներ և կրում են հավասար պարտականություններ իրենց երեխաների նկատմամբ (ծնողական իրավունքներ) անկախ այն հանգամանքից՝ երեխան ծնվել է ամուսնության ընթացքում, թե դրանից դուրս:

Ծնողը, որի հետ ապրում է երեխան, չպետք է խոչընդոտի մյուս ծնողի հետ երեխայի շփմանը, եթե նման շփումը վնաս չի պատճառում երեխայի ֆիզիկական ու հոգեկան առողջությանը, նրա բարոյական զարգացմանը: Ծնողներն իրավունք ունեն գրավոր համաձայնություն կնքելու երեխայից առանձին ապրող ծնողի կողմից ծնողական իրավունքների իրականացման մասին: Եթե ծնողները չեն կարող համաձայնության գալ, ապա նրանց կամ նրանցից մեկի պահանջով խնամակալության և հոգաբարձության մարմնի պարտադիր մասնակցությամբ վեճը լուծում է դատարանը:

Դատարանի վճիռը չարամտորեն չկատարելու դեպքում երեխայից առանձին ապրող ծնողի պահանջով դատարանը կարող է որոշում կայացնել երեխան նրան հանձնելու մասին՝ ելնելով երեխայի շահերից և հաշվի առնելով տասը տարին լրացած երեխայի կարծիքը:


Բացի այն, որ օրենսդիրը սահմանել է ծնողների պարտականությունն իրենց երեխաների դաստիարակության նկատմամբ, միևնույն ժամանակ նաև սահմանել է խորթ ծնողների պարտականությունը, ըստ որի՝ վերջիններս պարտավոր են դաստիարակել և խնամել իրենց ամուսնու՝ նախկին ամուսնությունից ծնված և իրենց հետ համատեղ ապրող երեխաներին (խորթ երեխաներին):

Պետք է հաշվի առնել, որ ծնողական իրավունքները դադարում են երեխաների տասնութ տարեկանը լրանալով, ինչպես նաև օրենսդրությամբ սահմանված կարգով երեխաների ամուսնանալու, օրենքով նախատեսված կարգով մինչև չափահաս դառնալը երեխաների կողմից լրիվ գործունակություն ձեռք բերելու դեպքերում:

Ամուսնության մեջ չգտնվող անչափահաս ծնողներն ունեն իրենց երեխայի հետ համատեղ ապրելու և նրա դաստիարակությանը մասնակցելու իրավունքներ:

Մինչև անչափահաս ծնողների ամուսնության տարիքը լրանալը նրանց երեխայի համար կարող է նշանակվել խնամակալ, որը անչափահաս ծնողների հետ համատեղ կիրականացնի այդ երեխայի դաստիարակությունը: Երեխայի խնամակալի և անչափահաս ծնողների միջև առաջացած տարաձայնությունները կարգավորում է խնամակալության և հոգաբարձության մարմինը: Ամուսնության մեջ չգտնվող անչափահաս ծնողներն իրավունք ունեն ընդհանուր սկզբունքներով ընդունելու կամ վիճարկելու իրենց հայրությունը և մայրությունը:

«Քաղաքացիական օրենսգրքի 29-րդ հոդվածը սահմանում է, որ տասնչորս տարեկան չդարձած անչափահասների (փոքրահասակների) փոխարեն գործարքները նրանց անունից կարող են կնքել միայն նրանց ծնողները, որոնց գրողները կամ խնամակալները:



Պետք է հիշել հետևյալ բացառությունը. վեցից մինչև տասնչորս տարեկան փոքրահասակները իրավունք ունեն ինքնուրույն կնքել՝

- 1) մանր կենցաղային գործարքներ,
- 2) նոտարական վավերացում կամ գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցում չպահանջող՝ անհատույց օգուտներ ստանալուն ուղղված գործարքներ,
- 3) օրինական ներկայացուցչի կամ վերջինիս համաձայնությամբ երրորդ անձանց կողմից որոշակի նպատակով կամ ազատորեն տնօրինելու համար տրամադրված միջոցները տնօրինելու գործարքներ:

Տասնչորսից մինչև տասնութե տարեկան անչափահասները կարող են գործարքներ կնքել իրենց օրինական ներկայացուցիչների՝ ծնողների, որդեգրողների կամ հոգաբարձուի գրավոր համաձայնությամբ:

Այդպիսի անչափահասի կնքած գործարքը վավեր է նաև նրա ծնողների, որդեգրողների կամ հոգաբարձուի՝ հետագայում տված գրավոր հավանության դեպքում:

Պետք է հիշել հետևյալ բացառությունը, որ տասնչորսից մինչև տասնութե տարեկան անչափահասները, առանց ծնողների, որդեգրողների կամ հոգաբարձուի համաձայնության, իրավունք ունեն՝


- 1) տնօրինելու իրենց աշխատավարձը, կրթաթոշակը և այլ եկամուտները,
- 2) իրականացնելու գիտության, գրականության կամ արվեստի ստեղծագործության, գյուտի կամ մտավոր գործունեության՝ օրենքով պահպանվող այլ արդյունքի հեղինակի իրավունքներ,
- 3) օրենքին համապատասխան՝ ավանդներ մուծելու վարկային հաստատություններ և տնօրինելու դրանք.
- 4) կնքելու կենցաղային մանր գործարքներ և ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 30-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսված այլ գործարքներ:

Տասնվեց տարեկան դառնալիս անչափահասներն իրավունք ունեն նաև, կոոպերատիվների մասին օրենքներին համապատասխան, լինելու կոոպերատիվի անդամ:

Խնամակալները խնամարկյալների ներկայացուցիչներն են օրենքի ուժով և նրանց անունից ու ի շահ նրանց կնքում են բոլոր անհրաժեշտ գործարքները:

Հոգաբարձուները համաձայնություն են տալիս այնպիսի գործարքներ կնքելու համար, որոնք հոգաբարձության ներքո գտնվող անձինք իրավունք չունեն ինքնուրույն կնքելու:

Պետք է հաշվի առնել, որ տասնչորս տարեկան չդարձած անչափահասի (փոքրահասակի) պատճառած վնասի համար պատասխանատվություն են կրում նրա ծնողները, որդեգրողները կամ խնամակալը, եթե չեն ապացուցում, որ վնասն անչափահասի (փոքրահասակի) մեղքով չի պատճառվել: Իսկ տասնչորսից մինչև տասնութե տարեկան անչափահասներն ընդհանուր հիմունքներով ինքնուրույն պատասխանատվություն են կրում իրենց պատճառած վնասի համար:



● ԵՐԵՆԱՅԻ ՍԵՐՄԱՆ ՓԱՍՏԻ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ

Երեխայի սերունդ մորից (մայրությունը) հաստատվում է երեխայի՝ բժշկական կազմակերպությունում տվյալ մորից ծնված լինելու փաստը հավաստող փաստաթղթերի, իսկ եթե երեխան ծնվել է բժշկական կազմակերպությունից դուրս՝ համապատասխան բժշկական փաստաթղթերի, վկաների հայտարարությունների կամ այլ ապացույցների հիման վրա:

Իրավիճակն այլ է, երբ խոսքը վերաբերում է հայրության ձանաչման փաստին:

Միմյանց հետ ամուսնության մեջ գտնվող անձանցից երեխայի ծնվելու դեպքում երեխայի հայր է ձանաչվում երեխայի մոր ամուսինը, որի համար հիմք է հանդիսանում ամուսնության պետական գրանցումը:

Երեխայի մոր հետ ամուսնության մեջ չգտնվող անձի հայրությունը որոշվում է քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցում իրականացնող մարմիններում՝ երեխայի հոր և մոր համատեղ դիմումի հիման վրա:


Տվյալ դեպքում մոր համաձայնությունը պարտադիր է, քանի որ դրա բացակայության դեպքում հայրությունը կարող է ձանաչվել միայն դատական կարգով:

Տասնչորս տարեկան չդարձած անչափահասների (փոքրահասակների) փոխարեն գործարքները նրանց անունից կարող են կնքել միայն նրանց ծնողները, որդեգրողները կամ խնամակալները: Տասնչորսից մինչև տասնութ տարեկան անչափահասները կարող են գործարքներ կնքել իրենց օրինական ներկայացուցիչների՝ ծնողների, որդեգրողների կամ հոգաբարձուի գրավոր համաձայնությամբ, բացառությամբ հետևյալ դեպքերի.

- 1) տնօրինել իրենց աշխատավարձը, կրթաթոշակը և այլ եկամուտները.
- 2) իրականացնել գիտության, գրականության կամ արվեստի ստեղծագործության, գյուտի կամ մտավոր գործունեության՝ օրենքով պահպանվող այլ արդյունքի հեղինակի իրավունքներ.
- 3) օրենքին համապատասխան՝ ավանդներ մուծել վարկային հաստատություններ և տնօրինել դրանք.
- 4) կնքել կենցաղային մանր գործարքներ և օրենքով նախատեսված այլ գործարքներ:

Պետք է հաշվի առնել, որ տասնչորս տարեկան չդարձած անչափահասի (փոքրահասակի) պատճառած վնասի համար պատասխանատվություն են կրում նրա ծնողները, որդեգրողները կամ խնամակալը, եթե չեն ապացուցում, որ վնասն անչափահասի (փոքրահասակի) մեղքով չի պատճառվել: Իսկ տասնչորսից մինչև տասնութ տարեկան անչափահասներն ընդհանուր հիմունքներով ինքնուրույն պատասխանատվություն են կրում իրենց պատճառած վնասի համար:

Պետք է հաշվի առնել, որ հայրության ձանաչումն իրականացվում է երկու ձանաչարհով՝ 1) հոր համաձայնությամբ, 2) դատական կարգով, երբ բացակայում է հոր համաձայնությունը իրեն որպես երեխայի հայր ձանաչելու վերաբերյալ:



Եթե անձը ամուսնության մեջ չի գտնվում երեխայի մոր հետ, ապա հայրությունը որոշվում է ԲԿԱԳ մարմնին ներկայացրած երեխայի հոր և մոր համատեղ դիմումի հիման վրա (թիվ 18 ձևը՝ կից սկավառակում):

Այնպիսի հանգամանքների առկայության դեպքում, որոնք հիմք են տալիս ենթադրելու, որ երեխայի ծնվելուց հետո հայրությունը որոշելու մասին համատեղ դիմում (թիվ 18 դիմումի ձևը՝ կից սկավառակում) ներկայացնելը կարող է դառնալ անհնար կամ դժվարանալ, ապագա երեխայի ծնողները, որոնք ամուսնության մեջ չեն գտնվում, քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցում իրականացնող մարմին նման դիմում կարող են ներկայացնել մոր հղիության ընթացքում: Այդ դեպքում երեխայի ծնողների մասին գրառումը կատարվում է երեխայի ծնվելուց հետո:

Երեխայի հայրությունը ձանաչելու պահանջով դատարան կարող են դիմել երեխայի մայրը, խնամակալը (հոգաբարձուն), կամ այն անձը, որի խնամքին է գտնվում երեխան, ինչպես նաև երեխան, եթե դարձել է չափահաս (դիմումի թիվ 18 ձևը՝ կից սկավառակում): Ընդ որում, չափահաս անձի նկատմամբ հայրության որոշում թույլատրվում է միայն իր համաձայնությամբ, իսկ եթե նա դատարանի կողմից ձանաչվել է անգործունակ՝ նրա խնամակալի (հոգաբարձուի) կամ խնամակալության և հոգաբարձության մարմնի համաձայնությամբ¹:

Դատարանում երեխայի հայրությունը ձանաչելու պահանջ քննելիս դատարանը հաշվի է առնում ցանկացած ապացույց, որը ստույգ հաստատում է, որ տվյալ երեխան սերվել է որոշակի անձից:

Մասնավորապես՝ որպես սերման փաստը հավաստող ապացույց կարող է հանդիսանալ համապատասխան մարմնի կողմից կատարված փորձաքննության արդյունքում տրված եզրակացությունը:


Պետք է հաշվի առնել, որ հայրությունը որոշելիս երեխաները ծնողների և նրանց ազգականների նկատմամբ ունեն նույնպիսի իրավունքներ ու պարտականություններ, ինչպիսիք ունեն ամուսնության մեջ գտնվող անձանցից ծնված երեխաները:

● ԵՐԵՆԱՅԻ ԼՔՄԱՆ ՓԱՍՏԻ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ

Ցավոք սրտի, մեր օրերում հաճախ է լինում, երբ երեխայի ծնողները հրաժարվում են երեխայից՝ թողնելով նրան ձակատագրի քմահաճույքին: ՀՀ օրենսդրությամբ սահմանված չէ դատական կարգով երեխայի լքման փաստի ձանաչումը:

¹ Խնամակալության և հոգաբարձության մարմինները տեղական ինքնակառավարման մարմիններն են՝ համայնքների ղեկավարները:

Խնամակալություն սահմանվում է տասնչորս տարին չլրացած անչափահասների, ինչպես նաև հոգեկան խանգարման հետևանքով դատարանով անգործունակ ճանաչված քաղաքացիների նկատմամբ: Հոգաբարձությունը սահմանվում է տասնչորսից մինչև տասնութ տարեկան անչափահասների, ինչպես նաև սահմանափակ գործունակ ճանաչված քաղաքացիների նկատմամբ:



Նման դեպքում լքված երեխա հայտնաբերելիս նախ և առաջ անհրաժեշտ է դիմել իրավապահ մարմիններին, որոնք կձեռնարկեն բոլոր հնարավոր միջոցները երեխայի անձը հաստատելու, վերջինիս ծնողներին հայտնաբերելու համար:

● **ԵՐԵՒԱՅԻ ԱՆՎԱՆ ԵՎ ԱԶԳԱՆՎԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ**

Երեխան ունի անուն, հայրանուն և ազգանուն ունենալու իրավունք: Երեխային անուն տրվում է ծնողների համաձայնությամբ, իսկ հայրանուն տրվում է հոր անունով: Երեխայի ազգանունը որոշվում է ծնողների ազգանունով:

Ամուսնալուծությունից կամ ամուսնությունն անվավեր ձանաչելուց հետո երեխան շարունակում է պահպանել իր ազգանունը:

Եթե երեխայի հայրությունը չի որոշվել, ապա նրան անուն է տրվում մոր ցուցումով, հայրանուն՝ որպես երեխայի հայր գրառված անձի անունով, ազգանուն՝ մոր ազգանունով:

Մինչև երեխայի տասը տարին լրանալը նրա ծնողների համատեղ դիմումի հիման վրա քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցում իրականացնող մարմինները փոխում են երեխայի անունը, ինչպես նաև նրան տրված ազգանունը մյուս ծնողի ազգանունով:

Եթե ծնողներն ապրում են առանձին, և ծնողը, որի մոտ ապրում է երեխան, ցանկանում է նրան տալ իր ազգանունը, այդ հարցը լուծվում է՝ հաշվի առնելով մյուս ծնողի կարծիքը:


Մյուս ծնողի կարծիքը հաշվի առնելը պարտադիր չէ, եթե՝ 1) հնարավոր չէ պարզել նրա բնակության վայրը, 2) նա գրկված է ծնողական իրավունքներից, 3) նա դատարանի կողմից ձանաչված է անգործունակ, 4) նա, առանց հարգելի պատճառների, խուսափում է երեխային դաստիարակելուց ու պահելուց:

Անհրաժեշտ է հաշվի առնել, որ տասը տարին լրացած երեխայի անունը փոխելը կարող է կատարվել երեխայի համաձայնությամբ, իսկ ազգանունը փոխելը՝ հաշվի առնելով երեխայի կարծիքը:

● **ԾՆՈՂԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄԸ ԵՎ ԴՐԱՆՑԻՑ ԶՐԿՈՒՄԸ**

Հաշվի առնելով, որ օրենքն առավել ուշադրություն է դարձնում երեխաների շահերին, նախատեսում է նաև համապատասխան միջոցներ այդ շահերի պաշտպանության համար, օրինակ՝ ծնողների իրավունքների, պարտականությունների սահմանափակումը կամ դրանցից զրկումը:

Պետք է հիշել, որ ծնողների իրավունքները կարող են սահմանափակվել միայն դատարանի կողմից: Այդ դեպքում ելնելով երեխայի շահերից՝ դատարանը կարող է վճիռ կայացնել ծնողներից (ծնողներից մեկից) երեխային վերցնելու մասին (ծնողական իրավունքների սահմանափակում)՝ առանց ծնողական իրավունքներից զրկելու:



Ծնողական իրավունքների սահմանափակում թույլատրվում է, եթե երեխային ծնողների կամ նրանցից մեկի հետ թողնելը վտանգավոր է ծնողներից (կամ նրանցից մեկից) անկախ հանգամանքներից (հոգեկան կամ այլ քրոնիկ հիվանդություն, ծանր հանգամանքների առկայություն և այլն):

Անհրաժեշտ է հիշել, թե ինչպիսի հետևանք է ունենում ծնողական իրավունքների սահմանափակումը:

Ծնողները, որոնց ծնողական իրավունքները սահմանված կարգով սահմանափակվել են, կորցնում են երեխային անձամբ դաստիարակելու իրավունքը, ինչպես նաև երեխաներ ունեցող քաղաքացիների համար սահմանված արտոնություններ ու պետական նպաստներ ստանալու իրավունքը: Միևնույն ժամանակ, ծնողական իրավունքների սահմանափակումը, ինչպես նաև իրավունքներից զրկումը ծնողներին չի ազատում երեխայի ապրուստը հոգալու պարտականությունից:

Ծնողների ծնողական իրավունքների սահմանափակման դեպքում երեխան հանձնվում է խնամակալության և հոգաբարձության մարմինների խնամքին: Այդ դեպքում ծնողներին կարող է թույլատրվել կապ ունենալ երեխայի հետ, եթե դա երեխայի վրա բացասական ազդեցություն չի ունենա:


Եթե վերացել են այն հանգամանքները, որոնց հիման վրա սահմանափակվել են ծնողների կամ նրանցից մեկի ծնողական իրավունքները, ապա դատարանը ծնողների կամ նրանցից մեկի հայցի (ձևը՝ կից սկավառակում) հիման վրա կարող է վճիռ կայացնել երեխային իր ծնողներին կամ նրանցից մեկին վերադարձնելու և սույն օրենսգրքով նախատեսված սահմանափակումները վերացնելու մասին:

Հաշվի առնելով տասը տարին լրացած երեխայի կարծիքը՝ դատարանը կարող է մերժել հայցի բավարարումը, եթե երեխային իր ծնողներին կամ նրանցից մեկին վերադարձնելը հակասում է նրա շահերին:

Բացի այն, որ օրենսդիրը սահմանում է ծնողների իրավունքների սահմանափակում, միևնույն ժամանակ նախատեսում է նաև ծնողական իրավունքից զրկում: Ծնողական իրավունքից զրկելը հանդիսանում է ծայրահեղ միջոց, որը կիրառվում է ծնողների նկատմամբ, քանի որ զրկվելով ծնողական իրավունքներից՝ ծնողը զրկվում է իր երեխայի նկատմամբ բոլոր իրավունքներից:

Ծնողական իրավունքից զրկելու հիմքեր են, եթե նրանք՝

- ա) չարամտորեն խուսափում են ծնողական պարտականությունները կատարելուց, ընդ որում՝ ալիմենտ վճարելուց,
- բ) առանց հարգելի պատճառների հրաժարվում են վերցնել իրենց երեխային ծննդատնից կամ բժշկական այլ կազմակերպությունից, ինչպես նաև դաստիարակչական, ազգաբնակչության սոցիալական պաշտպանության կամ նմանատիպ այլ կազմակերպություններից,



- զ) չարաշահում են իրենց ծնողական իրավունքները, ընդ որում՝ իրենց հակաբարոյական վարքագծով վնասակար ազդեցություն են գործում երեխաների վրա,
- դ) դաժանաբար են վարվում երեխաների հետ, ընդ որում՝ ֆիզիկական կամ հոգեկան բռնություն են գործադրում նրանց նկատմամբ, ոտնձգություն են կատարում նրանց սեռական անձեռնմխելիությանը,
- ե) տառապում են քրոնիկ ալկոհոլամոլությամբ կամ թմրամոլությամբ, թունամոլությամբ,
- զ) կատարել են իրենց երեխաների դեմ դիտավորյալ հանցագործություն:


Ահա այս հիմքերից թեկուզ և մեկի առկայության դեպքում ծնողը կամ ծնողները կարող են գրկվել իրենց ծնողական իրավունքից դատական կարգով:

Պետք է հիշել, որ ծնողական իրավունքներից զրկված ծնողները կորցնում են այն երեխայի հետ ազգակցության փաստի վրա հիմնված բոլոր իրավունքները, որի նկատմամբ ծնողական իրավունքներից նրանք զրկվել են (ընդ որում՝ նրանցից ապրուստի միջոց ստանալու, ինչպես նաև երեխաներ ունեցող քաղաքացիների համար սահմանված արտոնությունների ու պետական նպատուների իրավունքները):

Էական է այն հանգամանքը, որ ծնողական իրավունքներից զրկելը ծնողներին չի ազատում իրենց երեխայի ապրուստը հոգալու պարտականությունից: Բացի այդ, երեխան պահպանում է բնակելի տարածության սեփականության կամ բնակելի տարածության օգտագործման իր իրավունքը, ինչպես նաև ժառանգություն ստանալու իրավունքը:

Երեխայի և ծնողական իրավունքներից զրկված ծնողների կամ նրանցից մեկի հետագայում համատեղ ապրելու մասին հարցը լուծվում է դատական կարգով:

Ծնողական իրավունքները կարող են վերականգնվել, եթե ծնողները կամ նրանցից մեկը փոխել են իրենց վարքագիծը, կենսաձևը և (կամ) երեխայի դաստիարակության նկատմամբ վերաբերմունքը, ընդ որում՝ ծնողական իրավունքները վերականգնվում են դատական կարգով՝ ծնողական իրավունքներից զրկված ծնողի դիմումի հիման վրա: Տասը տարին լրացած երեխայի նկատմամբ ծնողական իրավունքների վերականգնումը կատարվում է՝ հաշվի առնելով նրա կարծիքը: Սակայն ծնողական իրավունքների վերականգնում չի թույլատրվում, եթե երեխան որդեգրված է, և որդեգրումը սահմանված կարգով չի վերացվել:



● ԾՆՈՂՆԵՐԻ ՈՒ ԶԱՎԱԿՆԵՐԻ ԱԼԻՄԵՆՏԱՅԻՆ ԴԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Մենք արդեն վերը նշեցինք, որ երեխաների մասին հոգ տանելու ծնողների սահմանադրական պարտականության ապահովման տեսակներից են ալիմենտային պարտավորությունները:

Մինևոյն ժամանակ պետք է հիշել, որ անաշխատունակ կամ կարիք ունեցող ծնողների նկատմամբ հոգ տանելու պարտավորություն ունեն նաև չափահաս երեխաները:

Երեխաներին ապրուստի միջոց տրամադրելու կարգն ու պայմանները ծնողները որոշում են ինքնուրույն, իսկ անհամաձայնության դեպքում՝ դատարանի միջոցով:


Պետք է նկատի ունենալ, որ ծնողների միջև երեխաների համար ալիմենտ վճարելու վերաբերյալ համաձայնության բացակայության դեպքում դատարանն իրավունք ունի բռնագանձվող ալիմենտի ամենամսյա չափը սահմանել կայուն դրամական գումարով կամ միաժամանակ և՛ դրամական կայուն գումարով, և՛ բաժիններով: Դատարանի համար կայուն դրամական գումարի չափը որոշելիս առաջնային է երեխայի նախկին կենսապահովման մակարդակի առավելագույն պահպանման հնարավորությունը՝ հաշվի առնելով նաև կողմերի գույքային ու ընտանեկան դրությունը և ուշադրության արժանի շահերը:

Անհրաժեշտ է հիշել, որ ալիմենտ վճարվում է ոչ միայն անչափահասներին, այլև ծնողները պարտավոր են ապրուստի միջոցներ տրամադրել իրենց օգնության կարիքն ունեցող անաշխատունակ չափահաս զավակներին:

Համաձայնության բացակայության և բացառիկ հանգամանքների առկայության (ծանր հիվանդություն, երեխաների կամ անաշխատունակ չափահաս անուսուցիչ զավակների խեղում, նրանց նկատմամբ հատուկ խնամքի համար վճարելու անհրաժեշտություն և այլն) դեպքում ծնողներից յուրաքանչյուրը կարող է դատարանի վճռով ներգրավվել այդ հանգամանքներից բխող լրացուցիչ ծախսեր կրելու գործին:

Անաշխատունակ է հանդիսանում այն անձը, ով համապատասխան բժշկական եզրակացության հիման վրա ձանաչվել է անաշխատունակ (այսինքն՝ սահմանափակված է աշխատանքային պարտականությունները լրիվ կամ մասնակի իրականացնելու հարցում):

Մեկ անգամ սահմանված ալիմենտի չափը շահագրգիռ անձի կողմից կարող է փոփոխվել դատարանի վճռով, եթե առկա է գույքային կամ ընտանեկան դրության փոփոխություն (օրինակ՝ եթե ամուսնալուծված կինը կորցնում է իր աշխատանքը, սակայն վերջինիս խնամքին է գտնվում անչափահաս երեխան, կամ ամուսնալուծված ամուսինը, ով վճարում էր ալիմենտ, ամուսնացել է և փոխվել է նրա ընտանեկան դրությունը):



Ալիմենտի պահանջի և դրա չափի փոփոխության վերաբերյալ դատարան դիմելու ձևերը կարող եք գտնել կից սկավառակում:


Կարևոր է նաև այն հանգամանքը, որ ամուսինները պարտավոր են նյութապես օժանդակել միմյանց: Այդպիսի օժանդակությունը մերժվելու և ալիմենտ վճարելու վերաբերյալ ամուսինների միջև համաձայնության բացակայության դեպքում դրա համար անհրաժեշտ միջոցներ ունեցող մյուս ամուսնուց դատական կարգով ալիմենտ պահանջելու իրավունք ունի՝ ա) անաշխատունակ անապահով ամուսինը, բ) կինը հղիության ընթացքում, ինչպես նաև ընդհանուր երեխային խնամող ամուսինը մինչև երեխայի երեք տարին լրանալը, գ) անապահով ամուսինը, որ խնամում է մանկուց հաշմանդամ ընդհանուր երեխային կամ առաջին խմբի հաշմանդամ չափահաս զավակին:

● ԸՆՏԱՆԻՔԻ ՄՅՈՒՍ ԱՆ ԴԱՄՆԵՐԻ ԱԼԻՄԵՆՏԱՅԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

« ընտանեկան օրենսգրքով բացի ամուսիններից, ալիմենտային պարտականություններ են դրվում նաև ընտանիքի մյուս անդամների վրա: Մասնավորապես, օգնության կարիք ունեցող անչափահաս եղբայրներն ու քույրերը իրենց ծնողներից ապրուստի միջոց ստանալու անհնարինության դեպքում բավարար միջոցներ ունեցող իրենց չափահաս աշխատունակ եղբայրներից ու քույրերից դատական կարգով ալիմենտ ստանալու իրավունք ունեն: Նույնպիսի իրավունք տրվում է նաև օգնության կարիք ունեցող չափահաս անաշխատունակ եղբայրներին ու քույրերին, եթե նրանք չեն կարող ապրուստի միջոց ստանալ իրենց չափահաս աշխատունակ զավակներից, ամուսնուց (նախկին ամուսնուց) կամ ծնողներից:

Օգնության կարիք ունեցող անչափահաս թոռներն իրենց ծնողներից ապրուստի միջոց ստանալու անհնարինության դեպքում անհրաժեշտ միջոցներ ունեցող իրենց **պապերից ու տատերից դատական կարգով ալիմենտ ստանալու իրավունք ունեն:** Նույնպիսի իրավունք տրվում է օգնության կարիք ունեցող չափահաս անաշխատունակ թոռներին, եթե նրանք չեն կարող ապրուստի միջոց ստանալ իրենց ամուսիններից (նախկին ամուսիններից) կամ ծնողներից: Նման իրավունք է վերապահված նաև օգնության կարիք ունեցող անաշխատունակ պապերին և տատերին:

Օգնության կարիք ունեցող **անաշխատունակ խորթ հայրը և խորթ մայրը**, որ դաստիարակել ու պահել են իրենց խորթ զավակներին հինգ տարուց ոչ պակաս, իրավունք ունեն դրա համար անհրաժեշտ բավարար միջոցներ ունեցող չափահաս աշխատունակ խորթ զավակներից դատական կարգով պահանջելու ապրուստի միջոց, եթե նրանք չեն կարող ապրուստի միջոց ստանալ իրենց չափահաս աշխատունակ զավակներից կամ ամուսիններից (նախկին ամուսիններից):



Անհրաժեշտ է հիշել, որ ալիմենտի չափը և վճարելու կարգը կարող են որոշվել կողմերի համաձայնությամբ: Կողմերի համաձայնության բացակայության պարագայում դատական կարգով: Ալիմենտ վճարելու վերաբերյալ համաձայնությունը կնքվում է գրավոր և ենթակա է նոտարական վավերացման: Ալիմենտ վճարելու վերաբերյալ համաձայնությունը ցանկացած ժամանակ կարող է փոփոխվել կամ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ:

● ԱԼԻՄԵՆՏԻ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

Խոսելով ալիմենտային պարտականություններից՝ նշեցինք, որ ալիմենտ վճարելու վերաբերյալ համաձայնության բացակայության դեպքում ընտանիքի անդամները կարող են ալիմենտ բռնագանձելու պահանջով դիմել դատարան:


Տիշե՛ք, որ ալիմենտի բռնագանձման պահանջով դատարան հայց ներկայացնելիս հայցվորն ազատվում է պետական տուրք վճարելուց:

Ալիմենտի հաշվարկման սկիզբ է հանդիսանում ալիմենտի բռնագանձման պահանջով դատարան դիմելու օրը:

Պետք է հիշել հետևյալ բացառությունը, որ անցած ժամանակահատվածի համար ալիմենտ կարող է բռնագանձվել դատարան դիմելու պահին նախորդող երեք տարվա համար, եթե դատարանով հաստատվել է, որ մինչև դատարան դիմելը միջոցներ են ձեռնարկվել ապրուստի միջոց ստանալու համար, բայց ալիմենտը չի ստացվել ալիմենտ վճարելու պարտավոր անձի կողմից դա վճարելուց խուսափելու հետևանքով: Օրինակ՝ հեռագրով, նամակով, այլ հաղորդակցության միջոցներով դիմել եք անձին՝ պահանջելով ապրուստի միջոց, սակայն Ձեր պահանջը մնացել է անպատասխան կամ նույն ձևով գրավոր մերժվել է:

Բռնագանձվող ալիմենտի չափը որոշում է դատարանը՝ ելնելով կողմերի գույքային և ընտանեկան դրությունից:


Եթե ալիմենտ վճարողն աշխատում է, ապա վերջինիս աշխատավայրի (կազմակերպության) վարչակազմը պարտավոր է կատարողական թերթի կամ վերջինիս համաձայնության դեպքում յուրաքանչյուր ամիս ալիմենտ պահել այդ անձի աշխատավարձից և (կամ) այլ եկամտից և վճարել կամ դրանք փոխանցել ալիմենտ ստացողին՝ ալիմենտ




վճարելու պարտավոր անձին աշխատավարձի և (կամ) այլ եկամտի վճարման պահից ոչ ուշ, քան եռօրյա ժամկետում:

Անհրաժեշտ է նկատի ունենալ, որ ալիմենտը չի կարող հաշվակցվել այլ հակընդդեմ պահանջներով:

Դա նշանակում է, որ ալիմենտի բռնագանձման պահանջ ներկայացնելիս չի թույլատրվում հակընդդեմ հայցով ներկայացնել այլ գումարի բռնագանձման պահանջ, որը պետք է հաշվանցվի (նվազեցվի) պահանջվող ալիմենտի գումարից:






Ալիմենտ բռնագանձելու կատարողական վարույթներով բռնագանձումը տարածվում է պարտապանի գույքի վրա, եթե նա չի ստանում աշխատավարձ, կենսաթոշակ կամ չունի այլ եկամուտներ:

Ալիմենտ բռնագանձելու կատարողական վարույթներով պարտապանի գույքն իրացվում է այն հաշվով, որպեսզի գույքի հարկադիր իրացումից ստացված միջոցները բավարարեն մինչև 3 տարի ժամանակահատվածի համար ալիմենտային պահանջների բավարարումը, սակայն ոչ ավելի, քան ալիմենտային պահանջների բավարարման ժամկետի ավարտը:

Բռնագանձված գումարները կապիտալացվում են և փոխանցվում հարկադիր կատարման ծառայության դեպոզիտ հաշիվ: Այդ գումարների հատկացումը պահանջատիրոջը կատարվում է կատարողական թերթով սահմանված չափով և պարբերականությամբ:

Եթե մինչև կապիտալացված միջոցների լրիվ բաշխումը պահանջատերը սահմանված կարգով հրաժարվել է պահանջից, կամ օրենքով սահմանված այլ հիմքերով դադարել է ալիմենտային պարտավորությունը, ապա դեպոզիտ հաշվում մնացած միջոցները վերադարձվում են պարտապանին:


Ալիմենտ վճարելու կարգի հիմնական պայմաններին ծանոթանալիս պետք է հիշել, որ եթե ալիմենտ վճարողը, ում վրա դատական կարգով դրված է ալիմենտի վճարման պարտավորություն, խուսափում է իր պարտականությունը կատարելուց, ապա նա կարող է ենթարկվել քրեական պատասխանատվության:




ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅՈՒՆ

Ընտանեկան իրավունքի ամենակարևոր ինստիտուտներից է նաև խնամակալությունն ու հոգաբարձությունը:

Ինչ են դրանք իրենցից ներկայացնում: Խնամակալությունը և հոգաբարձությունը սահմանվում են անգործունակ կամ սահմանափակ գործունակ քաղաքացիների իրավունքների և շահերի պաշտպանության համար: Անչափահասների նկատմամբ խնամակալություն և հոգաբարձություն սահմանվում է նաև նրանց դատարարակելու նպատակով: Խնամակալության և հոգաբարձության մարմինները տեղական ինքնակառավարման մարմիններն են:





Այդ դեպքերում երեխաների իրավունքների և շահերի պաշտպանությունը դրվում է խնամակալության և հոգաբարձության մարմինների վրա:

Խնամակալություն սահմանվում է տասնչորս տարին չլրացած անչափահասների, ինչպես նաև հոգեկան խանգարման հետևանքով դատարանով անգործունակ ձանաչված քաղաքացիների նկատմամբ:


Հոգաբարձությունը սահմանվում է տասնչորսից մինչև տասնութ տարեկան անչափահասների, ինչպես նաև սահմանափակ գործունակ ձանաչված քաղաքացիների նկատմամբ:

Խնամակալ կամ հոգաբարձու նշանակում է խնամակալության ու հոգաբարձության կարիք ունեցող անձի բնակության վայրի խնամակալության և հոգաբարձության մարմինը մեկ ամսվա ընթացքում, սկսած այն օրվանից, երբ նշված մարմնին հայտնի է դարձել քաղաքացու նկատմամբ խնամակալություն կամ հոգաբարձություն սահմանելու անհրաժեշտությունը: **Խնամակալության և հոգաբարձության մարմինները** բացահայտում են առանց ծնողական խնամքի մնացած երեխաներին, վարում են նման երեխաների հաշվառումը և, ելնելով ծնողական խնամքից զրկվելու որոշակի հանգամանքներից, ընտրում են այդ երեխաներին տեղավորելու ձևերը:

Խնամակալություն կամ հոգաբարձություն սահմանվում է այն երեխաների նկատմամբ, ովքեր նաև մնացել են առանց ծնողական խնամքի՝ նրանց պահելու, դաստիարակելու և կրթություն տալու, ինչպես նաև նրանց իրավունքները և շահերը պաշտպանելու նպատակներով:

Երեխաների խնամակալներ (հոգաբարձուներ) կարող են նշանակվել միայն չափահաս գործունակ անձինք՝ իրենց համաձայնությամբ: Խնամակալ (հոգաբարձու) չեն նշանակվում քրոնիկ ալկոհոլամոլությամբ կամ թմրամոլությամբ, թունամոլությամբ հիվանդ անձինք, կյանքի և առողջության նկատմամբ դիտավորյալ հանցագործություններ կատարած անձինք, խնամակալների (հոգաբարձուների) պարտականություններից հեռացված անձինք, ծնողական իրավունքներից զրկված անձինք, ծնողական սահմանափակ իրավունքներով անձինք, նախկին որդեգրողները, եթե որդեգրումը վերացվել է նրանց մեղքով, ինչպես նաև այն անձինք, ովքեր առողջական վիճակով չեն կարող իրականացնել երեխայի դաստիարակության պարտականությունը: Խնամակալը (հոգաբարձուն) իրավունք չունի խոչընդոտելու ծնողների և մերձավոր այլ ազգականների հետ երեխայի շփվելուն, բացառությամբ, երբ նման շփումը չի համապատասխանում երեխայի շահերին:

Խնամակալն ու հոգաբարձուն խնամակալության (հոգաբարձության) տակ գտնվող երեխայի նկատմամբ խնամակալության և հոգաբարձության պարտականությունները կատարում են անհատույց:



● ԵՐԵՆԱՆԵՐԻ ՈՐԴԵԳՐՈՒՄԸ (ԴՍՏԵՐԱԳՐՈՒՄԸ)

Աշխարհում շատ երեխաներ կան, ովքեր ունեն ծնողական խնամքի և հոգատարության անհրաժեշտություն: Այդ հիմքով պետությունը փորձել է ստեղծել այնպիսի մի ինստիտուտ, ինչպիսին որդեգրումն է, որի միջոցով որդեգրողները և որդեգրվածները ձեռք են բերում ծնողների և զավակների համար օրենքով նախատեսված իրավունքներ և պարտականություններ:


Որդեգրում թույլատրվում է միայն երեխաների նկատմամբ և ելնելով նրանց շահերից՝ պահպանելով էթնիկական ծագումը, որոշակի կրոնական ու մշակութային պատկանելությունը, մայրենի լեզուն, դաստիարակության ու կրթության գործում հաշորդականությունն ապահովելու հնարավորությունները, ինչպես նաև հաշվի առնելով երեխաների լիարժեք ֆիզիկական, հոգեկան, հոգևոր և բարոյական զարգացումն ապահովելու հնարավորությունները:

Էական է այն պարտադիր պայմանը, ըստ որի՝ չի թույլատրվում եղբայրների ու քույրերի որդեգրումը տարբեր անձանց կողմից, բացառությամբ այն դեպքերի, երբ այդ որդեգրումը ելնում է երեխաների շահերից:

Որդեգրումը կատարվում է որդեգրել ցանկացող այն չափահաս անձանց խնդրանքով, ովքեր հաշվառված են որպես որդեգրողի թեկնածու: Եթե մինևույն երեխային որդեգրելու ցանկություն ունեն ամուսինները, ապա երկուսն էլ պետք է հաշվառվեն որպես որդեգրողի թեկնածուներ: Անձը որպես որդեգրողի թեկնածու հաշվառվում է որդեգրման հնարավորության մասին գրավոր դրական եզրակացության հիման վրա:

Հայաստանի Հանրապետության այն քաղաքացիները, ովքեր ցանկանում են երեխա որդեգրել, դիմում են իրենց բնակության վայրի մարզային (Երևանի քաղաքային) հանձնաժողովին՝ ներկայացնելով դիմում,

- անձնագիր կամ անձը հաստատող այլ փաստաթուղթ,
- տեղեկանք բնակության վայրից՝ բնակարանային պայմանների և ընտանիքի կազմի մասին,
- տեղեկանք աշխատավայրից՝ զբաղեցրած պաշտոնի և աշխատավարձի մասին (եթե աշխատում է),
- բնութագիր՝ տրված վստահություն վայելող առնվազն երեք անձանց (կազմակերպությունների) կողմից,
- հարկային օրենսդրությանը համապատասխան տրված եկամուտների վերաբերյալ հայտարարագիր կամ հարկային (բանկային) տեղեկանք,
- առողջական վիճակի վերաբերյալ բժշկական փաստաթուղթ՝ տրված ըստ բնակության վայրի բժշկական հաստատության, համապատասխան մասնագիտացված կենտրոնների (մասնագետների) կողմից,
- ամուսնության վկայական (եթե ամուսնացած է),
- մահվան վկայական (եթե մահացած է),
- որդեգրման ենթակա երեխայի մասին տվյալներ՝ տարիքը, սեռը, երեխաների թիվը և այլն (եթե նա չունի ընտրած երեխա):



Որպես որդեգրման ենթակա երեխաներ հաշվառվում են այն անչափահաս երեխաները, որոնց որդեգրման համար առաջացել են իրավական հիմքեր: Որդեգրումն առաջանում է այն անչափահաս երեխաների նկատմամբ, որոնց միակ ծնողը կամ երկու ծնողները՝

- ա) մահացել են,
- բ) գրկված են ծնողական իրավունքից,
- գ) դատական կարգով ձանաչված են անգործունակ, անհայտ բացակայող կամ մահացած,
- դ) տվել են որդեգրման գրավոր համաձայնություն,
- ե) մեկ տարուց ավելի երեխայի հետ համատեղ չեն բնակվում և, չնայած խնամակալության և հոգաբարձության մարմինների նախագգուշացմանը, խուսափում են երեխայի դաստիարակությունից ու խնամքից, երեխայի նկատմամբ չեն դրսևորում ծնողական հոգատարություն և ուշադրություն,
- ե) անհայտ են (ընկեցիկ երեխաներ),
- զ) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված այլ դեպքերում:

Որդեգրողի թեկնածուն ընտրված երեխայի կապակցությամբ դիմում է իր կամ որդեգրման ենթակա երեխայի բնակության վայրի համայնքի ղեկավարին՝ սահմանված կարգով որդեգրման մասին որոշում ընդունելու համար: Որդեգրման մասին որոշում ընդունելու համար համայնքի ղեկավարին պետք է ներկայացվի՝

- տեղեկանք որդեգրողի թեկնածուի և որդեգրման ենթակա երեխայի կենտրոնացված հաշվառման մասին,
- դիմում՝ ընտրված երեխային որդեգրելու խնդրանքով,
- որդեգրման հնարավորության մասին եզրակացությունը,
- անձնագիրը կամ անձը հաստատող այլ փաստաթուղթ,
- առողջական վիճակի վերաբերյալ բժշկական փաստաթուղթ,
- որդեգրման ենթակա երեխայի ազգանունը, անունը, հայրանունը, ծննդյան վայրը փոփոխելու վերաբերյալ առաջարկություն:


Եթե որդեգրման ենթակա երեխան որդեգրվում է երկու ամուսինների կողմից, ապա տրվում է համատեղ դիմում: Երեխան մեկ ամուսնու կողմից որդեգրվելու դեպքում դիմումին կցվում է մյուս ամուսնու գրավոր համաձայնությունը:

Որդեգրումը կատարում է դատարանը՝ երեխային որդեգրել ցանկացող անձի (անձանց) դիմումով (տե՛ս թիվ 20 դիմումի ձևը կից սկավառակում):

Երեխայի որդեգրումը հաստատելու մասին գործի քննությունը դատարանը կատարում է հատուկ վարույթի՝ քաղաքացիական դատավարության օրենսդրությամբ սահմանված կարգով: Այն իր մեջ ներառում է հետևյալ պարտադիր պայմանները.

- Երեխաների որդեգրումը հաստատելու մասին գործերը դատարանը քննում է խնամակալության և հոգաբարձության մարմնի և որդեգրել ցանկացող անձի պարտադիր մասնակցությամբ:

- Երեխայի որդեգրման համար անհրաժեշտ է Հայաստանի Հանրապետության մարզպետարանների (Երևանի քաղաքապետարանի) եզրակացությունը՝ որդեգրման հիմնավորվածության և այդ որդեգրումը որդեգրվող երեխայի շահերին համապատասխանելու մասին՝ նշելով



որդեգրվող երեխայի և որդեգրողի (որդեգրողների) անձնական շփումների փաստի վերաբերյալ տեղեկություններ:


Որդեգրել ցանկացող անձինք որդեգրման գործընթացին կարող են մասնակցել անմիջականորեն կամ իրենց օրինական ներկայացուցիչների միջոցով:


Երբ են ծագում երեխայի և որդեգրողի (որդեգրողների) իրավունքներն ու պարտականությունները:

Այդ իրավունքները ծագում են դատարանի վճիռն օրինական ուժի մեջ մտնելու պահից: Ընդ որում՝ այն ենթակա է պետական գրանցման՝ «Քաղաքացիական կացության ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

Երեխաներ որդեգրել ցանկացող անձանց հաշվառումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով (տե՛ս ՀՀ աշխատանքային և սոցիալական հարցերի նախարարի 25.12.2007 թվականի թիվ 188-Ն հրամանը):

Որդեգրողներ կարող են լինել չափահաս անձինք, սակայն կան որոշ բացառություններ (տե՛ս ներքևի սխեման):





Բացի այդ, ամուսնության մեջ չգտնվող անձինք չեն կարող համատեղ որդեգրել միևնույն երեխային: Միևնույն երեխային միաժամանակ որդեգրել ցանկացող մի քանի անձանց առկայության դեպքում նախապատվության իրավունք տրվում է երեխայի ազգականներին և խորթ ծնողներին: Ամուսնության մեջ չգտնվող որդեգրողի և որդեգրվող երեխայի տարիքային տարբերությունը պետք է լինի տասնութ տարուց ոչ պակաս:

Երեխային որդեգրելու համար անհրաժեշտ է նրա ծնողների գրավոր համաձայնությունը, իսկ եթե ծնողներն անչափահաս են, ապա վերջիններիս ծնողների կամ խնամակալների (հոգաբարձուների) համաձայնությունը, վերջիններիս ծնողների կամ խնամակալի (հոգաբարձուի) բացակայության դեպքում՝ խնամակալության և հոգաբարձության մարմնի համաձայնությունը:

Անհրաժեշտ է հիշել, որ ծնողները կարող են հետ վերցնել երեխային որդեգրելու համար իրենց տված համաձայնությունը մինչև նրան որդեգրելու մասին դատարանի վճիռն օրինական ուժի մեջ մտնելը:

Ծնողները կարող են համաձայնություն տալ երեխային որդեգրելու որոշակի անձի կողմից կամ առանց նշելու որոշակի անձի: **Երեխա որդեգրելու համար համաձայնությունը կարող է տրվել միայն երեխայի ծնվելուց հետո:**


Երեխային որդեգրելու համար նրա ծնողների համաձայնությունը չի պահանջվում այն դեպքերում, երբ՝ ա) նրանք անհայտ են, կամ դատարանը ձանաչել է անհայտ բացակայող, բ) դատարանը նրանց ձանաչել է անգործունակ, գ) դատարանը նրանց զրկել է ծնողական իրավունքներից, դ) նրանք դատարանով անհարգելի ձանաչված պատձառներով մեկ տարուց ավելի երեխայի հետ համատեղ չեն ապրում և խուսափում են նրան դաստիարակելուց ու պահելուց:

Օրենսդիրը սահմանում է որդեգրվողի համաձայնության անհրաժեշտության դեպքը, այն է՝ տասը տարին լրացած երեխայի որդեգրման համար անհրաժեշտ է նրա համաձայնությունը:

Եթե մինչև որդեգրման համար դիմում տալը երեխան ապրել է որդեգրողի ընտանիքում և նրան համարում է իր ծնողը, ապա որդեգրումը բացառության կարգով կարող է կատարվել առանց որդեգրվող երեխայի համաձայնությունը ստանալու:

Որդեգրել կարելի է նաև խնամակալության (հոգաբարձության) տակ գտնվող երեխաներին: Այդ դեպքում անհրաժեշտ է նրանց խնամակալների (հոգաբարձուների) գրավոր համաձայնությունը:

Որդեգրման գաղտնիքն ապահովելու համար որդեգրողի խնդրանքով կարող են փոփոխվել որդեգրվող երեխայի ծննդյան ժամանակը, բայց ոչ ավելի, քան երեք ամիս, ինչպես նաև նրա ծննդյան վայրը: Որդեգրված երեխայի ծննդյան ժամանակի փոփոխում թույլատրվում է միայն մինչև մեկ տարեկան երեխայի որդեգրելիս: Որդեգրված երեխայի



ծննդյան ժամանակի և (կամ) վայրի փոփոխման մասին նշվում է նրան որդեգրելու մասին դատարանի վճռի մեջ:

Որդեգրվածներն իրենց ծնողների (ազգականների) նկատմամբ կորցնում են անձնական ոչ գույքային և գույքային իրավունքները և ազատվում են պարտականություններից: Երեխային մեկ անձի կողմից որդեգրելիս անձնական ոչ գույքային և գույքային իրավունքներն ու պարտականությունները կարող են պահպանվել մոր ցանկությամբ, եթե որդեգրողը տղամարդ է, կամ հոր ցանկությամբ, եթե որդեգրողը կին է:

Երեխայի որդեգրման իրավական հետևանքները վրա են հասնում՝ անկախ այդ երեխայի ծննդի ակտի գրառման մեջ որդեգրողին որպես ծնող գրառելուց:

Հիշե՛ք, որ երեխայի որդեգրման գաղտնիքը պահպանվում է օրենքով:

Վերոգրյալով միանշանակ կարելի է փաստել, որ յուրաքանչյուր հարցի կարգավորման ոլորտում պետությունը հետամուտ է լինում երաշխիքներ ստեղծելու և դրանք պահպանելու առումով, քանի որ ընտանեկան ոլորտը դա խիստ անձնային հարաբերություններից բաղկացած ոլորտ է, որպիսի հանգամանքը ենթադրում է, որ այդ հարաբերությունների սուբյեկտները պետք է ունենան որոշակի երաշխիքներ այս կամ այլ հարցեր լուծելու համար, ինչպիսին տվյալ դեպքում որդեգրումն է:

● ԵՐԵՆԱՅԻ ԽՆԱՄՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ

Պետք է ի նկատի ունենալ, որ երեխայի (երեխաների) դաստիարակությունը կարող է իրականացվել խնամատար ընտանիքում երեխային (երեխաներին) ընտանիք դաստիարակության հանձնելու մասին պայմանագրի հիման վրա:


Խնամատար ընտանիքը առանց ծնողական խնամքի մնացած երեխայի (երեխաների) դաստիարակության համար տեղավորման ձևերից մեկն է:

Երեխային (երեխաներին) խնամատար ընտանիքում դաստիարակվելու նպատակով հանձնում են մինչև նրա չափահաս դառնալը՝ պայմանագրով նախատեսված ժամկետով: Հոգեզավակների խնամքի և դաստիարակության համար խնամատար ծնողներին տրվող վարձատրության չափը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը (ՀՀ կառավարության 08.05.2008 թվականի թիվ 459-Ն որոշում):

Դաստիարակության համար երեխային (երեխաներին) ընտանիք հանձնելու մասին պայմանագիրը կարող է վաղաժամկետ լուծվել՝

1. խնամատար ծնողների նախաձեռնությամբ,

2. հարգելի պատճառների (հիվանդություն, ընտանեկան կամ գույքային դրության փոփոխում, երեխայի (երեխաների) հետ փոխըմբռնման բացակայություն, երեխաների միջև բախումներ և այլն) առկայության դեպքում,



3. խնամակալության և հոգաբարձության մարմնի նախաձեռնությամբ՝ խնամատար ընտանիքում երեխային (երեխաներին) պահելու, դաստիարակելու և կրթության համար անբարենպաստ պայմաններ առաջանալու կամ երեխային (երեխաներին) ծնողներին վերադարձնելու կամ երեխային (երեխաներին) որդեգրելու դեպքերում:

խնամատար ծնողներ կարող են լինել Հայաստանի Հանրապետության տարածքում բնակվող Հայաստանի Հանրապետության չափահաս քաղաքացիները, բացառությամբ՝

- ա) դատարանի կողմից անգործունակ կամ սահմանափակ գործունակ ձանաչված անձանց,
- բ) ամուսինների, որոնցից մեկին դատարանը ձանաչել է անգործունակ կամ սահմանափակ գործունակ,
- գ) դատական կարգով ծնողական իրավունքներից զրկված կամ ծնողական սահմանափակ իրավունքներով անձանց,
- դ) օրենքով իրենց վրա դրված պարտականությունները ոչ պատշաճ կատարելու պատճառով խնամակալի (հոգաբարձուի) պարտականություններից հեռացված անձանց,
- ե) նախկին որդեգրողների, եթե որդեգրումը դատարանով վերացվել է նրանց մեղքով,
- զ) այն անձանց, որոնք առողջական վիճակի պատճառով չեն կարող իրականացնել ծնողական իրավունքներ,
- է) այն անձանց, որոնք չունեն մշտական բնակության վայր, ինչպես նաև այնպիսի բնակելի տարածություն, որը համապատասխանում է սանիտարական և տեխնիկական սահմանված պահանջներին,
- ը) այն անձանց, որոնք այդ պահին ունեն դատվածություն մարդու դեմ ուղղված կամ հասարակական կարգի և բարոյականության դեմ ուղղված ծանր կամ առանձնապես ծանր հանցագործության համար:

խնամատար ծնողների ընտրությունն իրականացնում են խնամակալության և հոգաբարձության մարմինները:


խնամատար ծնողները դաստիարակության հանձնված երեխայի (երեխաների) նկատմամբ ձեռք են բերում խնամակալի (հոգաբարձուի) իրավունքներ ու պարտականություններ:


Արգելվում է եղբայրներին ու քույրերին առանձին խնամատար ընտանիքներ հանձնելը, բացառությամբ այն դեպքերի, եթե դա բխում է նրանց շահերից: Երեխային (երեխաներին) խնամատար ընտանիք հանձնելն իրականացվում է՝ հաշվի առնելով տասը տարին լրացած երեխայի կարծիքը:

Յուրաքանչյուր երեխայի պահելու համար խնամատար ընտանիքին ամսական վճարվում են դրամական միջոցներ՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով ու չափով պետական բյուջեի, ինչպես նաև օրենսդրությամբ չարգելված այլ միջոցների հաշվին (<< կառավարության 08.05.2008 թվականի թիվ 459-Ն որոշում):

խնամակալության և հոգաբարձության մարմինը պարտավոր է խնամատար ընտանիքին ցուցաբերել անհրաժեշտ օգնություն, նպաստել երեխայի (երեխաների) կյանքի ու դաստիարակության համար պայմանների ստեղծմանը, ինչպես նաև վերահսկողություն իրականացնել խնամատար ծնողների վրա դրված պարտականությունների կատարման նկատմամբ:

ԿԱՆԱՆՑ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ





Մեզ բոլորիս հայտնի է, որ թե՛ տղամարդիկ, թե՛ կանայք ունեն հավասար իրավունքներ յուրաքանչյուր ոլորտում, այդ թվում նաև աշխատանքային իրավունքներ ունենալու հարցում: Հետևաբար, ցանկացած խտրականություն՝ ընդդեմ կանանց իրավունքների իրացման, արգելվում է: Կանանց աշխատանքային իրավունքների խտրականությունն ամենից առաջ դրսևորվում է քաղաքական պաշտոնների զբաղեցման մեջ: Խտրականությունը իրավունքի ուղղակի կամ անուղղակի սահմանափակումն է, որի նպատակն է արժանապատվության նվաստացումը:

Որպեսզի կարողանաք պաշտպանել ձեր աշխատանքային իրավունքները ցանկացած խտրականությունից, պետք է իմանալ, թե ինչպիսի իրավունքներով եք դուք օժտված, և ինչպես է ձեզ պաշտպանում օրենքը:

Մարդու աշխատանքի ընտրության ազատության իրավունքը սահմանված է ՀՀ Սահմանադրությամբ (հոդված 32): Աշխատողներն իրենց տնտեսական, սոցիալական և աշխատանքային շահերի պաշտպանության նպատակով ունեն գործադուլի իրավունք, որի իրականացման կարգը և սահմանափակումները սահմանվում են օրենքով:


Հարկադիր աշխատանքն արգելվում է:

Կանանց աշխատանքային իրավունքների հարցին անդրադարձ է կատարվում նաև ՀՀ Սահմանադրության 35-րդ հոդվածում, որով սահմանվում է, որ մայրության հետ կապված պատճառներով աշխատանքից ազատելն արգելվում է: Յուրաքանչյուր աշխատող կին հղիության և ծննդաբերության դեպքում ունի վճարովի արձակուրդի և նոր ծնված երեխայի խնամքի կամ երեխայի որդեգրման համար արձակուրդի իրավունք:

Ոլորտի մանրամասն կարգավորումները սահմանվում են ՀՀ աշխատանքային օրենսգրքով:

● ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾԱԳՈՒՄԸ

Աշխատանքային հարաբերությունները աշխատողի և գործատուի միջև ծագում են հավասարության սկզբունքի հիման վրա, որն ուղղված է ստեղծելու գործատուի և աշխատողի համար հավասար իրավունքներ և պարտականություններ: Ըստ այդմ՝ աշխատանքային հարաբերությունները աշխատողի և գործատուի միջև փոխադարձ համաձայնության վրա հիմնված հարաբերություններն են, ըստ որի՝ աշխատողն անձամբ, որոշակի վարձատրությամբ կատարում է աշխատանքային գործառնություններ (որոշակի մասնագիտությամբ, որակավորմամբ կամ պաշտոնում աշխատանք)՝ ենթարկվելով ներքին կարգապահական կանոններին, իսկ գործատուն ապահովում է աշխատանքային օրենսդրությամբ, աշխատանքային իրավունքի նորմեր պարունակող այլ նորմատիվ իրավական ակտերով, կոլեկտիվ և աշխատանքային պայմանագրերով նախատեսված աշխատանքի պայմաններ:



Պետք է հիշել, որ աշխատողի և գործատուի միջև աշխատանքային հարաբերությունները ծագում են գրավոր աշխատանքային պայմանագրով կամ կողմերի համաձայնությամբ՝ աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտով:


Աշխատանքային իրավունքներ ունենալու և պարտականություններ կրելու ունակությունը (աշխատանքային իրավունակություն) հավասարապես ձանաչվում է Հայաստանի Հանրապետության բոլոր քաղաքացիների համար: Օտարերկրյա քաղաքացիները, քաղաքացիություն չունեցող անձինք Հայաստանի Հանրապետությունում ունեն այնպիսի աշխատանքային իրավունակություն, ինչպիսին Հայաստանի Հանրապետության քաղաքացիները, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ (օրինակ՝ ՀՀ նախագահի, ԱԺ պատգամավորի, նախարարի և նմանատիպ այլ պաշտոններ զբաղեցնելը):

Գործատուն աշխատանքային հարաբերության այն մասնակիցն է, որն աշխատանքային պայմանագրի հիման վրա և (կամ) օրենքով սահմանված կարգով օգտագործում է քաղաքացիների աշխատանքը:

Մինչև 16 տարեկան երեխաներին մշտական աշխատանքի ընդունելն արգելվում է: Նրանց ժամանակավոր աշխատանքի ընդունման կարգը և պայմանները սահմանվում են ՀՀ աշխատանքային օրենսգրքով: Հետևաբար, աշխատողը օրենքով սահմանված տարիքի հասած գործունակ քաղաքացին է, որն աշխատանքային պայմանագրի հիման վրա գործատուի օգտին կատարում է որոշակի աշխատանք՝ ըստ որոշակի մասնագիտության, որակավորման կամ պաշտոնի: Աշխատող են համարվում նաև ծնողներից մեկի կամ որդեգրողի կամ հոգաբարձուի գրավոր համաձայնությամբ աշխատանքային պայմանագրով աշխատող տասնչորսից մինչև տասնվեց տարեկան անձինք:

Հիշե՛ք՝ անչափահասի հետ աշխատանքային պայմանագիր կնքելն արգելվում է, եթե աշխատանքը նախատեսվում է գիշերային զվարճալի ակունքներում, աշխատանքը կապված է մի շարք թունավոր նյութերի, այդ թվում՝ հոգեմետ և այլ տոքսիկ նյութերի, ինչպես նաև էրոտիկ և նմանատիպ սպրանքների հետ:

Բացի այդ, արգելվում է աշխատանքային պայմանագրի կնքումը անչափահասի, հղի կնոջ կամ կերակրող մոր հետ, եթե այն ուղղված է բարդ, վտանգավոր աշխատանք կատարելուն:



● **ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԸ**

Խոսելով աշխատանքային հարաբերությունների ծագման մասին՝ պետք է նկատի ունենալ, որ այդ հարաբերությունները դրսևորվում են թե՛ գործատուի և թե՛ աշխատողի մոտ առկա մի շարք իրավունքներով և պարտականություններով: Ակնհայտ է, որ աշխատանքային պարտականությունների պատշաճ կատարման և սահմանված իրավունքներից լիարժեքորեն օգտվելու համար աշխատողը պետք է տիրապետի անհրաժեշտ տեղեկատվության: Նրա այդ իրավունքը երաշխավորվում է ՀՀ աշխատանքային օրենսգրքով, այն է՝ **աշխատողներն իրավունք ունեն ստանալու աշխատանքային հարաբերությունների վերաբերյալ օրենքով չարգելված տեղեկատվություն:**

Աշխատանքային տեղեկատվությունը ներառում է՝

- 1) տեղեկություններ գործատուի ներկա և ապագա գործունեության մասին,
- 2) տեղեկություններ զբաղվածության հնարավոր փոփոխությունների մասին,
- 3) տեղեկություններ աշխատողների թվաքանակի հնարավոր կրճատումների դեպքում իրականացվելիք միջոցառումների մասին,
- 4) այլ տեղեկություններ աշխատանքային հարաբերությունների վերաբերյալ, եթե այդ տեղեկությունները պետական, ծառայողական կամ առևտրային գաղտնիք չեն համարվում:

Տեղեկատվության տրամադրման կարգը և պայմանները սահմանվում են կողմերի համաձայնությամբ:

Միևնույն ժամանակ պետք է նկատի ունենալ, որ գործատուն ևս իրավասու է ստանալու տեղեկություն ձեր՝ որպես իր աշխատողի մասին, սակայն ոչ թե ցանկացած, այլ միայն այնպիսի տեղեկություն, որն անմիջականորեն կապված է ձեր աշխատանքի հետ:

● **ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ**


Ինչպես արդեն նշվեց, աշխատանքային իրավահարաբերությունները ծագում են գրավոր աշխատանքային պայմանագրի կնքմամբ, և հենց այդ պայմանագրով են կարգավորվում գործատու-աշխատող հարաբերությունները:

Աշխատանքային պայմանագրի հետ կապված հարցերը կարգավորվում են ՀՀ աշխատանքային օրենսգրքով:

Ինչ է իրենից ներկայացնում աշխատանքային պայմանագիրը:

Աշխատանքային պայմանագիրը համաձայնություն է աշխատողի և գործատուի միջև, ըստ որի՝ աշխատողը պարտավորվում է գործատուի համար կատարել որոշակի աշխատանք, իսկ գործատուն պարտավորվում է վարձատրել կատարած աշխատանքի դիմաց:

Շատ էական է, որպեսզի աշխատանքային պայմանագիրը կնքվի գրավոր, քանի որ հետագայում վեճերի ծագման պարագայում այն



կօզնի պաշտպանել ձեր իրավունքները: Հետևաբար ցանկալի է, որ մինչ պայմանագրի կնքումը խորհրդակցեք իրավաբանի հետ, կարողաք աշխատանքային պայմանագիրը մինչ այն ստորագրելը, պահանջեք, որպեսզի այն գրված լինի ձեզ համար պարզ և մատչելի, իրավունքներն ու պարտականությունները լինեն հստակ, այլ ոչ թե հնարավորություն տան անելու տարատեսակ մեկնաբանություններ:

- Պայմանագրում, որը կնքվում է գրավոր, պարտադիր նշվում են՝
- ա) աշխատողի անունը, ազգանունը, նրա ցանկությամբ նաև հայրանունը,
 - բ) կազմակերպության անվանումը կամ ֆիզիկական անձ գործատուի անունը, ազգանունը, նրա ցանկությամբ նաև հայրանունը,
 - գ) կառուցվածքային ստորաբաժանումը (դրա առկայության դեպքում),
 - դ) աշխատանքը սկսելու տարին, ամիսը, ամսաթիվը,
 - ե) պաշտոնի անվանումը և (կամ) աշխատանքային գործառույթները,
 - զ) աշխատավարձի չափը և (կամ) այն որոշելու ձևը,
 - է) աշխատողներին սահմանված կարգով տրվող հավելումները, հավելվածարները, լրավածարները և այլն,
 - ը) աշխատանքային պայմանագրի գործողության ժամկետը (անհրաժեշտության դեպքում),
 - թ) կողմերի համաձայնությամբ՝ փորձաշրջանի տևողությունը,
 - ժ) աշխատաժամանակը՝ ոչ լրիվ աշխատաժամանակով աշխատանքային ռեժիմ սահմանելու դեպքում:

Պայմանագրում նշվում են նաև աշխատանքային պայմանագիրը կնքելու տարին, ամիսը, ամսաթիվը, վայրը:


Կողմերի համաձայնությամբ գրավոր աշխատանքային պայմանագրում կարող են ներառվել նաև այլ պայմաններ:

Գրավոր աշխատանքային պայմանագիրը կնքվում է երկու օրինակից՝ կողմերի ստորագրությամբ մեկ փաստաթուղթ կազմելու միջոցով:

Հիշե՛ք, որ աշխատանքային պայմանագրի օրինակ չտրամադրելու դեպքում դուք կարող եք պահանջել այն:

Աշխատանքային պայմանագիր կնքելու համար գործատուն պարտավոր է պահանջել հետևյալ փաստաթղթերը.

- 1) անձը հաստատող փաստաթուղթ,
- 2) աշխատանքային գրքույկ (բացառությամբ առաջին անգամ կամ համատեղությամբ աշխատանքի ընդունվողների) և սոցիալական ապահովության քարտ կամ սոցիալական ապահովության քարտ չունենալու մասին տեղեկանք,
- 3) կրթության կամ անհրաժեշտ որակավորման մասին վկայական, եթե աշխատանքային օրենսդրությանը համապատասխան՝ աշխատանքը կապված է որոշակի կրթության կամ մասնագիտական պատրաստվածության հետ,



- 4) տեղեկանք առողջական վիճակի մասին (սանհիտարական գրքույկ), եթե աշխատանքային պայմանագիրը կնքվում է այնպիսի աշխատանքների համար, որոնք պահանջում են սկզբնական և պարբերական բժշկական զննություն, ինչպես նաև մինչև տասնույթ տարեկան քաղաքացիների հետ աշխատանքային պայմանագիր կնքելու ժամանակ: Այդպիսի աշխատանքների ցանկը և տեղեկանքի (սանհիտարական գրքույկի) ձևը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը,
- 5) ծնողներից մեկի, որդեգրողի կամ հոգաբարձուի գրավոր համաձայնությունը, եթե աշխատանքի է ընդունվում տասնչորսից մինչև տասնվեց տարեկան անչափահաս քաղաքացին,
- 6) օրենքով կամ այլ նորմատիվ իրավական ակտերով սահմանված այլ փաստաթղթեր:

Հիշեք, որ աշխատանքի ընդունելիս արգելվում է պահանջել այնպիսի փաստաթղթեր, որոնք նախատեսված չեն օրենքով կամ այլ նորմատիվ իրավական ակտերով:

Անհրաժեշտ է իմանալ, որ դուք ունեք նաև համատեղությամբ աշխատելու իրավունք, ինչը հիմնական աշխատանքային ժամանակից դուրս միևնույն գործատուի կամ այլ գործատուի մոտ աշխատանքային պայմանագրի հիման վրա աշխատողի կատարած աշխատանքն է:


Աշխատանքային պայմանագրում նշվում է, որ աշխատանքը կատարվում է համատեղությամբ:

● **ՓՈՐՁԱՀՐՁԱՆ**

Աշխատանքային պայմանագրի կնքման ժամանակ կողմերի համաձայնությամբ կարող է սահմանվել փորձաշրջան: Այն կարող է սահմանվել գործատուի ցանկությամբ՝ նախատեսված աշխատանքին (պաշտոնին) աշխատողի համապատասխանությունը ստուգելու նպատակով, կամ աշխատանքի ընդունվողի ցանկությամբ՝ առաջարկվող աշխատանքին (պաշտոնին) իր համապատասխանությունը որոշելու համար: Փորձաշրջանի մասին պայմանները պետք է սահմանվեն աշխատանքային պայմանագրով:

Փորձաշրջանի ընթացքում աշխատողն ունի բոլոր իրավունքները և կրում է բոլոր պարտականությունները:

Փորձաշրջանի ժամկետը չի կարող երեք ամսից ավելի լինել, բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերի, երբ մինչև վեց ամիս ժամկետով կարող է սահմանվել փորձաշրջան:



Փորձաշրջան չի կարող նախատեսվել, եթե աշխատանքի են ընդունվում՝

- 1) տասնութ տարին չլրացած անձինք,
- 2) ընտրովի պաշտոն զբաղեցնողները, ինչպես նաև պաշտոնի նշանակման համար որակավորման քննություններ հանձնած անձինք,
- 3) գործատուների փոխադարձ համաձայնությամբ այլ աշխատանքի փոխադրվող անձինք,
- 4) օրենսդրությամբ նախատեսված այլ դեպքերում:

● ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

ՀՀ Սահմանադրության 32-րդ հոդվածն ամրագրում է, որ յուրաքանչյուր աշխատող ունի արդարացի և օրենքով սահմանված՝ նվազագույնից ոչ ցածր աշխատավարձի, ինչպես նաև անվտանգության ու հիգիենայի պահանջներին բավարարող աշխատանքային պայմանների իրավունք:

Հետևաբար հիշե՛ք, որ դուք իրավասու եք պահանջելու ձեր գործատուից ստեղծելու աշխատանքային բարենպաստ՝ անվտանգ և հիգիենայի պահանջներին բավարարող աշխատանքային պայմաններ:


Առանց աշխատողի գրավոր համաձայնության աշխատանքի վարձատրության պայմանները գործատուն կարող է փոփոխել միայն օրենքով կամ կոլեկտիվ պայմանագրով աշխատանքի վարձատրության պայմանների փոփոխության դեպքում:

Աշխատողը չի կարող տեղափոխվել այնպիսի աշխատանքի, որն առողջական վիճակի բերումով նրան հակացուցված է բժշկասոցիալական փորձաքննական հանձնաժողովի եզրակացությամբ:

Արգելվում է աշխատողին փոխադրել նրա առողջական վիճակին հակացուցված աշխատանքի:

Ոչ աշխատողի մեղքով պարապուրդը աշխատավայրում ստեղծված այն իրավիճակն է, որի ժամանակ գործատուն, արտադրական կամ օբյեկտիվ այլ պատճառներով պայմանավորված, չի կարողանում ապահովել աշխատողի՝ աշխատանքային պայմանագրով նախատեսված աշխատանքը:

Պարապուրդի ժամանակ գործատուն իրավունք ունի աշխատողին նրա գրավոր համաձայնությամբ փոխադրելու ցանկացած այլ աշխատանքի՝ հաշվի առնելով աշխատողի մասնագիտությունը, որակավորումը և առողջական վիճակը: Աշխատողի համաձայնությամբ նա կարող է փոխադրվել նաև այլ աշխատանքի՝ առանց հաշվի առնելու նրա մասնագիտությունը և որակավորումը:



● ԱՇԽԱՏԱԺԱՄԱՆԱԿԸ ԵՎ ՀԱՆԳՍՏԻ ԺԱՄԱՆԱԿԸ

Համաձայն ՀՀ Սահմանադրության՝ յուրաքանչյուր ոք ունի հանգստի իրավունք: Առավելագույն աշխատաժամանակը, հանգստյան օրերը և ամենամյա վճարովի արձակուրդի նվազագույն տևողությունը սահմանվում են ՀՀ աշխատանքային օրենսգրքով:

Այսպիսով՝ մարդու առջև պետության պարտավորությունն է ապահովել նրա վերը թվարկված իրավունքների պատշաճ իրականացումը:

Աշխատաժամանակը

Աշխատաժամանակն այն ժամանակահատվածն է, որի ընթացքում աշխատողը պարտավոր է կատարել աշխատանքային պայմանագրով նախատեսված աշխատանքը, ինչպես նաև դրան հավասարեցված այլ ժամանակահատվածներ:


Աշխատաժամանակի նորմալ տևողությունը չի կարող անցնել շաբաթական 40 ժամից:

Ամենօրյա աշխատաժամանակի տևողությունը չի կարող անցնել ութ աշխատանքային ժամից, բացառությամբ օրենսգրքով, օրենքով, այլ իրավական ակտերով և կոլեկտիվ պայմանագրով նախատեսված դեպքերի:

Աշխատաժամանակի առավելագույն տևողությունը, ներառյալ արտաժամյա աշխատանքը, չի կարող անցնել օրական 12 ժամից (հանգստի և սնվելու համար ընդմիջումը՝ ներառյալ), իսկ շաբաթվա ընթացքում՝ 48 ժամից:

Առանձին կատեգորիայի աշխատողների (անընդմեջ հերթապահության ռեժիմով աշխատող առողջապահական կազմակերպություններ, հոգաբարձության (խնամակալության) կազմակերպություններ, մանկական դաստիարակչական կազմակերպություններ, էներգամատակարարման, գազամատակարարման, ջերմամատակարարման մասնագիտացված կազմակերպություններ, կապի և վթարների հետևանքների վերացման մասնագիտացված ծառայություններ և այլն) աշխատաժամանակի տևողությունը կարող է կազմել օրական 24 ժամ: Այդ աշխատողների աշխատաժամանակի միջին տևողությունը շաբաթվա ընթացքում չի կարող անցնել 48 ժամից, իսկ աշխատանքային օրերի միջև հանգստի ժամանակը չի կարող պակաս լինել 24 ժամից: Նման աշխատանքների ցանկը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը (ՀՀ կառավարության 11 օգոստոսի 2005 թվականի N 1223-Ն որոշման տեքստը տես կից սկավառակում):

Տարբեր գործատուների կամ նույն գործատուի մոտ երկու և ավելի աշխատանքային պայմանագրերով աշխատողի ամենօրյա աշխատաժամանակի տևողությունը (ներառյալ՝ հանգստի և սնվելու համար ընդմիջումները) չի կարող անցնել օրական 12 ժամից:



Ոչ լրիվ աշխատանքային օր կամ ոչ լրիվ աշխատանքային շաբաթ սահմանվում է՝

- 1) աշխատողի և գործատուի համաձայնությամբ,
- 2) աշխատողի պահանջով՝ կապված նրա առողջական վիճակի հետ, բժշկական եզրակացության հիման վրա,
- 3) **հղի կնոջ և մինչև մեկ տարեկան երեխա խնամող աշխատողի պահանջով,**
- 4) հաշմանդամի պահանջով՝ բժշկական եզրակացության հիման վրա,
- 5) ընտանիքի հիվանդ անդամի խնամքն իրականացնող աշխատողի պահանջով՝ բժշկական եզրակացության հիման վրա, սակայն ոչ ավելի, քան վեց ամիս ժամանակով, և յուրաքանչյուր օրվա համար ոչ ավելի, քան օրվա համար սահմանված աշխատաժամանակի կեսը:

Աշխատողների համար սահմանվում է հնգօրյա աշխատանքային շաբաթ՝ երկու հանգստյան օրով: Այն կազմակերպություններում, որտեղ, արտադրության բնույթով կամ այլ պայմաններով պայմանավորված, անհնար է հնգօրյա աշխատանքային շաբաթի կիրառումը, սահմանվում է վեցօրյա աշխատանքային շաբաթ՝ մեկ հանգստյան օրով:

Աշխատողները պարտավոր են աշխատել միայն պայմանագրով նախատեսված ժամանակահատվածում:

Հղի կանայք և մինչև մեկ տարեկան երեխա խնամող աշխատողները կարող են արտաժամյա աշխատանքի ներգրավվել միայն իրենց համաձայնությամբ:


Հաշմանդամները կարող են ներգրավվել արտաժամյա աշխատանքի, եթե բժշկական եզրակացությամբ դա նրանց արգելված չէ:

Ոչ աշխատանքային՝ տոնական և հիշատակի օրերի նախօրյակին աշխատանքային օրվա տևողությունը կրճատվում է մեկ ժամով, բացառությամբ կրճատ և ոչ լրիվ աշխատանքային ժամանակի պայմաններով աշխատող աշխատողների:

Գիշերային ժամանակ է համարվում ժամը 22-ից մինչև 6-ը:


Գիշերային է համարվում գիշերային ժամանակի ընթացքում կատարված աշխատանքը:

Հիշե՛ք, որ հղի կանայք և մինչև երեք տարեկան երեխա խնամող աշխատողը կարող են գիշերային աշխատանքի ներգրավվել միայն իրենց համաձայնությամբ:




Հանգստի ժամանակը

Հանգստի ժամանակը աշխատանքից ազատ ժամանակն է, որն աշխատողն օգտագործում է իր հայեցողությամբ:



Անհրաժեշտ է հիշել, որ աշխատանքային օրվա (հերթափոխի) կեսի ավարտից հետո, սակայն ոչ ուշ, քան աշխատանքը սկսելուց 4 ժամ հետո, հանգստանալու և սնվելու համար աշխատողներին տրամադրվում է 2 ժամից ոչ ավելի և կես ժամից ոչ պակաս տևողությամբ ընդմիջում: Ընդ որում՝ հանգստի և սնվելու համար ընդմիջումը չի ներառվում աշխատաժամանակում, և աշխատողն այն օգտագործում է սեփական հայեցողությամբ: Աշխատողն իրավունք ունի այդ ընդմիջման ժամանակահատվածում բացակայելու աշխատատեղից:



Հաշվի առնելով աշխատանքի պայմանները՝ աշխատանքային օրվա ընթացքում աշխատողներին կարող է տրամադրվել հանգստի համար լրացուցիչ ընդմիջում:

Ընդհանուր հանգստյան օրը կիրակին է, իսկ հնգօրյա աշխատանքային շաբաթվա դեպքում՝ շաբաթը և կիրակին:

Ամենշաբաթյա անընդմեջ հանգիստը չպետք է պակաս լինի 35 ժամից: Վերը նշված դեպքերում տրամադրվող երկու հանգստյան օրերը պետք է հաջորդեն իրար:

Հիշե՛ք, որ հանգստյան օրերին, ինչպես նաև ոչ աշխատանքային՝ տոնական և հիշատակի օրերին աշխատողներին արգելվում է ներգրավել աշխատանքներում, բացառությամբ այն աշխատանքների, որոնց դադարեցումը արտադրության տեխնիկական պատճառներով անհնար է, կամ որոնք անհրաժեշտ են բնակչության սպասարկման, ինչպես նաև անհետաձգելի նորոգման, բեռնման կամ բեռնաթափման աշխատանքների կատարման համար:

Տղի կանայք, մինչև մեկ տարեկան երեխա խնամող աշխատողները կարող են հանգստյան, ինչպես նաև ոչ աշխատանքային՝ տոնական և հիշատակի օրերին աշխատանքի ներգրավվել միայն իրենց համաձայնությամբ:


Մինչև տասնույթ տարեկան աշխատողներին շաբաթվա ընթացքում տրվում է ոչ պակաս, քան երկու հանգստյան օր:

ԱՐՁԱԿՈՒՐԴ

Ամենամյա արձակուրդն աշխատանքային օրերով հաշվարկվող ժամանակահատված է, որը տրամադրվում է աշխատողին հանգստանալու և աշխատունակությունը վերականգնելու համար: Այդ ընթացքում պահպանվում է նրա աշխատատեղը (պաշտոնը) և վճարվում է միջին աշխատավարձը:

Ամենամյա արձակուրդը լինում է **նվազագույն, երկարացված և լրացուցիչ**:

Ամենամյա նվազագույն արձակուրդի տևողությունը հնգօրյա աշխատանքային շաբաթվա դեպքում 20 աշխատանքային օր է, իսկ վեցօրյա աշխատանքային շաբաթվա դեպքում՝ 24 աշխատանքային օր:



Ամենամյա լրացուցիչ արձակուրդ կարող է տրամադրվել՝

- 1) աշխատանքի վնասակար և վտանգավոր պայմաններում աշխատողներին,
- 2) չնորմավորված աշխատանքային օրով աշխատողներին,
- 3) հատուկ բնույթի աշխատանքներում աշխատողներին:

Ամենամյա լրացուցիչ արձակուրդը միացվում է ամենամյա նվազագույն արձակուրդին և կարող է տրամադրվել դրա հետ կամ առանձին: Կողմերի համաձայնությամբ ամենամյա արձակուրդը կարող է տրամադրվել մասերով: Ամենամյա արձակուրդը մասերով տրամադրելու դեպքում ամենամյա արձակուրդի մասերից մեկը պետք է կազմի առնվազն 10 աշխատանքային օր՝ հնգօրյա աշխատանքային շաբաթի դեպքում, և առնվազն 12 աշխատանքային օր՝ վեցօրյա աշխատանքային շաբաթի դեպքում:

● ԱՐՁԱԿՈՒՐԴԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԿԱՐԳԸ

Յուրաքանչյուր աշխատանքային տարվա համար ամենամյա արձակուրդը տրամադրվում է տվյալ տարում:

Աշխատանքի առաջին տարվա համար ամենամյա արձակուրդը, որպես կանոն, տրամադրվում է տվյալ կազմակերպությունում **անընդհատ աշխատանքի վեց ամիսը լրանալուց հետո**: Երկրորդ և յուրաքանչյուր հաջորդ աշխատանքային տարվա համար ամենամյա արձակուրդը տրամադրվում է աշխատանքային տարվա ցանկացած ժամանակ՝ ամենամյա արձակուրդի տրամադրման հերթականությանը համապատասխան: Հերթականության կարգը սահմանվում է կոլեկտիվ պայմանագրով, իսկ նման պայմանագրի բացակայության դեպքում՝ կողմերի համաձայնությամբ:


Անհրաժեշտ է հիշել, որ մինչև անընդմեջ աշխատանքի վեց ամիսը լրանալը աշխատողի խնդրանքով ամենամյա արձակուրդ տրամադրվում է՝

- 1) կանանց հղիության ու ծննդաբերության արձակուրդից առաջ կամ հետո,
- 2) կոլեկտիվ պայմանագրով նախատեսված այլ դեպքերում:

Անընդմեջ աշխատանքի վեց ամիսը լրանալուց հետո ամենամյա արձակուրդի ժամանակի ընտրության իրավունք ունեն՝

- 1) մինչև տասնութ տարեկան աշխատողները,
- 2) հղի կանայք և մինչև 14 տարեկան երեխա խնամող աշխատողը:

Տղամարդկանց ամենամյա արձակուրդն իրենց ցանկությանը տրամադրվում է կնոջ հղիության ու ծննդաբերության արձակուրդի ժամանակահատվածում:



Ուսումնական հաստատությունների մանկավարժներին աշխատանքային առաջին տարում ամենամյա արձակուրդը տրամադրվում է սովորողների և ուսանողների ամառային արձակուրդի ժամանակ՝ անկախ այն հանգամանքից, թե երբ են այդ մանկավարժներն սկսել իրենց աշխատանքը:

Առանց աշխատանքից կտրվելու սովորող աշխատողների ամենամյա արձակուրդը իրենց ցանկությամբ տրամադրվում է քննությունների, ստուգարքների, դիպլոմային աշխատանքների նախապատրաստման, լաբորատոր աշխատանքների կատարման ժամկետներին համապատասխան:

Հիվանդին կամ հաշմանդամին տանը խնամող աշխատողին, ինչպես նաև քրոնիկ հիվանդությամբ տառապող այն աշխատողին, որի հիվանդության սրացումը կախված է մթնոլորտային պայմաններից, բժշկական եզրակացության հիման վրա ամենամյա արձակուրդը տրամադրվում է իրենց նախընտրած ժամանակ:

● ԱՄԵՆԱՄՅԱ ԱՐՁԱԿՈՒՐԴԻ ՏԵՂԱՓՈԽՈՒՄԸ

Ամենամյա արձակուրդի տեղափոխումը թույլատրվում է միայն աշխատողի միջնորդությամբ կամ համաձայնությամբ: Ամենամյա արձակուրդը կարող է տեղափոխվել նաև, եթե աշխատողը՝


- 1) գտնվում է ժամանակավոր անաշխատունակության վիճակում.
- 2) ձեռք է բերում նպատակային արձակուրդի իրավունք.
Նպատակային են համարվում՝

- 1) հղիության և ծննդաբերության արձակուրդը,
- 2) մինչև երեք տարեկան երեխայի խնամքի համար տրամադրվող արձակուրդը,
- 3) ուսումնական արձակուրդը,
- 4) պետական կամ հասարակական պարտականությունների կատարման համար տրամադրվող արձակուրդը,
- 5) չվճարվող արձակուրդը:

Նպատակային արձակուրդի ժամանակ պահպանվում է աշխատողի աշխատատեղը:

Հիշե՛ք, որ ամենամյա արձակուրդի փոխարինումը դրանական հատուցմամբ չի թույլատրվում:

Եթե աշխատանքային պայմանագրի լուծման հետևանքով ամենամյա արձակուրդի իրավունք ձեռք բերած աշխատողին չի կարող տրամադրվել ամենամյա արձակուրդ, կամ աշխատողը չի ցանկանում դրա տրամադրումը, ապա նրան վճարվում է դրամական հատուցում:



● ԱՄԵՆԱՄՅԱ ԱՐՁԱԿՈՒՐԴԻ ՎՃԱՐՈՒՄԸ

Ամենամյա արձակուրդի համար գործատուն աշխատողին վճարում է միջին աշխատավարձ, որը հաշվարկվում է աշխատողի միջին օրական աշխատավարձը տրամադրվող արձակուրդի օրերի թվով բազմապատկելու միջոցով:

Ամենամյա արձակուրդի համար աշխատավարձի վճարումն իրականացվում է ոչ ուշ, քան ամենամյա արձակուրդն սկսելուց երեք օր առաջ:

Ամենամյա արձակուրդից հետ կանչել թույլատրվում է միայն աշխատողի համաձայնությամբ:

Տիպիկ, որ ամենամյա արձակուրդից հետ կանչված և աշխատանքի ներգրավված աշխատողին վճարվում է աշխատավարձ՝ անկախ ամենամյա արձակուրդի համար վճարումը կատարած լինելու հանգամանքից:

● ՉՎՃԱՐՎՈՂ ԱՐՁԱԿՈՒՐԴ

Աշխատողի պահանջով չվճարվող արձակուրդ տրամադրվում է՝


- 1) հղիության և ծննդաբերության արձակուրդում գտնվող, ինչպես նաև մինչև մեկ տարեկան երեխային խնամելու համար արձակուրդում գտնվող կնոջ ամուսնուն: Այդ արձակուրդի ընդհանուր տևողությունը չի կարող գերազանցել երկու ամիսը,
- 2) հաշմանդամ աշխատողին կամ ընտանիքի հիվանդ անդամին խնամող աշխատողին՝ բժշկական եզրակացությամբ սահմանված ժամկետներում, սակայն ոչ ավելի, քան 30 օր տարվա ընթացքում,
- 3) ամուսնության համար՝ երեք աշխատանքային օր,
- 4) ընտանիքի մահացած անդամի թաղման դեպքում՝ ոչ պակաս երեք օրից:

Աշխատանքային պայմանագրերով կամ կողմերի համաձայնությամբ նախատեսված դեպքերում աշխատողին կարող է տրամադրվել չվճարվող արձակուրդ՝ մեկ տարվա ընթացքում ոչ ավելի, քան 60 օր տևողությամբ:

● ՌԻՍՈՒՄՆԱԿԱՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ

Միջին մասնագիտական և բարձրագույն ուսումնական հաստատություններ ընդունվելու նպատակով քննություններին նախապատրաստվելու համար աշխատողներին տրամադրվում է արձակուրդ՝ յուրաքանչյուր քննության համար երեք աշխատանքային օր:

Հանրակրթական, միջին մասնագիտական կամ բարձրագույն ուսումնական հաստատություններում սովորող աշխատողներին ուսումնա-



կան հաստատության միջնորդությամբ տրամադրվում է ուսումնական արձակուրդ՝

- 1) ընթացիկ քննություններին նախապատրաստվելու և հանձնելու համար՝ յուրաքանչյուր քննության համար՝ երեք աշխատանքային օր,
- 2) ստուգարքներին նախապատրաստվելու և հանձնելու համար՝ յուրաքանչյուր ստուգարքի համար՝ երկու աշխատանքային օր,
- 3) լաբորատոր աշխատանքների կատարման համար՝ ուսումնական պլանով նախատեսված աշխատանքային օրերի քանակով,
- 4) դիպլոմային աշխատանքի նախապատրաստման և պաշտպանության համար՝ երեսուն աշխատանքային օր,
- 5) պետական (ավարտական) յուրաքանչյուր քննության նախապատրաստվելու և հանձնելու համար՝ վեց աշխատանքային օր:

Ուսումնական արձակուրդում չի հաշվարկվում ուսումնական հաստատության վայր մեկնելու և վերադառնալու ժամանակը:

● ՀՂԻՈՒԹՅԱՆ ԵՎ ԾՆՆ ԴԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ


Հիշե՛ք, որ աշխատող կանանց տրամադրվում է հղիության և ծննդաբերության արձակուրդ՝

- 1) 140 օր (70 օր՝ հղիության, 70 օր՝ ծննդաբերության),
- 2) 155 օր (70 օր՝ հղիության, 85 օր՝ ծննդաբերության)՝ բարդ ծննդաբերության դեպքում,
- 3) 180 օր (70 օր՝ հղիության, 110 օր՝ ծննդաբերության)՝ միաժամանակ մեկից ավելի երեխաներ ունենալու դեպքում:

Այդ արձակուրդը հաշվարկվում է միասին և կնոջը տրամադրվում է ամբողջությամբ: Ժամանակից շուտ ծննդաբերելու դեպքում հղիության արձակուրդի չօգտագործված օրերը գումարվում են ծննդաբերության արձակուրդի օրերին:

Նորածին որդեգրած կամ նորածնի խնամակալ նշանակված աշխատողին տրամադրվում է արձակուրդ՝ որդեգրելու կամ խնամակալ նշանակվելու օրվանից մինչև նորածնի 70 օրական (երկու և ավելի նորածին որդեգրելու կամ երկու և ավելի նորածնի խնամակալ նշանակվելու դեպքում՝ մինչև նորածինների 110 օրական) դառնալը:

Նորածին որդեգրած կամ նորածնի խնամակալ նշանակված վարձու աշխատողին հղիության ու ծննդաբերության նպաստ վճարվում է միայն ծննդաբերության արձակուրդի ժամանակահատվածի աշխատանքային օրերի համար: Նպաստը վճարվում է որդեգրելու կամ խնամակալ նշանակվելու օրվանից մինչև նորածնի 70 օրական դառնալը (երկու և ավելի նորածին որդեգրած կամ խնամակալ նշանակված անձին՝ մինչև 110 օրական դառնալը) ժամանակահատվածի աշխատանքային օրերի համար:



● ԵՐԵՒԱՅԻ ԽՆԱՄՔԻ ԼՐԱՑՈՒՑԻՉ ԱՐՁԱԿՈՒՐԴ

Երեխային փաստացի խնամող ընտանիքի մոր (խորթ մոր), հոր (խորթ հոր) կամ խնամակալի ցանկությամբ տրամադրվում է երեխայի խնամքի արձակուրդ մինչև երեխայի երեք տարեկան դառնալը: Արձակուրդը վերցվում է ամբողջությամբ կամ մաս առ մաս: Նման իրավունք ունեցող աշխատողը այն կարող է ստանալ արտահերթ:

Արձակուրդի ընթացքում պահպանվում է աշխատողի աշխատատեղը (պաշտոնը), բացառությամբ կազմակերպության լուծարման և աշխատողների թվի կամ հաստիքների կրճատման դեպքերում:


● ԱՆԱՇԽԱՏՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ԹԵՐԹԻԿՈՎ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԸ

Աշխատողին տրվող ժամանակավոր անաշխատունակության նպաստը հաշվարկում, նշանակում և վճարում է գործատուն՝ հիմք ընդունելով բժշկական հաստատության կողմից տրված ժամանակավոր անաշխատունակության թերթիկը: Նպաստները հաշվարկվում են օրենքով սահմանված կարգով հաշվարկված միջին աշխատավարձից: Նպաստը վճարվում է անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացնելուց հետո՝ առաջիկա աշխատավարձի վճարման համար օրենքով սահմանված ժամկետում: Բացառությամբ հղիության և ծննդաբերության նպաստի՝ վարձու աշխատողի նպաստը վճարվում է ժամանակավոր անաշխատունակության ժամանակաշրջանի աշխատանքային օրերի համար՝ սկսած երկրորդ աշխատանքային օրվանից, բայց ոչ ավելի, քան մինչև բժշկասոցիալական փորձաքննություն իրականացնող իրավասու պետական մարմնի կողմից հաշմանդամության խմբի սահմանումը կամ աշխատանքից ազատվելը: Իսկ վարձու աշխատողին տրվող հղիության և ծննդաբերության նպաստը վճարվում է գործատուի անհատական իրավական ակտի հիման վրա՝ հղիության և ծննդաբերության արձակուրդի մեջ գտնվող բոլոր աշխատանքային օրերի համար:

● ԱՇԽԱՏԱՎԱՐՉ

Աշխատավարձը օրենքով, իրավական այլ ակտերով սահմանված կամ աշխատանքային պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարելու դիմաց աշխատողին վճարվող հատուցումն է:

Տիպիկ, որ տղամարդկանց և կանանց միևնույն կամ համարժեք աշխատանքի դիմաց վճարվում է նույն չափով աշխատավարձ:



«Սահմանադրության 32-րդ հոդվածում մինևույն ժամանակ երաշխավորված է յուրաքանչյուրի՝ արդարացի և օրենքով սահմանված նվազագույնից ոչ ցածր աշխատավարձի իրավունքը:

Աշխատավարձը ներառում է հիմնական աշխատավարձը և գործատուի կողմից աշխատողին իր կատարած աշխատանքի դիմաց տրված լրացուցիչ վարձատրությունը:

Աշխատավարձի վճարումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության փողով (արժույթով)՝ Հայաստանի Հանրապետության դրամով:

Աշխատավարձի ամսական և ժամավճարի նվազագույն չափը սահմանվում է օրենքով: Համաձայն «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» «Օրենքի» ՀՀ-ում 2011 թ. հունվարի 1-ից նվազագույն ամսական աշխատավարձը կազմում է 32.500 ՀՀ դրամ (օրենքը տե՛ս կից սկավառակում): Տնտեսության առանձին ձյուղերի, բնակավայրերի, աշխատողների որոշակի խմբերի համար օրենքով կարող է սահմանվել ամսական նվազագույն աշխատավարձի (ժամավճարի) այլ չափ:

Նվազագույն աշխատավարձի չափի մեջ չեն ներառվում հավելումները, հավելավճարները, պարգևատրումները և խրախուսական այլ վճարումներ:

Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված ծանր, վնասակար, առանձնապես ծանր, առանձնապես վնասակար աշխատանքները կատարելու համար աշխատողին վճարվում է հավելում:


Հանգստյան և օրենքով սահմանված ոչ աշխատանքային՝ տոնական և հիշատակի օրերին կատարված աշխատանքը, եթե այն նախատեսված չէ աշխատանքի ժամանակացույցով, կողմերի համաձայնությամբ վարձատրվում է ժամային (օրական) դրույքաչափի կամ գործավարձի առնվազն կրկնակի չափով, կամ աշխատողին մեկ ամսվա ընթացքում տրամադրվում է վճարովի այլ հանգստյան օր, կամ այդ օրը ավելացվում է ամենամյա արձակուրդին:

Երբ է վճարվում աշխատավարձը: Աշխատավարձը յուրաքանչյուր ամիս հաշվարկվում և աշխատանքային օրերին վճարվում է աշխատողին ամսական առնվազն մեկ անգամ՝ մինչև հաջորդ ամսվա 15-ը:

Գործատուն կարող է ամսական աշխատավարձ վճարել մեկ անգամից ավելի պարբերականությամբ:

Տե՛ս նաև, որ աշխատավարձի վճարումը պարտավորագրերով և արժեթղթերով արգելվում է, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

Աշխատավարձը կարող է վճարվել բանկային վկայագրով, չեկերով կամ աշխատողի նշած բանկային հաշվին դրամական փոխանցումով:



Պետք է հիշել


- Եթե ոչ աշխատողի մեղքով պարապուրդի ժամանակ աշխատողին չի առաջարկվում նրա մասնագիտությանը, որակավորմանը համապատասխանող այլ աշխատանք, որը նա կարող էր կատարել առանց իր առողջությանը վնաս պատճառելու, ապա աշխատողին պարապուրդի յուրաքանչյուր ժամվա համար վճարվում է մինչև պարապուրդը նրա միջին ժամային աշխատավարձի երկու երրորդի չափով, սակայն ոչ պակաս, քան օրենսդրությամբ սահմանված նվազագույն ժամային դրույքաչափը:
- Եթե ոչ աշխատողի մեղքով առաջացած պարապուրդի ընթացքում աշխատողն իր համաձայնությամբ ժամանակավորապես փոխադրվում է ավելի ցածր աշխատավարձով, սակայն իր մասնագիտությանը, որակավորմանը համապատասխանող և առողջական վիճակին վնաս չպատճառող մեկ այլ աշխատանքի, ապա յուրաքանչյուր ժամի համար աշխատողին վճարվում է պարապուրդի ամսվան նախորդող նրա ժամային դրույքաչափով:
- Եթե աշխատողը հրաժարվում է առաջարկված ժամանակավոր աշխատանքից, որը համապատասխանում է նրա մասնագիտությանը և որակավորմանը, և որը նա կարող էր կատարել առանց իր առողջությանը վնաս պատճառելու, ապա պարապուրդի յուրաքանչյուր ժամի համար նրան վճարվում է սահմանված նվազագույն ժամային դրույքաչափի երեսուն տոկոսից ոչ պակաս:
- Պարապուրդի ժամանակ գործատուի պահանջով աշխատավայրում գտնվելու համար աշխատողին վճարվում է սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված չափով աշխատավարձ:
- Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով անհաղթահարելի ուժ համարվող պատճառներով առաջացած, ինչպես նաև աշխատողի մեղքով առաջացած պարապուրդի համար չի վճարվում:

● ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱԴԱՐՈՒՄԸ

Աշխատանքային հարաբերությունները դադարում են աշխատանքային պայմանագրի լուծմամբ:

Աշխատանքային պայմանագիրը լուծվում է՝

- 1) կողմերի համաձայնությամբ,
- 2) պայմանագրի գործողության ժամկետը լրանալու դեպքում,
- 3) աշխատողի նախաձեռնությամբ,
- 4) գործատուի նախաձեռնությամբ,
- 5) աշխատողի պարտադիր ժամկետային գինվորական ծառայության զորակոչվելու դեպքում,
- 6) դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռի առկայության դեպքում, որին համապատասխան՝ աշխատողը ենթարկվել է այնպիսի



պատասխանատվության, որը հնարավորություն չի տալիս շարունակելու աշխատանքը,

7) եթե օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատողը գրկվել է որոշակի աշխատանքներ կատարելու իրավունքներից,

8) եթե աշխատողը մինչև տասնվեց տարեկան է, և ծնողներից մեկը, որդեգրողը կամ հոգաբարձուն, նրա առողջության նկատմամբ հսկողություն իրականացնող բժիշկը կամ աշխատանքի պետական տեսուչը պահանջում է աշխատանքային պայմանագրի լուծում,

9) աշխատանքի էական պայմանները փոփոխվելու դեպքում,

10) ֆիզիկական անձ գործատուի մահվան դեպքում,

11) աշխատողի մահվան դեպքում,

12) աշխատանքի ընդունվելիս աշխատանքային օրենսգրքի 89-րդ հոդվածի 3-րդ և (կամ) 4-րդ կետերի¹ համաձայն՝ աշխատողի ներկայացրած տեղեկատվությունը կեղծ լինելու դեպքում,

13) աշխատանքի ընդունվելիս որոշակի աշխատանքներ կատարելու իրավունքներից գրկված լինելու փաստը աշխատողի թաքցնելու դեպքում:


Նշված դեպքերում աշխատանքային պայմանագրի լուծումը ձևակերպվում է գործատուի ընդունած անհատական իրավական ակտով՝ հրամանով:

Աշխատանքային պայմանագրի լուծման համար նախատեսվում է հետևյալ ընթացակարգը: Կողմերի համաձայնությամբ աշխատանքային պայմանագիրը լուծելիս աշխատանքային պայմանագրի մի կողմը գրավոր ձևով առաջարկում է մյուս կողմին լուծելու պայմանագիրը: Առաջարկի հետ համաձայնվելու դեպքում մյուս կողմը պետք է յոթ օրվա ընթացքում իր համաձայնության մասին ծանուցի առաջարկ ներկայացրած կողմին: Եթե կողմերը համաձայնվում են լուծել պայմանագիրը, ապա այդ մասին կնքում են գրավոր համաձայնագիր, որում նշվում են պայմանագրի լուծման ժամկետը և այլ պայմաններ (հատուցումներ և այլն):

Եթե պայմանագիրը լուծելու առաջարկություն ստացած կողմը նշված ժամկետում չի ծանուցում պայմանագիրը լուծելու իր համաձայնության մասին, ապա աշխատանքային պայմանագրի լուծման մասին առաջարկը համարվում է մերժված:

Որոշակի ժամկետով կնքված աշխատանքային պայմանագրի գործողության ժամկետը լրանալու պատճառով գործատուն կամ աշխատողն իրավունք ունեն լուծելու պայմանագիրը:

¹ 22 աշխատանքային օրենսգրքի 89-րդ հոդվածի 1-ին մասի 3-4-րդ կետերով սահմանվում են, որ աշխատանքային պայմանագիր կնքելու համար գործատուն պարտավոր է պահանջել հետևյալ փաստաթղթերը. կրթության կամ անհրաժեշտ որակավորման մասին վկայական, եթե աշխատանքային օրենսդրությանը համապատասխան՝ աշխատանքը կապված է որոշակի կրթության կամ մասնագիտական պատրաստվածության հետ, նաև տեղեկանք առողջական վիճակի մասին (սանիտարական գրքույկ), եթե աշխատանքային պայմանագիրը կնքվում է այնպիսի աշխատանքների համար, որոնք պահանջում են սկզբնական և պարբերական բժշկական զննություն, ինչպես նաև մինչև տասնութ տարեկան քաղաքացիների հետ աշխատանքային պայմանագիր կնքելու ժամանակ: Այդպիսի աշխատանքների ցանկը և տեղեկանքի (սանիտարական գրքույկի) ձևը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:



Գործատուն կարող է ժամկետը լրանալու պատճառով լուծել որոշակի ժամկետով կնքված աշխատանքային պայմանագիրը՝ այդ մասին գրավոր ծանուցելով աշխատողին առնվազն տասն օր առաջ:


Աշխատողը կարող է լուծել որոշակի ժամկետով կնքված աշխատանքային պայմանագիրը՝ պայմանագրի գործողության ժամկետը լրանալուց առնվազն տասն օր առաջ գրավոր ծանուցելով գործատուին: Եթե աշխատողը չի ծանուցել գործատուին որոշակի ժամկետով կնքված աշխատանքային պայմանագիրը լուծելու մասին և պայմանագրով նախատեսված վերջին աշխատանքային օրվան հաջորդող աշխատանքային օրը դուրս չի եկել աշխատանքի, ապա պայմանագիրը համարվում է լուծված, և գործատուն պարտավոր է աշխատողի հետ կատարել վերջնահաշվարկ այդպիսի պահանջ ներկայացվելու օրվան հաջորդող հինգ օրվա ընթացքում:

Անհրաժեշտ է նկատի ունենալ, որ եթե որոշակի ժամկետով կնքված աշխատանքային պայմանագրի գործողության ժամկետը լրանալուց հետո պայմանագիրը չի լուծվել և աշխատանքային հարաբերությունները շարունակվում են, ապա պայմանագիրը համարվում է կնքված անորոշ ժամկետով:

Աշխատողն իրավունք ունի լուծելու անորոշ ժամկետով կնքված աշխատանքային պայմանագիրը, ինչպես նաև որոշակի ժամկետով կնքված աշխատանքային պայմանագիրը նախքան դրա գործողության ժամկետի լրանալը՝ այդ մասին առնվազն երեսուն օր առաջ գրավոր ձևով ծանուցելով գործատուին:

Գործատուն իրավունք ունի աշխատողի հետ լուծելու անորոշ ժամկետով կնքված աշխատանքային պայմանագիրը, ինչպես նաև որոշակի ժամկետով կնքված աշխատանքային պայմանագիրը նախքան դրա գործողության ժամկետի լրանալը՝

- 1) կազմակերպության լուծարման (անհատ ձեռնարկատիրոջ գործունեության դադարման) դեպքում,
- 2) արտադրության ծավալների և (կամ) տնտեսական և (կամ) տեխնոլոգիական և (կամ) աշխատանքի կազմակերպման պայմանների փոփոխման և (կամ) արտադրական անհրաժեշտությամբ պայմանավորված՝ աշխատողների քանակի և (կամ) հաստիքների կրճատման դեպքում,
- 3) աշխատողի՝ գրադեցրած պաշտոնին կամ կատարած աշխատանքին չհամապատասխանելու դեպքում,
- 4) աշխատողին նախկին աշխատանքում վերականգնելու դեպքում,
- 5) աշխատողի կողմից աշխատանքային պայմանագրով կամ ներքին կարգապահական կանոններով իրեն վերապահված պարտականությունները առանց հարգելի պատճառի պարբերաբար չկատարելու դեպքում,



- 6) աշխատողի նկատմամբ վատահոյությունը կորցնելու դեպքում,
- 7) աշխատողի երկարատև անաշխատունակության հետևանքով (եթե աշխատողը ժամանակավոր անաշխատունակության պատճառով աշխատանքի չի ներկայացել ավելի քան 120 օր անընդմեջ կամ վերջին տասներկու ամսվա ընթացքում՝ ավելի քան 140 օր, եթե օրենքով և այլ նորմատիվ իրավական ակտերով սահմանված չէ, որ որոշակի հիվանդությունների դեպքում աշխատատեղը և պաշտոնը պահպանվում են ավելի երկար ժամանակով),
- 8) աշխատողի կողմից ոգելից խմիչքների, թմրամիջոցների կամ հոգեներգործուն նյութերի ազդեցության տակ աշխատավայրում գտնվելու դեպքում,
- 9) անհարգելի պատճառով ամբողջ աշխատանքային օրվա (հերթափոխի) ընթացքում աշխատողի՝ աշխատանքի չներկայանալու դեպքում,
- 10) պարտադիր բժշկական զննությունից աշխատողի հրաժարվելու կամ խուսափելու դեպքում,
- 11) աշխատողի կենսաթոշակային տարիքը լրանալու դեպքում, եթե աշխատանքային պայմանագրով այլ բան նախատեսված չէ:

● ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ


Կազմակերպության լուծարման և հաստիքների կրճատման հիմքերով աշխատանքային պայմանագիրը լուծելու դեպքում գործատուն պարտավոր է աշխատողին գրավոր ծանուցել ոչ ուշ, քան երկու ամիս առաջ:

Աշխատանքի էական պայմանները փոփոխվելու, զբաղեցրած պաշտոնին չհամապատասխանելու, երկարատև անաշխատունակության և կենսաթոշակային տարիքը լրանալու հիմքերով աշխատանքային պայմանագիրը լուծելու դեպքում գործատուն պարտավոր է գրավոր ծանուցել իր մոտ մինչև մեկ տարի աշխատողին՝ ոչ ուշ, քան 14 օր առաջ, մեկից մինչև հինգ տարի աշխատողին՝ 35 օր առաջ, հինգից մինչև տասը տարի աշխատողին՝ 42 օր առաջ, տասից մինչև տասնհինգ տարի աշխատողին՝ 49 օր առաջ, տասնհինգ տարուց ավելի աշխատողին՝ 60 օր առաջ:

Այս ժամկետները չպահպանելու դեպքում գործատուն պարտավոր է աշխատողին վճարել տուժանք՝ ծանուցման յուրաքանչյուր ժամկետանց օրվա համար, որը հաշվարկվում է՝ հիմք ընդունելով աշխատողի միջին օրական աշխատավարձի չափը:

Աշխատանքային պայմանագրի լուծման մասին ծանուցման մեջ նշվում են՝

- 1) աշխատանքից ազատելու հիմքը և պատճառը,
- 2) աշխատանքից ազատելու տարին, ամիսը, ամսաթիվը:



Սահմանված ժամանակահատվածներում նոր աշխատանք փնտրելու համար գործատուն պետք է աշխատողին տրամադրի ազատ ժամանակ: **Աշխատանքային պայմանագիրը լուծելու մասին ծանուցումն ուժը կորցրած է ձանաչվում, եթե ծանուցման ժամկետը լրանալուց հետո անցել է հինգ օրից ավելի ժամանակ, և գործատուն չի լուծել պայմանագիրը:**

Գործատուն իրավունք ունի **զբաղեցրած պաշտոնին չհամապատասխանելու հիմքով** լուծելու աշխատանքային պայմանագիրը, եթե մասնագիտական գիտելիքների անբավարարության կամ առողջական վիճակի պատճառով աշխատողը չի կարողանում կատարել իր աշխատանքային պարտականությունները:

Աշխատողի առողջական վիճակի վատթարացումը կարող է պատճառ դառնալ աշխատանքային պայմանագրի լուծման համար, եթե այն կրում է կայուն բնույթ և խոչընդոտում է շարունակելու աշխատանքը կամ բացառում է այն շարունակելու հնարավորությունը:

Աշխատողի մասնագիտական ունակությունների համապատասխանությունը զբաղեցրած պաշտոնին կամ կատարվող աշխատանքին գնահատում է գործատուն, իսկ աշխատողի առողջական վիճակի համապատասխանությունը որոշվում է բժշկասոցիալական փորձաքննական եզրակացությամբ:


Գործատուն իրավունք ունի աշխատողի կողմից **աշխատանքային կարգապահության խախտման կապակցությամբ** լուծելու աշխատանքային պայմանագիրը, եթե աշխատանքային կարգապահական խախտում թույլ տված աշխատողն ունի առնվազն երկու չհանված կամ չմարված կարգապահական տույժ:

Սույն հոդվածին համապատասխան՝ աշխատանքային պայմանագիրը լուծելիս գործատուն պարտավոր է պահպանել կարգապահական պատասխանատվության կիրառման կանոնները:

Գործատուն իրավունք ունի աշխատողի նկատմամբ **վստահությունը կորցնելու պատճառով** լուծելու աշխատանքային պայմանագիրը վստահությունը կորցրած աշխատողի հետ, եթե աշխատողը՝

- 1) դրամական կամ ապրանքային արժեքներ սպասարկելիս կատարել է այնպիսի արարքներ, որի հետևանքով գործատուն կրել է նյութական վնաս,
- 2) ուսումնադաստիարակչական գործառույթներ իրականացնող աշխատողը թույլ է տվել տվյալ աշխատանքը շարունակելու հետ անհամատեղելի արարք,
- 3) հրապարակել է պետական, ծառայողական, առևտրային կամ տեխնոլոգիական գաղտնիքներ կամ դրանց մասին հայտնել է մրցակից կազմակերպությանը:

Կարգապահության խախտման, վստահությունը կորցնելու, աշխատողի կողմից ոգելից խմիչքների, թմրամիջոցների կամ հոգեներգործուն նյութերի ազդեցության տակ աշխատավայրում գտնվելու, ան-



հարգելի պատճառով ամբողջ աշխատանքային օրվա (հերթափոխի) ընթացքում աշխատողի՝ աշխատանքի չներկայանալու, պարտադիր բժշկական գննությունից աշխատողի հրաժարվելու կամ խուսափելու դեպքերում գործատուն իրավունք ունի աշխատանքային պայմանագիրը լուծելու՝ առանց աշխատողին ծանուցելու:

Աշխատողի մահվան դեպքում գործատուն միակողմանիորեն լուծում է աշխատանքային պայմանագիրը աշխատողի մահվան օրվանից:

Ֆիզիկական անձ գործատուի մահվան դեպքում աշխատանքային պայմանագիրը կարող են լուծել գործատուի ժառանգները: Ժառանգներ չլինելու դեպքում պայմանագիրը համարվում է լուծված գործատուի մահվան օրը:

● ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԼՈՒԾՈՒՄԸ ԲԱՑԱՌՈՂ ՀԱՆ ԳԱՄԱՆՔՆԵՐԸ

Պետք է հիշել, որ աշխատանքային պայմանագրի լուծումը գործատուի նախաձեռնությամբ արգելվում է՝

1) աշխատողի ժամանակավոր անաշխատունակության ժամանակահատվածում, բացառությամբ աշխատողի երկարատև անաշխատունակության դեպքերի,

2) աշխատողի արձակուրդում գտնվելու ժամանակահատվածում,



3) հղի կանանց հետ՝ հղիության մասին գործատուին տեղեկանք ներկայացնելու օրվանից մինչև հղիության և ծննդաբերության արձակուրդի ավարտման օրվանից հետո մեկ ամիսը լրանալը,

4) մինչև մեկ տարեկան երեխա խնամելու ամբողջ ժամանակահատվածում, բացառությամբ կազմակերպության լուծարման, աշխատողի՝ զբաղեցրած պաշտոնին չհամապատասխանելու և աշխատողի կողմից աշխատանքային պայմանագրով կամ ներքին կարգապահական կանոններով իրեն վերապահված պարտականությունները առանց հարգելի պատճառի պարբերաբար չկատարելու, ինչպես նաև առանց աշխատողին ծանուցելու պայմանագրի լուծման դեպքերի,


5) գործադուլ հայտարարելու մասին որոշումն ընդունելուց հետո և գործադուլի ընթացքում, եթե աշխատողն այդ գործադուլին մասնակցում է ՀՀ աշխատանքային օրենսգրքով սահմանված կարգով,

6) պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների կողմից աշխատողի վրա դրված պարտականությունների կատարման ժամանակահատվածում, բացառությամբ զորակոչվելու դեպքերի:

Եթե աշխատողը նշված ժամանակահատվածների ավարտից հետո չի ներկայանում աշխատանքի, ապա գործատուն կարող է լուծել աշխատանքային պայմանագիրը:



Վերը թվարկվածներն այն դրույթներն են, որոնք ըստ էության աշխատողի իրավունքների պաշտպանության երաշխիք են հանդիսանում:



● **ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ**

Կազմակերպության վերակազմակերպումը դրա կազմակերպարարական կարգավիճակի փոփոխությունն է, նրա միավորումը այլ կազմակերպությանը, առանձնացումը այլ կազմակերպությունից:

Կազմակերպության վերակազմակերպումը, ինչպես նաև դրա նկատմամբ պարտավորական կամ այլ իրավունքներ ունեցող անձանց փոփոխությունը հիմք չէ աշխատանքային պայմանագիրը լուծելու համար, եթե տեղի չի ունենում աշխատողների թվաքանակի և (կամ) հաստիքների կրճատում:


● **ԱՐՁԱԿՄԱՆ ՆՊԱՍՏ ԵՎ ՎԵՐՋՆԱՀԱՇՎԱՐԿ**

Կազմակերպության լուծարման (անհատ ձեռնարկատիրոջ գործունեության դադարման), արտադրության ծավալների և (կամ) տնտեսական և (կամ) տեխնոլոգիական և (կամ) աշխատանքի կազմակերպման պայմանների փոփոխման և (կամ) արտադրական անհրաժեշտությամբ պայմանավորված՝ աշխատողների քանակի և (կամ) հաստիքների կրճատման դեպքում և աշխատողին նախկին աշխատանքում վերականգնելու հիմքերով աշխատանքային պայմանագիրը լուծվելու դեպքում գործատուն աշխատողին **վճարում է արձակման նպաստ նրա մեկ ամսվա միջին աշխատավարձի չափով**, իսկ աշխատողի՝ զբաղեցրած պաշտոնին կամ կատարած աշխատանքին չհամապատասխանելու դեպքում, երկարատև անաշխատունակության և կենսաթոշակային տարիքը լրանալու դեպքերում, ինչպես նաև աշխատանքի էական պայմանները փոփոխվելու և զորակոչվելու դեպքերում աշխատանքային պայմանագիրը լուծելու դեպքում գործատուն, հաշվի առնելով տվյալ գործատուի մոտ աշխատողի անընդմեջ աշխատանքային ստաժը, **աշխատողին վճարում է արձակման նպաստ՝**

- 1) մինչև մեկ տարի աշխատելու դեպքում՝ 10 աշխատանքային օրվա միջին օրական աշխատավարձի չափով,
- 2) մեկից մինչև հինգ տարի աշխատելու դեպքում՝ 25 աշխատանքային օրվա միջին օրական աշխատավարձի չափով,
- 3) հինգից մինչև տասը տարի աշխատելու դեպքում՝ 30 աշխատանքային օրվա միջին օրական աշխատավարձի չափով,
- 4) տասից մինչև տասնհինգ տարի աշխատելու դեպքում՝ 35 աշխատանքային օրվա միջին օրական աշխատավարձի չափով,
- 5) տասնհինգ տարի և ավելի աշխատելու դեպքում՝ 44 աշխատանքային օրվա միջին օրական աշխատավարձի չափով:

Կոլեկտիվ կամ աշխատանքային պայմանագրով կարող է նախատեսվել արձակման նպաստի վճարում ավելի երկար ժամանակահատվածով:

Աշխատանքային պայմանագիրը լուծվելու դեպքում գործատուն պարտավոր է աշխատողի հետ կատարել լրիվ վերջնահաշվարկ աշխատանքային պայմանագրի լուծման օրը, եթե սույն օրենսգրքով,



օրենքով կամ գործատուի և աշխատողի համաձայնությամբ վերջնահաշվարկի այլ կարգ նախատեսված չէ:

Եթե աշխատողը նույն գործատուի մոտ փոխադրվում (տեղափոխվում) է այլ աշխատանքի, գործատուն աշխատողի հետ վերջնահաշվարկ չի կատարում:

Գործատուն վերջնահաշվարկի օրը պարտավոր է աշխատողին վճարել աշխատավարձը և դրան հավասարեցված այլ վճարումներ, սահմանված կարգով լրացնել աշխատողի աշխատանքային գրքույկն ու հանձնել նրան:

Աշխատողի ցանկությամբ գործատուն պարտավոր է նրան տրամադրել տեղեկանք աշխատանքային գործառույթների (պարտականությունների), աշխատավարձի, վճարված հարկերի ու պետական սոցիալական ապահովության վճարումների չափի և աշխատանքի գնահատականի վերաբերյալ:

● ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՎԵՃԵՐ


Անշուշտ, գործատուի և աշխատողի շահերը միշտ չէ, որ համընկնում են, և կարող են առաջանալ վեճեր: Աշխատանքային վեճերը և դրանց լուծման կարգը ևս սահմանվում են ՀՀ աշխատանքային օրենսգրքով:

Ինչ է իրենից ներկայացնում աշխատանքային վեճը:

Աշխատանքային վեճը աշխատողի և գործատուի միջև տարաձայնությունն է, որն առաջանում է պայմանագրով սահմանված իրավունքների և պարտականությունների կատարման ժամանակ:

Աշխատանքային վեճերը ենթակա են քննության դատական կարգով՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով:

Աշխատանքի պայմանների փոփոխման, գործատուի նախաձեռնությամբ աշխատանքային պայմանագիրը դադարեցնելու կամ աշխատանքային պայմանագիրը լուծելու հետ համաձայն չլինելու դեպքում աշխատողը համապատասխան անհատական իրավական ակտը (փաստաթուղթը) ստանալու օրվանից հետո՝ մեկ ամսվա ընթացքում, իրավունք ունի դիմելու դատարան: Եթե պարզվում է, որ աշխատանքի պայմանները փոփոխվել են, աշխատողի հետ աշխատանքային պայմանագիրը լուծվել է առանց օրինական հիմքերի կամ օրենսդրությամբ սահմանված կարգի խախտումով, ապա աշխատողի խախտված իրավունքները վերականգնվում են: Այդ դեպքում աշխատողի օգտին գործատուից գանձվում է միջին աշխատավարձը՝ հարկադիր պարապուրդի ամբողջ ժամանակահատվածի համար, կամ աշխատավարձի տարբերությունը այն ժամանակահատվածի համար, որի ընթացքում աշխատողը կատարում էր նվազ վարձատրվող աշխատանք, բացառությամբ ստորև նշված նախատեսված դեպքերի: Միջին աշխատավարձը հաշվարկվում է աշխատողի միջին օրական աշխատավարձի չափը համապատասխան օրերի քանակով բազմապատկելու միջոցով:



Տնտեսական, տեխնոլոգիական, կազմակերպչական պատճառներով կամ գործատուի և աշխատողի հետագա աշխատանքային հարաբերությունների վերականգնման անհնարինության դեպքում դատարանը կարող է աշխատողին չվերականգնել իր նախկին աշխատանքում՝ պարտավորեցնելով գործատուին հարկադիր պարապուրդի ամբողջ ժամանակահատվածի համար աշխատողին վճարելու հատուցում՝ միջին աշխատավարձի ոչ պակաս, քան կրկնապատիկի, բայց ոչ ավելի, քան տասներկուապատիկի չափով, մինչև դատարանի վճիռն օրինական ուժի մեջ մտնելը: Այս դեպքում դատարանի վճիռն օրինական ուժի մեջ մտնելու օրվանից աշխատանքային պայմանագիրը համարվում է լուծված:

Օրենքով սահմանված է հայցային վաղեմության ժամկետ: Հայցային վաղեմությունը իրավունքը խախտված անձի հայցով իրավունքի պաշտպանության ժամանակահատվածն է:


Հայցային վաղեմության ընդհանուր ժամկետը երեք տարի է: Պահանջների որոշ տեսակների համար օրենքներով կարող են սահմանվել հայցային վաղեմության ընդհանուր ժամկետի համեմատությամբ կրճատ կամ ավելի երկար՝ հատուկ ժամկետներ:

Հիշե՛ք, որ հայցային վաղեմություն չի տարածվում աշխատողի պատվի և արժանապատվության պաշտպանության, աշխատավարձի, ինչպես նաև աշխատողի կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման պահանջներով:

Օրենքով սահմանված է նաև դատավարական ժամկետներ: Աշխատանքային օրենսդրությամբ սահմանված՝ դատավարական գործողությունների կատարման ժամկետները որոշվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով: Սակայն անհրաժեշտ է նկատի ունենալ, որ բացառություն են կազմում ՀՀ աշխատանքային օրենսդրությամբ նախատեսված նման ժամկետների հաշվարկման և կիրառման վերաբերյալ դրույթները:

Աշխատանքային վեճերով ծախսեր

Աշխատանքային վեճերով դատական ծախսերը կատարվում են օրենքով սահմանված կարգով: Սույն հարցը կարգավորվում է «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքով: Մասնավորապես՝ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածով սահմանվում են դատարաններում պետական տուրքի գծով արտոնությունները: Համաձայն նշված հոդվածի՝ դատարաններում պետական տուրքի վճարումից ազատվում են հայցվորները՝ աշխատավարձի և դրան հավասարեցված վճարումների հետ կապված այլ գումարների գանձման և աշխատանքային վեճերի վերաբերյալ հայցերով:



Այսպիսով՝ ամփոփելով վերը գրվածը՝ անհրաժեշտ ենք համարում հիշեցնել, որ ցանկացած աշխատանքային պայմանագիր կնքելիս և աշխատանքային հարաբերությունների մեջ մտնելիս հարկ է իմանալ ձեր՝ որպես աշխատողի, ինչպես նաև գործատուի իրավունքներն ու պարտականությունները, որոնք հնարավորություն կտան ձեզ խուսափելու ավելորդ անհարկի տարածայնություններից, և ցանկացած դեպքում պաշտպանված կլինեք օրենքով:

Աշխատանքային հարաբերությունների դադարման վերաբերյալ վեճերը

Գործատուի նախաձեռնությամբ աշխատանքային պայմանագիրը դադարեցնելու կամ աշխատանքային պայմանագիրը լուծելու հետ համաձայն չլինելու դեպքում ՀՀ աշխատանքային օրենսգիրքը աշխատողին իրավունք է տալիս դիմելու դատարան: Եթե պարզվում է, որ աշխատողի հետ աշխատանքային պայմանագիրը լուծվել է առանց օրինական հիմքերի կամ օրենսդրությամբ սահմանված կարգի խախտումով, ապա աշխատողի խախտված իրավունքները վերականգնվում են:

Պահանջի իրավունքը աշխատանքից անօրինական ազատելու դեպքում

Եթե աշխատողը համաձայն չէ աշխատանքային հարաբերությունների դադարման հետ, և պարզվի, որ աշխատանքային պայմանագիրը լուծվել է առանց օրինական հիմքերի, ապա աշխատողի օգտին գործատուից գանձվում է միջին աշխատավարձը՝ հարկադիր պարապուրդի ամբողջ ժամանակահատվածի համար, կամ աշխատավարձի տարբերությունը այն ժամանակահատվածի համար, որի ընթացքում աշխատողը կատարում էր նվազ վարձատրվող աշխատանք: Միջին աշխատավարձը հաշվարկվում է աշխատողի միջին օրական աշխատավարձի չափը համապատասխան օրերի քանակով բազմապատկելու միջոցով:

Աշխատանքային վեճը քննող մարմինը

ՀՀ աշխատանքային օրենսգրքի համաձայն՝ անհատական աշխատանքային վեճերը քննության են ենթակա դատական կարգով՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով:

Աշխատանքային վեձի քննության ժամկետը


Աշխատանքային վեձը քննելու համար օրենքով հստակ ժամկետներ սահմանված չեն: ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրքը սահմանում է աշխատանքային վեձի քննության ողջամիտ ժամկետ: Հարկ է նշել նաև, որ եթե ներկայացվել է աշխատանքային վեձի հետ կապված պահանջ, ապա դատարանն իրավունք ունի կիրառելու արագացված դատաքննություն:

Պահանջ ներկայացնելու ժամկետը և դատական ծախսերը

Աշխատողը կարող է դիմել դատարան մեկ ամսվա ընթացքում այն օրվանից հետո, երբ նա ստացել է անհատական իրավական ակտը (փաստաթուղթը): Դատարան աշխատանքային վեձի վերաբերյալ հայց ներկայացնելու դեպքում պետական տուրք չի գանձվում:

ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ
ՁԵՌՆԵՐԵՑՈՒԹՅԱՆ
ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ
ԲՆԱԳԱՎԱՌՆԵՐՈՒՄ





Ժամանակակից հայ հասարակությանը հայտնի են դեպքեր, երբ կինը հաջողությամբ իրացրել է և իրացնում է իր մտահոգումները ձեռներեցության ոլորտում կամ հասարակական կյանքում: Հաճախ կարիք է առաջանում գործունեություն սկսելուց առաջ ստեղծել կազմակերպություն: Կազմակերպության իրավական ձևը որոշելուց առաջ պետք է հստակ պատկերացնել դրա հիմնադրման նպատակը, խնդիրները, գործունեության տեսակը, հիմնադիրների քանակը, այլ խոսքերով ասած՝ ունենալ հստակ հիմքեր այդ կազմակերպությունը հիմնելու համար: Այդ կազմակերպությունների տեսակները սահմանված են ՀՀ քաղաքացիական օրենսգրքում և դրանցից որևէ մեկին նախապատվություն տալուց առաջ պետք է վերլուծել և ձիշտ գնահատել ապագա գործունեության հեռանկարները:

Պետք է հիշել՝ հանդես գալով որևէ կազմակերպության հիմնադիր, լինելով որևէ կազմակերպության նախագահ կամ տնօրեն, կատարելով կանոնադրությունից բխող գործառույթներ և ունենալով կնիք գործածելու իրավասություն չի նշանակում ունենալ միայն իրավունքներ, սա նաև պահանջում է պարտականությունների հստակ իրականացում կազմակերպության աշխատողների, ծառայությունների մատուցողների և պետական մարմինների առջև:


● Ո՞Ր ԴԻՄԵՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԿԱՄ ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՄԱՐ

Հասարակական կարգով գործունեություն ծավալելու կամ շահույթ հետապնդող կազմակերպություն գրանցելու համար պետք է դիմել իրավաբանական անձանց պետական գրանցումն իրականացնող մարմնին՝ ՀՀ արդարադատության նախարարության աշխատակազմի՝ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունը (այսուհետ՝ Գործակալություն): Գործակալության կանոնադրությանը կարելի է ծանոթանալ այստեղ. <https://www.e-register.am/am/docs/114>

Իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման համար նույնպես պետք է դիմել այդ Գործակալությանը (Իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության ծառայությունների մատուցման մի շարք հարցեր կանոնակարգելու վերաբերյալ Արդարադատության նախարարի հրամանը կարող էք գտնել կից սկավառակում):

Պետական հաշվառման և պետական գրանցման տեսակներն են՝

- 1) անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառում կամ հաշվառումից հանում,
- 2) իրավաբանական անձանց պետական գրանցում,



- 3) իրավաբանական անձանց փոփոխությունների պետական գրանցում,
- 4) իրավաբանական անձանց վերակազմակերպմամբ պայմանավորված պետական գրանցում,
- 5) իրավաբանական անձանց լուծարման պետական գրանցում,
- 6) իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների և հիմնարկների հաշվառում, հաշվառման փոփոխում կամ հաշվառումից հանում:

Պետական գրանցման կամ պետական հաշվառման համար դիմելու իրավունք ունի ցանկացած գործունակ անձ՝ Գործակալություն ներկայացնելով համապատասխան դիմում՝ էլեկտրոնային փաստաթղթի ձևով կամ թղթային կրիչի վրա՝ կից ներկայացնելով «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» ՀՀ օրենքով (տեքստը տես կից սկավառակում) պահանջվող փաստաթղթերը:


Իմացե՛ք, որ ձեռնարկատիրական գործունեության պետական գրանցման համար գործազուրկներին և հաշմանդանների ֆինանսական աջակցություն տրամադրելու կարգ է հաստատվել ՀՀ կառավարության 2006 թվականի հունիսի 16-ի N 984-Ն որոշմամբ (տե՛ս կից սկավառակում):

Գործազուրկի, հաշմանդամի և Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «Զբաղվածության պետական ծառայություն» գործակալության տարածքային (մարզային) կենտրոնի տնօրենի միջև կնքվող ձեռնարկատիրական գործունեության պետական գրանցման համար ֆինանսական աջակցություն տրամադրելու մասին պայմանագրի ձևը և ֆինանսավորման հայտ-պահանջագրի օրինակելի ձևերը հաստատվել են ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի հրամանով (տես կից սկավառակում):

● **ԻՆՉՊԻՍԻ՝ ՊԱՀԱՆՁՆԵՐԻ ՊԵՏՔ Է ՀԱՄԱՊԱՏԱՍԵԱՆԵՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ**

Գործակալություն ներկայացվող փաստաթղթերը պետք է բավարարեն հետևյալ պահանջները.

- 1) թղթային կրիչի վրա ներկայացվող մեկ թերթից ավելի ծավալ ունեցող փաստաթղթի, այդ թվում՝ փաստաթղթի պատձենի թերթերը պետք է լինեն համարակալված և կարված, որը պետք է ապահովի փաստաթղթի ամբողջականությունը,



2) փաստաթղթերում պետք է նշված լինեն դրանք կազմելու տարին, ամիսը, ամսաթիվը,

3) փաստաթղթերը չպետք է պարունակեն ջնջումներ կամ էական վնասվածքներ, հավելագրումներ, դատարկ և հետագայում լրացման համար նախատեսված չլրացված մասեր, չծանոթագրված ուղղումներ,

4) փաստաթղթերի տեքստը պետք է գրված լինի պարզ, հստակ և ընթերցելի,

5) միաժամանակ հայերեն և օտար լեզվով ներկայացվող փաստաթղթերի տեքստերը պետք է շարադրվեն իրար հետևից կամ իրար կողքի այն պայմանով, որ իրար հետևից տեքստերի շարադրման դեպքում վերևում գետեղվում է հայերեն տեքստը, ընդ որում՝ տեքստերի միջև հակասության դեպքում նախապատվությունը տրվում է հայերեն տեքստին,


6) փաստաթուղթը պետք է նշում պարունակի այն հաստատելու մասին կամ ձևակերպված լինի այն հաստատող փաստաթղթի հետ մեկ փաստաթղթի տեսքով,

7) կանոնադրությունը (կանոնադրության փոփոխությունները) պետք է նշում պարունակի հաստատման, ներկայացված օրինակների քանակի և օրինակի հերթական համարի մասին: Կանոնադրության փոփոխությունը կամ նոր խմբագրությամբ կանոնադրությունը պետք է նշում պարունակի նաև իրավաբանական անձի պետական գրանցման տվյալների և պետական գրանցում ստացած վերջին կանոնադրության պետական գրանցման օրվա մասին,

8) իրավաբանական անձի ներկայացրած փաստաթղթի պատճենը պետք է բավարարի սույն հոդվածի 1-ին մասի 1-7-րդ կետերով սահմանված պահանջները և պետք է վավերացվի իրավաբանական անձի գործադիր մարմնի ղեկավարի կողմից, եթե Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով, սույն օրենքով և այլ օրենքներով վավերացման այլ կարգ սահմանված չէ: Պատճենը պետք է բովանդակի վավերացման տարին, ամիսը, ամսաթիվը, գործադիր մարմնի ղեկավարի ստորագրությունը: Անհատ ձեռնարկատեր հաշվառված անձի ներկայացրած փաստաթղթի պատճենը պետք է վավերացվի սույն կետով սահմանված կարգով՝ փաստաթղթեր ներկայացնող անձի կողմից:

● ԻՆՉ ԺԱՄԿԵՏՆԵՐՈՒՄ Է ԻՐԱԿԱՆԱՑՎՈՒՄ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՈՒՄԸ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ

Պետական գրանցումը և պետական հաշվառումը կատարվում է «իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» ՀՀ օրենքով սահմանված ժամկետներում (տե՛ս կից սկավառակում), սակայն կարող են սահմանվել ավելի կրճատ ժամկետներ՝ վճարելով նախատեսված այդպիսի ծառայությունների համար: Վճարի դիմաց մատուցվող ծառայությունների տեսակների ամբողջական ցանկը և պայմանները, ինչպես



նան համապատասխան վճարի չափը սահմանվում են Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի օգոստոսի 11-ի N 1194-Ն որոշմամբ (տե՛ս կից սկավառակում):

Դիմում ներկայացնելու պահանջը համարվում է պատշաճ կատարված նաև այն դեպքում, երբ անձը գործակալություն է ներկայացնում դիմում լրացնելու համար անհրաժեշտ տեղեկատվություն կամ այդ տեղեկատվությունը պարունակող փաստաթղթեր (անձնագիր, սոցիալական քարտ կամ նշում անձի՝ սոցիալական քարտից հրաժարվելու մասին և համապատասխան տեղեկանքի համարը) և ստորագրում է գործակալության պատրաստած դիմումը:

Եթե դիմումին կից ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ, ապա գործակալությունը դիմողին սույն օրենքով սահմանված կարգով և ժամկետում առաջարկում է համալրել այդ ցանկը:


Հիշե՛ք, որ Գործակալությունը պարտավոր է ֆիզիկական անձանց պարզաբանումներ տալ դիմումով առաջադրվող հարցի կապակցությամբ պետական գրանցման և պետական հաշվառման հետ կապված նրանց իրավունքների ու պարտականությունների վերաբերյալ, օժանդակել դիմումի ձևա-կերպմանը:

Եթե դիմողը նախընտրում է օգտվել վերը նշված օրենքի հիման վրա սահմանված նմուշային տեքստերից, տիպային ձևերից, սահմանված նմուշներից, ապա գործակալության աշխատակիցները պարտավոր են աջակցել քաղաքացուն լրացնել ձևաթղթերը, իսկ դրանց տեղեկատվական համակարգի միջոցով լրացվելու դեպքում նաև կազմել դրանք՝ հիմք ընդունելով դիմողի տրամադրած տեղեկատվությունը և փաստաթղթերը:

● Ի՞նչ ՊԵՏՔ Է ԲՈՎԱՆ ԴԱԿԻ ԴԻՄՈՒՄԸ

Պետական գրանցման կամ պետական հաշվառման համար գործակալություն ներկայացվող դիմումը պետք է բովանդակի՝

- 1) դիմողի անունը, ազգանունը (իրավաբանական անձի դեպքում՝ լրիվ անվանումը),
- 2) դիմող ֆիզիկական անձի անձնագրի կամ նույնականացման քարտի (այսուհետ՝ անձնագիր) տվյալները, բնակության կամ հաշվառման հասցեն, իրավաբանական անձի գրանցման համարը և գտնվելու վայրը,
- 3) նշում, որ դիմումը ներկայացվում է գործակալություն,
- 4) ներկայացվող պահանջը,
- 5) դիմումին կցվող փաստաթղթերի ցանկը,
- 6) դիմումը կազմելու տարին, ամիսը, ամսաթիվը,
- 7) դիմող ֆիզիկական անձի ստորագրությունը կամ դիմող իրավաբանական անձի գործադիր մարմնի ղեկավարի կամ լիազորված անձի ստորագրությունը:



Պետք է հիշել՝ կազմակերպության գրանցումից առաջ հարկավոր է ուսումնասիրել տվյալ ժամանակաշրջանում գործող հարկային օրենսդրությունը կամ խորհրդատվություն ստանալ հասնապատասխան մասնագետից՝ հասկանալու համար թե որ տեսակի իրավաբանական անձ գրանցելն է նպատակահարմար:

Ցանկացած դեպքում հարկային օրենսդրությունից օգտվելուց առաջ հարկավոր է ստուգել՝ արդյոք չի փոփոխվել կամ ուժը կորցրել տվյալ հոդվածը կամ դրա մի մասը:

Ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու համար դուք իրավունք ունեք ստեղծելու տնտեսական ընկերություններ կամ լինել դրանց մասնակիցը: Քաղաքացին որպես անհատ ձեռնարկատեր հաշվառվելու պահից իրավունք ունի զբաղվելու ձեռնարկատիրական գործունեությամբ: Քաղաքացիներն առանց պետական գրանցման կամ հաշվառման (առանց իրավաբանական անձ կազմավորելու կամ անհատ ձեռնարկատեր հաշվառվելու) իրավունք ունեն զբաղվելու ձեռնարկատիրական գործունեությամբ, եթե հանդիսանում են արտոնագրային վճար վճարողներ կամ գյուղատնտեսական արտադրանք արտադրելու նպատակով կնքել են համատեղ գործունեության պայմանագիր:


Իրավաբանական անձ է համարվում այն կազմակերպությունը, որը, որպես սեփականություն, ունի առանձնացված գույք և իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով, կարող է իր անունից ձեռք բերել ու իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:

Իրավաբանական անձը պետք է ունենա ինքնուրույն հաշվեկշիռ:

Իրավաբանական անձի նկատմամբ հիմնադիրները (մասնակիցները) պարտավորական իրավունքներ ունենում են կամ չեն ունենում, դա կապված է այն հանգամանքի հետ, թե արդյոք նրանք մասնակցել են իրավաբանական անձի գույքի կազմավորմանը: Օրինակ՝ հիմնադիրներն (մասնակիցները) ունեն պարտավորական իրավունքներ տնտեսական ընկերակցությունների և ընկերությունների նկատմամբ, իսկ հասարակական միավորումների, հիմնադրամների և իրավաբանական անձանց միությունների նկատմամբ նրանց հիմնադիրները չունեն պարտավորական իրավունքներ:

● ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Իրավաբանական անձինք կարող են լինել իրենց գործունեությամբ շահույթ ստանալու նպատակ հետապնդող (առևտրային) կամ շահույթ



ստանալու նպատակ չհետապնդող և ստացված շահույթը մասնակիցների միջև չբաշխող (ոչ առևտրային) կազմակերպություններ: Առևտրային կազմակերպություն հանդիսացող իրավաբանական անձինք կարող են ստեղծվել տնտեսական ընկերակցությունների և ընկերությունների ձևով: Կոոպերատիվները՝ կախված իրենց գործունեության բնույթից, կարող են լինել շահույթ ստանալու նպատակ հետապնդող (առևտրային) կամ նման նպատակ չհետապնդող (ոչ առևտրային) կազմակերպություններ: Ոչ առևտրային կազմակերպություն համարվող իրավաբանական անձինք կարող են ստեղծվել հասարակական միավորումների, հիմնադրամների, իրավաբանական անձանց միությունների, ինչպես նաև օրենքով նախատեսված այլ ձևերով:

Ոչ առևտրային կազմակերպությունները կարող են ձեռնարկատիրական գործունեություն իրականացնել միայն այն դեպքերում, երբ ծառայում է այն նպատակների իրականացմանը, որոնց համար նրանք ստեղծվել են, և համապատասխանում են այդ նպատակներին: Ձեռնարկատիրական գործունեության իրականացման համար ոչ առևտրային կազմակերպություններն իրավունք ունեն ստեղծելու տնտեսական ընկերություններ կամ լինել նրանց մասնակից:

Գործունեության առանձին տեսակներով, որոնց ցանկը սահմանվում է օրենքով, իրավաբանական անձը կարող է զբաղվել միայն հատուկ թույլտվության (լիցենզիայի) հիման վրա: Իրավաբանական անձի կողմից այնպիսի գործունեություն իրականացնելու իրավունքը, որով զբաղվելու համար անհրաժեշտ է հատուկ թույլտվություն (լիցենզիա), ծագում է նման թույլտվությունը ստանալու պահից կամ դրանում նշված ժամկետում և դադարում է դրա գործողության ժամկետի ավարտով, եթե այլ բան սահմանված չէ օրենքով կամ այլ իրավական ակտերով:


● ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԻ ՍՏԵՂԾՈՒՄԸ

Իրավաբանական անձի հիմնադիրները կնքում են պայմանագիր, որով որոշում են իրավաբանական անձի հիմնադրման համար համատեղ գործունեության կարգը, իրավաբանական անձին իրենց գույքը հանձնելու և նրա կառավարմանն իրենց մասնակցության պայմանները: Պայմանագրի հիման վրա հիմնադիրները մշակում են ստեղծվող իրավաբանական անձի կանոնադրությունը:

Իրավաբանական անձի հիմնադիր փաստաթուղթը նրա հիմնադիրների (մասնակիցների) կամ կանոնադրությամբ դրա համար լիազորված մարմնի հաստատած կանոնադրությունն է:

Իրավաբանական անձի կանոնադրությամբ սահմանվում են իրավաբանական անձի անվանումը, նրա գտնվելու վայրը, ինչպես նաև պարունակվում են համապատասխան տեսակի իրավաբանական անձանց համար՝ սույն օրենսգրքով և (կամ) օրենքով նախատեսված այլ տեղեկություններ:

Ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունում սահմանվում են նրա գործունեության առարկան և նպատակները:



● ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՈՒՄԸ

Իրավաբանական անձը օրենքով սահմանված կարգով ենթակա է պետական գրանցման: Իրավաբանական անձը ստեղծված է համարվում նրա պետական գրանցման պահից:

Իրավաբանական անձի պետական գրանցումը մերժելու հիմքերը սահմանվում են օրենքով: Իրավաբանական անձի գրանցումն այն ստեղծելու աննպատակահարմարության շարժառիթով մերժել չի թույլատրվում: Պետական գրանցումը մերժելը, ինչպես նաև գրանցումից խուսափելը կարող են բողոքարկվել դատարան:


Իրավաբանական անձն իր պարտավորությունների համար պատասխանատու է իրեն պատկանող ամբողջ գույքով: Իրավաբանական անձի հիմնադիրը (մասնակիցը) պատասխանատու չէ իրավաբանական անձի, իսկ իրավաբանական անձը՝ իր հիմնադրի (մասնակցի) պարտավորությունների համար:

Այժմ զգալիորեն հեշտացվել է իրավաբանական անձանց գրանցման գործընթացը:

Գրանցումն իրականացնելու համար հարկավոր է այցելել <https://www.e-register.am/am/>, որտեղ դուք կարող եք ներկայացնել իրավաբանական անձանց պետական գրանցման առ ցանց հայտեր, հետևել Ձեր դիմումների ընթացքին, որոնք և ձեռք բերել տեղեկություններ Ձեզ հետաքրքրող ընկերությունների վերաբերյալ, ինչպես նաև էլեկտրոնային եղանակով ներկայացնել ձեռնարկությունների գրանցման հայտեր: Այս համակարգից օգտվելու համար անհրաժեշտ է գրանցվել վերը նշված կայքում և հետևել յուրաքանչյուր էջում ցուցադրվող բացատրություններին:

Պետք է հիշել, որ առևտրային կազմակերպության գրանցման առաջին և անհրաժեշտ քայլը ֆիրմային անվանման ընտրությունն է, այնուհետև՝ դրա գրանցումը:

Իսկ ինչու՞ է առաջնահերթ ֆիրմային անվան ընտրությունը: Համաձայն ՀՀ օրենսդրության պահանջների՝ բոլոր առևտրային կազմակերպությունները (ՍՊԸ, ՓԲԸ, ԲԲԸ և այլն, բացառությամբ անհատ ձեռնարկատերերի) իրենց ընկերության անվանումն ընտրելուց հետո այն ներկայացնում են փորձաքննության ՀՀ էկոնոմիկայի նախարարության Մտավոր սեփականության գործակալություն: Փորձաքննությունը կիրականացվի ՀՀ փորձագետների կողմից 1 աշխատանքային օրվա ընթացքում: Այս փորձաքննությունն անհրաժեշտ է Հայաստանի Հանրապետությունում գործող և գրանցված այլ ապրանքանիշերի և ֆիրմային անվանումների պաշտպանության անհրաժեշտությամբ: Ձեր ընկերության անվանումը գրանցելուց հետո այն ևս պաշտպանված կլինի Հայաստանի Հանրապետության օրենքներով:



Ֆիրմային անվանում գրանցելու համար հայտերը նաև ընդունվում և մշակվում են էլեկտրոնային համակարգի միջոցով, մանրամասներին կարող եք ծանոթանալ այստեղ՝ <https://www.e-register.am/am/docs/15>: Եթե ընտրված անվանումը չի ներառում աշխարհագրական անվանում և չի համընկնում կամ շփոթության աստիճանի նման չէ գրանցված ապրանքանիշերի կամ Ֆիրմային անվանումների հետ, ապա համակարգը՝ առանց մարդու կողմից փորձաքննության ենթարկվելու անարգել կգրանցի նման ֆիրմային անվանումը: Եթե ընտրած անվանումը մերժվել է, ապա կարող եք փոխել այն և վերահանձնել դիմումը՝ առանց լրացուցիչ պետական տուրք վճարելու:

Երբ արդեն ընտրել եք և գրանցել Ձեր կազմակերպության անվանումը կարող եք ձեռնամուխ լինել կանոնադրության գրանցմանը:

● ԻՐԱՎԱՔԱՆԱԿԱՆ ԱՆՁԻ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ

Իրավաբանական անձի լուծարմամբ նրա գործունեությունը դադարում է՝ առանց իրավունքները և պարտականություններն իրավահաջորդության կարգով այլ անձանց անցնելու:

Իրավաբանական անձը կարող է լուծարվել՝


1) նրա հիմնադիրների (մասնակիցների) կամ կանոնադրությամբ դրա համար լիազորված իրավաբանական անձի մարմնի որոշմամբ՝ ներառյալ այն ժամկետը լրանալու կապակցությամբ, որով ստեղծվել է իրավաբանական անձը, կամ այն նպատակին հասնելու կապակցությամբ, որի համար նա ստեղծվել է,

2) դատարանի կողմից իրավաբանական անձի գրանցումն անվավեր ձանաչելու դեպքում՝ կապված այն ստեղծելու ժամանակ թույլ տրված օրենքի խախտումների հետ,

3) դատարանի վճռով՝ առանց թույլտվության (լիցենզիայի) կամ օրենքով արգելված գործունեություն իրականացնելու, օրենքի կամ այլ իրավական ակտերի բազմակի կամ կոպիտ խախտումների, հասարակական միավորման կամ հիմնադրամի կողմից պարբերաբար իր կանոնադրական նպատակներին հակասող գործունեություն իրականացնելու, ինչպես նաև սույն օրենսգրքով նախատեսված այլ դեպքերում:

Իրավաբանական անձի լուծարման մասին որոշում ընդունած իրավաբանական անձի հիմնադիրները (մասնակիցները) կամ կանոնադրությամբ դրա համար լիազորված իրավաբանական անձի մարմինը պարտավոր են այդ մասին անհապաղ տեղեկացնել իրավաբանական անձանց պետական գրանցում իրականացնող մարմնին, որն իրավաբանական անձանց պետական գրանցամատյանում տեղեկություններ է գրառում տվյալ իրավաբանական անձի լուծարման գործընթացում գտնվելու մասին:

Իրավաբանական անձի լուծարման մասին որոշում ընդունած իրավաբանական անձի հիմնադիրները (մասնակիցները) կամ կանոնադրությամբ դրա համար լիազորված իրավաբանական անձի մարմինը նշանակում են լուծարման հանձնաժողով (լուծարող) և, ՀՀ քաղաքացիական օրենսգրքին համապատասխան, սահմանում են լուծարման կարգն ու ժամկետները:



Լուծարման հանձնաժողովին են անցնում իրավաբանական անձի գործերի կառավարման լիազորությունները: Լուծարվող իրավաբանական անձի անունից դատարանում հանդես է գալիս լուծարման հանձնաժողովը:

Իրավաբանական անձը դատարանի վճռով կարող է սնանկ ձանաչվել, եթե նա ի վիճակի չէ բավարարել պարտատերերի պահանջները: Դատարանով սնանկ ձանաչելու հիմքերը, կարգը, ինչպես նաև սնանկ ձանաչված իրավաբանական անձի պարտատերերի պահանջների բավարարման առանձնահատկությունները սահմանվում են «Սնանկության մասին» ՀՀ օրենքով (տես կից սկավառակում):

● ԻՆՉՊԵՆՍ ՍԿՍԵԼ ՀԱՀՈՒՅԹ ՀԵՏԱՊՆԴՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՐԱՆՑՈՒՄԸ


Տիշե՛ք՝ ձեռներեցությամբ զբաղվելու համար հարկավոր է հաշվառվել որպես անհատ ձեռնարկատեր կամ գրանցել իրավաբանական անձ: Պետական գրանցման համար պետք է դիմել Գործակալություն:

Ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու ձևերից մեկը անձի՝ որպես անհատ ձեռնարկատեր հաշվառվելն է:¹ Կարող եք նաև արտոնագրային վճար վճարող համարվելու համար Ձեր հաշվառման (բնակության, գործունեության իրականացման) հարկային մարմիններ կայացնել «Արտոնագրային վճարների մասին» ՀՀ օրենքին համապատասխան դիմում–հայտարարություն: «Արտոնագրային վճարների մասին» ՀՀ օրենքով սահմանված է ֆիզիկական անձանց կողմից արտոնագրային վճար վճարող համարվելու գործունեության տեսակները և արտոնագրային վճարների չափերը, որին կարող եք ծանոթանալ կից սկավառակում:

Անհատ ձեռնարկատեր լինելու արդյունքում անձն իր ռիսկով, իր անունից և սեփական միջոցներով զբաղվելու ձեռնարկատիրական գործունեությամբ՝ առանց իրավաբանական անձ ստեղծելու:

Տաճախ տրվող հարցերից է. արդյո՞ք ավելի նպատակահարմար և ձեռնառու է հաշվառվել որպես անհատ ձեռնարկատեր թե՞ իրավաբանական անձ գրանցել:

¹ Անհատ ձեռնարկատիրոջ պետական հաշվառումը կատարվում է Գործակալության ցանկացած սպասարկման գրասենյակի կողմից՝ անկախ անհատ ձեռնարկատիրոջ գործունեության վայրից:



Պետք է նշել, որ յուրաքանչյուր դեպքի համար պատասխանը տարբեր է և հետևություն կարող էք կատարել ինքներդ՝ ընթերցելով ստորև բերված մեկնաբանությունները:

Անհատ ձեռնարկատիրոջ հաշվառումն ունի դրական կողմեր. հաշվառման գործընթացի արագ կատարումը՝ փաստաթղթային նվազագույն պահանջներով, հաշվեկշիռ չունենալը և այլն: Կա նաև բացասական կողմ. անհատ ձեռնարկատերն իր պարտավորությունների համար պատասխանատու է սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքով, բացառությամբ այն գույքի, որի վրա, օրենքին համապատասխան, բռնագանձում չի տարածվում:

● ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՋ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ


Անհատ ձեռնարկատեր կարող է լինել ցանկացած գործունակ անձ (ՀՀ քաղաքացի, օտարերկրյա քաղաքացի կամ քաղաքացիություն չունեցող անձ), ում ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու իրավունքը օրենքով սահմանափակված չէ: Մասնավորապես, անձը չի կարող հաշվառվել որպես անհատ ձեռնարկատեր, եթե նա դատական կարգով գրկվել է ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու իրավունքից, և դատվածությունը սահմանված կարգով հանված կամ մարված չէ կամ անձը դատական կարգով ծանաչվել է սնանկ, և պետական հաշվառման դիմում տալու պահին չի կատարել սնանկ ծանաչելու համար հիմք հանդիսացած իր պարտավորությունները:

Պետական հաշվառման համար անհատ ձեռնարկատերը Գործակալություն է ներկայացնում՝

- անձնագիր (անձնագիրը անձը նույնականացնելուց հետո վերադարձվում է) և պատճենը,

- պետական տուրքի վճարումը հավաստող փաստաթուղթ (վճարման անդորրագիր, e-payments.am էլեկտրոնային վճարման համակարգի միջոցով կատարված վճարում և այլն):

Տիշե՛ք՝ անհատ ձեռնարկատիրոջ պետական հաշվառման համար անհրաժեշտ դիմումը պատրաստվում է Գործակալության աշխատակցի կողմից՝ հիմք ընդունելով անձի կողմից ներկայացված տեղեկությունները և փաստաթղթերը: Եթե անձն ունի էլեկտրոնային ստորագրություն, ապա հաշվառումը կարող է կատարվել համացանցի օգնությամբ՝ <https://www.e-register.am> պաշտոնական կայքի միջոցով: Հաշվառումն իրականացվում է անմիջապես անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացնելու պահին:



Անձը համարվում է որպես անհատ ձեռնարկատեր հաշվառված անձ պետական միասնական գրանցամատյանում օրենքով սահմանված տեղեկությունների գրառումը կատարելու պահից: Անհատ ձեռնարկատիրոջ պետական հաշվառման տուրքը կազմում է 3000 (երեք հազար) ՀՀ դրամ, որն անհրաժեշտ է վճարել հետևյալ գանձապետական հաշվին՝ 900005160750:

Հաշվառում իրականացնող մարմինը կարող է մերժել անհատ ձեռնարկատիրոջ հաշվառումը, եթե՝

ա) նա արդեն հաշվառված է որպես անհատ ձեռնարկատեր,

բ) նրա ներկայացրած փաստաթղթերը կամ տեղեկատվությունը ամբողջական չեն,

գ) նա օրենքով սահմանված կարգով գրկվել է ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու իրավունքից, և դատվածությունը սահմանված կարգով հանված կամ մարված չէ:

Հաշվառման մերժումը չի թույլատրվում աննպատակահարմարության շարժառիթով, այսինքն՝ մերժումը պետք է լինի պատճառաբանված:

Պետական հաշվառումը մերժելը, պետական հաշվառում կատարելուց խուսափելը, ինչպես նաև տեղեկատվություն տրամադրելուց խուսափելը վերադասության կարգով կարող են բողոքարկվել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարին կամ դատարան:


● ԱՆՀԱՏ ԶԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՋԸ ՀԱՇՎԱՌՈՒՄԻՑ ՀԱՆԵԼԸ

Անհատ ձեռնարկատիրոջը հաշվառումից հանելը նույնպես ավելի դյուրին է, քան իրավաբանական անձի դեպքում:

Տիշե՛ք՝ անհատ ձեռնարկատերը կարող է հանվել հաշվառումից իր (լիազորված անձի) դիմումի համաձայն կամ անհատ ձեռնարկատիրոջ մահվան, դատական կարգով անհայտ բացակայող կամ սնանկ ճանաչվելու դեպքերում¹: Իրավաբանական անձի գործունեության դադարումը տեղի է ունենում լուծարային ընթացակարգով:

Անհատ ձեռնարկատիրոջ հաշվառումից հանելը կատարվում է որպես անհատ ձեռնարկատեր գրանցված անձի կամ վերջինիս կողմից լիազորված անձի դիմումով, որին կից ներկայացվում է իր կողմից տեղեկանք՝ «Արխիվային գործի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջների կատարման մասին, իսկ եթե դիմումը ներկայացվում է լիազորված անձի կողմից, ապա պետք է ներկայացվի նաև համապատասխան լիազորագիր և անձնագիր:

¹ Անհատ ձեռնարկատիրոջ պետական հաշվառումից հանելը կատարվում է Գործակալության ցանկացած սպասարկման գրասենյակի կողմից՝ անկախ անհատ ձեռնարկատիրոջ գործունեության վայրից:



Եթե անհատ ձեռնարկատերը մահացել է, ապա հաշվառումից հանելու դիմում կարող է ներկայացնել ցանկացած շահագրգիռ անձ՝ ներկայացնելով մահվան փաստը հավաստող փաստաթուղթ, իսկ դատական կարգով անհատ ձեռնարկատիրոջն անհայտ բացակայող ձանաչելու դեպքում՝ դատարանի որոշման պատճենը:

Եթե անհատ ձեռնարկատերը ձանաչվել է սնանկ, ապա հաշվառումից հանելու դիմումի հետ մեկտեղ ներկայացվում է դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած որոշման պատճենը և իր կողմից տեղեկանք՝ «Արխիվային գործի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջների կատարման մասին:

Հիշե՛ք՝ անհատ ձեռնարկատիրոջ հաշվառումից հանելու համար պետական տուրք չի գանձվում: Ընդ որում, անհատ ձեռնարկատիրոջ հաշվառումից հանումը չի ազատում վերջինիս հարկային պարտավորությունները կատարելուց, ինչպես նաև չկատարման կամ ոչ պատշաճ կատարման արդյունքում սահմանված պատասխանատվությունից:


● ԱՆՀԱՏ ԶԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՋԸ ՀԱՇՎԱՌՈՒՄԻՑ ՀԱՆԵԼՈՒ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ


Անհատ ձեռնարկատերը համարվում է հաշվառումից հանված դիմումը ներկայացնելու պահից, բացառությամբ այն դեպքերի, երբ անհատ ձեռնարկատեր հաշվառված անձը Հայաստանի Հանրապետության տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի (այս գլխում այսուհետև՝ Հանձնաժողով) կողմից ներառված է մենաշնորհի կամ գերիշխող դիրք ունեցող տնտեսավարող սուբյեկտների ցանկում: Նման դեպքում Գործակալությունը դիմումը ստանալուց հետո՝ եռօրյա ժամկետում, հարցում է ուղարկում հանձնաժողովին տվյալ անհատ ձեռնարկատիրոջ նկատմամբ հարուցված և չավարտված վարչական վարույթի, ինչպես նաև հանձնաժողովի նկատմամբ պարտավորությունների բացակայությունը հավաստելու վերաբերյալ: Հարցման հիման վրա Գործակալությունը անհատ ձեռնարկատիրոջը հանում է հաշվառումից կամ մերժում է այն՝ հիմք ընդունելով Հանձնաժողովի կողմից տրված տեղեկանքը¹:

Եթե անհատ ձեռնարկատիրոջ կողմից ներկայացվում է վերոնշյալ տեղեկանքը, ապա հարցում կատարելու անհրաժեշտությունը վերանում է:

¹ Անձը կարող է Հանձնաժողովի տրամադրած տեղեկանքը բողոքարկել վարչական կարգով՝ Հանձնաժողով, կամ դատական կարգով՝ ՀՀ վարչական դատարան: Անձը կարող է կրկին դիմել Գործակալություն հաշվառումից հանվելու համար, եթե բողոքը բավարարվել է, կամ ավարտվել է չավարտված վարչական վարույթը, և հանձնաժողովի նկատմամբ բոլոր պարտավորությունները կատարվել են:

ԿԻՆԸ ԵՎ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ






Խոսելով կանանց այս կամ այն իրավունքից՝ անհրաժեշտություն է առաջանում անդրադառնալ նաև կանանց առողջության պահպանման իրավունքին, առանց որի դժվար է պատկերացնել առողջապահության ոլորտում կին հիվանդների, բուժհիմնարկների և բուժօգնությունների միջև հարաբերությունների անարգել կարգավորումը:

Յուրաքանչյուրի բժշկական օգնություն և սպասարկում ստանալու իրավունքն ամրագրված է ՀՀ Սահմանադրությամբ (38-րդ հոդված), այսինքն՝ պետությունը ստանձնել է պարտականություն ապահովելու իր բնակչության բժշկական օգնություն և սպասարկում ստանալու իրավունքի անարգել իրացումը:

ՀՀ Սահմանադրությամբ անդամագրված են նաև հավասարության և խտրականության արգելքի սկզբունքները, որը նշանակում է, որ ՀՀ-ում չի կարող մերժվել բուժօգնությունը որևէ մեկին՝ պայմանավորելով դա անձի բնակության վայրով, քաղաքացիությամբ, սեռային, սոցիալական կամ այլ պատկանելությամբ: Հետևաբար, կանանց իրավունքները առողջապահության ոլորտում չեն կարող ենթարկվել որևէ սահմանափակման՝ կախված սեռից կամ այլ դրույթունից, քանի որ Սահմանադրությամբ ամրագրված յուրաքանչյուրի իրավունքը առողջապահության ոլորտում ենթադրում է խտրականության բացառում:

Հարկ է հիշել, որ առողջության պահպանման իրավունքից օգտվելը ներառում է մատուցվող բժշկական ծառայությունների, այդ թվում՝ պետական առողջապահական ծրագրերի շրջանակներում անվճար կամ արտոնյալ պայմաններով մատուցվող ծառայությունների հավասար մատչելիություն:

Առողջության պահպանման սահմանադրական իրավունքի իրականացումն ապահովող բժշկական օգնության և սպասարկման, կազմակերպման, իրավական, տնտեսական և ֆինանսական հիմունքները կարգավորվում են «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին», «Դեղերի մասին», «Հոգեբուժական օգնության մասին», «Բնակչության սանիտարահամաձարակային անվտանգության ապահովման մասին», «Մարդու վերարտադրողական առողջության և վերարտադրողական իրավունքների մասին», «Մարդուն օրգաններ կամ հյուսվածքներ փոխպատվաստելու մասին», «Մարդու իմունային անբավարարության վիրուսից առաջացած հիվանդության կանխարգելման մասին», «Թմրամիջոցների և հոգեմետ նյութերի մասին» ՀՀ օրենքներով:



● **ԿԱՆԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԲԺՇԿԱԿԱՆ
ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ,
ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼԻՍ**

Կինը ինչպես նաև յուրաքանչյուր ոք բժշկական օգնություն և սպասարկում ստանալիս ունի հետևյալ իրավունքները.

- Բժշկական օգնություն և սպասարկում ստանալու իրավունք, անվճար կամ արտոնյալ պայմաններով՝ պետության կողմից երաշխավորված առողջապահական պետական նպատակային ծրագրերի շրջանակներում.


- Այդ ծրագրերի շրջանակներից դուրս բժշկական օգնություն և սպասարկում ստանալ բժշկական ապահովագրական հատուցումների, անձնական վճարումների, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված այլ աղբյուրների հաշվին.

- Մատչելի ձևով ստանալ տեղեկություն իր առողջական վիճակի, հետազոտությունների արդյունքների, հիվանդության ակտորոշման և բուժման մեթոդների, դրանց հետ կապված ռիսկի, բժշկական միջամտության հնարավոր տարբերակների, հետևանքների և բուժման արդյունքների մասին, բուժսպասարկման առկա ռեսուրսների, ինչպես նաև դրանց անվճար կամ վճարովի լինելու մասին, վճարովի լինելու դեպքում՝ վճարման կարգի մասին:

Բժշկական օգնության դիմելիս, ինչպես նաև բժշկական օգնություն և սպասարկում ստանալիս յուրաքանչյուր ոք ունի մի շարք անհատական իրավունքներ: Դրանք են՝

- ա) ընտրել բժշկական օգնություն և սպասարկում իրականացնողին,
- բ) ստանալ բժշկական օգնություն և սպասարկում՝ հիգիենայի պահանջներին համապատասխանող պայմաններում,
- գ) պահանջել բժշկի օգնությանը դիմելու փաստի, իր առողջական վիճակի, հետազոտման, ակտորոշման և բուժման ընթացքում պարզված տեղեկությունների գաղտնիության ապահովում,
- դ) իրազեկ լինել իր հիվանդության մասին և համաձայնություն տալ բժշկական միջամտության համար,
- ե) հրաժարվել բժշկական միջամտությունից, բացի օրենքով նախատեսված դեպքերից,
- զ) արժանանալ հարգալից վերաբերմունքի՝ բժշկական օգնություն և սպասարկում իրականացնողների կողմից:

Այս ամենից կարելի է եզրակացնել, որ յուրաքանչյուր ոք իրավունք ունի ստանալու լրիվ, սպառիչ, ժամանակին, օբյեկտիվ և հասկանալի տեղեկույթ իր առողջական վիճակի և առողջության պահպանմանը նպաստող կամ բացասաբար ազդող գործոնների մասին: Այդ տեղեկույթը տրամադրում են բժշկական օգնություն և սպասարկում իրականացնողները: Սա ենթադրում է, որ այդ տեղեկույթը չպետք է լինի ժամանակավրեպ, պետք է մատուցվի նրան հասկանալի լեզվով՝ հաշվի առնելով նրա ֆիզիկական և մտավոր կարողությունները և վիճակը: **Տեղեկատվությունը բուժվողին հասկանալի լինելու համար պարզաբանումներ տալիս բուժանձնակազմը պետք է մասնագիտական եզրույթների օգտագործումը հասցնի նվազագույնի:**



Կարևոր է նաև նշել, որ բժշկական օգնություն և սպասարկում իրականացնողները պարտավոր են ցանկացած բժշկական միջամտություն իրականացնելուց առաջ ստանալ բուժվողի համաձայնությունը՝ բացառությամբ մարդու կյանքին սպառնացող վտանգի, ինչպես նաև շրջապատի համար վտանգ ներկայացնող հիվանդությունների դեպքերի:

Անձի կյանքին և առողջությանը վերաբերող տեղեկատվության աղավաղումը, նման տեղեկատվության տրամադրումը այլ անձանց (բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի) առաջացնում է պատասխանատվություն¹:

Տեղեկատվության չտրամադրումը կարող է կատարվել հետևյալ երկու դեպքում, երբ՝

- հիվանդության վերաբերյալ տեղեկությունը կարող է հոգեկան խիստ հուզմունք առաջացնել հիվանդի մոտ,


- հիվանդն ինքն է հրաժարվում ստանալ տեղեկատվություն իր առողջական վիճակի մասին, բացառությամբ, երբ այդ տեղեկատվության չտրամադրումը կարող է լուրջ վնաս հասցնել հիվանդին կամ մեկ այլ անձի:

Մարդու առողջական վիճակի մասին տեղեկությունը նրա կամքին հակառակ չի կարող հաղորդվել նրան կամ այլ անձանց, բացի Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերից: (Տե՛ս «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ ենթակետը²):

18 տարին չլրացած կամ օրենքով սահմանված կարգով անգործունակ ձանաչված հիվանդների առողջական վիճակի մասին տեղեկությունները տրվում են նրանց օրինական ներկայացուցիչներին:

¹ ՀՀ քրեական օրենսգրքի 145-րդ հոդվածը սահմանում է, որ առանց մասնագիտական կամ ծառայողական անհրաժեշտության բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող անձանց կողմից անձի հիվանդության կամ բժշկական ստուգման արդյունքների մասին տեղեկություններ հրապարակելը պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից հինգհարյուրապատիկի չափով, կամ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ երկուսից հինգ տարի ժամկետով, կամ կալանքով՝ մեկից երկու ամիս ժամկետով:

² «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ ենթակետի համաձայն՝ տեղեկություն տնօրինողը, բացառությամբ 3-րդ մասում սահմանված դեպքերի, մերժում է տեղեկության տրամադրումը, եթե դա բացահայտում է մասնագիտական գործունեությամբ պայմանավորված՝ մատչելիության սահմանափակում պահանջող տվյալներ (բժշկական, նոտարական, փաստաբանական գաղտնիք): 3-րդ մասը սահմանում է՝ տեղեկության տրամադրումը չի կարող մերժվել, եթե այն՝ 1) վերաբերում է քաղաքացիների անվտանգությանը և առողջությանը սպառնացող արտակարգ դեպքերին, ինչպես նաև տարերային (ներառյալ՝ պաշտոնապես կանխատեսվող) աղետներին և դրանց հետևանքներին, 2) ներկայացնում է Հայաստանի Հանրապետության տնտեսության ընդհանուր վիճակը, ինչպես նաև բնության և շրջակա միջավայրի պաշտպանության, առողջապահության, կրթության, գյուղատնտեսության, առևտրի, մշակույթի բնագավառում տիրող իրական վիճակը, 3) չտրամադրելը բացասական ազդեցություն կունենա Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական, գիտատեխնիկական և հոգևոր-մշակութային զարգացման պետական ծրագրերի իրականացման վրա:



● ՏԵՂԵԿԱՑՎԱԾ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ

Բժշկական օգնություն և սպասարկում իրականացնողը պարտավոր է բժշկական միջամտություն իրականացնելիս ստանալ բուժվող կնոջ տեղեկացված համաձայնությունը:

Տեղեկացված համաձայնությունը բուժվողի, իսկ նրա անգործունակության կամ անչափահաս լինելու դեպքերում՝ նրա օրինական ներկայացուցչի համաձայնությունն է բուժվողի նկատմամբ անհրաժեշտ բժշկական միջամտությանը:

Տեղեկացված համաձայնությունն անհրաժեշտ է հենց հիվանդի համար: Կնոջ համաձայնությունը բժշկական միջամտության համար անհրաժեշտ պայման է, քանի որ առանց համաձայնության թույլատրվում է իրականացնել բժշկական օգնություն և սպասարկում մարդու կյանքին սպառնացող վտանգի, ինչպես նաև շրջապատի համար վտանգ ներկայացնող հիվանդությունների դեպքերում:

Բուժողի կամ բուժվողի պահանջով համաձայնությունը կարող է լինել նաև գրավոր:

Անհրաժեշտ է նաև նկատի ունենալ, որ անձը կամ վերջինիս օրինական ներկայացուցիչն իրավունք ունի հրաժարվելու բժշկական միջամտությունից կամ պահանջելու ընդհատել այն, բացի մարդու կյանքին սպառնացող վտանգի, ինչպես նաև շրջապատի համար վտանգ ներկայացնող հիվանդությունների դեպքերից:

Շրջապատի համար վտանգ ներկայացնող հիվանդությամբ տառապող կինն իրավունք ունի ստանալու պետության կողմից երաշխավորված կարգով անվճար բժշկական օգնություն ու սպասարկում և բուժվել այդ նպատակի համար նախատեսված հասույկ մասնագիտացված բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող հաստատություններում:

Վերոգրյալն ընդհանրացնելով՝ անհրաժեշտ է նշել, որ ամեն դեպքում բուժվողի՝ պացիենտի¹ տեղեկացված համաձայնությունը բուժաշխատողի² կողմից ստանալը պարտադիր է՝ բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

● ԿԱՆԱՆՅ ՕՐԳԱՆՆԵՐ ԵՎ/ԿԱՄ ՀՅՈՒՍՎԱԾՔՆԵՐ ՓՈԽ ԴԱՏՎԱՍՏԵԼԸ


Տեղեկացված համաձայնությունը պարտադիր է հատկապես մարմնի օրգանների փոխպատվաստման դեպքում:

Փոխպատվաստումն իրականացվում է ռեցիպիենտի³ կամ վերջինիս օրինական ներկայացուցչի (եթե չի լրացել 18 տարին կամ օրենքով

¹ «Առողջապահության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդված. պացիենտ՝ բժշկական օգնության և սպասարկման սուբյեկտ հանդիսացող ֆիզիկական անձ:

² «Առողջապահության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդված. բուժաշխատող՝ բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող ու դրա համար համապատասխան մասնագիտական կրթություն և որակավորում ունեցող ֆիզիկական անձ:

³ «Մարդուն օրգաններ և/կամ հյուսվածքների փոխպատվաստելու մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդված. ռեցիպիենտ՝ ֆիզիկական անձ, որին բուժական նպատակով պետք է փոխպատվաստվեն օրգաններ և (կամ) հյուսվածքներ:



սահմանված կարգով ձանաչվել է հաշմանդամ) գրավոր համաձայնությամբ, որպիսի հանգամանքի բացակայությունն արգելք է փոխապատվաստումն իրականացնելու համար, բացառությամբ, երբ փոխապատվաստման հետաձգումն սպառնում է ռեցիպիենտի կյանքին, իսկ «Մարդուն օրգաններ և/կամ հյուսվածքների փոխապատվաստելու մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով համաձայնության ստացումն անհնար է:

Արգելվում է կենդանի կամ դիակային դոնորից վերցված օրգանների և հյուսվածքների առուվաճառքը: Կենդանի դոնորից կամ դիակից փոխապատվաստում կարող է կատարվել միայն այն դեպքում, երբ բժշկական այլ միջոցառումները չեն կարող երաշխավորել հիվանդի կյանքի փրկությունը և առողջության վերականգնումը:


Փոխապատվաստման նպատակով օրգաններ և (կամ) հյուսվածքներ վերցնելը քաղաքացուց (կենդանի դոնորից) չի թույլատրվում, եթե՝ ա) չի լրացել քաղաքացու 18 տարին (բացառությամբ ոսկրածուծի փոխապատվաստման դեպքի), բ) քաղաքացին սահմանված կարգով ձանաչված է հաշմանդամ, գ) քաղաքացին հղի է, դ) քաղաքացին պատիժ է կրում ազատագրվման վայրում, ե) պատանդ է, զ) լրացել է քաղաքացու 65 տարին:

Ռեցիպիենտին փոխապատվաստելու նպատակով կենդանի դոնորից օրգաններ և (կամ) հյուսվածքներ վերցնելը թույլատրվում է, եթե՝ ա) վիրահատությանը նախորդող 15-օրյա ժամկետում դոնորը գրավոր նախազգուշացվում է սպասվելիք վիրահատական միջամտությամբ փոխապատվաստման նպատակով օրգաններ և (կամ) հյուսվածքներ վերցնելու հետ կապված հնարավոր բարդությունների մասին, բ) դոնորն իրենից օրգաններ և (կամ) հյուսվածքներ վերցնելու համար կամովին և գիտակցաբար տվել է գրավոր համաձայնություն, գ) դոնորը անցել է բազմակողմանի բժշկական հետազոտություն, և առկա է կենդանի դոնորից օրգաններ և (կամ) հյուսվածքներ վերցնելու եզրակացությունը նրանից օրգաններ և (կամ) հյուսվածքներ վերցնելու հնարավորության մասին:

Պետք է հիշել, որ օրգան և (կամ) հյուսվածք փոխապատվաստելու համար համաձայնություն տված դոնորն իրավունք ունի՝ ա) բուժհաստատությունից՝ պահանջելու լիարժեք տեղեկություն սպասվելիք վիրահատական միջամտությամբ օրգան և (կամ) հյուսվածք վերցնելու հետևանքով ծագող հնարավոր բարդությունների մասին,

բ) վիրահատության հետ կապված բարդությունների դեպքում տրանսպ անվճար համապատասխան բուժում, որի կազմակերպումն իրականացնում է այն բժշկական հաստատությունը, որտեղ կատարվել է վիրահատությունը:

¹ Բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով լիցենզավորված, բնակչությանը բժշկական օգնության և սպասարկման որոշակի տեսակներ ցուցաբերող ֆիզիկական և իրավաբանական անձ, անհատ ձեռներեց կամ իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող ձեռնարկություն՝ անկախ կազմակերպական-իրավական տեսակից և սեփականության ձևից:




Հարկ է նկատել, որ փոխպատվաստման նպատակով մինչև 18 տարեկան երեխաների կամ օրենքով սահմանված կարգով անգործունակ ձանաչված անձի դիակից օրգաններ և հյուսվածքներ կարող են վերցվել միայն նրա ծնողի կամ օրինական ներկայացուցչի համաձայնությամբ: Այստեղ պետք նաև նշել, որ դիակից օրգաններ և հյուսվածքներ չեն կարող վերցվել նաև այն դեպքում, երբ տվյալ օրգանի կամ հյուսվածքի փոխպատվաստում Հայաստանում չի իրականացվում:

Ընդ որում՝ փոխպատվաստման օրգաններ և (կամ) հյուսվածքներ վերցնելն ու մշակելը, ինչպես նաև փոխպատվաստելը թույլատրվում է միայն համապատասխան լիցենզավորված բժշկական հաստատություններում:

Մինևույն ժամանակ յուրաքանչյուր դոնոր, ինչպես նաև ռեցիպիենտ պաշտպանված են իրենց վերաբերող տեղեկությունների բժշկական գաղտնիության ապահովման երաշխիքով: Վերջիններիս վերաբերյալ տեղեկություններ հրապարակելն արգելվում է, բացառությամբ հետաքննական մարմինների պահանջով դատարանին, դատախազությանը, քննչական մարմնին տվյալներ տալուց, որոնք տրվում են միայն նրանց վարույթում գտնվող քրեական կամ քաղաքացիական գործերի կապակցությամբ:

Քրեական օրենսգիրքը նախատեսում է պատասխանատվություն օրգանների փոխպատվաստման ոլորտում կատարված հանցագործությունների համար: Մասնավորապես՝ ՀՀ քրեական օրենսգրքի 125-րդ հոդվածը սահմանում է փոխպատվաստման վիրահատություն կատարելու խախտումը, այն է՝ մարդու մարմնի մասը կամ հյուսվածքները վերցնելու կամ փոխպատվաստման՝ օրենքով նախատեսված պայմաններն ու կարգը խախտելը, որն անգգուշությամբ ծանր կամ միջին ծանրության վնաս է պատճառել մարմնի մասեր կամ հյուսվածքներ տվողի կամ ընդունողի առողջությանը՝ պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկից հինգհարյուրապատիկի չափով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով կամ առանց դրա:

Քրեական օրենսգիրքը նախատեսում է նաև, եթե նույն արարքը անգգուշությամբ առաջացրել է տուժողի մահ, ապա պատժվում է ազատազրկմամբ՝ առավելագույնը հինգ տարի ժամկետով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով:



● ԿԱՆԱՆՅ ԱՆՁՆԱԿԱՆ ԿՅԱՆՔԻ ԱՆՁԵՌՆՄԽԵԼԻՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ


Անձնական կյանքի անձեռնմխելիության իրավունքը, այդ թվում հիվանդի վերաբերյալ տեղեկությունների գաղտնիության իրավունքի պահպանումը երաշխավորվում է օրենքով: Դա նաև իր մեջ ներառում է բժշկական օգնություն և սպասարկում իրականացնողների կողմից հիվանդի վերաբերյալ տեղեկությունների գաղտնիության ապահովումը:

Անշուշտ, առողջության պահպանման իրավունքն ապահովելու նպատակով բժշկական օգնություն և սպասարկում իրականացնողները կրում են որոշակի պարտականություններ և ցանկացած անձ, բացի իր իրավունքներից և պարտականություններից, պետք է իմանա նաև բուժօգնություն և սպասարկում իրականացնողների պարտականությունները, որպեսզի կարողանա պաշտպանել իր իրավունքները հարկ եղած դեպքում:

Այսպես՝ բուժօգնություն և սպասարկում իրականացնող անձինք պարտավոր են՝ ա) յուրաքանչյուր մարդու ցուցաբերել անհետաձգելի, առաջին բժշկական օգնություն՝ անկախ այդ օգնության դիմաց վարձատրությունը երաշխավորող հիմքերի և այլ հանգամանքների առկայությունից. բ) ապահովել ցուցաբերվող բժշկական օգնության և սպասարկման քանակական ու որակական բնութագրիչների համապատասխանությունը սահմանված չափանիշներին. գ) յուրաքանչյուրին տեղյակ պահել նրան տրամադրվելիք բժշկական օգնության և սպասարկման տվյալ տեսակի, մեթոդների, ծավալների, տրամադրման կարգի և պայմանների մասին. դ) յուրաքանչյուր մարդու կամ բժշկական օգնության համար այլ վճարողների պահանջով տրամադրել անհրաժեշտ տվյալներ բուժվողին ցուցաբերած բժշկական օգնության և սպասարկման քանակական ու որակական բնութագրիչների և այդ նպատակով կատարված ծախսերի մասին. ե) ապահովել մարդու՝ բժշկի օգնությանը դիմելու փաստի, նրա առողջական վիճակի մասին հետազոտման, ախտորոշման և բուժման ընթացքում պարզված տեղեկությունների գաղտնիությունը, բացի «Օրենսդրությամբ սահմանված դեպքերից. գ) ներկայացնել վիճակագրական և այլ տեղեկություններ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով. է) հոգատար և հարգալից վերաբերմունք ցուցաբերել հիվանդների նկատմամբ:

Բժշկական գաղտնիքի տրամադրումը հնարավոր է միայն «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքով սահմանված բացառիկ դեպքերում, որոնց թվի մեջ են դասվում հիվանդի համաձայնությունը նման ինֆորմացիա տալու վերաբերյալ, կամ այդ տեղեկությունների չիրապարակելը հիվանդի կյանքը վտանգի տակ է դնում, կամ նման տեղեկության չիրապարակումը վտանգում է երրորդ անձի առողջությանը կամ կյանքին:

Հիվանդն իրավունք ունի հիվանդության վերաբերյալ այլ կարծիք, ախտորոշում ստանալու համար դիմելու այլ բժշկի, ինքնուրույն ընտրելու բժշկական հաստատությունը և անձնակազմը:



իրենց մեղքով մարդու առողջությանը հասցրած վնասի համար, ինչպես նաև մարդու առողջական վիճակի մասին տեղեկություններ հայտնելու դեպքում, բժշկական օգնություն և սպասարկում իրականացնողները, ապօրինի բժշկական գործունեությամբ զբաղվող անձինք պատասխանատվություն են կրում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ՝ «Քրեական օրենսգրքով՝ սահմանված կարգով:


Պետք է նկատի ունենալ, որ յուրաքանչյուր ոք իրավունք ունի բժշկական օգնության և սպասարկման կազմակերպման և իրականացման ընթացքում իր առողջությանը հասցված վնասի դիմաց ստանալ փոխհատուցում:

Ինչպես կարելի է եզրակացնել վերոգրյալից, օրենքով պաշտպանվում է մարդու՝ անհետաձգելի առաջին բուժօգնություն ստանալու իրավունքը: **Բուժօգնությունը պետք է ցուցաբերվի անհապաղ և անվճար՝ բուժվողի մահը, հաշմանդամ դառնալը կամ առողջությանը էական վնասի պատճառվելը կանխելու նպատակով:** Բժշկական օգնություն և սպասարկում իրականացնողը իրավասու չէ մերժել նման օգնության ցուցաբերումը: Մերժումը կամ օգնություն չցուցաբերելը առաջացնում է քրեական պատասխանատվություն:

«Քրեական օրենսգրքի 129-րդ հոդվածի համաձայն՝ հիվանդին առանց հարգելի պատճառի օգնություն ցույց չտալն այն անձի կողմից, ով պարտավոր էր դա ցույց տալ, եթե հիվանդի առողջությանն անգգուշությամբ պատճառվել է ծանր կամ միջին ծանրության վնաս՝ պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հիսնապատիկից հարյուրապատիկի չափով, կամ կալանքով՝ մեկից երկու ամիս ժամկետով: Նույն արարքը, որն անգգուշությամբ առաջացրել է հիվանդի մահ՝ պատժվում է ազատազրկմամբ՝ առավելագույնը երեք տարի ժամկետով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով կամ առանց դրա:

¹ Տե՛ս ՀՀ քրեական օրենսգրքի 130-րդ հոդված. 1. Բժշկական օգնություն և սպասարկում իրականացնողների կողմից մասնագիտական պարտականությունները չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը՝ դրանց նկատմամբ անփութ կամ անբարեխիղճ վերաբերմունքի հետևանքով, եթե բուժվող հիվանդի առողջությանն անգգուշությամբ պատճառվել է ծանր կամ միջին ծանրության վնաս՝ պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից երկուհարյուրապատիկի չափով, կամ կալանքով՝ առավելագույնը երեք ամիս ժամկետով:

2. Նույն արարքը, որն անգգուշությամբ առաջացրել է բուժվող հիվանդի մահ կամ մարդու իմունային անբավարարության վարակի հարուցիչով վարակում, պատժվում է ազատազրկմամբ՝ երկուսից վեց տարի ժամկետով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով կամ առանց դրա:



● ՎԵՐԱՐՏԱԴՐՈՂԱԿԱՆ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ

Խոսելով կանանց իրավունքներից և դրանց պաշտպանությանն ուղղված մեխանիզմներից՝ հարկ է անդրադառնալ նաև վերարտադրողական առողջության իրավունքին (ընտանիքի պլանավորում): Նշված իրավունքն արտահայտվում է նրանում, որ յուրաքանչյուր զույգ կամ յուրաքանչյուր ոք իրավունք ունի՝

- ա) որոշելու իր երեխաների թիվը և նրանց ծնվելու ժամկետները,
- բ) անցանկալի հղիությունից և հղիության արհեստական ընդհատումից խուսափելու նպատակով օգտվել ընտանիքի պլանավորման արդյունավետ և անվնաս միջոցներից ու մեթոդներից, դրանց վերաբերյալ ստանալու անհրաժեշտ տեղեկություններ,
- գ) հղիության ընթացքում ստանալու հղիության և ծննդաբերության հետ կապված բժշկական օգնություն և սպասարկում՝ պետության կողմից երաշխավորված ամենամյա առողջապահական նպատակային ծրագրերի շրջանակներում:

Այս ոլորտն առավել մանրամասն կարգավորվում է «Մարդու վերարտադրողական առողջության և վերարտադրողական իրավունքների մասին» ՀՀ օրենքով:


Մայրությունը և մանկությունը գտնվում են պետության և հասարակության հովանավորության ու պաշտպանության ներքո և աջակցություն ստանալու իրավունք ունեն: Կինն ունի անվտանգ մայրության, այն է՝ հղիության ընթացքում առողջության պահպանման, ծննդաբերության և հետծննդյան ժամանակաշրջանում իր, պտղի առողջությանը և նորածնին նվազագույն ռիսկ պատճառող մեթոդների կիրառմամբ օգնություն ստանալու իրավունք:

Հղիության ընթացքում ցանկացած բժշկական միջամտություն կատարվում է կնոջ համաձայնությամբ: Կինն իրավունք ունի հրաժարվելու բժշկական միջամտությունից կամ պահանջելու ընդհատել այն, բացառությամբ այն դեպքերի, երբ բժշկական միջամտությունն անհրաժեշտ է հղի կնոջ կյանքին սպառնացող վտանգը կանխելու դեպքում:

Առանց հղի կնոջ համաձայնության, բժշկական հանձնաժողովի որոշմամբ, դրա անհնարինության դեպքում՝ բժշկի որոշմամբ, թույլատրվում է իրականացնել բժշկական միջամտություն հղի կնոջ կյանքին սպառնացող վտանգի, ինչպես նաև շրջապատի համար վտանգ ներկայացնող հիվանդությունների դեպքերում՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Բժշկական միջամտությունից հրաժարվելու փաստը՝ հնարավոր հետևանքների նշումով, գրանցվում է բժշկական փաստաթղթերում և գրավոր հավաստվում հղի կնոջ, դրա անհնարինության դեպքում՝ նրա ամուսնու կամ հարազատների, իսկ վերջինիս անհնարինության դեպքում՝ բուժանձնակազմի կազմած արձանագրությամբ:

Կինն իրավունք ունի հղիության ընթացքում ստանալու հղիության և ծննդաբերության հետ կապված անվճար կամ արտոնյալ պայմաններով բժշկական օգնություն և սպասարկում՝ պետության երաշխավորած առողջապահական նպատակային ծրագրերի շրջանակներում:



● ԱՐՆՏՏԱԿԱՆ ԲԵՂՄՆԱՎՈՐՈՒՄ

«Մարդու վերարտադրողական առողջության և վերարտադրողական իրավունքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ քաղաքացիների տրամադրած սեռաբջիջների և սաղմի պահպանման կարգն ու պայմանները սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը (տե՛ս Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թ. N 1273-Ն որոշումը¹ կից սկավառակում):

Նույն օրենքի 14-րդ հոդվածի 4-րդ մասը սահմանում է, որ դոնորական սերմի կամ ձվաբջջի տրամադրման և դրանց պահպանման կարգը հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

● ՓՈԽՆԱԿ ՄԱՅՐՈՒԹՅՈՒՆ


Փոխնակ (սուրոգատ) մայր է համարվում դոնորական սաղմը իր արգանդում կրած կինը, որից ծնված երեխան չի կրում նրա գենոտիպը:

Փոխնակ մայր լինելու իրավունք ունեն 18-35 տարեկան այն կանայք, ովքեր սահմանված կարգով ենթարկվել են բժշկագենետիկական հետազոտության, որի արդյունքում չեն հայտնաբերվել փոխնակ մայր լինելու հակացուցումներ: Բացի այդ, փոխնակ մայր լինելու իրավունք ունեն նաև վերարտադրողական տարիքի (18 տարեկանից սկսած) այն կանայք, ովքեր ցանկանում են կրել հարազատների կողմից տրամադրված սաղմով հղիությունը, ենթարկվել են բժշկագենետիկական հետազոտության, որի արդյունքում չեն հայտնաբերվել փոխնակ մայր լինելու հակացուցումներ:

Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով գրանցված (այսինքն՝ ՔԿԱԳ մարմնում կամ «Հայաստանի Հանրապետության և Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցու հարաբերությունների մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով) ամուսնության մեջ գտնվող կինը կարող է փոխնակ մայր լինել ամուսնու համաձայնությամբ:

Հարկ է նկատի ունենալ, որ փոխնակ մայր չի կարող լինել այն կինը, որի փոխնակ մայր լինելը հակացուցված է Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության հաստատած բժշկական ցուցումներով: Իսկ վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաներից օգտվող անձանց և փոխնակ մոր միջև փոխհարաբերությունները կարգավորվում են նոտարական վավերացմամբ կնքված գրավոր պայմանագրերով:

¹ Տե՛ս «Վերարտադրողականության դոնորների, ինչպես նաև վերարտադրողականության դոնոր չհանդիսացող քաղաքացիների կողմից սեռաբջիջների տրամադրման, տրամադրված սեռաբջիջների և սաղմի պահպանման կարգն ու պայմանները հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշումը:



Փոխնակ մայրն իրավունք չունի հրաժարվելու իրենից ծնված երեխային հանձնել օրենքով սահմանված կարգով պայմանագիր կնքած անձանց, բացի այդ՝ նա իրենից ծնված երեխայի նկատմամբ չունի որևէ իրավունք և չի կրում որևէ պարտականություն երեխային սահմանված կարգով հանձնելու պահից:

Օրենսդրի կողմից փոխնակ մայրերի համար սահմանվում է երաշխիք՝ փոխնակ մայրը հղիություն կրելու և ծննդաբերելու համար կարող է ստանալ դրամական հատուցում՝ պայմանագրով սահմանված կարգով, ինչպես նաև փոխնակ մոր հետ պայմանագիր կնքած վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաներից օգտվող անձր (ամուսինները) կրում է (են) բոլոր այն ծախսերը, որոնք կապված են հղիության ընթացքի, ծննդաբերության, ինչպես նաև բժշկական փաստաթղթերով հաստատված բարդությունների վերացման հետ:

Եթե փոխնակ մայրը միաժամանակ ձվաբջջի դոնոր է, ապա նա իրավունք ունի մինչև երեխայի ծնվելը հրաժարվելու պայմանագրի կատարումից՝ հատուցելով պայմանագրի կողմ հանդիսացող, վերարտադրողականության օժանդակ մեթոդներից օգտվող անձի (անձանց) ծախսերը:

Բացի այն, որ փոխնակ մայրերի համար օրենքով սահմանված են իրավունքներ և այդ իրավունքների իրականացման համար երաշխիքներ, նաև վերջիններիս համար սահմանվում են պարտականություններ. մասնավորապես փոխնակ մայրերը պարտավոր են բժշկական հաշվառման կանգնել հղիության վաղ ժամկետներում (մինչև հղիության 12 շաբաթը), մշտապես գտնվել բժշկի հսկողության տակ, խստորեն կատարել նրա խորհուրդները և հետևել իրենց առողջությանը, վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաներից օգտվող անձից կամ ամուսիններից առանձին ապրելու դեպքում վերջիններիս տեղեկացնել հղիության ընթացքի մասին:

Փոխնակ մոր և վերարտադրողականության օժանդակ մեթոդներից օգտվող անձի միջև հարաբերությունները կարգավորվում են «Մարդու վերարտադրողական առողջության և վերարտադրողական իրավունքների մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածով:

● **ՀՂԻՈՒԹՅԱՆ ԱՐԻԵՍՏԱԿԱՆ ԸՆԴՀԱՏՈՒՄ (ԱԲՈՐՏ)**


Ընտանիքի պլանավորումը ոչ միայն ենթադրում է երեխայի ծնունդ, այլև հղիության արհեստական ընդհատում: Աբորտը հղիության արհեստական ընդհատումն է:

ՀՀ-ում հղիության արհեստական ընդհատման հարցը կարգավորվում է «Մարդու վերարտադրողական առողջության և վերարտադրողական իրավունքների մասին» ՀՀ օրենքով, որով սահմանվում է, որ **յուրաքանչյուր կին ունի հղիության արհեստական ընդհատման իրավունք:**

Հղիության արհեստական ընդհատումը՝

- մինչև 12 շաբաթական հղիության ժամկետը կատարվում է կնոջ դիմումի համաձայն:

- մինչև 22 շաբաթական հղիության ժամկետը կարող է կատարվել բժշկասոցիալական ցուցումների դեպքում՝ կնոջ համաձայնությամբ:



Հիլության արհեստական ընդհատումն անչափահասի դիմումով կատարվում է նրա ծնողների կամ այլ օրինական ներկայացուցիչների համաձայնությամբ, իսկ դրա անհնարինության դեպքում՝ բժշկական հանձնաժողովի արձանագրության հիման վրա:

Հիլության արհեստական ընդհատումից առաջ և հետո առողջապահական հաստատությունը կնոջը տրամադրում է անվճար բժշկատոցիալական խորհրդատվություն՝ անցանկալի հղիությունից պաշտպանվելու միջոցների ընտրության վերաբերյալ (հղիության արհեստական ընդհատման կարգը և պայմանները սահմանվում են ՀՀ կառավարության 2004 թ. օգոստոսի 16-ի թիվ 1116-Ն որոշմամբ, տե՛ս սկավառակում):

● ՄԻԱՎ-Ի ԽՆԴԻՐԸ


20-րդ դարի ամենաաղետալի հիվանդություններից է ՄԻԱՎ/ԶԻԱՀ-ը (մարդու իմունային անբավարարության վարակ, ձեռքբերովի իմունային անբավարարության համախտանիշ): Ըստ իր տարածման բնույթի, ընթացքի և հետևանքների՝ այն դասվում է հատկապես վտանգավոր հիվանդությունների թվին:

Նշենք, որ այն փոխանցվում է բացառապես սեռական, վարակված անձի արյան կամ դրա բաղադրիչների փոխներարկման, օրգանների փոխպատվաստման ծանապարհով, վարակված անձի արյամբ աղտոտված ներարկիչի, ասեղի և այլ բժշկական սարքերի միջոցով, ինչպես նաև վարակված մորից պտղին կամ նորածնին, հղիության, ծննդյան և կրծքով կերակրելու ընթացքում:

Հիշե՛ք, ԶԻԱՀ-ի վարակը չի փոխանցվում օդակաթիլային ծանապարհով, հազի, փռշտոցի, ձեռքսեղմնան միջոցով, ընդհանուր զուգարանի և լոգարանի օգտագործումից, վտանգավոր չէ գտնվել այնպիսի վայրում, որտեղ գտնվում են նաև վերը նշված հիվանդությամբ վարակված անձինք: Բացի այդ, վարակը չի փոխանցվում կենդանիների և միջատների խայթոցից:

ՄԻԱՎ-ով հիվանդների իրավունքները և խնդրին առնչվող հարցերը կարգավորվում են «Մարդու իմունային անբավարարության վարակից առաջացած հիվանդության կանխարգելման մասին» ՀՀ օրենքով:

Կարևոր է նշել, որ անձի ՄԻԱՎ-ով վարակված լինելու փաստը չի կարող հիմք հանդիսանալ իրավունքների և ազատությունների սահմանափակման համար, քանի որ բոլորը հավասար են օրենքի առջև և ունեն նույն իրավունքներն ու ազատությունները, պետությունը ձեռնամուխ է լինում այդ իրավունքների և ազատությունների անարգել իրականացմանը և բացառում է ցանկացած խտրականություն՝ կախված սեռից, ռասայից, ազգությունից և այլ հանգամանքներից: ՄԻԱՎ-ով վարակված լինելու հանգամանքի առկայության դեպքում անձի իրավունքների սահմանափակումը կարող է օրենքով սահմանված բացառություն լինել:




Մինչև 14 տարեկան երեխաների հետազոտությունը կատարվում է օրենքով սահմանված կարգով՝ նրանց օրինական ներկայացուցիչների դիմումով կամ համաձայնությամբ, իսկ 14-18 տարեկան երեխաներին՝ նրանց դիմումով կամ համաձայնությամբ, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:


Բուժաշխատողների կողմից ՄԻԱՎ-ի վերաբերյալ խորհրդատվություն և հետազոտություն տրամադրվում է՝

- ա) հղի կանանց,
- բ) սեռավարակակիրներին,
- գ) թմրամոլներին,
- դ) ազատագրկման վայրերում գտնվողներին:

Բնակչության բոլոր խմբերն իրավունք ունեն ստանալու ՄԻԱՎ-ի վերաբերյալ կամավոր խորհրդատվություն և հետազոտություն:

Բժշկական օգնություն և սպասարկում ստանալիս կամ ցուցաբերելիս ՄԻԱՎ-ով վարակվելու դեպքում անձն իրավունք ունի պատճառված վնասի փոխհատուցման՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:





ՄԻԱՎ-ով վարակված անձինք առանց իրենց գրավոր համաձայնության չեն կարող լինել գիտական փորձերի և հետազոտությունների օբյեկտ:

ՄԻԱՎ-ով վարակված անձը կամ նրա օրինական ներկայացուցիչը պարտավոր է իրականացնել ՄԻԱՎ-ի տարածումը բացառող լիազորված պետական մարմնի կողմից հաստատված նախազգուշական միջոցառումները:

«Ձեռնարկությունների, հիմնարկների և կազմակերպությունների ՄԻԱՎ-ով վարակված անձանց անխտորոշումն ու բուժումն ապահովող աշխատողների, ինչպես նաև այն աշխատողների համար, որոնց աշխատանքը կապված է ՄԻԱՎ պարունակող նյութերի հետ, սահմանվում է՝

- ա) հավելավձար աշխատավարձի նկատմամբ,
- բ) կրճատված աշխատանքային օր,
- գ) լրացուցիչ վարձատրություն,
- դ) լրացուցիչ արձակուրդ:

Նշվածն իր կարգավորումն է ստացել («Մարդու իմունային անբավարարության վիրուսից առաջացած հիվանդության կանխարգելման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածում:


Այսպիսով՝ վերոնշյալից հետևում է, որ պետությունը կարևորում է ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի դեմ պայքարը և օրենքով նախատեսվում են պետության մի շարք պարտավորություններ այդ ուղղությամբ, ինչպես նաև երաշխավորվում են անձանց իրավունքների պաշտպանությունն այդ ոլորտում:

Հայաստանի Հանրապետության կառավարությունը 2007 թվականի մարտի 1-ի N 398-Ն որոշմամբ (տե՛ս սկզբնաղբյուրում) հաստատել է ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ին հակազդման ազգային ծրագիր, որտեղ նշված են հետևյալ ուղղությունները.

- 1) ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ին միջգերատեսչական հակազդման զարգացում,
- 2) ՄԻԱՎ վարակի կանխարգելում,
- 3) բուժում, խնամք և աջակցություն,
- 4) մոնիթորինգ և գնահատում,
- 5) կառավարում, համակարգում և համագործակցություն,
- 6) ֆինանսավորում և ֆինանսական միջոցների հավաքագրում:

● ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ ԱՆՁԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ

«Սահմանադրությամբ մարդու արժանապատվությունը՝ որպես նրա իրավունքների և ազատությունների անքակտելի հիմք, հարգվում և պաշտպանվում է պետության կողմից: Մարդու իրավունքներն ու ազատությունները պետք է պաշտպանված լինեն անկախ այն բանից, թե արդյոք մարդն առողջ է, կամ նրա հնարավորությունները սահմանափակ են: Պետությունը պաշտպանում է բոլոր մարդկանց իրավունքներն՝ անկախ տվյալ անձի առողջ լինելուց կամ ֆիզիկական, հոգեկան խնդիրներ ունենալուց:



Համաձայն «Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքի՝ հաշմանդամ է համարվում այն անձը, ով, առողջության խաթարմամբ պայմանավորված, կենսագործունեության սահմանափակումների հետևանքով ունի սոցիալական պաշտպանության անհրաժեշտություն: Հաշմանդամներն ունեն Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և օրենքներով սահմանված նույն իրավունքները, ազատությունները և պարտականությունները, ինչպես այլ անձինք:

Բժշկասոցիալական փորձաքննության ոլորտում իրավասու պետական մարմնի կողմից՝ հաշմանդամ ձանաչված անձին տրվում է հաշմանդամության խումբ (1-ին, 2-րդ և 3-րդ խումբ), իսկ մինչև 18 տարեկան երեխաներին՝ հաշմանդամ երեխայի կարգավիճակ: Վերջիններս օրենքով սահմանված կարգով իրավասու են պետության կողմից ստանալու կենսաթոշակ:

Հաշմանդամության աշխատանքային կենսաթոշակ նշանակվում է բժշկասոցիալական փորձաքննություն իրականացնող իրավասու պետական մարմնի կողմից հաշմանդամ ձանաչված անձին, եթե հաշմանդամություն սահմանելու կամ կենսաթոշակ նշանակելու համար դիմելու ժամանակ անձն ունեցել է հետևյալ աշխատանքային ստաժը.


Տարիքային խումբը	Աշխատանքային ստաժը՝ օրացուցային տարիներով
մինչև 23	2 տարի
23 – 26	3 տարի
26 – 29	4 տարի
29 – 32	5 տարի
32 – 35	6 տարի
35 – 38	7 տարի
38 – 41	8 տարի
41 – 44	9 տարի
44-ից բարձր	10 տարի

Աշխատանքային խեղման կամ մասնագիտական հիվանդության հետևանքով հաշմանդամ ձանաչված անձին հաշմանդամության աշխատանքային կենսաթոշակ նշանակվում է անկախ աշխատանքային ստաժից:

Հաշմանդամության կենսաթոշակը նշանակվում է հաշմանդամության ամբողջ ժամանակահատվածի համար:

Կենսաթոշակ նշանակելու համար ներկայացվող անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը, կենսաթոշակ նշանակելու համար դիմելու, կենսա-

¹ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության բժշկասոցիալական փորձաքննության գործակալություն



թոշակ նշանակելու (վերահաշվարկելու), կենսաթոշակի տեսակը փոխելու, կենսաթոշակ վճարելու և կենսաթոշակի գործ (փաստաթղթեր) վարելու կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Յուրաքանչյուր տարի պետական բյուջեով նախատեսվում են միջոցներ հատուկ տառատեսակներով գրքերի տպագրության, «խոսող գրքերի» ձայնագրության, ինչպես նաև ուշ տարիքում տեսողությունը կորցրած անձանց Բրայլի համակարգով լրացուցիչ ուսուցման համար: Բացի այդ, հաշմանդամներին երաշխավորվում է պետական բյուջեի միջոցների հաշվին որակյալ անվճար կամ արտոնյալ պայմաններով բժշկական օգնություն պետական բժշկական հիմնարկներում:

1-ին և 2-րդ խմբերի հաշմանդամները և հաշմանդամ երեխաներն ըստ դեղատոմսերի ապահովվում են դեղորայքով անվճար, իսկ 3-րդ խմբի հաշմանդամները՝ 50% զեղչով, եթե չեն օգտվում ավելի արտոնյալ պայմաններով դեղորայք ստանալու իրավունքից:

Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով հաշմանդամներն ունեն հատուկ պրոթեզաօրթոպեդիկ կոշիկների և բոլոր տեսակի պրոթեզային իրերի (բացառությամբ թանկարժեք մետաղներից պատրաստվող ատամնապրոթեզների) անվճար պատվիրման, նորոգման և ստացման իրավունք՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի և օրենսդրությամբ չարգելված այլ միջոցների հաշվին:

Անձին հաշմանդամ ձանաչելու կամ չձանաչելու, ինչպես նաև հաշմանդամության այս կամ այն խումբը, հաշմանդամ երեխայի կարգավիճակը սահմանելու վերաբերյալ որոշումները կարող են օրենսդրությամբ սահմանված կարգով բողոքարկվել վերադատության կամ դատական կարգով, ինչպես նաև մինչև դատարան դիմելը կարող եք դիմել ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին:


● ՀՈԳԵԲՈՒԺԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Հոգեկան հիվանդություններով անձանց իրավունքները երաշխավորվում են «Հոգեբուժական օգնության մասին» ՀՀ օրենքով:

Հոգեկան խանգարումներ ունեցող անձինք ունեն Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված բոլոր իրավունքները և ազատությունները, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի:

Հոգեկան խանգարումներ ունեցող անձինք, մասնավորապես, իրավունք ունեն՝

- 1) հաստատելու նամակագրական կապ,
- 2) օգտվելու հեռախոսակապից,
- 3) հանդիպելու այցելուների հետ,
- 4) ունենալու և ձեռք բերելու առաջին անհրաժեշտության իրեր ու պարագաներ, օգտվելու անձնական հագուստից,
- 5) հաղորդակցվելու թերթերի և լրագրերի միջոցով,



6) անմիջականորեն դիմելու բուժհաստատության ղեկավարին կամ բաժանմունքի վարիչին՝ բուժման, հետազոտման, դուրսգրման, օրենքով սահմանված իր իրավունքների պաշտպանության հարցերով,

7) տալու համաձայնություն և ցանկացած փուլում հրաժարվելու բուժական մեթոդներից և միջոցներից, եթե դրանք կիրառվում են գիտական կամ փորձարարական նպատակներով, ուղեկցվում են լուսա-, տեսա- և կինոնկարահանումներով,

8) պահանջելու իր ընտրած հոգեբույժ մասնագետի մասնակցությունը սույն օրենքով նախատեսված հոգեբուժական հանձնաժողովի աշխատանքներին:


Հիվանդանոցային և արտահիվանդանոցային պայմաններում հոգեկան խանգարումներով տառապող անձինք իրենց իրավունքներն իրականացնում են անձամբ կամ օրինական ներկայացուցչի միջոցով: Հոգեկան խանգարումներով տառապող անձինք իրավունք ունեն քննվելու և վերաքննվելու բժշկասոցիալական փորձաքննական հանձնաժողովների կողմից:

Եթե հոգեկան խանգարումով տառապող անձն ի վիճակի չէ հասկանալու իր իրավունքները կամ ստորագրելու իր իրավունքների իրազեկման թերթիկը, ապա տվյալ անձի իրավունքները բացատրվում են անձի օրինական ներկայացուցչին, եթե այդպիսին առկա է, որն էլ ստորագրում է նշված իրազեկման թերթիկը: Դրա մասին բաժանմունքի վարիչը գրառում է կատարում բժշկական քարտում:

Հոգեկան խանգարումներով տառապող անձանց հոգեբուժական օգնությունն իրականացվում է պետության միջոցների հաշվին՝ պետության երաշխավորած նպատակային ծրագրերի շրջանակներում, մարդասիրության ու մարդու իրավունքների պաշտպանության հիմունքներով:

Քաղաքացիների հոգեկան առողջության վերաբերյալ տեղեկությունները բժշկական գաղտնիք են: Այդպիսի տեղեկությունները տրամադրվում են հիվանդին և նրա օրինական ներկայացուցչին նրանց պահանջով (օրինակ՝ մի շարք պետական պաշտոններ զբաղեցնելու համար քաղաքացու հոգեկան առողջության վերաբերյալ տրվում է տեղեկություն համապատասխան մարմնի կողմից):

Հոգեկան խանգարումով տառապող անձը կամ նրա օրինական ներկայացուցիչն իրավունք ունի հրաժարվելու առաջարկված բուժօգնությունից կամ դադարեցնելու այն, բացառությամբ օրենքով նախատեսված բժշկական բնույթի հարկադրական միջոցների կիրառման և ոչ հոժարակամ (հարկադիր) հոսպիտալացման ղեկավարի:



● **ՔԱՂԱՔԱՑՈՒՆ ԱՆ ԳՈՐԾՈՒՆԱԿ ԿԱՄ ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ԳՈՐԾՈՒՆԱԿ ՃԱՆԱԶԵԼԸ**

Քաղաքացուն անգործունակ ձանաչելու խնդիրը կարգավորվում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքով և իրականացվում է միայն դատական կարգով:

Քաղաքացին, որը հոգեկան խանգարման հետևանքով չի կարող հասկանալ իր գործողությունների նշանակությունը կամ ղեկավարել դրանք, կարող է դատարանով անգործունակ ձանաչվել՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով (համապատասխան հողվածները՝ կից սկավառակում):

Մասնավորապես՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրքը (հողված 168) սահմանում է, որ քաղաքացուն անգործունակ ձանաչելու վերաբերյալ գործը կարող է հարուցվել նրա ընտանիքի անդամների, խնամակալության և հոգաբարձության մարմնի կամ հոգեբուժական հաստատության տնօրինության դիմումի հիման վրա:

Քաղաքացուն սահմանափակ գործունակ ձանաչելու վերաբերյալ գործը կարող է հարուցվել նրա ընտանիքի անդամների կամ խնամակալության և հոգաբարձության մարմնի դիմումի հիման վրա:


Սա նշանակում է, որ քաղաքացուն սահմանափակ գործունակ ձանաչելը հնարավոր է բացառապես ընտանիքի անդամների կամ խնամակալության և հոգաբարձության մարմնի դիմումի հիման վրա, այսինքն՝ այլ անձի կամ կազմակերպության դիմումի հիման վրա քաղաքացուն ձանաչելու վերաբերյալ գործ հարուցել հնարավոր չէ:

Ընդ որում՝ քաղաքացուն անգործունակ կամ սահմանափակ գործունակ ձանաչելու վերաբերյալ դիմումը տրվում է քաղաքացու բնակության վայրի՝ ընդհանուր իրավասության դատարան, իսկ եթե անձը բուժվում է հոգեբուժական հաստատությունում՝ նաև դրա գտնվելու վայրի դատարան:

Քաղաքացուն անգործունակ ձանաչելու վերաբերյալ դիմում ներկայացնելիս դիմումի մեջ պետք է շարադրվեն այն հանգամանքները, որոնք վկայում են քաղաքացու հոգեկան խանգարման մասին, և որոնց հետևանքով նա չի կարող հասկանալ իր գործողությունների նշանակությունը կամ ղեկավարել դրանք:

Քաղաքացուն սահմանափակ գործունակ ձանաչելու վերաբերյալ դիմումի մեջ պետք է շարադրվեն այն հանգամանքները, որոնք վկայում են, որ ոգելից խմիչքներ կամ թմրամիջոցներ չարաշահող, ինչպես նաև մոլեխաղերով հրապուրվող անձն իր ընտանիքը դրել է նյութական ծանր կացության մեջ (հողված 169):

Անհրաժեշտ է նկատի ունենալ, որ քաղաքացու հոգեկան խանգարման վերաբերյալ հիմնավոր կասկածների առկայության դեպքում դատավորը նրա հոգեկան վիճակը պարզելու համար նշանակում է դատահոգեբուժական փորձաքննություն: Դատահոգեբուժական փորձաքննության անցկացումից այն անձի ակնհայտ խուսափելու դեպքում, որի նկատմամբ անգործունակ ձանաչելու վերաբերյալ գործ է հարուցվել, դատարանը որոշում է կայացնում քաղաքացուն հարկադիր կարգով դատահոգեբուժական փորձաքննության ուղարկելու մասին (հողված 170):



Դիմումի քննության կարգը

Քաղաքացուն անգործունակ ձանաչելու վերաբերյալ գործը դատարանը քննում է խնամակալության և հոգաբարձության մարմնի ներկայացուցչի պարտադիր մասնակցությամբ: Քաղաքացին կարող է կանչվել դատական նիստի, եթե դա թույլ է տալիս նրա առողջական վիճակը:

Քաղաքացուն սահմանափակ գործունակ ձանաչելու վերաբերյալ գործը դատարանը քննում է այդ քաղաքացու և խնամակալության ու հոգաբարձության մարմնի ներկայացուցչի պարտադիր մասնակցությամբ:

Տիպիկ, որ դիմումն ազատվում է քաղաքացուն անգործունակ կամ սահմանափակ գործունակ ձանաչելու վերաբերյալ գործի քննության հետ կապված դատական ծախսերից:

Դատարանը, պարզելով, որ դիմում տված ընտանիքի անդամները վարվել են անբարեխիղճ՝ ակնհայտորեն նպատակ ունենալով քաղաքացուն անհիմն զրկել գործունակությունից կամ սահմանափակել նրա գործունակությունը, դատական ծախսերը բռնագանձում է նրանցից:

Դատարանի վճռի հետևանքները


Քաղաքացուն անգործունակ ձանաչելու մասին դատարանի վճռի հիման վրա խնամակալության և հոգաբարձության մարմինը նշանակում է խնամակալ, իսկ քաղաքացուն սահմանափակ գործունակ ձանաչելու մասին դատարանի վճռի հիման վրա խնամակալության և հոգաբարձության մարմինը նշանակում է հոգաբարձու:

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով նախատեսված դեպքերում դատարանը՝ խնամակալի, ընտանիքի անդամի կամ հոգեբուժական հաստատության տնօրինության դիմումով, դատահոգեբուժական փորձաքննության համապատասխան եզրակացության հիման վրա, վճիռ է կայացնում ապաքինվածին գործունակ ձանաչելու մասին: Դատարանի վճռի հիման վրա վերացվում է քաղաքացու նկատմամբ սահմանված խնամակալությունը:

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով նախատեսված դեպքերում դատարանը՝ քաղաքացու, նրա հոգաբարձուի կամ ընտանիքի անդամի դիմումով վճիռ է կայացնում քաղաքացու գործունակության սահմանափակումը վերացնելու մասին: Դատարանի վճռի հիման վրա վերացվում է քաղաքացու նկատմամբ սահմանված հոգաբարձությունը:

Անգործունակ ձանաչված քաղաքացու նկատմամբ սահմանվում է խնամակալություն, իսկ նրա անունից գործարքներ է կնքում նրա խնամակալը:

Եթե վերացել են այն հիմքերը, որոնց ուժով քաղաքացին անգործունակ է ձանաչվել, դատարանը նրան գործունակ է ձանաչում: Դատարանի վճռի հիման վրա վերացվում է նրա նկատմամբ սահմանված խնամակալությունը:



Անգործունակ ձանաչված անձինք չեն կարող ընտրել և ընտրվել:

Քաղաքացին դատարանի վճռով կարող է ձանաչվել սահմանափակ գործունակ՝ ոգելից խմիչքների կամ թմրամիջոցների չարաշահման, ինչպես նաև մոլեխաղերով հրապուրվելու հետևանքով իր ընտանիքը նյութական ծանր դրության մեջ դրած լինելու դեպքում՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով (համապատասխան հոդվածները՝ կից սկավառակում):

Նրա նկատմամբ սահմանվում է հոգաբարձություն:

Նա իրավունք ունի ինքնուրույն կնքելու միայն մանր կենցաղային գործարքներ: Նա կարող է կնքել այլ գործարքներ, ինչպես նաև ստանալ աշխատավարձ, կենսաթոշակ և այլ եկամուտներ ու տնօրինել դրանք միայն հոգաբարձուի համաձայնությամբ:

Նման քաղաքացին ինքնուրույն գույքային պատասխանատվություն է կրում իր կնքած գործարքների և պատճառած վնասի համար:

Եթե վերացել են այն հիմքերը, որոնց ուժով սահմանափակվել է քաղաքացու գործունակությունը, դատարանը վերացնում է նրա գործունակության սահմանափակումը: Դատարանի վճռի հիման վրա վերացվում է քաղաքացու նկատմամբ սահմանված հոգաբարձությունը:

● ԲԺՇԿԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈՒՍՎԱՏՈՒՑՄԱՆ ՀԱՄԱՎՃԱՐԱՅԻՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ


Բնակչության անմիջական մասնակցությունը բժշկական օգնության և սպասարկման ֆինանսավորման գործում

Վճարովի ծառայություններն առողջապահության ոլորտում կարող են լինել երկու տիպի՝

1. բժշկական օգնության և սպասարկման վճարովի ծառայություններ
2. այլ վճարովի ծառայություններ, որոնք ուղղակիորեն կապված չեն բժշկական օգնության հետ (հիվանդանոցային կեցության պայմանների բարելավում և սպասարկում, տեղեկանքների տրամադրում և այլն):

Գնագոյացման, բժշկատնտեսագիտական չափանիշների կամ ստանդարտների արդեն իսկ սկսված գործընթացը հնարավորություն կընձեռի օբյեկտիվորեն կարգավորելու գնագոյացումն առողջապահության համակարգում և ոլորտում ապահովելու կառավարելի շուկայական հարաբերություններ, ինչը կբերի բժշկական ծառայությունների որակի բարձրացման և բուժօգնության մատչելիության: Վճարովի ծառայությունների գների վրա իր ազդեցությունն է թողնում նաև պետական պատվերի շրջանակներում իրականացվող բժշկական մի շարք ծառայությունների գների ցածր լինելը:

Պետության կողմից ֆինանսավորվող ծառայությունների մի մասը կարող է իրականացվել համավճարների սկզբունքով, որը լայնորեն կի-



րառվում է երկար տարիներ, սակայն կրում է ոչ պաշտոնական բնույթ և ֆինանսական հուսքերի զգալի և անվերահսկելի ծավալ է:

Առողջապահության համակարգի ֆինանսավորման գործում, որպես անցումային փուլ, մեծ դեր է տրվում համավճարների մեխանիզմին: Համավճարը, ընդհանուր ձևակերպմամբ, բժշկական օգնություն և սպասարկում ստացողի կողմից իրականացված ուղղակի վճարումն է բժշկական ապրանքների կամ ծառայությունների այն արժեքի համար, որը ներառված չէ գնի մեջ, կամ բժշկական ծառայության իրական արժեքի և պետության կողմից սահմանված գնի տարբերությունն է, որը վճարվում է բուժօգնություն ստացողի կողմից: Առողջապահության ֆինանսավորման համակարգում համավճարները միշտ ձևավորվում են այն դեպքում, երբ բժշկական ծառայությունների կամ բուժման գներն ավելի ցածր են, քան իրական ծախսերը: Այս պարագայում հնարավոր է երկու տիպի համավճար:

Ոչ պաշտոնական համավճար

Այն գոյություն ունի երկար տարիներ՝ դեռևս խորհրդային ժամանակներից (այդ թվում նաև Հայաստանում), և որպես օրենք՝ լրացրել է բուժաշխատողի աշխատավարձի թերավճարումը, իսկ 90-ական թվականների երկրորդ կեսից՝ նաև դեղերի և բժշկական պարագաների ծախսերը:


Պաշտոնական համավճար

Այն կիրառվում է աշխարհի շատ երկրներում տարբեր մեխանիզմներով ու նպատակներով, արդյունավետ է համարվում ոչ այնքան ֆինանսական մուտքեր ապահովելու տեսանկյունից, որքան բուժհաստատությունների և հիվանդների միջև հստակ, թափանցիկ և կանխատեսելի փոխհարբերություններ ձևավորելու առումով:

Ընդհանրապես, ցածր ՀՆԱ, բյուջեի ձևավորման, հավաքագրման և վճարման խնդիրներ ունեցող երկրներում համավճարը դիտարկվում է առողջապահության համակարգի ֆինանսական դժվարությունները որոշ չափով հարթելու միջոց: Այն, անշուշտ, պետք է կրի քաղաքական որոշման տեսք և ունենա ներդրման հստակ մեխանիզմներ:

Ինչ խնդիրներ կարող է լուծել կամ մասնակիորեն կփորձի լուծել համավճարը առողջապահության համակարգի ֆինանսավորման հարցում:

Այն ինքնին չի կարող լուծել թերֆինանսավորման կամ, ընդհանուր առմամբ, առողջապահության ոլորտին հատկացվող անհրաժեշտ ֆինանսական միջոցներ ապահովելու հարցը, սակայն հստակեցնելով ակնկալվող ֆինանսական մուտքերը՝ հնարավորություն կստեղծի կողմնորոշվել և ձիշտ դիրքորոշում ձևավորել ֆինանսական հուսքերի կառավարման գործում: Հակառակ դեպքում տեղի կունենա այն, ինչ տեղի է ունեցել, այն է՝ բուժօգնություն իրականացնող և հիվանդ փոխհարբերություններում հիմնվել է համավճարների այլ համակարգ, այսպես կոչված, ոչ պաշտոնական համավճարները:



Ուսումնասիրությունները թույլ են տալիս փաստել, որ՝


- ոչ պաշտոնական վճարները հիմնականում փոխհատուցում են բուժօգնության և սպասարկման նյութական և բուժանձնակազմի աշխատավարձի մի մասը,
- վճարվող միջին ոչ պաշտոնական գումարը տատանվում է ըստ վճարողի, բուժօգնություն իրականացնողի՝ էլնելով վճարման նպատակից և բուժօգնության տեսակից ու որակից:


Այսպիսով՝ համավճարների պաշտոնական ընդունումը կարևորագույն, քաղաքական որոշում պահանջող հարց է և ոչ պաշտոնական վճարների օրինականացման ծանրակշիռ պայման: Դրա պաշտոնական կիրարկումը կանխատեսելի կդարձնի բնակչության կողմից իրականացվող առողջապահական ծախսերը, կլեզալացնի առկա ստվերային շրջանառությունը, կբարելավի մատուցվող բուժօգնության որակը, հնարավորություն կտա ավելացնելու բուժօգնություն իրականացնողների պաշտոնական եկամուտները:

Պետության կողմից երաշխավորված բժշկական օգնության և սպասարկման արդյունավետության և մատչելիության բարձրացման նպատակով, բժշկա-տնտեսագիտական հիմնավորվածությամբ, DRG համակարգի սկզբունքով իրականացվել է շուրջ 300 հիվանդության տեսակների իրական ինքնարժեքի հաշվարկումը միջազգայնորեն ընդունված մեթոդաբանությամբ: Նշված գործընթացը շարունակվելու է նաև 2011 թ.: Ծառայությունների իրական ինքնարժեքի հաշվարկման վրա հիմնված՝ իրականացվել են 2010-2011 թթ. համավճարների մեխանիզմների կիրարկման կանխատեսումները:

2010 թվականի հուլիսի 1-ից փորձարարական ծրագրով հանրապետությունում ներդրվեց բժշկական ծառայությունների փոխհատուցման համավճարային մեխանիզմը Երևանի երեք բուժհաստատություններում: Ծրագրի արդյունքները դրական գնահատվելուց հետո որոշվեց համավճարային մեխանիզմները կիրառել հանրապետության բոլոր բուժհաստատություններում, որի հիման վրա ՀՀ կառավարության 23.12.2010 թ. N 1762-Ն որոշմամբ 2011 թ. փետրվարի 1-ից հանրապետության բուժհաստատություններում «Անհետաձգելի և գինեկոլոգիական բժշկական օգնության» ծրագրերում կիրառվելու են համավճարի մեխանիզմները:

ԲՈՒՆՈՒԹՅՈՒՆԸ
ԸՆՏԱՆԻՔՈՒՄ
ԵՎ ԿԱՆԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ





ԻՆՉ Է ԲՈՒՆՈՒԹՅՈՒՆԸ

Կանանց նկատմամբ բռնությունը գենդերային անհավասարության դրսևորումներից է, որն իրենից առավել վտանգավորություն է ներկայացնում, քանի որ այն խորացնում է կանանց նկատմամբ խտրական վերաբերմունքը և ազդում կանանց կողմից իրենց իրավունքներից և ազատություններից օգտվելու ունակությանը:


Գենդերային հիմքով բռնությունը վտանգի տակ է դնում և խախտում է մարդու այնպիսի հիմնարար իրավունքներ, ինչպիսիք են խոշտանգումից և վատ վերաբերմունքից զերծ մնալու, օրենքի առջև հավասարության, օրենքի պաշտպանությունից օգտվելու, ազատության և անձեռնմխելիության, ընտանիքում հավասարության, առողջության պահպանության, աշխատանքի արդարացի պայմանների իրավունքները:

Բռնության միջոցով մեկ անձը մյուսին հարկադրում է կատարել որոշակի գործողություններ կամ զերծ մնալ դրանց կատարումից: Բռնությունը լայն հասկացություն է և կարող է ներառել բռնության այնպիսի ձևեր, ինչպիսին են հոգեբանական, ֆիզիկական, տնտեսական, բարոյական, կենցաղային, սեռական, սոցիալ-տնտեսական, սոցիալ-մշակութային հարկադրանքը, որի միջոցով բռնություն գործադրողը ձգտում է իրականացնելու վարքի վերահսկողություն և կառավարում, սեփական կամքի թելադրանք, շահի ստացում և այլն:

Բռնությունը կարող է դրսևորվել կյանքի տարբեր ոլորտներում՝ հասարակության մեջ, դրսում, ընտանիքում և այլն: Բռնության առավել տարածված ձևերից է ընտանեկան բռնությունը: Ընտանեկան բռնությունը չունի մեկ ընդհանրական սահմանում, սակայն միջազգային փաստաթղթերում, ինչպես նաև տարբեր պետությունների իրավական ակտերում օգտագործվող սահմանումները ներառում են ֆիզիկական, հոգեբանական, սեռական բռնության, ահաբեկման, մեկուսացման և հարկադրման, անձի նկատմամբ վերահսկողության, ուժի գործադրման տարրեր: Նշված դրսևորումների հետևանքով կինն ընտանիքում և հասարակության մեջ ստորադասվում է տղամարդու համեմատ:

Չնայած որ Հայաստանի Հանրապետությունը վավերացրել է կանանց իրավունքների հետ կապված գրեթե բոլոր միջազգային պայմանագրերը, սակայն դրանցով ամրագրված իրավունքների պաշտպանությանն ուղղված ներպետական հատուկ օրենքներ չեն ընդունվել:

Կանանց նկատմամբ բռնության հիմնախնդրին անդրադարձել է Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիան (CEDAW), որը հիմք հանդիսացավ կանանց հիմնախնդիրների վերաբերյալ հետագա փաստաթղթերի ընդունման համար: Կոնվենցիան որևէ դրույթ չի պարունակում ընտանեկան բռնության վերաբերյալ, սակայն հետագայում ընդունված հռչակագրերը և բանաձևերն ուղղակիորեն ընտանեկան բռնությունը սահմանեցին որպես կանանց նկատմամբ խտրականության դրսևորման տեսակ: Ընտանեկան բռնության դեմ պայքարելու պետությունների պարտականությունն ամրագր-



ված է Միացյալ ազգերի կազմակերպության կողմից 1992 թվականին ընդունված թիվ 19 ընդհանուր հանձնարարականում: Համաձայն միջազգային փաստաթղթերի՝ Հայաստանը պարտավոր է ընդունել ընտանեկան բռնության դեմ պայքարի, կանխարգելման և փոխհատուցման մեխանիզմներ: ՀՀ օրենսդրությունը կանանց նկատմամբ բռնությունների կանխարգելմանն ուղղված հատուկ օրենսդրություն չի ընդունել: Եվրոպական և մի շարք այլ եկրներ, այդ թվում նաև Վրաստանը և Ադրբեջանը ընդունել են ընտանեկան բռնության կանխարգելման մասին օրենքներ, որոնք հնարավորություն են տալիս ընտանեկան բռնության ենթարկված անձանց դիմել պաշտպանության այս կամ այն միջոցին:

ԸՆՏԱՆԵԿԱՆ ԲՈՒՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ

● ՀՈԳԵՔԱՆԱԿԱՆ ԲՈՒՈՒԹՅՈՒՆ


Հոգեբանական բռնությունն արտահայտվում է վիրավորանքների, գրպարտության, անձի վերահսկման, երեխաների նկատմամբ բռնության, բռնության սպառնալիքների, առարկաների ոչնչացման, հետապնդման, նվաստացնող գործողությունների, մեկուսացման և այլ ձևերով: Հոգեբանական բռնության նպատակն է սոցիալական կապերի խզման միջոցով կամքի թելադրումը: Հոգեբանական բռնությունը կարող է հանգեցնել մի շարք հիվանդությունների: Հոգեբանների կարծիքով՝ բռնության այս տեսակը շատ վտանգավոր է և կարող է լուրջ հետևանքներ ունենալ կնոջ առողջության վրա:

● ՖԻԶԻԿԱԿԱՆ ԲՈՒՈՒԹՅՈՒՆ

Ֆիզիկական բռնությունն արտահայտվում է ֆիզիկական փոխազդեցությամբ հրելով, հարվածելով, զենքի օգտագործմամբ և այլն: Ֆիզիկական բռնությունն իրենից առավել վտանգավորություն է ներկայացնում, որը հաճախ հանգեցնում է բռնության ենթարկված անձի մահվան կամ մարմնական վնասվածքների: Հաճախ ֆիզիկական բռնություններն ուղեկցվում են նաև հոգեբանական բռնությամբ:

● ՍԵՌԱԿԱՆ ԲՈՒՈՒԹՅՈՒՆ

Սեռական բռնությունը ֆիզիկական բռնության դրսևորումներից է, որով բռնություն գործադրող անձը զոհին պարտադրում է սեռական հարաբերություն ունենալ, սեռական հարաբերությամբ զոհին ցավ կամ



առողջությանը վնաս է պատճառում: Սեռական բռնությունը ևս շատ տարածված և բռնության վտանգավոր ձև է, որի հետևանքները կործանարար են կնոջ համար ինչպես հոգեբանական, այնպես էլ ֆիզիկական առումով:

Պետք է նշել, որ ամուսնության ընթացքում բռնաբարությունը հանցագործություն է, քանի որ սեռական ակտը տեղի չի ունենում կնոջ համաձայնությամբ: Բռնաբարության համար պատասխանատվությունը նախատեսված է ՀՀ քրեական օրենսգրքի 138 հոդվածով և նախատեսում է ազատազրկում երեքից վեց տարի ժամկետով, իսկ մի խումբ անձանց կողմից, տուժողի կամ այլ անձի նկատմամբ, անչափահասի նկատմամբ, առանձին դաժանությամբ կատարվելու, ինչպես նաև տուժողի մահ կամ այլ ծանր հետևանքներ առաջացնելու դեպքում պատժվում է ազատազրկմամբ՝ չորսից տասը տարի ժամկետով: Իսկ վերը նշված գործողությունները տասնչորս տարին չլրացած անձի նկատմամբ կատարելու դեպքում սահմանված է ազատազրկում՝ ութից տասնհինգ տարի ժամկետով:


● ՏՆՏԵՍԱԿԱՆ ԲՈՒՆՈՒԹՅՈՒՆ

Տնտեսական բռնությունն արտահայտվում է եկամուտը թաքցնելու, երեխաներին ապահովելուց հրաժարվելու, համատեղ ձեռք բերված գույքը վատնելու, թաքցնելու, ծախսերի մասին հաշվետվություն պահանջելու և այլ ձևով: Այն կարող է դրսևորվել աշխատելու և ինքնուրույն վաստակ ձեռք բերելու արգելքով, որպեսզի զոհը գտնվի կախվածության վիճակում:

Սովորաբար ընտանեկան բռնության նշված դրսևորումները կրկնվում են և մշտական բնույթ են ստանում: Երբ կողմերն անցնում են թույլատրելիի սահմանը և դիմում բռնության, ապա այն հետագայում պարբերաբար կրկնվում է և դառնում առավել վտանգավոր:

Համաձայն Համաշխարհային բանկի կողմից կատարված հետազոտությունների՝ կանանց ինքնասպանությունների 30 %-ը և սպանությունների 60 %-ը կատարվել են ընտանեկան բռնության հետևանքով: Բռնության ենթարկված կանայք տառապում են նվաստացման, ձնշվածության զգացումից հաճախ ստացած ծանր մարմնական վնասվածքներից, որն էլ խոչընդոտում է նրանց կողմից հասարակական, քաղաքական, տնտեսական կյանքին մասնակցելու ունակությանը:

Ընտանեկան բռնության հետևանքները երեխաների նկատմամբ ևս բացասական ազդեցություն են թողնում, նրանք ևս դառնում են հոգեբանական և ֆիզիկական բռնության զոհ: Նման ընտանիքներում մեծացած երեխաները հաճախ ունենում են ուսման վատ առաջադիմություն, հոգեբանական խնդիրներ, թերարժեքության զգացում, լինում են մեկուսացած և այլն:



● **ԻՆՉ Է ԿԱՆԽԱՐԳԵԼԻՉ ԿԱՄ ԴԱՇՏ ԴԱՆԱԿԱՆ ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ**

Ընտանեկան բռնության կանխարգելմանն ուղղված հատուկ օրենք դեռևս չի ընդունվել Հայաստանի Հանրապետությունում, սակայն կարևոր է տեղեկացնել ընթերցողին նաև ձևավորված միջազգային պրակտիկայի մասին:

Ընտանեկան բռնության դեմ պայքարի միջոցներից մեկը այսպես կոչված կանխարգելիչ կամ պաշտպանական կարգադրություններն են, որոնք արձակվում են դատավորի կողմից բռնություն կիրառող անձի նկատմամբ: Կախված բռնության բնույթից՝ կանխարգելիչ կարգադրությունների միջոցով սահմանափակվում է բռնություն կիրառող անձի շփումը տուժողի հետ, ինչպես նաև հնարավոր է, որ բռնություն կիրառող անձին վտարեն բնակարանից նույնիսկ այն դեպքում, երբ սեփականատերը հենց բռնություն կիրառող անձն է: Այս միջոցը ժամանակավոր բնույթ ունի և սովորաբար մինչև վեց ամիս ժամանակով է գործում: Այսինքն՝ այդ ընթացքում պետք է լուծվեն բնակարանի, համատեղ գույքի, երեխաների խնամքի և մյուս վիձելի հարցերը:

Հատկանշական է, որ մի շարք երկրներում, օրինակ՝ ԱՄՆ-ի որոշ նահանգներում, կանխարգելիչ կարգադրությունները կարող են տրվել նաև երրորդ անձանց դիմումով, այսինքն՝ տուժողի դիմումը պարտադիր չէ, եթե հիմքեր կան ենթադրելու, որ տուժողին վտանգ է սպառնում: Նույնիսկ որոշ երկրներ (օրինակ՝ ԱՄՆ) իրավունք են տալիս ոստիկաններին ձերբակալելու բռնություն գործադրող անձին և քրեական հետապնդում իրականացնելու՝ անկախ տուժող անձի կամքից կամ ցանկությունից:


Կանխարգելիչ կարգադրությունների նպատակն է պաշտպանել տուժողին և երեխաներին, ընտանիքի անդամներին, որոնց նկատմամբ կարող է բռնություն կիրառվել:

● **Ո՞ՒՄ ԿԱՐԵԼԻ Է ԴԻՄԵԼ ԲՈՒՆՈՒԹՅԱՆ ԴԵՊՔՈՒՄ**

Քանի որ Հայաստանը ընտանեկան բռնության վերաբերյալ օրենք չի ընդունել, և կանխարգելիչ կարգադրություններ դատարանները չեն կարող արձակել, ապա միակ մարմինը, որը կարող է միջամտություն ցուցաբերել, դա ոստիկանությունն է, իսկ ոստիկանության կողմից պատշաճ քննություն չիրականացնելու դեպքում՝ նաև դատախազությունը:

Ինչպե՞ս է ներկայացվում ընտանեկան բռնության վերաբերյալ բողոքը:

Բողոքը կարող է ներկայացվել դիմողի բնակության վայրի ոստիկանության բաժին կամ դատախազություն՝ հանցագործության վերաբերյալ հայտարարության ձևով (բողոքի և հայտարարության ձևը՝ կից սկավառակում): Բողոքի համար հատուկ ձև սահմանված չէ, սակայն բողոքի մեջ պետք է նշվեն դիմողի անուն-ազգանունը, հասցեն, իր նկատմամբ կիրառված բռնության ժամանակը և բռնության նկարագրությունը, անձը, որը կիրառել է բռնությունը: Հանցագործության վերաբերյալ անձինք կարող են տալ հաղորդում, որը տրվում



է բանավոր կամ գրավոր: Գրավոր հաղորդում տալու վերաբերյալ կազմվում է արձանագրություն, որտեղ նշվում են դիմողի ազգանունը, անունը, ծննդյան թիվը, բնակարանի և ծառայողական հասցեն, նրա առնչությունը հանցագործությանը և իրազեկության աղբյուրը, ինչպես նաև տեղեկություններ նրա կողմից ներկայացված անձը հաստատող փաստաթղթերի մասին: Եթե դիմողը չի ներկայացրել անձը հաստատող փաստաթղթեր, պետք է ձեռնարկվեն այլ միջոցառումներ՝ նրա անձի մասին տեղեկություններն ստուգելու համար:

Եթե իրավապահ մարմինները ժամանակին չեն արձագանքի Ձեր բողոքին կամ հայտարարությանը, դուք նրանց անգործության վերաբերյալ կարող եք բողոք ներկայացնել նրանց վերադասին, դատարան կամ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին:

Օրինակ, եթե բողոք եք ներկայացրել ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի կամ մարզային որևէ բաժին, ապա հանցագործությունների մասին հաղորդումները պետք է քննարկվեն և լուծվեն անհապաղ, իսկ գործ հարուցելու առիթի օրինականությունը և հիմքերի բավարար լինելը ստուգելու անհրաժեշտության դեպքում՝ դրանց ստացման պահից 10 օրվա ընթացքում: Նշված ժամկետում կարող են պահանջվել լրացուցիչ փաստաթղթեր, բացատրություններ, այլ նյութեր, ինչպես նաև կարող է կատարվել դեպքի վայրի զննություն, հանցագործություն կատարելու կասկածանքի բավարար հիմքերի առկայության դեպքում կարող են բերման և անձնական խուզարկության ենթարկվել անձինք, հետազոտման համար վերցվել նմուշներ, նշանակվել փորձաքննություն:


Այս իրավապահ մարմինների անգործության կամ, Ձեր գնահատմամբ, անօրինական գործողության վերաբերյալ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին Ձեր բողոքը կարող եք ներկայացնել անձամբ, փոստով կամ կապի ցանկացած այլ միջոցով: Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի հասցեն է՝ 0002, Երևան, Պուշկինի 56 ա, հեռախոսը՝ (37410) 53 76 51, էլեկտրոնային փոստի հասցեն՝ ombuds@ombuds.am, էլեկտրոնային կայքի հասցեն՝ www.pashtpan.am:

Միջին, թեթև մարմնական վնասվածք հասցնելու և ծեծի գործերով քրեական գործ կարող է հարուցվել միայն համապատասխան դիմումի համաձայն, և տուժողի կողմից բողոքից հրաժարվելու դեպքում քրեական հետապնդումը դադարեցվում է:

Ոստիկանության կամ դատախազության անգործության կամ գործողությունների վերաբերյալ դատարանում Ձեր դիմումը կքննվի ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290 հոդվածով սահմանված կանոններին և պայմաններին համապատասխան (օրենսգրքից քաղվածքը և դատարան դիմելու ձևը՝ կից սկավառակում):

● ԻՆՉ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ Է ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԸՆՏԱՆԵԿԱՆ ԲՈՒՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

Եվրոպայի և Ամերիկայի որոշ երկրներ, օրինակ՝ ԱՄՆ, իրենց քրեական օրենսգրքերում քրեական պատասխանատվություն են նախատեսում ընտանեկան բռնություն իրականացրած անձանց նկատմամբ: Իսկ




Եվրոպական պառլամենտը նշել է, որ Եվրոպական միության օրենքի պահպանման համար անհրաժեշտ է, որ անդամ պետությունները քրեականացնեն ընտանեկան բռնությունը: Այսինքն՝ բացի պաշտպանական կարգադրություններ արձակելուց և ընտանեկան բռնության զոհերի նկատմամբ պաշտպանական միջոց կիրառելուց, որոշ պետություններ քրեական հետապնդում են իրականացնում ընտանեկան բռնություն գործադրած անձի նկատմամբ:

Ինպես արդեն նշվեց, Հայաստանի օրենսդրությունը ընտանեկան բռնության դեմ պայքարի հատուկ մեխանիզմներ չի նախատեսում, որը զգալիորեն դժվարացնում է ընտանեկան բռնության կանխարգելումը: Քանի որ ընտանեկան բռնությունը հաճախ դրսևորվում է ֆիզիկական բռնության ձևով, ապա դրա համար պատասխանատվություն կարող է սահմանվել ծանր, միջին ծանրության, թեթև մարմնական վնասվածք հասցնելու, ինչպես նաև ծեծի համար: Դիտավորությամբ մեկ ուրիշին մարմնական վնասվածք պատճառելը կամ առողջությանն այլ ծանր վնաս պատճառելը, որը վտանգավոր է կյանքի համար կամ առաջացրել է տեսողության, խոսքի, լսողության կամ որևէ օրգանի կամ օրգանի ֆունկցիայի կորուստ կամ արտահայտվել է դեմքի անջնջելի այլանդակմամբ, ինչպես նաև կյանքի համար վտանգավոր այլ վնաս է պատճառել առողջությանը կամ առաջացրել է դրա քայքայում՝ զուգորդված ընդհանուր աշխատունակության ոչ պակաս, քան մեկ երրորդի կայուն կորստով կամ հանցավորի համար ակնհայտ մասնագիտական աշխատունակության լրիվ կորստով կամ առաջացրել է հղիության ընդհատում, հոգեկան հիվանդություն, թմրամոլությամբ կամ թունամոլությամբ հիվանդացում, պատժվում է ազատազրկմամբ՝ երեքից յոթ տարի ժամկետով:

Միջին ծանրության մարմնական վնասվածքը՝ մեկ ուրիշին մարմնական վնասվածք կամ առողջությանը որևէ այլ վնաս պատճառելը, որը վտանգավոր չէ կյանքի համար և չի առաջացրել ծանր մարմնական վնասվածք պատճառելու համար նախատեսված հետևանքներ, բայց առաջացրել է առողջության տևական քայքայում կամ ընդհանուր աշխատունակության մեկ երրորդից պակաս զգալի կայուն կորուստ, պատժվում է կալանքով՝ մեկից երեք ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երեք տարի ժամկետով: Եթե նույն արարքը կատարվել է երկու կամ ավելի անձանց նկատմամբ, անձի կամ նրա մերձավորի նկատմամբ՝ կապված այդ անձի կողմից իր ծառայողական գործունեության կամ հասարակական պարտքի կատարման հետ, մի խումբ անձանց կամ կազմակերպված խմբի կողմից, շահադիտական դրդումներով, առանձին դաժանությամբ, խուլիգանական դրդումներով, ազգային, ռասայական կամ կրոնականատելության կամ կրոնական մոլեռանդության շարժառիթով, պատժվում է ազատազրկմամբ՝ առավելագույնը հինգ տարի ժամկետով:

Թեթև մարմնական վնասվածքը՝ դիտավորությամբ մեկ ուրիշին մարմնական վնասվածք կամ առողջությանն այլ վնաս պատճառելը, որն առաջացրել է առողջության կարճատև քայքայում կամ ընդհանուր աշխատունակության աննշան կայուն կորուստ, պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հիսնապատիկից հարյուրհիսնապատիկի չափով, կամ կալանքով՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով:





Ծեծը՝ արտահայտված ծեծելով կամ այլ բռնի գործողություններ կատարելով, պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի առավելագույնը հարյուրապատիկի չափով, կամ կալանքով՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով:

● **ԹՐԱՖԻՔԻՆԳԻ ԶՈՒՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԵՐՊԵՏԱԿԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ**

«-ում թրաֆիքինգի դեմ պայքարի ազգային ծրագրերով նախատեսվել են մի շարք գործողությունների իրականացում՝ օրենսդրական, սոցիալ-տնտեսական և այլ միջոցառումներ, որոնք ուղղված կլինեն թրաֆիքինգի դեմ պայքարի արդյունավետության բարձրացմանը: Թրաֆիքինգի դեմ պայքարին ուղղված աշխատանքները համակարգում է Հայաստանի Հանրապետությունում մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) հարցերով խորհուրդը:

Թրաֆիքինգի գոհին տրամադրվում է աջակցություն, որը բաղկացած է երեք փուլից՝ նախնական, միջանկյալ և վերջնական աջակցություն: Եթե թրաֆիքինգի ենթարկված անձը գտնվում է Հայաստանում, ապա նախնական աջակցություն ցուցաբերվում է Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության միջնորդությամբ, մարզպետարանների, Երևանի քաղաքապետարանի միջոցով: Այս գործընթացին կարող են ներգրավվել նաև հասարակական կազմակերպությունները:







Եթե թրաֆիքնիգի զոհը գտնվում է օտարերկրյա պետությունում, ապա աջակցության տրամադրման մասին որոշումը կայացնում են դիվանագիտական և հյուպատոսական ծառայությունները:


Միջանկյալ աջակցությունը ներառում է՝

- 1) ժամանակավոր՝ մինչև 60 օրով, կացարանի տրամադրում,
- 2) բժշկական հետազոտություն և օգնություն,
- 3) իրավաբանական օգնություն,
- 4) հոգեբանական օգնություն,
- 5) հասարակության մեջ վերաինտեգրվելուն ուղղված քայլերը, այդ թվում՝ նաև մասնագիտական վերապատրաստմանն օժանդակությունը,
- 6) անհրաժեշտության դեպքում՝ սահմանված չափի հրատապ դրամական օգնություն:



ՍՈՑԻԱԼԱԿԱՆ
ՍՈՒԲՍԻԴԱՎՈՐՈՒՄ
(ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆ)





Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունն ամրագրում է անձանց սոցիալական իրավունքները՝ կրթության, աշխատանքի, սոցիալական ապահովության, առողջապահության և այլն:

Սահմանադրության 37-րդ հոդվածի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք ունի ծերության, հաշմանդամության, հիվանդության, կերակրողին կորցնելու, գործազրկության և օրենքով նախատեսված այլ դեպքերում սոցիալական ապահովության իրավունք: Սոցիալական ապահովության ծավալն ու ձևերը սահմանվում են օրենքով»:

Սահմանադրության 48-րդ հոդվածը սահմանում է տնտեսական, սոցիալական և մշակութային ոլորտներում պետության հիմնական խնդիրները, որոնցից են բնակչության զբաղվածությանը և աշխատանքի պայմանների բարելավմանը նպաստելը, բնակարանային շինարարությանը խթանելը, յուրաքանչյուր քաղաքացու բնակարանային պայմանների բարելավմանը նպաստելը, տարեց մարդկանց արժանապատիվ կենսամակարդակը ապահովելը և այլն:

Պետք է նկատի ունենալ, սակայն, որ պետությունը պարտավոր է միջոցներ ձեռնարկել վերը նշված խնդիրների իրականացման համար իր հնարավորությունների շրջանակներում: Սոցիալապես անապահովների համար իրավունքների պաշտպանության հնարավորությունների ընձեռումը սոցիալական պետության առաջնահերթություններից է:


● ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Սոցիալական աջակցություն ստանալու իրավունքը սահմանված է «Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքով:

Սոցիալական աջակցություն ստանալու իրավունք ունեն կյանքի դժվարին իրավիճակում հայտնված Հայաստանի Հանրապետության քաղաքացիները, Հայաստանի Հանրապետությունում կացության համապատասխան կարգավիճակ ունեցող օտարերկրյա քաղաքացիները, քաղաքացիություն չունեցող անձինք, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում փախստականի կարգավիճակ ունեցող անձինք (այսուհետ՝ քաղաքացի):


«Կյանքի դժվարին իրավիճակ» հասկացությունն օրենքում բացատրվում է որպես հաշմանդամության, տարիքի հետ կապված ինքնասպասարկման ունակությունների կորստի, հիվանդության, առանց ծնողական խնամքի մնալու, աղքատության, երկարատև գործազրկության, ընտանիքում կոնֆլիկտների, դաժան վերաբերմունքի, բռնության ենթարկվելու, անօգնականության, միայնակության, սոցիալական մեկուսացման, դժբախտ պատահարի կամ արտակարգ իրավիճակներում հայտնվելու, ազատագրված վայրերից վերադառնալու հետևանքով մարդու կենսագործունեությանը խանգարող օբյեկտիվ իրավիճակ, որն անձն ինքնուրույն հաղթահարել չի կարող:


Սոցիալական աջակցության հիմնական նպատակն է բավարարել կյանքի դժվարին իրավիճակում հայտնված անձի հիմնական պահանջմունքները, ստեղծել պայմաններ հասարակության մեջ ինտեգրվելու



համար, խթանել նրանց ինքնօգնության և ծագած հիմնախնդիրներն ինքնուրույն լուծելու ունակությունների զարգացմանը, կանխարգելել նրանց սոցիալական մեկուսացումը, ինչպես նաև օժանդակել նրանց սոցիալական, ֆինանսական խնդիրների լուծմանը:

Արտակարգ իրավիճակներում, ինչպես նաև անհետաձգելի լուծում պահանջող՝ կյանքին և առողջությանը վտանգ սպառնացող, կյանքի դժվարին իրավիճակներում սոցիալական աջակցությունը սոցիալական ծառայություններ տրամադրող տարածքային մարմինների կողմից տրամադրվում է անհապաղ այդ մասին տեղեկատվություն ստանալուց հետո: Սոցիալական ծառայություններ տրամադրող կազմակերպությունը օրենքով սահմանված սոցիալական աջակցություն տրամադրող կազմակերպությունն է:





Խորհրդատվական օգնությունը տրամադրվում է կյանքի դժվարին իրավիճակում հայտնված քաղաքացուն՝ ստեղծված իրավիճակից դուրս գալու, նրա սոցիալական խնդիրների լուծման ուղիներ և եղանակներ գտնելու միջոցների մասին խորհուրդների և առաջարկությունների, ինչպես նաև համարժեք սոցիալական ծառայություններ ստանալու վերաբերյալ տեղեկատվություն տրամադրելու ձևով:

Վերականգնողական օգնությունը տրամադրվում է կյանքի դժվարին իրավիճակում հայտնված քաղաքացուն բժշկական վերականգնման, վերականգնման տեխնիկական միջոցների և այլ օժանդակ սարքերի, հոգեբանական վերականգնման կամ մասնագիտական վերականգնման ու աշխատանքային թերապիայի, ինչպես նաև օրենքով չարգելված այլ ձևերով: Վերականգնողական օգնության տրամադրման կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը (տե՛ս սկավառակում):

Դրամական օգնությունը պետական բյուջեից կամ համայնքի բյուջեից անհատույց տրամադրվող հասցեական, նպատակային աջակցություն է:

Դրամական օգնության ձևերն են՝

- 1) պետական նպաստները,
- 2) նպատակային նշանակություն ունեցող դրամական օգնությունը,
- 3) քաղաքացիների որոշակի ծախսերի մասնակի հատուցումը:


Դրամական օգնության տրամադրման կարգը սահմանվում է օրենքով:

Բնափրային օգնությունը տրամադրվում է սննդի կազմակերպման, հագուստի, կոշիկի, հիգիենայի միջոցների, երեխաների խնամքի պարագաների և առաջին անհրաժեշտության այլ ապրանքների, օրենքով սահմանված դեպքերում բնակելի տարածության, հատուկ տրանսպորտային միջոցների, հաշմանդամների վերականգնողական տեխնիկական միջոցների տրամադրման, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված այլ ձևերով: Բնափրային օգնության տրամադրման կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը (տե՛ս սկավառակում):

Ժամանակավոր օթևան տրամադրվում է կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաներին, անօթևան կամ բռնության ենթարկված քաղաքացիներին ժամանակավոր կացարան ապահովելու և նրանց սոցիալական խնդիրների լուծումներ գտնելու նպատակով: Ժամանակավոր օթևանը տրամադրվում է մինչև 60 օր տևողությամբ:

Ժամանակավոր օթևանում տրամադրվում են սնունդ, հիգիենայի պարագաներ, հագուստ, կոշիկ, սոցիալական, բժշկական, հոգեբանական և իրավական օգնություն: Ժամանակավոր օթևանի տրամադրման կարգը և պայմանները սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը (տե՛ս սկավառակում):

Խնամքի տրամադրումը կյանքի դժվարին իրավիճակում հայտնված ծեր, հաշմանդամ քաղաքացիներին, ինչպես նաև առանց ծնողական խնամքի մնացած երեխաներին ընտանեկանին առավել մոտ սոցիալ-կենցաղային պայմանները ապահովելու կամ ծեր, հաշման-



դամ քաղաքացիներին իրենց հարազատ սոցիալական միջավայրում հնարավորինս երկար պահելու նպատակով անհրաժեշտ օգնությունն է:

Խնամքը տրամադրվում է սննդի, այդ թվում՝ դիետիկ, բժշկական, սանիտարահիգիենիկ սպասարկման, հագուստի, կոշիկի և առաջին անհրաժեշտության այլ պարագաների տրամադրման, մշակութային, կրթական, ժամանցի, անհրաժեշտության դեպքում՝ հաճախորդների դիսպանսերիզացման և հոսպիտալացման, իրավաբանական օգնության և այլ միջոցառումների կազմակերպման միջոցով:

Խնամքը տրամադրվում է տնային պայմաններում կամ բնակչության սոցիալական պաշտպանության հաստատություններում կամ սոցիալ-վերականգնողական ցերեկային կենտրոններում:

Բնակչության սոցիալական պաշտպանության հաստատությունն ապահովում է երկարաժամկետ կացարան, շուրջօրյա լրիվ խնամք, իսկ սոցիալ-վերականգնողական ցերեկային կենտրոնը՝ խնամքի տրամադրում ցերեկային ժամերին տնային պայմաններում և (կամ) կենտրոնում:


Խնամքի տրամադրման կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը (տե՛ս սկավառակում):

Իրավաբանական օգնությունը կյանքի դժվարին իրավիճակում հայտնված քաղաքացուն սոցիալական ծառայություններ տրամադրող կազմակերպության իրավասությունների շրջանակում տրամադրվող իրավաբանական խորհրդատվություն է, ինչպես նաև նրա իրավունքների և օրինական շահերի պաշտպանության նպատակով փաստաբանական օգնության կազմակերպումը:

● ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԿԱՅԱՑՈՒՄԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԿԱՐԳԸ

Հայաստանի Հանրապետությունում սոցիալական աջակցության բնագավառում լիազորություններով օժտված են լիազորված պետական մարմինը (Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը), տարածքային կառավարման պետական մարմինները, տեղական ինքնակառավարման մարմինները և սոցիալական ծառայություններ տրամադրող տարածքային մարմինները:

Պետական ծրագրերի շրջանակներում սոցիալական աջակցություն ստանալու համար հարկավոր է գրավոր դիմել բնակչության վայրի սոցիալական ծառայություններ տրամադրող տարածքային մարմին: Դիմումը ներկայացնում է այդ աջակցությունն ակնկալող անձը կամ նրա օրինական ներկայացուցիչը: Դիմումին կից ներկայացվում են սոցիալական ծառայության տվյալ տեսակի համար անհրաժեշտ փաստաթղթերը, որոնց ցանկը հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:



Սոցիալական աջակցության տրամադրումը մերժվում է՝

1) սոցիալական ծառայության տվյալ տեսակի համար օրենքով սահմանված բավարար հիմք(եր)ի բացակայության,

2) դիմողի կամ նրա օրինական ներկայացուցչի կողմից անհրաժեշտ բոլոր փաստաթղթերը չներկայացնելու,

3) սոցիալական աջակցություն ստանալու համար դիմողի կողմից կեղծ տեղեկություններ ներկայացվելու դեպքերում:

Սոցիալական աջակցություն տրամադրելու կամ այն մերժելու մասին որոշումը սոցիալական ծառայություններ տրամադրող տարածքային մարմինը կայացնում է դիմելուց հետո 15 օրվա ընթացքում, որի մասին գրավոր տեղեկացնում է դիմողին: Լրացուցիչ ուսումնասիրության անհրաժեշտության դեպքում դիմողին վերջնական պատասխան տրվում է ոչ ուշ, քան դիմելուց հետո 30 օրվա ընթացքում:

Արտակարգ իրավիճակներում, ինչպես նաև անհետաձգելի լուծում պահանջող՝ կյանքին և առողջությանը վտանգ սպառնացող, կյանքի դժվարին իրավիճակներում սոցիալական աջակցությունը սոցիալական ծառայություններ տրամադրող տարածքային մարմինների կողմից տրամադրվում է անհապաղ այդ մասին տեղեկատվություն ստանալուց հետո:

Սոցիալական ծառայություններ տրամադրող տարածքային մարմնի գործողությունը կամ անգործությունը քաղաքացին կարող է բողոքարկել սոցիալական աջակցություն տրամադրող տարածքային մարմնի ղեկավարին, լիազորած պետական մարմնին և (կամ) դատարան:

Պետական ծրագրերի շրջանակներում սոցիալական աջակցության տրամադրումը դադարեցվում է՝

1) սոցիալական աջակցություն ստանալու հիմքերի վերացման դեպքում,

2) հաձախորդի կողմից կեղծ տեղեկություններ ներկայացնելու դեպքում,

3) հաձախորդի մահվան դեպքում,


4) սոցիալական աջակցություն ստացողի սոցիալական աջակցություն ստանալուց հրաժարվելու դեպքում, բացառությամբ սոցիալական ծառայություններ ստանալուց հրաժարվելու՝ հաձախորդի իրավունքի սահմանափակումների դեպքերի:

Հաձախորդի իրավունքի սահմանափակում թույլատրվում է առանց քաղաքացու համաձայնության՝ բնակչության սոցիալական պաշտպանության հաստատություն տեղավորելու միջոցով, եթե նա իր հարազատներից ու օրինական ներկայացուցչից չի ստանում անհրաժեշտ խնամք և ուշադրություն՝

1) իր հիմնական պահանջմունքները (ինքնասպասարկման և (կամ) ակտիվ տեղաշարժվելու ունակության կորուստ) ինքնուրույն բավարարելու անկարողության,

2) օրենքով սահմանված կարգով անգործունակ ձանաչվելու դեպքերում:

Այս դեպքերում որոշումը սոցիալական ծառայություններ տրամադրող տարածքային մարմնի առաջարկությամբ կայացնում է խնամակալության և հոգաբարձության մարմինը:



Տնային պայմաններում խնամքի տրամադրումը քաղաքացուն կարող է մերժվել, եթե նա քրոնիկ ալկոհոլամոլ և (կամ) թմրամոլ է, վարակակիր է, տառապում է այնպիսի հիվանդություններով, որոնց բուժումը հնարավոր է միայն հատուկ մասնագիտացված բժշկական հաստատություններում: Այդ հիվանդությունների ցանկը հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը: Տվյալ դեպքում սոցիալական ծառայության տրամադրման մերժումը հաստատում է սոցիալական ծառայություններ տրամադրող տարածքային մարմինը համապատասխան մասնագիտացված բժշկական հաստատության եզրակացության հիման վրա:

● **ՊԵՏԱԿԱՆ Ե ՊԱՍՏՆԵՐ**

Սոցիալական աջակցության դրամական օգնության ամենատարածված ձևը պետական նպաստներն են:

«Պետական նպաստների մասին» ՀՀ օրենքը պաշտպանում է սոցիալապես անապահովների իրավունքները, կարգավորում է Հայաստանի Հանրապետությունում պետական նպաստների տրամադրման հետ կապված հարաբերությունները, սահմանում է պետական նպաստի հասկացությունը, տեսակները և տրամադրման կարգը:


Պետական նպաստ ստանալու իրավունք ունեն ՀՀ քաղաքացիները, ՀՀ-ում կացության համապատասխան կարգավիճակ ունեցող օտարերկրյա քաղաքացիները, քաղաքացիություն չունեցող անձինք, ինչպես նաև ՀՀ-ում փախստականի կարգավիճակ ունեցող անձինք: Բոլոր նպաստ ստացող անձինք կոչվում են նպաստառուներ:

Պետական նպաստը պետական բյուջեի միջոցներից պարբերաբար կամ միանվագ տրամադրվող դրամական օգնություն է:

Պետական նպաստի տեսակներն են՝

- ա) ընտանեկան նպաստը և միանվագ դրամական օգնությունը,
- բ) երեխայի խնամքի նպաստը,
- գ) երեխայի ծննդյան միանվագ նպաստը,
- դ) գոհված՝ Հայաստանի Ազգային հերոսի կամ Մարտական խաչ շքանշանով պարգևատրված անձի ընտանիքի նպաստը:

Նշված նպաստների և օգնության չափերը, ընտանիքի անապահովության սահմանային միավորը, ընտանեկան նպաստի բազային մասի և հավելման չափերը սահմանվում են Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից (ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1861-Ն որոշումը տե՛ս տեղեկատուին կից էլեկտրոնային սկավառակում): Ընտանիքի անապահովության սահմանային միավորի մեծություն է սահմանվել 30.00 միավորը:



● ԸՆՏԱՆԵԿԱՆ ՆՊԱՍՏ ԵՎ ՄԻԱՆՎԱԳ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ

Պետք է հստակ պատկերացնել նպաստի և դրամական օգնության տարբերությունը, դրանք ստանալու հիմքերը, ինչպես նաև տրամադրման կարգը:

Ընտանեկան նպաստ տրամադրվում է ընտանիքի անապահովության աստիճանը գնահատելուց և անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացնելուց հետո:

Ընտանիքի անապահովության աստիճանը գնահատվում է ընտանիքի յուրաքանչյուր անդամի եկամտի, ընտանիքի կազմի, ընտանիքի յուրաքանչյուր անդամի զբաղվածության, սոցիալական վիճակի և այլ պայմաններ բնութագրող ցուցանիշների հիման վրա:

Ընտանիքի անապահովության աստիճանը գնահատելիս Ընտանիքը միևնույն բնակության վայրում հաշվառված և (կամ) փաստացի բնակվող քաղաքացիների սոցիալական փոքր խումբն է, որի անդամները վարում են ընդհանուր տնտեսություն և ունեն ընդհանուր բյուջե, ինչպես նաև միայնակ բնակվող քաղաքացին:

Ընտանեկան նպաստ նշանակվում է այն աղքատ ընտանիքին, որի անապահովության միավորը բարձր է ընտանիքի անապահովության սահմանային միավորից (30.00 միավոր):


Ընտանիքի անապահովության գնահատման կարգը (տե՛ս կից սկավառակում, ՀՀ Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2317-Ն որոշումը ընտանիքների անապահովության գնահատման և ընտանիքների անապահովության գնահատման համակարգի տեղեկատվական բազայում ամրագրված անհատական տվյալների պաշտպանության, փոփոխությունների կատարման և Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ու սոցիալական ծառայությունների տարածքային գործակալությունների միջև անհատական տվյալների փոխանակման կարգերը հաստատելու մասին) և անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Ընտանեկան նպաստ ստանալու համար ընտանիքի չափահաս անդամներից մեկը ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառվելու նպատակով ընտանիքի մյուս չափահաս անդամների համաձայնությամբ դիմում է փաստացի բնակության վայրի սոցիալական ծառայություններ տրամադրող (այսուհետ՝ տարածքային մարմին) տարածքային մարմին:

Անհրաժեշտ է ներկայացնել հետևյալ փաստաթղթերը. դիմում-հայտարարագիր, ընտանիքի անապահովության միավորը հաշվարկելու համար ընտանիքի յուրաքանչյուր անդամի եկամտի, ընտանիքի կազմի, բնակարանային պայմանների, ընտանիքի յուրաքանչյուր անդամի զբաղվածության, սոցիալական վիճակի և այլ պայմանների մասին հավաստի և ամբողջական տեղեկությունները հավաստող փաստաթղթեր:

Այս բոլոր տվյալները հավաստող փաստաթղթերը դիմելու ամսվան հաջորդող 12-րդ ամսվա ընթացքում դիմողը կրկին ներկայացնում է տարածքային մարմին:

Փաստաթղթերի ընդունման և քննարկման ընթացակարգը





Փաստաթղթերն ընդունելուց հետո տարածքային մարմինը 30 օրվա ընթացքում որոշում է կայացնում: Ընտանեկան նպաստ նշանակելը մերժելու մասին որոշում կայացնելու դեպքում տարածքային մարմինը երեք օրվա ընթացքում այդ մասին գրավոր տեղեկացնում է դիմողին՝ նշելով մերժելու պատճառը, բողոքարկելու կարգը:

Այն դեպքում, երբ դիմում-հայտարարագրին կցվում են ոչ բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը, տարածքային մարմինը երեք օրվա ընթացքում դիմողին գրավոր տեղեկացնում է պակասող փաստաթղթերի ցանկի և դրանք սահմանված ժամկետում ներկայացնելու անհրաժեշտության մասին: Տեղեկացվելուց հետո՝ 5 աշխատանքային օրվա ընթացքում, պակասող փաստաթղթերը ներկայացնելու դեպքում դիմելու օր է համարվում ընտանեկան նպաստ նշանակելու համար դիմում-հայտարարագրին ընդունելու օրը: Պակասող փաստաթղթերն ուշ ներկայացնելու դեպքում դիմելու օր է համարվում բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացնելու օրը:

Պետք է նկատի ունենալ, որ ընտանեկան նպաստ ստանալու իրավունքը որոշելիս ընտանիքի անդամ չեն համարվում՝

- ա) ազատագրկման վայրերում գտնվող քաղաքացիները,
- բ) պարտադիր զինվորական ծառայության զորակոչված շարքային կազմի ժամկետային զինծառայողները,
- գ) ռազմաուսումնական հաստատություններում սովորող կուրսանտները,
- դ) բնակչության սոցիալական պաշտպանության հաստատություններում (մանկատուն, ծերանոց) գտնվող կամ տեղավորված քաղաքացիները:





Երեխայի ծննդյան միանվագ օգնության իրավունք ունի այն ընտանիքը, որի անդամներից մեկն ունեցել է երեխա և ունի ընտանեկան նպաստի իրավունք: Երեխայի ծննդյան միանվագ օգնության համար ընտանիքի չափահաս անդամներից մեկը դիմում է իր փաստացի բնակության վայրի տարածքային մարմին: Երեխայի ծննդյան միանվագ օգնությունը նշանակվում է ընտանիքում ծնված յուրաքանչյուր երեխայի համար:

Երեխայի ծննդյան միանվագ օգնությունը նշանակվում է, եթե ընտանիքի չափահաս անդամներից մեկը դիմել է երեխայի ծնվելու օրվանից սկսած՝ վեց ամսվա ընթացքում, և ընտանիքը դիմելու ամսվա դրությամբ ունի ընտանեկան նպաստի իրավունք:

Երեխայի՝ առաջին դասարան ընդունվելու միանվագ օգնության իրավունք ունի ընտանեկան նպաստի իրավունք ունեցող այն ընտանիքը, որի անչափահաս անդամներից մեկն ընդունվել է հանրակրթական ուսումնական հաստատության առաջին դասարան:

Երեխայի՝ առաջին դասարան ընդունվելու միանվագ օգնության համար ընտանիքի չափահաս անդամներից մեկը դիմում է իր փաստացի բնակության վայրի տարածքային մարմին:

Երեխայի՝ առաջին դասարան ընդունվելու միանվագ օգնությունը նշանակվում է ընտանիքի՝ առաջին դասարան ընդունվող յուրաքանչյուր երեխայի համար:

Երեխայի՝ առաջին դասարան ընդունվելու միանվագ օգնությունը նշանակվում է, եթե ընտանիքի չափահաս անդամներից մեկը դիմել է երեխայի՝ առաջին դասարան ընդունվելու տարվա օգոստոս, սեպտեմբեր, հոկտեմբեր ամիսների ընթացքում, և ընտանիքը դիմելու ամսվա դրությամբ ունի ընտանեկան նպաստի իրավունք:

Հուլարկավորության միանվագ օգնության իրավունք ունի այն ընտանիքը, որի կենսաթոշակառու, աշխատող կամ գործազուրկ (առնվազն մեկ տարվա ապահովագրական ստաժ ունեցող) չհամարվող անդամներից մեկը մահացել է և ունի ընտանեկան նպաստի իրավունք:


Հուլարկավորության միանվագ օգնության համար ընտանիքի չափահաս անդամներից մեկը, ընտանիքում չափահաս անդամ չլինելու դեպքում՝ անչափահաս անդամի օրինական ներկայացուցիչը, դիմում է իր փաստացի բնակության վայրի տարածքային մարմին:

Հուլարկավորության միանվագ օգնությունը նշանակվում է ընտանիքի մահացած յուրաքանչյուր անդամի համար:

Հուլարկավորության միանվագ օգնությունը նշանակվում է, եթե դիմումը ներկայացվել է մահվան օրվանից հետո՝ վեց ամսվա ընթացքում, և ընտանիքը դիմելու ամսվա դրությամբ ունի ընտանեկան նպաստի իրավունք:

Ընտանիքին կարող է տրամադրվել հրատապ օգնություն անհետաձգելի լուծում պահանջող կյանքի ռիսկին իրավիճակում:

Հրատապ օգնության իրավունք ունի ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառված ընտանեկան նպաստի իրավունք չունեցող ընտանիքը (այսինքն՝ անապահովության միավորը



ցածր է անապահովության սահմանային մեծության միավորից՝ 30.00) անհետաձգելի լուծում պահանջող կյանքի դժվարին իրավիճակում (երեխայի դպրոց հաճախելու հետ կապված ծախսերի մասնակի հատուցման նպատակով, արտակարգ իրավիճակների և կարճատև ֆինանսական խնդիրներ ունենալու) հայտնվելու դեպքում՝ սոցիալական աջակցության խորհրդի առաջարկությամբ:

Օրենսդիրը սահմանել է երեխայի ծննդյան միանվագ նպաստի իրավունքը: Երեխայի ծննդյան միանվագ նպաստի իրավունք ունի երեխայի ծնողներից մեկը կամ երեխայի որդեգրողը կամ երեխայի խնամակալը: Երեխայից հրաժարվելու դեպքում երեխայի ծնողները կորցնում են երեխայի ծննդյան միանվագ նպաստի իրավունքը:

Երեխայի ծննդյան միանվագ նպաստի համար կարող են դիմել փաստացի բնակության վայրի տարածքային մարմին երեխայի ծնողներից մեկը կամ երեխայի որդեգրողը կամ երեխայի խնամակալը՝ երեխայի ծննդյան օրվանից հետո՝ 12 ամսվա ընթացքում՝ ներկայացնելով օրենքով սահմանված փաստաթղթերը: Երեխայի ծննդյան միանվագ նպաստը նշանակվում է ծնված յուրաքանչյուր երեխայի համար:

Եթե նպաստը նշանակվել է, սակայն քաղաքացին դեռևս չի ստացել երեխայի ծննդյան միանվագ նպաստը, ապա այն ծնողին վճարվում է նպաստի նշանակման ամսին հաջորդած 12 ամիսների ընթացքում՝ ծնողի դիմելու դեպքում:

Երեխայի ծննդյան միանվագ նպաստի չափը 50 հազար դրամ է, իսկ ընտանիքում ծնված երրորդ, ինչպես նաև հաջորդ յուրաքանչյուր երեխայի համար՝ 430 հազար դրամ:

Մինչև երկու տարեկան երեխայի խնամքի նպաստ (այսուհետ՝ երեխայի խնամքի նպաստ) ստանալու իրավունք ունի Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքով սահմանված կարգով մինչև երեք տարեկան երեխայի խնամքի արձակուրդում գտնվող ծնողներից մեկը կամ միակ ծնողը կամ որդեգրողը կամ խնամակալը (այսուհետ՝ ծնող)՝ մինչև երեխայի երկու տարեկանը լրանալը:


Երեխայի խնամքի նպաստի համար ծնողը դիմում է իր փաստացի բնակության վայրի տարածքային մարմին և ներկայացնում հետևյալ փաստաթղթերը.

1) դիմում, որում դիմողը լրացնում է իր ընտանիքի բնակության վայրի (հասցեն, կացարանը), իր անձը հաստատող փաստաթղթի տվյալները, իր և երեխայի սոցիալական ապահովության քարտի կամ սոցիալական ապահովության քարտ չունենալու մասին տեղեկանքի համարը, ինչպես նաև նպաստի վճարման եղանակը (կանխիկ կամ անկանխիկ),

2) երեխայի ծննդյան վկայականի պատձենը,

3) տեղեկանք գործատուից իր՝ մինչև երեք տարեկան երեխայի խնամքի արձակուրդում գտնվելու մասին,


4) երեխայի խնամքի նպաստ ստացող ծնողին իր կրտսեր հաջորդ (այսուհետ՝ կրտսեր) երեխայի համար երեխայի խնամքի նպաստ նշանակվելու դեպքում տեղեկանք գործատուից՝ կրտսեր երեխայի ծննդյան




կապակցությամբ ծնողին տրված, ժամանակավոր անաշխատունակության թերթիկով վավերացված, ժամանակավոր անաշխատունակության ժամանակահատվածի մասին:

Այս կետերում նշված փաստաթղթերը չեն պահանջվում, եթե դրանք ներառված են համապատասխան մարմինների էլեկտրոնային տեղեկատվական բազաներում:

Երեխայի խնամքի նպաստը նշանակվում է իրավունքը ծագելու ամսվան հաջորդող ամսվա մեկից, եթե ծնողը դիմել է ոչ ուշ, քան իրավունքը ծագելուց հետո՝ տասներկու ամսվա ընթացքում: Երեխայի խնամքի նպաստը նշանակվում է մինչև երկու տարեկան յուրաքանչյուր երեխայի համար:



Մինչև 2 տարեկան երեխայի խնամքի նպաստի չափը 18 հազ. դրամ է:



Զոհված՝ Հայաստանի ազգային հերոսի կամ Մարտական խաչ շքանշանով պարգևատրված անձի ընտանիքի նպաստի իրավունք ունեն նրա ընտանիքի հետևյալ անդամները.


1) զոհված՝ Հայաստանի ազգային հերոսի կամ Մարտական խաչ շքանշանով պարգևատրված անձի այրին և նրա ծնողները՝ ցմահ,

2) նրա խնամքի տակ գտնված 18 տարին չլրացած կամ մինչև 18 տարին լրանալը հաշմանդամ ձանաչված զավակները, եղբայրները, քույրերը և թոռները, ընդ որում՝ եղբայրները, քույրերն ու թոռները, եթե չունեն աշխատունակ ծնողներ և չեն աշխատում՝ մինչև 18 տարին կամ հաշմանդամության համար սահմանված ժամկետը լրանալը,

3) բարձրագույն և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում առկա (ցերեկային) ուսուցմամբ սովորողները՝ մինչև նշված ուսումնական հաստատություններն ավարտելը, բայց ոչ ավելի, քան մինչև նրանց 23 տարին լրանալը:

ԿԻՆԸ ԵՎ ԺԱՌԱՆԳԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ





● **ԺԱՌԱՆ ԳՈՒԹՅԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ, ԺԱՌԱՆ ԳՆԵՐ**

Ժառանգությունը մահացած քաղաքացու իրավունքների և պարտականությունների՝ օրենքով սահմանված կարգով այլ անձանց փոխանցումն է: Այլ կերպ ասած՝ ժառանգության իրավունքը՝ յուրաքանչյուր քաղաքացու իրավունքն է օրենքով սահմանված կարգով ստանալու ժառանգություն, ինչպես նաև իր կամքով որոշելու, թե ում թողնել իրեն սեփականության իրավունքով պատկանող գույքը մահից հետո: Այդ իրավունքը սահմանված է և պաշտպանվում է ՀՀ Սահմանադրությամբ:

Ժառանգներ կարող են լինել ժառանգության բացման օրը կենդանի, ինչպես նաև ժառանգատուի կենդանության ժամանակ սաղմնավորված և ժառանգությունը բացվելուց հետո կենդանի ծնված քաղաքացիները:

● **ԺԱՌԱՆ ԳՈՒԹՅԱՆ ՀԻՄՔԵՐԸ, ԸՍՏ ՕՐԵՆՔԻ ԺԱՌԱՆ ԳՈՒԹՅՈՒՆ**

Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը սահմանում է ժառանգության երկու հիմք՝ ըստ կտակի և ըստ օրենքի:

Հարկ է նշել, որ ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը սահմանել է ժառանգների հերթականություն այն դեպքերի համար, երբ կտակ չկա, կամ եթե կա, ապա որոշված չէ ողջ ժառանգության ձակատագիրը, քանի որ կտակի առկայության դեպքում օրենքով ժառանգների հերթականությանը դիմելն ավելորդ կլիներ, որովհետև ժառանգատուն ինքն է որոշում, թե ում և որքան ժառանգություն տրամադրի:


Առաջին հերթի ժառանգներն են հանդիսանում ժառանգատուի երեխաները, ամուսինը և ծնողները: Ժառանգատուի թոռները ժառանգում են ներկայացման իրավունքով: Այսինքն՝ թոռները ժառանգում են, եթե ժառանգության բացման պահին նրանց ծնողները ողջ չեն:

Երեխաները ժառանգում են ծնողների մահից հետո, անկախ նրանից՝ ծնվել են օրինական ամուսնությունից, թե արտամուսնական կապերի հետևանքով, նույնիսկ եթե նրանց ծնողների ամուսնությունն անվավեր է ծանաչվել: Արտամուսնական կապերի հետևանքով ծնված երեխաները միշտ էլ ժառանգում են իրենց մոր մահից հետո: Հոր մահից հետո նրանք ժառանգում են այն դեպքում և պայմանով, որ հայրությունն ունենա իրավաբանական նշանակություն, այսինքն, եթե հայրությունը հաստատված լինի օրենքով սահմանված կարգով (տե՛ս «Երեխայի սերման փաստի հաստատումը» վերնագրի տակ):

Երեխան, որը ծնվել է արտամուսնական կապերի հետևանքով, հոր մահից հետո կստանա ժառանգություն այնպես, ինչպես օրինական ամուսնությունից ծնված երեխան:

Ըստ օրենքի՝ ժառանգության դեպքում որդեգրվածները և նրանց սերունդները որդեգրողի և նրա ազգականների նկատմամբ իրավունքներ և պարտականություններ ունեն, ինչպես արյունակիցները:

Խորթ երեխաները խորթ մոր կամ խորթ հոր մահից հետո ժառանգ չեն համարվում: Խորթ դուստրը և խորթ որդին ժառանգում են խորթ մո-



րից և խորթ հորից հետո, եթե վերջիններս նրանց որդեգրել են: Այստեղ հարկ է պարզաբանել, թե ովքեր են խորթ երեխաները: Խորթ երեխան ամուսնու՝ նախկին ամուսնությունից ունեցած զավակն է: Խորթ ծնողը խորթ զավակի հետ արյունակցական կապի մեջ չի գտնվում:

Ինչպես արդեն նշվեց, քաղաքացու մահից հետո առաջին հերթի ժառանգ է համարվում նաև նրա ամուսինը:

Կարևոր է իմանալ, որ ամուսնու իրավունքով ժառանգել կարող է նա, ով ժառանգության բացման պահին ժառանգատուի հետ գտնվել է օրինական ամուսնության մեջ, այսինքն՝ ամուսնությունը գրանցված է քաղաքացիական կացության ակտերի գրանցման (ՔԿԱԳ) պետական մարմիններում:


Օրինական ամուսնության մեջ չգտնվող անձինք միմյանց նկատմամբ ժառանգության իրավունք չունեն: Օրինակ, եթե կինն ամուսնու հետ գրանցված ամուսնության մեջ չի գտնվում, ապա նրա մահվան դեպքում չի կարող հավակնել ժառանգության:


Մեկ այլ օրինակ. եթե ամուսինները առանց ամուսնությունը լուծելու ապրում են առանձին, ապա նրանցից մեկի մահվան դեպքում ողջ մնացած ամուսնուն օրենքը չի զրկում ժառանգության իրավունքից:

Հանգուցյալի հետ փաստական ամուսնական հարաբերությունների մեջ գտնվող անձը, անկախ այդ կապերի տևողությունից, իրավունք չունի նրա զույրը ժառանգելու ամուսնու իրավունքով:

Ժառանգման իրավունք չի առաջացնում նաև դատարանի կողմից անվավեր ծանաչված ամուսնության դեպքում:

Երկրորդ հերթի ժառանգներն են ժառանգատուի հարազատ, համահայր կամ համամայր եղբայրները և քույրերը: Ժառանգատուի եղբայրների և քույրերի երեխաները ժառանգում են ներկայացման իրավունքով:





Երրորդ հերթի ժառանգներն են ժառանգատուի ինչպես հայրական, այնպես էլ մայրական կողմի պապը և տատը:

Չորրորդ հերթի ժառանգներն են ժառանգատուի ծնողների եղբայրները և քույրերը (հորեղբայրները, հորաքույրերը, քեռիները, մորաքույրերը): Ժառանգատուի հորեղբայրների և հորաքույրերի ու քեռիների և մորաքույրերի երեխաները ժառանգում են ներկայացման իրավունքով:

Ի դեպ, նույն կանոններով է լուծվում երրորդ և չորրորդ հերթի ժառանգների ժառանգման հրավիրման հարցը:

Ըստ օրենքի ժառանգների թվին են պատկանում այն անաշխատունակ անձինք, ովքեր մինչև ժառանգատուի մահն առնվազն մեկ տարի գտնվել են նրա խնամքի ներքո:


Ըստ օրենքի այլ ժառանգների առկայության դեպքում նրանք ժառանգում են այն հերթի ժառանգների հետ միասին, որը ժառանգության է հրավիրվում:

● ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆ ԸՍՏ ԿՏԱԿԻ, ԿՏԱԿԻ ԶԵՎԸ, ԿՏԱԿԻ ՆՈՏԱՐԱԿԱՆ ՎԱՎԵՐԱՑՈՒՄԸ

Կտակ է համարվում քաղաքացու մահվան դեպքում նրան պատկանող գույքի տնօրինման վերաբերյալ նրա կամքի արտահայտությունը: Կտակը կազմում է անձը՝ իր կենդանության օրոք, այն մասին, թե իր գույքը ինչպես և ում կողմից պետք է տնօրինվի իր մահից հետո: Եթե կտակ չկա, ժառանգությունն ընդունվում է ըստ օրենքի: Եթե կա կտակ, սակայն դրանում որոշված չէ ամբողջ ժառանգության ձակատագիրը, ապա գույքի մնացած մասի ժառանգությունը կկատարվի օրենքով սահմանված կարգով և անձանց շրջանակներում: Օրինակ՝ կտակով լուծվել է անշարժ գույքի ժառանգության հարցը, իսկ շարժական գույքի ժառանգության հարցը կամ բանկում ունեցած ավանդի՝ ոչ, ապա դրանք կընդունվեն ըստ օրենքի ժառանգության իրավունքի:

Քաղաքացին իրավունք ունի իր հայեցողությամբ ցանկացած գույք կտակելու ցանկացած անձի, ցանկացած ձևով որոշելու ժառանգությունում ժառանգների բաժինները, գրկել ժառանգությունից ըստ օրենքի ժառանգներին, կտակում ներառել ժառանգության մասին կարգադրություններ, վերացնել, փոփոխել կամ լրացնել կազմված կտակը: Ի տարբերություն ըստ օրենքի ժառանգության, ըստ կտակի ժառանգության դեպքում ժառանգ (ժառանգներ) կարող է լինել ոչ միայն ժառանգատուի արյունակից ազգականը (ազգականները), այլև կարող է լինել ցանկացած անձ, այդ թվում ժառանգության բացման օրը գոյություն ունեցող ցանկացած իրավաբանական անձ, Հայաստանի Հանրապետությունը և համայնքները, ինչպես նաև օտարերկրյա պետություններն ու միջազգային կազմակերպությունները:

Կտակը կատարելու համար պարտադիր պայման է հանդիսանում անձի գործունակությունը, կտակ կարող է անել գործունակ քաղաքա-



ցին: Մյուս պարտադիր պայմանը այն է, որ կտակը պետք է արվի անձամբ: Կտակը կարող է պարունակել միայն մեկ անձի կարգադրություններ:

Կտակի ազատությունը սահմանափակվում է միայն ժառանգության պարտադիր բաժնի կանոններով:

Կտակը պետք է կազմվի գրավոր՝ նշելով այն կազմելու վայրը և ժամանակը, անձամբ ստորագրվի կտակարարի կողմից և վավերացվի նոտարի կողմից: Եթե կտակարարը ֆիզիկական թերությունների, հիվանդության կամ անգրագիտության պատճառով չի կարող անձամբ ստորագրել կտակը, ապա նրա խնդրանքով, նոտարի կամ օրենքին համապատասխան կտակը վավերացնող այլ անձի ներկայությամբ (տե՛ս «Նոտարի վավերացրած կտակներին հավասարեցված կտակները» վերնագրում), կտակը կարող է ստորագրվել այլ քաղաքացու կողմից՝ կտակում նշելով այն պատճառները, թե ինչու կտակարարը չի կարողացել անձամբ ստորագրել կտակը: Կտակում պետք է նշվեն այդ քաղաքացու անունը և նրա բնակության վայրը:

Կտակը վավերացնում է նոտարը «Նոտարիատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով: Եթե կտակարարն անձամբ չի կարող գրել կտակը, այն կարող է կտակարարի բառերով գրի առնել նոտարը: Մինչև կտակը ստորագրելը, պետք է կտակարարն ամբողջությամբ կարդա նոտարի ներկայությամբ:

Եթե կտակարարը ֆիզիկական թերությունների, հիվանդության կամ անգրագիտության պատճառով ի վիճակի չէ անձամբ կարդալ կտակը, ապա նոտարը դրա տեքստը հրապարակում է վկայի ներկայությամբ՝ նշում կատարելով կտակում, թե ինչու կտակարարը չի կարողացել անձամբ կարդալ կտակը:


Կտակը կազմելիս և նոտարի կողմից վավերացվելիս կտակարարի ցանկությամբ կարող է ներկա գտնվել վկա: Եթե կտակարարն ի վիճակի չէ անձամբ կարդալու կտակը, վկայի ներկայությունը պարտադիր է:

Եթե կտակը կազմվում և վավերացվում է վկայի ներկայությամբ, ապա այն պետք է ստորագրի վկան: Կտակում պետք է նշվեն վկայի անունն ու նրա բնակության վայրը:

● **ՈՎՔԵՐ ԿԱՐՈՂ ԵՆ ՀԱՆ ԴԵՍ ԳԱՆ ԿՏԱԿ ԿԱԶՄԵԼԻՍ ՈՐՊԵՍ ՎԿԱ**

Ոչ բոլոր անձինք կարող են որպես վկա հանդես գալ: Մասնավորապես, կտակը կազմելիս, ստորագրելիս կամ վավերացնելիս վկա չեն կարող լինել, ինչպես նաև կտակարարի փոխարեն կտակը չեն կարող ստորագրել՝

- 1) նոտարը կամ կտակը վավերացնող այլ անձը,
- 2) այն անձը, ում օգտին կազմվել է կտակը կամ արվել կտակային հանձնարարություն, այդ անձի ամուսինը, երեխաները, ծնողները,
- 3) լրիվ գործունակությամբ չօժտված քաղաքացիները,
- 4) անգրագետները և կտակը կարդալ չկարողացող անձինք,



- 5) այն անձինք, ովքեր բավարար չափով չեն տիրապետում կազմված կտակի լեզվին, բացառությամբ այն դեպքի, երբ կազմվում է փակ կտակ,
- 6) կեղծ ցուցմունք տալու համար դատվածություն ունեցող անձինք:

● **ԺԱՌԱՆ ԳՆԵՐԻ ԲԱԺԻՆՆԵՐԸ ԿՏԱԿՎԱԾ ԳՈՒՅՔՈՒՄ, ՊԱՅՄԱՆՈՎ ԿՏԱԿ, ԵՆԹԱԺԱՌԱՆ ԳՆԵՐ ՆՇԱՆԱԿԵԼԸ, ԺԱՌԱՆ ԳՈՒԹՅՈՒՆՆԻՑ ԶՐԿԵԼԸ**

Քաղաքացին իրավունք ունի իր ամբողջ գույքը կամ դրա մասը ժառանգել ինչպես ըստ օրենքի ժառանգներին, այնպես էլ մեկ կամ մի քանի այլ անձանց:

Երկու կամ մի քանի ժառանգներին կտակված գույքը համարվում է ժառանգներին հավասար բաժիններով կտակված, եթե կտակում նշված չեն բաժինները և դրանում ցուցում չկա ժառանգության զանգվածի մեջ մոտնող գույքը կամ իրավունքը ժառանգներից որևէ մեկին պատկանելու մասին:

Հնարավոր է, որ կտակում որոշված լինի միայն մեկ ժառանգի բաժինը, իսկ մյուսներինը՝ ոչ: Օրինակ՝ կտակում որպես ժառանգներ նշված են կինը և երկու երեխաները, սակայն կտակում նաև նշված է, որ բնակելի տունը ժառանգատուն կտակում է կնոջը, իսկ երկու երեխաների բաժինների մասին խոսք չկա: Այդ դեպքում, բացառությամբ տան, երեխաները հավասարապես ստանում են ժառանգատուի զանգվածի մեջ մտնող մնացած գույքը:

Հարկ է նշել, որ կտակարարն իրավունք ունի ժառանգություն ստանալը պայմանավորել ժառանգի վարքագծի բնույթի վերաբերյալ որոշակի օրինաչափ պայմանով:


Կտակարարը կարող է նաև կտակում նշել այլ ժառանգի (ենթաժառանգի), այն դեպքի համար, եթե նրա նշանակված ժառանգը մահանա մինչև ժառանգությունը բացվելը, հրաժարվի ժառանգությունից, որպես անարժան ժառանգ մեկուսացվի ժառանգությունից կամ չկատարի կտակարարի օրինաչափ պայմանները:

Ինչպես արդեն նշվել էր վերևում, կտակարարի գույքի չկտակված մասը բաշխվում է ըստ օրենքի ժառանգների միջև:

Կտակարարն իրավունք ունի նաև առանց պատճառների բացառության ժառանգությունից գրկել ըստ օրենքի ժառանգներից մեկին, մի քանիսին կամ բոլորին:

● **ԿՏԱԿԸ ՎԵՐԱՑՆԵԼԸ, ՓՈՓՈԽԵԼԸ ԵՎ ԼՐԱՑՆԵԼԸ**

Կտակարարն իրավունք ունի կտակ կազմելուց հետո ցանկացած ժամանակ վերացնել, փոփոխել կամ լրացնել իր կտակը, ընդ որում՝



նա պարտավոր չէ նշել կտակը վերացնելու, փոփոխելու կամ լրացնելու պատճառները: Կտակարարն իրավունք ունի նոր կտակի միջոցով՝

- 1) ամբողջությամբ վերացնելու նախկին կտակը,
- 2) փոփոխելու նախկին կտակը դրանում պարունակվող առանձին կտակային կարգադրությունները վերացնելու, փոփոխելու կամ լրացնելու կամ կտակը նոր կարգադրություններով լրացնելու միջոցով:

Ավելի ուշ արված և նախորդ կտակի կամ դրա առանձին կարգադրությունները վերացնելու մասին ուղղակի նշումներ չպարունակող կտակը նախկին կտակը վերացնում է իրեն հակասող մասով:


● ՓԱԿ ԿՏԱԿ

«Քաղաքացիական օրենսգիրքը սահմանում է, որ կտակարարի ցանկությամբ նոտարը կտակը կարող է վավերացնել առանց դրա բովանդակության հետ ծանոթանալու (փակ կտակ): Փակ կտակը պետք է գրի և ստորագրի անձամբ կտակարարը: Փակ կտակը փակ (ստանձված) ծրարով կտակարարը հանձնում է նոտարին՝ երկու վկայի ներկայությամբ, որոնք ծրարի վրա դնում են իրենց ստորագրությունները: Վկաների ստորագրած ծրարը նոտարը նրանց ներկայությամբ տեղադրում է մեկ այլ ծրարում, փակում (ստանձում) է այն և վրան կատարում վավերացնող մակագրություն: Վավերացնող մակագրությունը պետք է տեղեկություններ պարունակի կտակարարի, ումից նոտարը ստացել է փակ կտակը, փակ կտակի ստացման վայրի, տարվա, ամսվա, ամսաթվի և յուրաքանչյուր վկայի անվան ու նրա բնակության վայրի մասին:

● ՆՈՏԱՐԻ ՎԱՎԵՐԱՅՐԱԾ ԿՏԱԿՆԵՐԻՆ ՀԱՎԱՍԱՐԵՑՎԱԾ ԿՏԱԿՆԵՐԸ

«Քաղաքացիական օրենսգրքի (հոդված 1207) համաձայն՝ նոտարական կարգով վավերացված կտակներին հավասարեցվում են՝

- 1) հիվանդանոցներում, հոսպիտալներում, այլ հիվանդանոցային բուժական հաստատություններում բուժվող կամ ծերերի և հաշմանդամների տներում ապրող քաղաքացիների կտակները՝ վավերացված այդ հիվանդանոցների, հոսպիտալների և այլ բուժական հաստատությունների գլխավոր բժիշկների, բուժական մասով նրանց տեղակալների կամ հերթապահ բժիշկների, ինչպես նաև հոսպիտալների պետերի, ծերերի և հաշմանդամների տների տնօրենների կամ գլխավոր բժիշկների կողմից,
- 2) զինծառայողների, իսկ զինվորական մասերի տեղաբաշխման կետերում, որտեղ չկան նոտարներ, նաև այդ զինվորական մասերում աշխատող քաղաքացիական անձանց, նրանց ընտանիքի անդամների և զինծառայողների ընտանիքի անդամների կտակները՝ վավերացված զինվորական մասերի հրամանատարների կողմից,
- 3) հեռավոր այն բնակավայրերում, որտեղ չկա նոտար, ապրող անձանց կտակները՝ վավերացված համայնքի ղեկավարի կողմից,



- 4) երկրաբանական կամ այլ նմանատիպ արշավախմբերում գտնվող քաղաքացիների կտակները՝ վավերացված այդ արշավախմբերի ղեկավարների կողմից,
- 5) Հայաստանի Հանրապետության դրոշի ներքո նավարկող նավերի վրա գտնվող քաղաքացիների կտակները՝ վավերացված այդ նավերի նավապետների կողմից,
- 6) ազատագրկման վայրերում գտնվող անձանց կտակները՝ վավերացված ազատագրկման վայրերի պետերի կողմից:

Այն դեպքերում, երբ նոտարական գործողություններ կատարելն օրենքով վերապահված է Հայաստանի Հանրապետության հյուպատոսական հաստատությունների պաշտոնատար անձանց, նոտարի փոխարեն կտակը վավերացնում է համապատասխան պաշտոնատար անձը՝ կտակի ձևի և դրա նոտարական վավերացման կարգի մասին ՀՀ քաղաքացիական օրենսգրքի կանոնների պահպանմամբ:

● ԿՏԱԿԻ ԱՆՎԱՎԵՐՈՒԹՅՈՒՆԸ


Կտակը կարող է դատարանով անվավեր ձանաչվել այն անձի հայցով, ում իրավունքները կամ շահերը խախտվել են այդ կտակով: Կտակն անվավեր է ձանաչվում կտակի ձևի մասին կանոնները և գործարքների անվավերության մասին Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի այլ դրույթները խախտելու հետևանքով: Օրինակ, եթե կտակը կազմվել է գրավոր ձևով, բայց տնային պայմաններում և առանց նոտարական հաստատման, այն անվավեր կհամարվի: Կտակն անվավեր կձանաչվի նաև այն դեպքում, երբ այն կազմված է անգործունակ քաղաքացու կողմից:

Կտակում առկա վրիպակները և այն կազմելու, ստորագրելու կամ վավերացնելու կարգի այլ աննշան խախտումներ, եթե ապացուցված է, որ դրանք չեն կարող ազդել կտակարարի կամքի արտահայտության ըմբռնման վրա, հիմք չեն կտակն անվավեր ձանաչելու համար:

Կտակն անվավեր ձանաչելը դրանում նշված անձանց չի զրկում որպես ժառանգներ կամ շահառուներ ըստ օրենքի կամ այլ վավեր կտակի հիման վրա ժառանգության իրավունքից:
Կտակը չի կարող վիճարկվել մինչև ժառանգությունը բացվելը:

● ԿՏԱԿԸ ԿԱՏԱՐԵԼԸ: ԿՏԱԿԱԿԱՏԱՐԸ

Կտակարարը կարող է կտակ կատարելը հանձնարարել կտակում նշված անձին՝ կտակակատարին: Այդ անձի՝ որպես կտակակատար հանդես գալու համաձայնությունը պետք է արտահայտված լինի կտակում արված նրա անձնական մակագրության կամ կտակին կից հայտարարության մեջ:



Ժառանգներն իրենց համաձայնությամբ կարող են կտակի կատարումը հանձնարարել իրենցից մեկին կամ այլ անձի: Նման համաձայնության բացակայության դեպքում ժառանգներից մեկի կամ մի քանիսի պահանջով կտակակատար նշանակում է դատարանը:

Կտակակատարն իրավունք ունի ցանկացած ժամանակ հրաժարվելու իր պարտականությունների կատարումից՝ այդ մասին նախապես տեղեկացնելով ըստ կտակի ժառանգներին: Ժառանգների դիմումի հիման վրա, դատարանի վճռով, կտակակատարը կարող է ազատվել իր պարտականությունների կատարումից:

Կտակակատարը պարտավոր է միջոցներ ձեռնարկել ժառանգության պահպանման և կառավարման համար, բոլոր ժառանգներին և շահառուներին տեղեկացնել ժառանգության բացման ու նրանց օգտին կտակային հանձնարարությունների մասին, ստանալ ժառանգատուին հասանելիք գումարները և այլ գույքը, մարել ժառանգման հետ կապված պարտքերը, ապահովել ժառանգների կողմից իրենց հասանելիք գույքի ստացումը ժառանգատուի կամքին և օրենքին համապատասխան, կատարել կտակային հանձնարարությունները կամ ըստ կտակի ժառանգներից պահանջել կտակային հանձնարարության կատարում:



Կտակարարն իրավունք ունի իր անունից վարելու ժառանգությունը պահպանելու, կառավարելու ու կտակը կատարելու հետ կապված դատական և այլ գործեր:

● ԿՏԱԿԱՅԻՆ ՀԱՆՁՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿՏԱԿԱՅԻՆ ՀԱՆՁՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼԸ

Կտակարարն իրավունք ունի ըստ կտակի մեկ կամ մի քանի ժառանգների հանձնարարել ժառանգության հաշվին կատարելու որևէ պարտավորություն (կտակային հանձնարարություն) հոգուտ մեկ կամ մի քանի անձանց (շահառուների), որոնք իրավունք ունեն պահանջելու կատարել այդ պարտավորությունը:

Կտակարարը կարող է նման պարտականություն դնել կտակակատարի վրա՝ գույքի մի մասն առանձնացնելով կտակային հանձնարարության կատարման համար:

Կտակային հանձնարարությունը պետք է սահմանվի կտակում: Հահառուներ կարող են լինել ինչպես ըստ օրենքի ժառանգները, այնպես էլ այլ անձինք: Հահառուի իրավունքն անօտարելի է և չի անցնում այլ անձանց: Կտակում կարող է շահառուին նշանակվել ենթաշահառու:




Կտակարարն իրավունք ունի այն ժառանգի վրա, որին անցնում է բնակելի տունը (բնակարանը), պարտավորություն դնել, որպեսզի նա տունը կամ դրա որոշակի մասը տրամադրի այլ անձի (անձանց)՝ ցմահ օգտագործման: Բնակելի տան (բնակարանի) նկատմամբ սեփականության իրավունքը փոխանցվելու դեպքում դրա նկատմամբ ցմահ օգտագործման իրավունքը պահպանում է իր ուժը:

Բնակելի տան (բնակարանի) ցմահ օգտագործման իրավունքն անօտարելի ու անփոխանցելի է և չի անցնում շահառուի ժառանգներին:

Ժառանգը, ում վրա կտակարարը դրել է կտակային հանձնարարության կատարումը, պետք է այն կատարի իրեն անցած ժառանգական գույքի արժեքի սահմաններում:

Այն ժառանգի մահվան դեպքում, ում վրա դրված է կտակային հանձնարարության կատարումը կամ նրա կողմից ժառանգությունը չընդունելու դեպքում կտակային հանձնարարությունը կատարում են նրա բաժինն ստացած մյուս ժառանգները:

Կտակային հանձնարարությունը կատարելու պահանջով դատարան ղիմելու իրավունք ունեն կտակակատարը:



● **ԿՏԱԿԱՅԻՆ ՀԱՆՁՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԻՑ ՀՐԱԺԱՐՎԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԸ**

Հահառուն իրավունք ունի հրաժարվելու կտակային հանձնարարությունից: Չի թույլատրվում հրաժարվել կտակային հանձնարարությունից վերապահումներով կամ պայմանով մասնակիորեն, ինչպես նաև դրանից հրաժարվել հոգուտ երրորդ անձի: Այն դեպքում, երբ շահառուն միաժամանակ ժառանգ է, կտակային հանձնարարությունից հրաժարվելու նրա իրավունքը կախված չէ ժառանգությունն ընդունելու կամ դրանից հրաժարվելու նրա իրավունքից: Եթե շահառուն հրաժարվել է կտակային հանձնարարությունից, ապա ժառանգը, որը պարտավոր է կատարել կտակային հանձնարարությունը, ազատվում է այն կատարելու պարտականությունից:

● **ԺԱՌԱՆ ԳՈՒԹՅԱՆ ՊԱՐՏԱԴԻՐ ԲԱԺԵԻ ԻՐԱՎՈՒՆՔ**

Ինչպես արդեն նշվել է, կտակի առկայության պայմաններում ժառանգատուին պատկանող գույքը ստանում են այն անձինք, որոնք նշված են կտակում, և օրենքով նախատեսված հերթականությունը այս դեպքում կարևոր չէ: Սակայն այստեղ կա մի բացառություն: Նույնիսկ կտակի առկայության պայմաններում, երբ կտակում հստակ նշված են ժառանգները, բոլոր դեպքերում որոշակի բաժին ժառանգելու իրավունք ունեն`


- ժառանգատուի անչափահաս երեխաները,
- հաշմանդամ կամ անգործունակ ձանաչված կամ 60 տարեկան դարձած ժառանգատուի երեխաները, ամուսինը և ծնողները:

Այլ կերպ ասած` ժառանգության պարտադիր բաժին է համարվում ժառանգի իրավունքը, անկախ կտակի բովանդակությունից, ժառանգելու այն բաժնի առնվազն կեսը, որը նրան կհասներ ըստ օրենքի ժառանգելու դեպքում:

Ընդ որում պարտադիր բաժնի չափը որոշելիս հաշվի է առնվում այն ամենը, ինչ նման բաժնի իրավունք ունեցող ժառանգը որևէ հիմքով ստանում է ժառանգությունից` ներառյալ նման ժառանգի օգտին սահմանված կտակային հանձնարարության արժեքը:

● **ԺԱՌԱՆ ԳՈՒԹՅՈՒՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ**

«Քաղաքացիական օրենսգրքի համաձայն` մինչև ժառանգության բացումը մահացած` ըստ օրենքի ժառանգի բաժինն անցնում է նրա երեխաներին, որն անվանվում է ներկայացման իրավունքով ժառանգություն և նրանց միջև բաշխվում է հավասարապես: Խոսքը վերաբերում է ժառանգատուի թոռներին, նրա քույրերի և եղբայրների երեխաներին, ինչպես նաև ժառանգատուի հորաքույրերի, հորեղբայրների, մորաքույրերի, մորեղբայրների երեխաներին: Այդ անձինք ժառանգում են ներկայացման իրավունքով, այսինքն` եթե ժառանգության բացման



պահին նրանց ծնողները ողջ չեն, նրանց փոխարեն հանդես են գալիս երեխաները:

Ներկայացման իրավունքով ժառանգողների իրավունքը պայմանավորված է նրանց ծնողների առկայությամբ: Եթե ժառանգատուն մահանում է և ժառանգության բացման պահին ողջ են լինում նրա զավակները, ապա ներկայացման իրավունքով ժառանգելու իրավունք ունեցող թոռների ժառանգման իրավունքի մասին խոսք լինել չի կարող:

Օրենսդիրը սահմանել է մի հանգամանք ևս. ներկայացման իրավունքով չեն կարող ժառանգել ժառանգությունից մեկուսացված կամ ժառանգատուի կողմից ժառանգությունից զրկված՝ ըստ օրենքի ժառանգների երեխաները: Ներկայացման իրավունքով ժառանգում տեղի է ունենում միայն ըստ օրենքի ժառանգման դեպքում և չի կիրառվում ըստ կտակի ժառանգման դեպքում:

● ԱՆԱՐԺԱՆ ԺԱՌԱՆ ԳՆԵՐԻՆ ԺԱՌԱՆ ԳՈՒԹՅՈՒՆՆԻՑ ՄԵԿՈՒՍԱՑՆԵԼԸ

Ըստ կտակի և ըստ օրենքի ժառանգությունից մեկուսացվում են այն անձինք, ովքեր դիտավորյալ խոչընդոտել են ժառանգատուի վերջին կամքի իրականացմանը, դիտավորյալ կյանքից զրկել են ժառանգատուին կամ հնարավոր ժառանգներից որևէ մեկին կամ մահափորձ են կատարել նրանց կյանքի նկատմամբ: Բացառություն են կազմում այն անձինք, որոնց նկատմամբ ժառանգատուն կտակը կազմել է մահափորձ կատարելուց հետո:


Ըստ օրենքի ժառանգության դեպքում ժառանգությունից մեկուսացվում են ծնողական իրավունքներից զրկված ծնողները, որոնց ծնողական իրավունքները չեն վերականգնվել ժառանգությունը բացվելու ժամանակ:

Անարժան ժառանգներին ժառանգությունից մեկուսացնելու համար հիմք են դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճիռը և (կամ) վճիռը:

Անարժան ժառանգներին ժառանգությունից մեկուսացնելու կանոնները տարածվում են ժառանգության պարտադիր բաժնի իրավունք ունեցող ժառանգների վրա:

● ԱՄՈՒՍՆՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԺԱՌԱՆ ԳՈՒԹՅԱՆ ԴԵՊՔՈՒՄ

Ժառանգատուի ամուսնուն պատկանող ժառանգության իրավունքը չի վերաբերում գույքի այն մասին, որը ձեռք է բերվել համատեղ ամուսնության ընթացքում: Համատեղ ձեռք բերված գույքը ամուսինների համատեղ սեփականությունն է: Մահացած ամուսնու բաժինն այդ գույքում որոշվում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 201-րդ հոդվածին համապատասխան և մտնում է ժառանգության զանգվածի մեջ:



Օրինակ՝ համատեղ ամուսնության ընթացքում ձեռք բերված գույքի 1/2-ը պատկանում է ամուսնուն, իսկ մյուս կեսը՝ կնոջը: Ամուսնու մահվան դեպքում կինը ժառանգում է ամուսնու 1/2 բաժնեմասից:

● **ՈՐԴԵԳՐՎԱԾՆԵՐԻ ԵՎ ՈՐԴԵԳՐՈՂՆԵՐԻ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ**

Ըստ օրենքի ժառանգության դեպքում որդեգրվածները և նրանց սերունդները որդեգրողի և նրա ազգականների նկատմամբ իրավունքների և պարտականությունների ողջ ծավալով հավասարվում են ծագումով ազգականներին:

Որդեգրողի մահից հետո որդեգրվածները նրա հարազատ զավակների հետ հավասարապես համարվում են առաջին հերթի ժառանգներ:


Միաժամանակ որդեգրվածներն իրենց հարազատ ծնողների և իրենց ազգականների նկատմամբ կորցնում են անձնական և գույքային իրավունքները, այդ թվում՝ նրանց մահից հետո նրանց գույքը ժառանգելու իրավունքները, և ազատվում են պարտականություններից:

● **ՍԱՂՄՆԱՎՈՐՎԱԾ, ՍԱԿԱՅՆ ԴԵՌ ԶԾՆՎԱԾ ԿԱՄ ԱՆՉԱՓԱՔԱՍ ԺԱՌԱՆԳԻ ՀԱՆՔԵՐԻ ԴԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ ԲԱԺԱՆԵԼԻՍ**

Սաղմնավորված, սակայն դեռ չծնված ժառանգի առկայության դեպքում ժառանգության բաժանումը կարող է կատարվել միայն նրա ծնվելուց հետո: Անչափահասների շահերի պաշտպանության նպատակով ժառանգության բաժանման վերաբերյալ համաձայնությունը կազմելուն կամ ժառանգությունը բաժանելու վերաբերյալ գործի դատաքննությանը պետք է մասնակցի խնամակալության և հոգաբարձության մարմնի ներկայացուցիչը:

● **ԱՆԺԱՌԱՆԳ ԳՈՒՅՔԻ ՏՆՕՐԻՆՈՒՄԸ**

Եթե չկան ո՛չ ըստ կտակի և ո՛չ էլ ըստ օրենքի ժառանգներ, կամ նրանք հրաժարվել կամ մեկուսացվել են ժառանգությունից, ապա ժառանգվող գույքը ձանաչվում է անժառանգ: Անժառանգ գույքն անցնում է ժառանգության բացման վայրի համայնքի սեփականությանը:



● **ԺԱՌԱՆ ԳՈՒԹՅՈՒՆՆ ԸՆ ԴՈՒՆԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՓՈԽԱՆՑԵԼԸ (ԺԱՌԱՆ ԳՈՒԹՅԱՆ ՏՐԱՆՍՄԻՍԻԱ)**

Եթե ըստ կտակի կամ ըստ օրենքի ժառանգության հրավիրված ժառանգը մահանում է ժառանգության բացումից հետո, չհասցնելով այն ընդունել, ապա նրան հասանելիք ժառանգությունն ընդունելու իրավունքն անցնում է նրա ժառանգներին:

Մահացած ժառանգի ժառանգությունն ընդունելու իրավունքը նրա ժառանգները կարող են իրականացնել ընդհանուր հիմունքներով՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 1225–1228–րդ հոդվածներին համապատասխան (տե՛ս կից սկզբվառակում):

Օրինակ, եթե մահացել է մայրը, իսկ վերջինիս ժառանգությունը պետք է ընդուներ նրա դուստրը (կամ որդին), սակայն երեք ամսվա ընթացքում մահացել է նաև դուստրը, չստանալով ժառանգությունը, ապա այդ դստեր բաժինը ստանում են վերջինիս երեխաները:

Որպես պարտադիր բաժին ժառանգության մասն ընդունելու ժառանգի իրավունքը չի անցնում նրա ժառանգներին:

● **ԺԱՌԱՆ ԳՈՒԹՅԱՆ ԲԱՑՈՒՄԸ, ԲԱՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԸ ԵՎ ՎԱՅՐԸ**


Ժառանգությունը բացվում է քաղաքացու մահվան կամ մահվան մասին դատարանի վճիռն օրինական ուժի մեջ մտնելու օրը, եթե այլ օր սահմանված չէ վճռում:

Եթե նույն օրը մահացել են այն անձինք, ովքեր իրավունք ունեին ժառանգելու մեկը մյուսից հետո, նրանք մահացած են ձանաչվում միաժամանակ: Ժառանգությունը բացվում է նրանցից յուրաքանչյուրի մահվանից հետո և ժառանգման են հրավիրվում յուրաքանչյուրի ժառանգները:

Քաղաքացու մահվան պահը որոշվում է մահվան մասին վկայող բժշկականսաքանական տվյալների հիման վրա:

Ինչպես ասվեց, քաղաքացին կարող է մահացած հայտարարվել դատական կարգով: Դա կարող է կատարվել այն դեպքում, երբ նրա բնակության վայրում երեք տարվա ընթացքում տեղեկություններ չկան նրա գտնվելու վայրի մասին: Եթե քաղաքացին անհայտ կորել է այնպիսի հանգամանքներում, որոնք մահվան վտանգ են սպառնացել կամ հիմք են տալիս ենթադրելու նրա մահը որոշակի դժբախտ դեպքի հետևանքով, ապա մահացած է ձանաչվում վեց ամսվա ընթացքում:

Ժառանգության բացման վայրը ժառանգատուի բնակության վերջին վայրն է: Եթե ժառանգատուի բնակության վերջին վայրն արտասահմանում է կամ անհայտ է, ապա ժառանգության բացման վայր է համարվում ժառանգության գանգվածի մեջ մտնող անշարժ գույքի կամ դրա առավել արժեքավոր մասի, իսկ անշարժ գույքի բացակայության դեպքում՝ շարժական գույքի կամ դրա առավել արժեքավոր մասի գտնվելու վայրը:



● ԸՍՏ ՕՐԵՆՔԻ ԺԱՌԱՆ ԳՈՒԹՅՈՒՆՆ ԸՆԴՈՒՆԵԼԸ, ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

Մեր իրականությունում մեծ մասամբ ժառանգատուի մահվանից հետո ժառանգները շարունակում են տիրապետել ժառանգատուին պատկանող գույքը, և համարում են, որ ընդունել են ժառանգությունը և հարկավոր չէ պաշտոնապես գրանցել այն: Սակայն ավելի ուշ՝ տասնյակ տարիներ անց, նրանք հանդիպում են բազմաթիվ խնդիրների՝ կապված ժառանգության ձևակերպման, ժառանգության բաժանման և գրանցման հետ:

Նման իրավական խնդիրներից գերծ մնալու համար հարկավոր է իմանալ հետևյալը.

Ժառանգությունը ձեռք բերելու համար ժառանգը պետք է այն ընդունի: Ժառանգությունն ընդունվում է ժառանգությունն ընդունելու կամ ժառանգական իրավունքի վկայագիր ստանալու մասին ժառանգի դիմումը ժառանգության բացման վայրի նոտարին հանձնելով: Այն դեպքում, երբ ժառանգը դիմումը նոտարին չի հանձնում անձամբ, ապա նման դիմումի տակ ժառանգի ստորագրությունը պետք է վավերացնի նոտարը կամ նոտարական գործողություններ կատարելու համար լիազորված պաշտոնատար անձը:


Ժառանգության ընդունումը ներկայացուցչի միջոցով հնարավոր է, եթե լիազորագրում հաստիկ նախատեսված է այն ընդունելու լիազորությունը (ձևը տես կից սկավառակում):

«Քաղաքացիական օրենսդրությունը սահմանում է նաև ժառանգության ընդունում՝ փաստացի տիրապետման եղանակով: Եթե այլ բան ապացուցված չէ, ապա ժառանգությունը ժառանգի կողմից ընդունված է համարվում, երբ նա սկսում է փաստացի տիրապետել կամ կառավարել ժառանգված գույքը՝ ներառյալ, երբ ժառանգը՝

- 1) միջոցներ է ձեռնարկել գույքը պահպանելու և այն երրորդ անձանց ունեցություններից կամ հավակնություններից պաշտպանելու համար,
- 2) իր հաշվին կատարել է գույքը պահպանելու ծախսեր,
- 3) իր հաշվից վճարել է ժառանգատուի պարտքերը կամ երրորդ անձանցից ստացել է ժառանգատուին հասանելիք գումարները:

Չնայած որ օրենքը թույլ է տալիս ժառանգությունն ընդունել վերը նշված եղանակով, այդուհանդերձ, փաստացի տիրապետումը պաշտոնապես չի արտացոլվում որևէ տեղ, և կարող են ի հայտ գալ մի շարք խնդիրներ այդ փաստը հաստատելու համար: Մասնավորապես, քաղաքացին ստիպված կլինի դիմել դատարան: Այդ իսկ պատճառով, հաշվի առնելով օրենքի պահանջը և նկատի ունենալով ձևավորված պրակտիկան, ցանակալի է ժառանգատուի մահվան պահից վեց ամսվա ընթացքում դիմում ներկայացնել նոտարական գրասենյակ՝ ժառանգությունն ընդունելու համար, որն իրավունք է վերապահում մահվան պահից վեց ամիս հետո ստանալու ժառանգության իրավունքի վկայագիր:

Ինչպես ըստ կտակի, այնպես էլ ըստ օրենքի ժառանգության դեպքում ժառանգության իրավունքի վկայագիրը կարող է տրվել մինչև ժառանգության բացման օրվանից վեց ամիս լրանալը, եթե առկա են



ստույգ տվյալներ, որ վկայագիր ստանալու համար դիմած անձանցից բացի, ժառանգության կամ դրա համապատասխան մասի նկատմամբ այլ ժառանգներ չկան:

Ժառանգի կողմից ժառանգության մի մասի ընդունումը նշանակում է իրեն հասանելիք ամբողջ ժառանգության ընդունում, անկախ այն բանից, թե ինչ է այն իրենից ներկայացնում և որտեղ է գտնվում:

Ինչպես արդեն ասվեց, ժառանգությունը կարող է ընդունվել ժառանգության բացման օրվանից վեց ամսվա ընթացքում:

Եթե ժառանգության իրավունքն այլ անձանց համար ծագում է ժառանգությունից ժառանգի հրաժարվելու դեպքում, ապա նրանք կարող են ժառանգությունն ընդունել վերը նշված ժամկետի մնացած մասի, իսկ եթե այն երեք ամսից պակաս է, ապա երեք ամսվա ընթացքում:

Այն անձինք, որոնց համար ժառանգության իրավունքն առաջանում է միայն այլ ժառանգի կողմից ժառանգությունը չընդունելու դեպքում, կարող են ժառանգությունն ընդունել նշված ժամկետն ավարտվելու օրվանից երեք ամսվա ընթացքում:


● **ԺԱՌԱՆ ԳՈՒԹՅՈՒՆ ՁԵՎԱԿԵՐՊԵԼԸ, ԺԱՌԱՆ ԳՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՎԿԱՅԱԳԻՐ, ԺԱՌԱՆ ԳՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՎԿԱՅԱԳԻՐ ՏԱԼՈՒ ԺԱՄԿԵՏԸ**

Ժառանգության իրավունքի վկայագիրը տալիս է ժառանգության բացման վայրի նոտարը կամ օրենքով նման նոտարական գործողություն կատարելու իրավունք ունեցող պաշտոնատար անձը:

Ժառանգության իրավունքի վկայագիրը տրվում է ժառանգի դիմումի հիման վրա: Ժառանգության իրավունքի վկայագիրը տրվում է ժառանգներից յուրաքանչյուրին առանձին-առանձին: Եթե ժառանգության իրավունքի վկայագիր տալուց հետո ի հայտ է եկել այնպիսի գույք, որի համար վկայագիր չի տրվել, ապա տրվում է ժառանգության իրավունքի լրացուցիչ վկայագիր: Անժառանգ գույքի ժառանգության իրավունքի վկայագիրն ուղարկվում է տեղական ինքնակառավարման համապատասխան մարմին:

Ժառանգության իրավունքի վկայագիրը ժառանգներին է տրվում ժառանգության բացման օրվանից վեց ամիս հետո, բացառությամբ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով նախատեսված դեպքերի, որոնց մասին նշվեց վերևում:

Ինչպես արդեն նշվել է, ժառանգության իրավունքի վկայագիրը կարող է տրվել մինչև ժառանգության բացման օրվանից վեց ամիս լրանալը, եթե առկա են ստույգ տվյալներ, որ վկայագիր ստանալու համար դիմած անձանցից բացի, ժառանգության կամ դրա համապատասխան մասի նկատմամբ այլ ժառանգներ չկան:



● **ԺԱՌԱՆ ԳՈՒԹՅՈՒՆՆ ԸՆ ԴՈՒՆԵԼԸ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԺԱՄԿԵՏԻ ԱՎԱՐՏԻՑ ՀԵՏՈ**

Ժառանգը կարող է առանց դատարան դիմելու ժառանգությունն ընդունել այն ընդունելու համար սահմանված ժամկետի ավարտից հետո, եթե առկա է ժառանգությունն ընդունած մնացած բոլոր ժառանգների համաձայնությունը: Ժառանգների նման համաձայնությունը հիմք է նուտարի կողմից նախկինում տրված ժառանգության իրավունքի վկայագիրը չեղյալ համարելու և նոր վկայագիր տալու համար:

Ժառանգությունն ընդունելու ժամկետը բաց թողած ժառանգի դիմումի հիման վրա դատարանը կարող է նրան ձանաչել ժառանգությունն ընդունած՝ հարգելի համարելով ժամկետը բաց թողնելու պատճառները: Այդ ժամանակ պետք է ապացուցել, որ ժամկետը բաց թողնելու պատճառ է դարձել այն հանգամանքը, որ ժառանգը չգիտեր և պարտավոր չէր իմանալ ժառանգության բացման մասին՝ պայմանով, որ ժառանգությունն ընդունելու ժամկետը բաց թողած ժառանգն այդ ժամկետը բաց թողնելու պատճառները վերացվելուց հետո՝ վեց ամսվա ընթացքում, դիմել է դատարան:

Այստեղ պետք է ուշադրություն դարձնել մի կարևոր հանգամանքի ևս. դատարանը կարող է հարգելի ձանաչել ժառանգությունն ընդունելու ժամկետը բաց թողնելու պատճառները միայն այն դեպքում, երբ ժառանգը կապացուցի, որ չգիտեր և պարտավոր չէր իմանալ ժառանգության բացման մասին, այսինքն՝ ժառանգատուի մահվան մասին և այն պայմանով, որ իմանալուց հետո վեց ամսվա ընթացքում դիմել է դատարան: Նման դիրքորոշում արտահայտել է ՀՀ վճռաբեկ դատարանը իր 30.11.2006 թ. թիվ 3-2305/ՎԴ/ 2006 թ. որոշմամբ (տե՛ս կից սկավառակում):


Դատարանը, ժառանգին ձանաչելով ժառանգությունն ընդունած, լուծում է դրանից բխող ժառանգական գույքի նկատմամբ մյուս ժառանգների իրավունքներին վերաբերող հարցերը, ինչպես նաև անվավեր է ձանաչում նախկինում տրված ժառանգության իրավունքի վկայագիրը: Այս դեպքում չի պահանջվում տալ ժառանգության իրավունքի նոր վկայագիր:

● **ԺԱՌԱՆ ԳՈՒԹՅՈՒՆԻՑ ՀՐԱԺԱՐՎԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ, ԺԱՌԱՆ ԳՈՒԹՅՈՒՆԻՑ ՀՐԱԺԱՐՎԵԼԸ՝ ՀՕԳՈՒՑ ԱՅԼ ԱՆՁԻ**

Ժառանգն իրավունք ունի հրաժարվելու ժառանգությունից ժառանգության բացման օրվանից վեց ամսվա ընթացքում՝ ներառյալ այն դեպքում, երբ նա արդեն ընդունել է ժառանգությունը:

Ժառանգությունից հրաժարվելն իրականացվում է ժառանգի կողմից ժառանգության բացման վայրի նոտարին դիմում տալու միջոցով: Ներկայացուցչի միջոցով ժառանգությունից հրաժարվելը հնարավոր է, եթե լիազորագրում հատուկ նախատեսված է նման լիազորություն: Ժա-

ՅԵՂՎԱՌԴՈՎ ԴՐԻՒԹՅԱՆ ԻՍՏԻՏՈՒՏ



ռանգությունից հրաժարվելը չի կարող վերացվել կամ հետ կանչվել: Ժառանգությունից վերապահումներով կամ պայմանով հրաժարվել չի թույլատրվում:

Ժառանգին հասանելիք ժառանգության մասից հրաժարվել չի թույլատրվում:

Եթե ժառանգը ժառանգության է հրավիրվում և ըստ կտակի, և ըստ օրենքի, ապա նա իրավունք ունի հրաժարվելու իրեն հասանելիք ժառանգությունից այդ հիմքերից մեկով կամ երկուսով:

Ժառանգն իրավունք ունի հրաժարվելու ավելացման իրավունքով իրեն հասանելիք ժառանգությունից՝ անկախ ժառանգության մնացած մասը ժառանգելուց:

Ժառանգությունից հրաժարվելու դեպքում ժառանգն իրավունք ունի նշելու, որ նա դրանից հրաժարվում է հօգուտ ըստ կտակի կամ ըստ օրենքի ցանկացած հերթի ժառանգների՝ ներառյալ նրանց, ովքեր ժառանգում են ներկայացվելու իրավունքով:

Հօգուտ այլ անձի չի թույլատրվում հրաժարվել՝


- 1) կտակով ժառանգվող գույքից, եթե ժառանգատուի ամբողջ գույքը կտակված է իր կողմից նշանակված ժառանգներին,
- 2) ժառանգության պարտադիր բաժնից,
- 3) եթե ժառանգին նշանակված է ենթաժառանգ:

● ԺԱՌԱՆ ԳՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆՆԵՐԻ ԱՎԵԼԱՑՈՒՄԸ

Եթե ժառանգը չի ընդունում ժառանգությունը, հրաժարվում է ժառանգությունից՝ առանց այլ ժառանգի նշելու, հօգուտ որի նա հրաժարվում է, մեկուսացվում է ժառանգությունից որպես անարժան ժառանգ կամ կտակն անվավեր ձանաչվելու հետևանքով, ապա ժառանգության մասը, որը կհասներ նման դուրս մնացած ժառանգին, անցնում է ժառանգության հրավիրված ըստ օրենքի ժառանգներին և նրանց միջև բաշխվում է հավասար բաժիններով:

Եթե ժառանգատուն իր ամբողջ գույքը կտակել է իր նշանակած ժառանգներին, ապա ժառանգությունից հրաժարված կամ վերը նշված այլ պատճառներով դուրս մնացած ժառանգին հասանելիք ժառանգության մասն անցնում է մնացած ըստ կտակի ժառանգներին և բաշխվում է նրանց միջև ժառանգության բաժիններին համամասնորեն, եթե այլ բան նախատեսված չէ կտակով: Նշված կանոնները չեն կիրառվում, եթե՝

- 1) հրաժարված կամ այլ պատճառներով դուրս մնացած ժառանգին նշանակված է ենթաժառանգ,
- 2) ժառանգը հրաժարվել է ժառանգությունից՝ հօգուտ այլ ժառանգի:



նկատմամբ ընդհանուր սեփականության իրավունք ունեցող ժառանգն իրեն հասանելիք ժառանգության բաժնի հաշվին այդ գույքն ստանալու նախապատվության իրավունք ունի:

Ժառանգությունը բաժանելու դեպքում ժառանգատուին պատկանող բնակելի տան (բնակարանի) նկատմամբ բնակելի տարածության օգտագործման իրավունք ունեցող ժառանգն իրեն հասանելիք ժառանգության բաժնի հաշվին այդ տունը (բնակարանը), ինչպես նաև տնային գործածության իրերը և այլ առարկաներն ստանալու նախապատվության իրավունք ունի:

Գույքի և ժառանգության նախապատվության իրավունք ունեցող ժառանգին հասանելիք բաժնի անհամաչափությունը վերացվում է մնացած ժառանգներին ժառանգության զանգվածից այլ գույք կամ փոխհատուցում՝ ներառյալ համապատասխան դրամական գումար տալու միջոցով:

Ժառանգը կարող է իրականացնել իր նախապատվության իրավունքը միայն մյուս ժառանգներին համապատասխան փոխհատուցում տրամադրելուց հետո, եթե այլ բան սահմանված չէ ժառանգների համաձայնությամբ:


● ԺԱՌԱՆ ԳՈՒԹՅԱՆ ԲԱԺԱՆԵԼԸ ԺԱՌԱՆ ԳՆԵՐԻ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՄԲ ԵՎ ԴԱՏԱՐԱՆՈՎ

Ժառանգության զանգվածի մեջ մտնող և երկու կամ մի քանի ժառանգների ընդհանուր բաժնային սեփականության ներքո գտնվող գույքը կարող է բաժանվել ժառանգների համաձայնությամբ:

Ժառանգությունը բաժանելու, նաև ժառանգներից մեկի բաժինը ժառանգությունից առանձնացնելու վերաբերյալ համաձայնությունը, եթե այն կնքվել է մինչև ժառանգության իրավունքի վկայագիր տալը և վավերացվել է նոտարի կողմից, հիմք է ժառանգներին ժառանգության իրավունքի վկայագրեր տալու համար՝ դրանցում նշելով համաձայնությանը համապատասխան ժառանգներից յուրաքանչյուրի ժառանգած կոնկրետ գույքը և իրավունքները:

Ի դեպ, ժառանգությունում ժառանգներին հասանելիք ժառանգության բաժինների անհամաչափ բաժանումը, որը կատարվել է նրանց համաձայնությամբ, հիմք չէ նրանց ժառանգության իրավունքի վկայագրեր տալը մերժելու համար:

Ժառանգությունը բաժանելու՝ ներառյալ ժառանգներից մեկի բաժինը դրանից առանձնացնելու վերաբերյալ ժառանգների համաձայնության բացակայության դեպքում ժառանգությունը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 197-րդ հոդվածին համապատասխան՝ բաժանում է դատարանը (տե՛ս կից ակավառակում):



● ԺԱՌԱՆ ԳՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՀՊԱՆԵԼԸ ԵՎ ԿԱՌԱՎԱՐԵԼԸ

Ժառանգների, շահառուների և այլ շահագրգիռ անձանց իրավունքների պաշտպանության համար ժառանգության բացման վայրի նոտարը կատարում է ժառանգական զանգվածի գույքագրում, ժառանգության զանգվածի մեջ մտնող կանխիկ դրամը (արժույթը) մուծվում է նոտարի դեպոզիտ, իսկ արժույթը, թանկարժեք քարերից և մետաղներից պատրաստված գույքը պահատվության համար հանձնվում են բանկ:

Ժառանգության զանգվածի մեջ մտնող այն գույքի պահպանությունը, որը կարող է շրջանառության մեջ գտնվել հատուկ թույլտվությամբ, նոտարն իրականացնում է համապատասխան գույքի մասին օրենքով սահմանված կարգով:

Ժառանգության զանգվածի մեջ մտնող, սակայն վերը չնշված գույքը, եթե այն կառավարման կարիք չունի, նոտարը պահատվության պայմանագրով հանձնում է ժառանգներից մեկին, իսկ ժառանգներին հանձնելու անհնարինության դեպքում՝ մասնագիտացված կազմակերպությունը:

Եթե ժառանգության զանգվածում առկա է ոչ միայն պահպանելու, այլ նաև կառավարելու կարիք ունեցող գույք (տնտեսական ընկերակցության կամ ընկերության կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալի բաժնեմաս, արժեթղթեր, բացառիկ իրավունքներ և այլն), նոտարը, որպես հավատարմագրային կառավարման հիմնադիր, կնքում է այդ գույքի հավատարմագրային կառավարման պայմանագիր:


Ժառանգությունը պահպանելու և կառավարելու միջոցները նոտարը ձեռնարկում է ժառանգի, կտակակատարի, պարտատիրոջ, տեղական ինքնակառավարման մարմնի կամ ժառանգական գույքի պահպանման շահերից հանդես եկող այլ անձանց դիմումի հիման վրա:

Անհրաժեշտության դեպքում նոտարն իրավունք ունի իր նախաձեռնությամբ միջոցներ ձեռնարկելու ժառանգությունը պահպանելու և (կամ) կառավարելու համար:

Ժառանգության զանգվածը պարզելու և այն պահպանելու նպատակներով նոտարն իրավունք ունի հարցում անելու բանկերին և այլ վարկային կազմակերպություններին նրանց ավանդներում, հաշիվներում գտնվող կամ նրանց ի պահ հանձնված՝ ժառանգատուին պատկանող դրամի (արժույթի), արժույթային ու այլ արժեքների վերաբերյալ:

Պարտատերերին տեղեկացնելու նպատակով նոտարը մասնավորապես հաղորդագրություն է հրապարակում ժառանգության բացման վերաբերյալ՝ պարտատերերին առաջարկելով հաղորդագրությունը հրապարակելու օրվանից վեցամսյա ժամկետում ներկայացնել ժառանգատուի նկատմամբ իրենց պահանջները:

Ժառանգությունը պահպանելու և կառավարելու միջոցներն իրականացվում են նոտարի սահմանած ժամկետի ընթացքում, բայց ոչ ավելի, քան վեց ամսվա ընթացքում, իսկ որոշ դեպքերում՝ ոչ ավելի, քան ժառանգության բացման օրվանից ինն ամսվա ընթացքում:



Ժառանգությունը պահպանելու և կառավարելու ծախսերը հատուցվում են:

Այն դեպքերում, երբ ժառանգական գույքը գտնվում է տարբեր վայրերում, ժառանգության բացման վայրի նոտարը ժառանգական գույքի համապատասխան մասի գտնվելու վայրի նոտարին կամ նոտարական գործողություններ կատարելու համար լիազորված պաշտոնատար անձին արդարադատության մարմինների միջոցով ուղարկում է ժառանգությունը պահպանելու կամ կառավարելու վերաբերյալ պարտադիր կատարման ենթակա հանձնարարություն:

● ԺԱՌԱՆ ԳՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԾԱԽՍԵՐԸ ՀԱՏՈՒՑԵԼԸ

Ժառանգության հետ կապված ծախսերը հատուցվում են հետևյալ հերթականությամբ՝


- առաջին հերթին հատուցվում են մինչև ժառանգատուի մահը նրա հիվանդության հետևանքով առաջացած և ժառանգատուի պատշաճ հուղարկավորության համար անհրաժեշտ ծախսերը,
- երկրորդ հերթին հատուցվում են ժառանգության զանգվածի մեջ մտնող գույքը պահպանելու և կառավարելու, ինչպես նաև կտակը կատարելու հետ կապված ծախսերը,
- երրորդ հերթին բավարարվում են ժառանգատուի պարտքերով պարտատերերի պահանջները,
- չորրորդ հերթին բավարարվում են պարտադիր բաժնի իրավունք ունեցող ժառանգների պահանջները,
- հինգերորդ հերթին հատուցվում են կտակային հանձնարարությունը կատարելու հետ կապված ծախսերը:

Յուրաքանչյուր հերթի պահանջները բավարարվում են նախորդ հերթի պահանջները լրիվ բավարարելուց հետո: Ժառանգության զանգվածի մեջ մտնող գույքն անբավարար լինելու դեպքում այն համապատասխան հերթի պարտատերերի միջև բաշխվում է բավարարման ենթակա պահանջների գումարներին համամասնորեն:

● ՊԱՐՏԱՏԵՐԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՊԱՀԱՆՋՆԵՐ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ ԵՎ ԺԱՌԱՆ ԳՆԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

Պարտատերերն իրավունք ունեն ժառանգության բացման օրվանից վեց ամսվա ընթացքում ներկայացնել իրենց պահանջները:

Պահանջները, մինչև ժառանգների կողմից ժառանգության իրավունքի վկայագիր ստանալը, կարող են ներկայացվել ժառանգությունն ընդունած ժառանգին կամ կտակակատարին, իսկ վերջիններիս բացակայության դեպքում՝ ժառանգության բացման վայրի նոտարին:



Ժառանգները, ժառանգության իրավունքի վկայագիրը ստանալուց հետո, իրենց անցած գույքի արժեքի սահմաններում հատուցում են վերը նշված ծախսերը:

Անմիջապես ժառանգության բացման և ժառանգության ընդունման իրավունքի փոխանցման արդյունքում ժառանգություն ստացած ժառանգը պատասխանատվություն է կրում այդ երկու հիմքերով ստացված գույքի արժեքի սահմաններում:

Իրենց անցած ժառանգության արժեքի սահմաններում ժառանգները կրում են համապարտ պատասխանատվություն:

● **ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՄԱՏԵՂ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՆԵՐՔՈ ԳՏՆՎՈՂ ԳՈՒՅՔԻ ԺԱՌԱՆ ԳՈՒԹՅՈՒՆԸ**

Ընդհանուր համատեղ սեփականության մասնակցի մահը հիմք է ընդհանուր գույքի նկատմամբ իրավունքում նրա բաժինը որոշելու և Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 199-րդ հոդվածով սահմանված կարգով ընդհանուր գույքը բաժանելու կամ մահացած մասնակցի բաժինը դրանից առանձնացնելու համար: Այդ դեպքում ժառանգությունը բացվում է մահացած մասնակցի բաժնին հասանելիք ընդհանուր գույքի, իսկ գույքը բնեղենով բաժանելու անհնարինության դեպքում՝ նման բաժնի արժեքի նկատմամբ:

Տնտեսական ընկերակցության կամ ընկերության մահացած մասնակցի ժառանգության զանգվածի մեջ մտնում է ընկերակցության բաժնեհավաք կամ ընկերության կանոնադրային կապիտալում այդ մասնակցի բաժնեմասի արժեքի նկատմամբ իրավունքը, եթե այլ բան նախատեսված չէ ընկերակցության կամ ընկերության կանոնադրությամբ:

Կոոպերատիվի մահացած անդամի ժառանգության զանգվածի մեջ մտնում է կոոպերատիվում նրա փայի արժեքի նկատմամբ իրավունքը, եթե այլ բան նախատեսված չէ կոոպերատիվի կանոնադրությամբ:

Այն հարցի լուծումը, թե ժառանգներից որ մեկը կարող է ընդունվել տնտեսական ընկերակցության կամ ընկերության կամ կոոպերատիվի մեջ այն դեպքում, երբ համապատասխան իրավաբանական անձի նկատմամբ ժառանգատուի իրավունքներն անցել են մի քանի ժառանգների, ինչպես նաև համապատասխան իրավաբանական անձանց մասնակիցներ չդարձած ժառանգներին հասանելիք գումարներ վճարելու կարգը, եղանակները և ժամկետները որոշվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով, տնտեսական ընկերությունների մասին օրենքներով, կոոպերատիվների մասին օրենքներով, ինչպես նաև համապատասխան իրավաբանական անձի կանոնադրությամբ:

● **ԱՇԽԱՏԱՎԱՐՁԻ, ԹՈՇԱԿՆԵՐԻ, ՆՊԱՍՏՆԵՐԻ ԵՎ ՎՆԱՍԻ ՀՆՏՈՒՅՄԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ՉՄՈՒԾՎԱԾ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ԺԱՌԱՆ ԳՈՒԹՅՈՒՆԸ**

Վճարման ենթակա, սակայն քաղաքացու կյանքի օրոք որևէ պատճառով չվճարված՝ աշխատավարձի, թոշակների, նպաստների և կյանքին կամ առողջությանը պատճառված վնասի հատուցման գումարներն ստանալու իրավունքը պատկանում է մահացածի ընտանիքի անդամներին, ինչպես նաև նրա խնամքի ներքո գտնվող անաշխատունակ անձանց:

Նշված գումարներ վճարելու վերաբերյալ պահանջները պետք է ներկայացվեն ժառանգության բացման օրվանից վեց ամսվա ընթացքում:

Մահացածին չվճարված գումարները վերը նշված հիմքով ստանալու իրավունք ունեցող անձանց բացակայության կամ նրանց կողմից այդ գումարները սահմանված ժամկետում վճարելու պահանջ չներկայացնելու դեպքում համապատասխան գումարները ներառվում են ժառանգության զանգվածի մեջ և ժառանգվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով սահմանված ընդհանուր հիմունքներով:


● **ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՀՐՋԱՆԱՌՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՅՈՂ ԳՈՒՅՔԸ ԺԱՌԱՆ ԳԵԼԸ**

Ժառանգատուին պատկանող գույքը, որը շրջանառության մեջ է գտնվում հատուկ թույլտվությամբ (գեներ և այլն), ժառանգության զանգվածի մեջ է մտնում և ժառանգվում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով սահմանված ընդհանուր հիմունքներով: Ժառանգության ընդունման համար, որի զանգվածի մեջ մտնում է նման գույքը, հատուկ թույլտվություն չի պահանջվում:

Նման ժառանգություն ընդունած անձը պարտավոր է մեկ ամսվա ընթացքում դիմել լիազորված պետական մարմին՝ թույլտվություն ստանալու համար:

● **ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐԳԵՎՆԵՐ ԵՎ ՀՔԱՆՀԱՆՆԵՐ ԺԱՌԱՆ ԳԵԼՈՒ ԱՆԹՈՒՅԼԱՏՐԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ**

Պետական պարգևները և շքանշանները, որոնց արժանացել է քաղաքացին, չեն մտնում ժառանգության զանգվածի մեջ: Պարգևատրվողի մահից հետո այդ պարգևները և շքանշանները հանձնվում են այլ անձանց՝ «Հայաստանի Հանրապետության պետական պարգևների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով (այս օրենքը տես կից սկզբաբաժնում):



● ՀՈՒՇԱՆՀԱՆՆԵՐԻ ԵՎ ԱՅԼ ՆՇԱՆՆԵՐԻ ՀԱՎԱՔԱԾՈՒՆԵՐ ԺԱՌԱՆ ԳԵԼԸ

Ժառանգատուին պատկանող հուշանշանների և այլ նշանների հավաքածուները մտնում են ժառանգության զանգվածի մեջ ու ժառանգվում են ՀՀ քաղաքացիական օրենսգրքով սահմանված ընդհանուր հիմքերով:

● ԺԱՌԱՆ ԳՈՒԹՅԱՆ ԶԱՆ ԳՎԱԾԻ ՄԵՋ ՉԵՆ ՄՏՆՈՒՄ

Ժառանգության զանգվածի մեջ չեն մտնում ժառանգատուի անձի հետ անխզելիորեն կապված իրավունքները և պարտականությունները, մասնավորապես՝

- 1) ալիմենտային պարտավորություններով իրավունքները և պարտականությունները,
- 2) քաղաքացու կյանքին կամ առողջությանը պատճառված վնասը հատուցելու իրավունքը,
- 3) անձնական ոչ գույքային իրավունքները և այլ ոչ նյութական բարիքները,
- 4) այն իրավունքներն ու պարտականությունները, որոնց անցումը ժառանգությամբ չի թույլատրվում սույն օրենսգրքով և այլ օրենքներով:

Առաջին կետում նշված ալիմենտային պարտավորությունները կրում են անձնական բնույթ, իսկ անձնական բնույթ ունեցող իրավունքները և պարտականություններն անօտարելի և անփոխանցելի են: Այսպես, եթե մահացել է քաղաքացի, որը ուներ ալիմենտ վճարելու պարտավորություն, ապա նրա մահվան փաստով դադարում է նաև ալիմենտ վճարելու պարտականությունը: Հետևաբար, ոչ ոք չի կարող նրա ժառանգներից պահանջել շարունակել ալիմենտի վճարումը:


Ժառանգման կարգով այլ անձանց փոխանցվել չեն կարող նաև այնպիսի իրավունքներ, ինչպիսիք են անվան իրավունքը, գիտության, գրականության, արվեստի երկի հեղինակ լինելու իրավունքը, գյուտի, արտադրական նմուշի իրավունքը և այլն: Սակայն այստեղ խոսքը վերաբերում է անվան, այսինքն՝ ոչ գույքային իրավունքին, իսկ հեղինակային, այսինքն՝ գույքային իրավունքները փոխանցվում են ժառանգաբար:

Ժառանգությամբ չի փոխանցվում քաղաքացիների տարաբնույթ կոոպերատիվների անդամների անդամության իրավունքը, այսինքն՝ անձնական իրավունքը: Խոսքը վերաբերում է ամառանոցային-շինարարական, բնակարանային-շինարարական և այլ կոոպերատիվների անդամության իրավունքին: Սակայն կոոպերատիվում ձեռք բերած գույքային իրավունքներն ու ստանձնած պարտավորությունները փոխանցվում են կոոպերատիվի անդամի ժառանգներին:

Ժառանգման իրավունքով այլ անձանց չեն փոխանցվում նաև հեղինակային պայմանագրով նոր երկ ստեղծելու, սցենար գրելու, գիտական երկ ստեղծելու պարտավորությունը: Նման պարտավորությունները դադարում են հեղինակի մահվամբ:

ԿԱՆԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ԸՍՏ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ






● **ՍԵՌԱԿԱՆ ԱՆՁԵՌՆՄԻՆԵԼԻՈՒԹՅԱՆ ԵՎ ՍԵՌԱԿԱՆ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՈՒՂՂՎԱԾ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ**


Յուրաքանչյուր կին պետք է իմանա իր իրավունքները և այդ իրավունքների պաշտպանության ձևերը, որպեսզի խուսափի հնարավոր բռնությունից: Սեռական ոտնձգությունները ֆիզիկական և խորը հոգեբանական ազդեցություն են թողնում կնոջ վրա և պետությունը պարտավոր է ընդունել այնպիսի օրենսդրություն և նախատեսի այնպիսի պատիժներ, որոնք կարող են կանխել կանանց նկատմամբ նման բռնությունների դրսևորումը: ՀՀ քրեական օրենսգրքի 18-րդ գլուխը վերաբերում է սեռական անձեռնմխելիության և սեռական ազատության դեմ ուղղված հանցագործություններին (օրենսգրքից քաղվածքը տես կից սկավառակում):

● **ԻՆՉ Է ՍԵՌԱԿԱՆ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ**

Սեռական ազատությունը անձի իրավունքն է իր ցանկությամբ ընտրելու սեռական գույզը(ուհի):

Սեռական հանցագործություններ են հանդիսանում այն գործողությունները, որոնք ուղղված են անձի սեռական անձեռնմխելիության դեմ:





Բռնաբարությունը տղամարդու սեռական հարաբերությունն է կնոջ հետ՝ նրա կամքին հակառակ, վերջինիս կամ այլ անձի նկատմամբ բռնություն գործադրելով կամ դա գործադրելու սպառնալիքով կամ կնոջ անօգնական վիճակն օգտագործելով: Նշված արարքի համար ՀՀ քրեական օրենսգրքի 138-րդ հոդվածը պատիժ է սահմանում ազատազրկում՝ երեքից վեց տարի ժամկետով:

● **Ո՛Վ ԿԱՐՈՂ Է ՀԱՆ ԴԵՍ ԳԱՆ ՈՐՊԵՍ ՏՈՒԺՈՂ**

ՀՀ քրեական օրենսգիրքը սահմանում է, որ բռնաբարությունը կարող է տեղի ունենալ միայն կնոջ նկատմամբ, հետևաբար միայն կինը կարող է հանդես գալ բռնաբարության գործով որպես տուժող:

Հոդվածը նախատեսում է բռնաբարության ավելի ծանր տեսակներ, որոնց համար ավելի խիստ պատասխանատվություն է սահմանված: Դրանք են բռնաբարությունը մի խումբ անձանց կողմից կատարելը, առանձին դաժանությամբ կատարելը, անչափահասի նկատմամբ կատարելը, որն անգգուշությամբ առաջացրել է տուժողի մահը, պատժվում է ազատազրկմամբ՝ չորսից տասը տարի ժամկետով, իսկ ամենախիստ պատիժը՝ ազատազրկում ութից տասնհինգ տարի ժամկետով, նախատեսված է տասնչորս տարին չլրացած անձի նկատմամբ կատարված բռնաբարության համար:

● **Ո՛Վ ԿԱՐՈՂ Է ԲՐԵԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿՎԵԼ ԲՈՆԱԲԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ**

Բռնաբարության համար քրեական պատասխանատվության կարող է ենթարկվել 14 տարին լրացած անձը:


● **ԵՐԲ Է ՍԵՌԱԿԱՆ ԱԿՏԸ ՀԱՄԱՐՎՈՒՄ ԿԱՄԱՎՈՐ**

Սեռական ակտը կամավոր է, երբ այն տեղի է ունենում անձի համաձայնությամբ: Արարքը որպես բռնաբարություն որակելու համար էական է տուժողի համաձայնության բացակայությունը և ոչ թե նրա կողմից դիմադրություն ցույց տալը:

Ընդ որում՝ կարևոր է հիշել, որ բռնաբարության համար նշանակություն չունի տուժողի անցյալը, ապրելակերպը, հագուստը, վարքագիծը, ինչպես նաև այն հանգամանքը, որ կողմերն ամուսիններ են և այլն:

Անմուսնության մեջ գտնվող անձանց միջև կատարված բռնի սեռական ակտը նույնպես բռնաբարություն է:

Բռնաբարությունը համարվում է կատարված սեռական ակտը սկսվելու պահից:



● **ԻՆՉ Է ՍԵՔՍՈՒԱԼ ԲՆՈՒՅԹԻ ԲՈՒՆԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆԸ**

Սեքսուալ բնույթի բռնի գործողությունները համասեռամոլության կամ սեքսուալ բնույթի այլ գործողություններն են տուժողի կամքին հակառակ կամ այլ անձի նկատմամբ բռնություն գործադրելով կամ գործադրելու սպառնալիքով կամ տուժողի անօգնական վիճակն օգտագործելով: Այդ արարքը պատժվում է ազատազրկմամբ՝ երեքից վեց տարի ժամկետով: Իսկ որակյալ դարձնող հանգամանքների առկայության դեպքում, այսինքն՝ կատարվել է մի խումբ անձանց կողմից, կատարվել է տուժողի կամ այլ անձի նկատմամբ առանձին դաժանությամբ, կատարվել է անչափահասի նկատմամբ, անգզուշությամբ առաջացրել է տուժողի մահ կամ այլ ծանր հետևանքներ, պատժվում է ազատազրկմամբ՝ չորսից տասը տարի ժամկետով, իսկ տասնչորս տարին չլրացած տուժողի նկատմամբ կատարվելու դեպքում պատժվում է ազատազրկմամբ՝ ութից տասնհինգ տարի ժամկետով:


● **Ո՛Վ ԿԱՐՈՂ Է ՀԱՆ ԴԵՍ ԳԱԼ ՈՐՊԵՍ ՏՈՒԺՈՂ**

Նշված հանցագործության տուժող կարող է լինել ինչպես կինը, այնպես էլ տղամարդը:

● **ԻՆՉ Է ՍԵՌԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՆ, ՀԱՄԱՍԵՌԱՄՈՂՈՒԹՅԱՆ ԿԱՄ ՍԵՔՍՈՒԱԼ ԲՆՈՒՅԹԻ ԱՅԼ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒՆ ՀԱՐԿԱԴՐԵԼԸ**

Անձին սեռական հարաբերության, համասեռամոլության կամ սեքսուալ բնույթի այլ գործողություններ կատարելուն հարկադրելը կարող է արտահայտվել շանտաժի, գույքը ոչնչացնելու, վնասելու կամ վերցնելու սպառնալիքով կամ տուժողի նյութական կամ այլ կախվածությունն օգտագործելու ձևերով: Նշված արարքի համար ՀՀ քրեական օրենսգրքի 140-րդ հոդվածով սահմանվում է պատիժ տուգանքի ձևով՝ նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից երեքհարյուրապատիկի չափով, կամ ազատազրկմամբ՝ մեկից երեք տարի ժամկետով:

Տասնութ տարին լրացած անձի կողմից սեռական հարաբերությունը կամ սեքսուալ բնույթի այլ գործողություններ կատարելն ակնհայտ տասնվեց տարին չլրացած անձի հետ պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից երկուհարյուրիսնապատիկի չափով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով:



Ակնհայտ տասնվեց տարին չլրացած անձի նկատմամբ անառակաբարո գործողություններ կատարելը պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից չորսհարյուրապատիկի չափով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով: Իսկ նշված գործողությունները բռնություն գործադրելով կամ դա գործադրելու սպառնալիքով կատարելը պատժվում է ազատազրկմամբ՝ առավելագույնը երեք տարի ժամկետով:

Սեռական ակտը տասնվեց տարին չլրացած անձի հետ քրեորեն պատժելի արարք է, անկախ տասնվեց տարին չլրացած անձի համաձայնության առկայությունից:

Նշված հանցանքների համար էական է, որ այն կատարած անձը տեղյակ է տուժողի տարիքի մասին, այսինքն, որ տուժողի տասնվեց տարին չի լրացել: Իսկ տուժողի համաձայնությունը նման գործողությունների կատարման մեջ կարևոր չէ: Օրենքի տրամաբանությունն այն է, որ տասնվեց տարին չլրացած անձն իր տարիքի բերումով չի կարող լիարժեք գիտակցել և համաձայնություն տալ նման գործողություններին:


● ՀՂԻՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՏՈՒՄ

Ինչ է արդարը

Աբորտը հղիության արհեստական ընդհատումն է: Թույլատրվում է հղիության արհեստական ընդհատման վիրահատության ենթարկել մինչև 12 շաբաթական (ներառյալ) հղիության ժամկետը բոլոր այն կանանց, ովքեր ցանկանում են ընդհատել հղիությունը և չունեն Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի օգոստոսի 5-ի N 1116-Ն որոշմամբ սահմանված բժշկական հակացուցումներ (տեքստը՝ կից սկավառակում):

12 շաբաթականից ավելի ժամկետով հղիության դեպքում թույլատրվում է կատարել հղիության արհեստական ընդհատում Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ սահմանված բժշկական և սոցիալական ցուցումների առկայության դեպքում՝ մինչև հղիության 22 շաբաթական ժամկետը (տեքստը՝ կից սկավառակում):

Հղիության արհեստական ընդհատումը՝ մինչև 22 շաբաթական ժամկետը, բացի բժշկական և սոցիալական ցուցումների առկայության դեպքերի, ինչպես նաև վիճարկելի դեպքերում, թույլատրվում է կատարել համապատասխան գերատեսչական ակտի հիման վրա բուժհաստատության կողմից ստեղծվող բժշկական հանձնաժողովի որոշմամբ:



● **ՈՐ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԵՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՀՂԻՈՒԹՅԱՆ ԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԸՆԴՀԱՏՈՒՄ**

Թույլատրվում է հղիության արհեստական ընդհատման վիրահատություն, այդ թվում՝ հղիության վաղ ժամկետներում մինի արբորներ կատարել մանկաբարձական, գինեկոլոգիական հիվանդանոցային բուժօգնության լիցենզիաների առկայության դեպքում:

Թույլատրվում է հղիության դեղորայքային ընդհատում կատարել մանկաբարձական, գինեկոլոգիական հիվանդանոցային բուժօգնության լիցենզիա ունեցող բուժհաստատությունների ցերեկային ստացիոնարներում: Հղիության դեղորայքային ընդհատման պայմանները և հակացուցումները սահմանված են Հայաստանի Հանրապետության պետության կառավարության որոշմամբ (N 5 հավելված) (տեքստը՝ կից սկավառակում):


● **ԻՆՉՊԵՍ Է ԿԱՏԱՐՎՈՒՄ ՀՂԻՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՏՈՒՄԸ**

Հղիության արհեստական ընդհատում կատարելու համար կինը կարող է ընդունվել ծննդօգնության հիվանդանոցային բուժհաստատություն կանանց կոնսուլտացիայի ուղեգրով՝ հետազոտված Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ սահմանված հետազոտությունների ցանկի համաձայն (տեքստը՝ կից սկավառակում):

Կինը կարող է ընդունվել նաև առանց ուղեգրի, այդ դեպքում Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ սահմանված հետազոտությունները պետք է կատարվեն մանկաբարձագինեկոլոգիական ստացիոնար բուժհաստատությունում: Եթե կինը չի ցանկանում հղիության արհեստական ընդհատումը կատարել բնակության վայրի բուժհաստատությունում, ապա կարող է դիմել ցանկացած ստացիոնար բուժհաստատություն իր ընտրությամբ:

● **ԻՆՉ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ Է ՍԱՀՄԱՆՎԱԾ ԱՊՕՐԻՆԻ ԱԲՈՐՏԻ ՀԱՄԱՐ**

ՀՀ քրեական օրենսգրքի 122-րդ հոդվածը պատասխանատվություն է սահմանում ապօրինի արբորտի համար: Համապատասխան բժշկական բարձրագույն կրթություն ունեցող անձի կողմից ապօրինի արբորտ կատարելը պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի առավելագույնը հարյուրապատիկի չափով, կամ կալանքով՝ առավելագույնը մեկ ամիս ժամկետով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով:



Համապատասխան բժշկական բարձրագույն կրթություն չունեցող անձի կողմից ապօրինի արբրտ կատարելը պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի առավելագույնը երկուհարյուրապատիկի չափով, կամ կալանքով՝ մեկից երեք ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով:

Նշված գործողությունները կատարելը, որոնք անզգուշությամբ առաջացրել են տուժողի մահ կամ ծանր վնաս են պատճառել նրա առողջությանը կամ կատարվել են նախկինում ապօրինի արբրտ կատարելու համար դատապարտված անձի կողմից, պատժվում են ազատազրկմամբ՝ առավելագույնը հինգ տարի ժամկետով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով:

● **ԱՆՁԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՈՒՂՂՎԱԾ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ**


Քաղաքացիների իրավահավասարությունը խախտելը

Մարդու և քաղաքացու իրավունքներն ու ազատություններն ուղղակի կամ անուղղակի խախտելը՝ կախված անձի ազգությունից, ռասայից, սեռից, լեզվից, դավանանքից, քաղաքական կամ այլ հայացքներից, սոցիալական ծագումից, գույքային կամ այլ դրությունից, որը վնաս է պատճառել անձի օրինական շահերին, պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից չորսհարյուրապատիկի չափով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով:

Նույն արարքը, որը կատարվել է պաշտոնեական դիրքն օգտագործելով՝ պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկից հինգհարյուրապատիկի չափով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երեք տարի ժամկետով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ երկուսից հինգ տարի ժամկետով:

«Սահմանադրության 14.1-րդ հոդվածի համաձայն՝ բոլոր մարդիկ հավասար են օրենքի առջև: Խտրականությունը, կախված սեռից, ռասայից, մաշկի գույնից, էթնիկական կամ սոցիալական ծագումից, գենետիկական հատկանիշներից, լեզվից, կրոնից, աշխարհայացքից, քաղաքական կամ այլ հայացքներից, ազգային փոքրամասնությանը պատկանելությունից, գույքային վիճակից, ծնունդից, հաշմանդամությունից, տարիքից կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներից, արգելվում է:

Շատ երկրներ ընդունել են նաև գենդերային հավասարության մասին, ինչպես նաև խտրականությունն արգելող օրենքներ, որոնք երաշխիքներ են պարունակում խտրականության արգելման և գենդերային



հավասարության համար: Հայաստանը նման օրենքներ չի ընդունել, որը զգալիորեն նվազեցնում է գենդերային հավասարության համար իրականացվող պայքարի արդյունավետությունը:

Կանայք և տղամարդիկ ունեն հավասար իրավունքներ ընտանեկան և հասարակական կյանքում:


Մարդու և քաղաքացիների իրավունքների և ազատությունների դեմ ուղղված հանցագործություններ են նաև անձնական կամ ընտանեկան կյանքի մասին տեղեկություններ ապօրինի հավաքելը, պահելը, օգտագործելը կամ տարածելը, բժշկական գաղտնիքը հրապարակելը, նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական կամ այլ հաղորդումների գաղտնիությունն ապօրինի խախտելը, բնակարանի անձեռնմխելիությունը խախտելը, տեղեկատվություն տրամադրելուց հրաժարվելը, ընտրական իրավունքների խախտումները, գործադուլի իրավունքի խախտումը, աշխատանքի պաշտպանության կանոնները խախտելը, հեղինակային և հարակից իրավունքների խախտումը, արտոնագրային իրավունքի խախտումը, անձի խղձի, դավանանքի իրավունքի խախտումը, միավորումներ ստեղծելու իրավունքի իրականացմանը խոչընդոտելը, հավաքներ իրականացնելու իրավունքին խոչընդոտելը և այլն:

● **ԱՆՁԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ, ԴԱՏՎԻ ԵՎ ԱՐԺԱՆԱԴԱՏՎՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՈՒՂՂՎԱԾ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

Կանայք և երեխաները հաճախ են ենթարկվում առևանգման: Հատ տարածված է կնոջ առևանգումը ամուսնության նպատակով, որը կանանց իրավունքների կոպիտ խախտում է:

Ամուսնության նպատակով կնոջ առևանգումը հանցագործություն է: Ընդ որում՝ քրեական պատասխանատվության ենթարկելու համար որևէ նշանակություն չունի այն փաստը, որ առևանգումից հետո կինը ցանկանում է ամուսնանալ իրեն առևանգողի հետ: ՀՀ քրեական օրենսգրքի 131-րդ հոդվածը պատասխանատվություն է սահմանում մարդուն առևանգելու համար: Առևանգումը խաբեության, վստահությունը չարաշահելու, բռնության կամ բռնություն գործադրելու սպառնալիքի միջոցով մարդուն գաղտնի կամ բացահայտ առևանգելը պատժվում է ազատազրկմամբ՝ երկուսից հինգ տարի ժամկետով: Նույն գործողությունը, որը կատարվել է՝

- 1) մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ,
- 2) կյանքի կամ առողջության համար վտանգավոր բռնություն գործադրելով կամ դա գործադրելու սպառնալիքով,
- 3) զենքի կամ որպես զենք օգտագործվող առարկաների գործադրմամբ,
- 4) անչափահասի նկատմամբ,
- 5) ակնհայտ հղի կնոջ նկատմամբ,




- 6) երկու կամ ավելի անձանց նկատմամբ,
- 7) շահադիտական դրդումներով, պատժվում է ազատազրկմամբ՝ չորսից ութ տարի ժամկետով: Վերը նշված գործողությունները, որոնք՝
 - 1) կատարվել են կազմակերպված խմբի կողմից,
 - 2) անգաղափարաբան առաջացրել են տուժողի մահ կամ այլ ծանր հետևանքներ, պատժվում են ազատազրկմամբ՝ յոթից տասը տարի ժամկետով:

● ԹՐԱՖԻԲԻՆԳ

Մարդու ազատության և պատվի ու արժանապատվության դեմ ուղղված հանցագործություններից ամենավտանգավորը մարդու շահագործումն է կամ թրաֆիքինգը: Մարդու իրավունքների եվրոպական դատարանը թրաֆիքինգը բնորոշել է որպես ստրկության ժամանակակից ձև: Չնայած որ ստրկությունը արդեն մեկ հարյուրամյակից ավել է, ինչ արգելված է, սակայն այն իր նոր դրսևորումն է գտել թրաֆիքինգի ձևով (տե՛ս Ռանցեն ընդդեմ Ռուսաստանի գործը):

«Քրեական օրենսգրքի 132-րդ հոդվածը թրաֆիքինգը սահմանում է որպես շահագործման նպատակով մարդուն հավաքագրելը, տեղափոխելը, փոխանցելը, թաքցնելը կամ ստանալը, ինչպես նաև մարդուն շահագործելը կամ շահագործման վիճակի մեջ դնելը կամ պահելը՝ կյանքի կամ առողջության համար ոչ վտանգավոր բռնություն գործադրելով կամ դա գործադրելու սպառնալիքով կամ հարկադրանքի այլ ձևերով, առևանգման, խաբեության կամ վստահությունը չարաշահելու, իշխանությունը կամ վիճակի խոցելիությունը օգտագործելու կամ նրան վերահսկող անձի հետ համաձայնություն ձեռք բերելու նպատակով նյութական կամ այլ օգուտ տալու կամ ստանալու կամ այդպիսիք խոստանալու միջոցով: Նման արարքը պատժվում է ազատազրկմամբ՝ հինգից ութ տարի ժամկետով՝ գույքի բռնագրավմամբ կամ առանց դրա, որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով, կամ առանց դրա: Թրաֆիքինգն առավել վտանգավոր դարձնող հատկանիշներն են, երբ այն կատարվել է՝

- 1) երկու կամ ավելի անձանց նկատմամբ,
- 2) մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ,
- 3) պաշտոնական դիրքն օգտագործելով,
- 4) կյանքի կամ առողջության համար վտանգավոր բռնություն գործադրելով կամ այն գործադրելու սպառնալիքով,
- 5) ակնհայտ հղի կնոջ նկատմամբ,
- 6) Հայաստանի Հանրապետության պետական սահմանը հատելով՝ անձի տեղափոխումը կազմակերպելու միջոցով, որոնց դեպքում պատժվում է ազատազրկմամբ՝ յոթից տասներկու տարի ժամկետով՝ գույքի բռնագրավմամբ կամ առանց դրա, որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով,



կամ առանց դրա: Իսկ նշված արարքները կազմակերպված խմբի կողմից կատարվելու, ինչպես նաև անգգուշությամբ տուժողի մահ կամ այլ ծանր հետևանքներ առաջացնելու դեպքում պատժվում է ազատազրկմամբ՝ տասից տասնչորս տարի ժամկետով՝ գույքի բռնագրավմամբ կամ առանց դրա, որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով կամ առանց դրա:

Ո՞րն է համարվում շահագործում

Շահագործում է համարվում այլ անձի՝

- պոռնկության շահագործումը,
- կամ սեքսուալ շահագործման այլ ձևերը,
- հարկադիր աշխատանքը կամ ծառայությունները,
- ստրկության կամ ստրկությանը նմանվող վիճակի մեջ դնելը,
- առքը կամ վաճառքը,
- օրգանները կամ հյուսվածքները վերցնելը:

Թրաֆիքինգի հանցագործության հետևանքով տուժած անձն ազատվում է իր կատարած ոչ մեծ կամ միջին ծանրության այն հանցագործությունների համար քրեական պատասխանատվությունից, որոնցում ներգրավված է եղել իր նկատմամբ իրականացված թրաֆիքինգի կամ շահագործման ընթացքում և այդ արարքները կատարել է հարկադրանքի ներքո:

Քրեական պատասխանատվության է ենթակա ոչ միայն այն անձը, որն իրականացրել է թրաֆիքինգը, այլև այն անձը, ով օգտվել է շահագործման վիճակում գտնվող անձի ծառայությունից:

Համաձայն ՀՀ քրեական օրենսգրքի 132.3-րդ հոդվածի՝ շահագործման վիճակում գտնվող անձի ծառայությունից օգտվելը, եթե այդ անձի շահագործման վիճակի մեջ լինելը ակնհայտ է ծառայությունից օգտվողի համար, և եթե հանցագործություն կատարած անձի արարքում բացակայում են թրաֆիքինգի հանցագործություն կատարելու հատկանիշները՝ պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից չորսհարյուրապատիկի չափով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով: Նույն արարքը, որը կատարվել է՝


1) ակնհայտ անչափահասի նկատմամբ,

2) հոգեկան խանգարման հետևանքով իր արարքի բնույթն ու նշանակությունը ամբողջությամբ կամ մասամբ գիտակցելու կամ դա դեկավարելու հնարավորությունից զրկված անձի նկատմամբ,

3) ակնհայտ հղի կնոջ նկատմամբ,

4) երկու կամ ավելի անձանց նկատմամբ,

պատժվում է ազատազրկմամբ՝ առավելագույնը երեք տարի ժամկետով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով, կամ առանց դրա:




Հայաստանի Հանրապետության իրավապահ մարմիններին տուժողի մասին կամովին տեղեկություններ հայտնաձև անձն ազատվում է թրաֆիքինգի ենթարկված անձի ծառայություններից օգտվելու համար նախատեսված քրեական պատասխանատվությունից, եթե նրա փաստացի կատարած արարքն այլ հանցակազմ չի պարունակում:

Թրաֆիքինգի դեմ պայքարի համակարգման համար ՀՀ կառավարության 2007 թվականի դեկտեմբերի 6-ի N 861-Ս որոշմամբ ստեղծվել է Հայաստանի Հանրապետությունում մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) հարցերով խորհուրդ: Խորհրդի նպատակն է Հայաստանի Հանրապետությունում մարդկանց շահագործման դեմ ուղղված աշխատանքների համակարգումը: Խորհրդի կազմի մեջ են մտնում կառավարության, տարբեր նախարարությունների և ոստիկանության ներկայացուցիչներ: Խորհուրդը պարբերաբար իրավիճակը իր նիստերի ընթացքում ըստ բնագավառների քննության է առնում և ընդունում խորհրդատվական բնույթի որոշումներ նշված հարցերի վերաբերյալ:

- 1) մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) երևույթի քրեականացման և գործող օրենսդրության կիրարկման բնագավառում՝
 - ա. օրենսդրական դաշտի կատարելագործում,
 - բ. օրենքների կիրարկելիության ապահովում,
 - գ. մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) հանցագործության հետապնդման արդյունավետ իրականացում:
- 2) մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) կանխարգելման բնագավառում՝
 - ա. բնակչության իրազեկվածության մակարդակի բարձրացում,
 - բ. բնակչության հետ անմիջական կապի մեջ գտնվող պետական մարմինների աշխատողների իրազեկվածության մակարդակի բարձրացում,
 - գ. անչափահասների շահագործման (թրաֆիքինգի) կանխարգելում,
 - դ. զանգվածային լրատվամիջոցների դերի բարձրացում մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) դեմ պայքարի կազմակերպման գործընթացում:
- 3) մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) գոհերի պաշտպանության և աջակցության բնագավառում՝
 - ա. գոհերի բացահայտում և նրանց վերադարձի կազմակերպում,
 - բ. գոհերին անհրաժեշտ օժանդակության իրականացում:

Բացի նշված հարցերից՝ մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) դեմ ուղղված աշխատանքներն արդյունավետ կազմակերպելու նպատակով խորհուրդը քննության է առնում և ընդունում որոշումներ միջազգային, տարածաշրջանային և միջգերատեսչական համագործակցության, համապատասխան ուսումնասիրություններ կատարելու և թրաֆիքինգի երևույթի հետ առնչություն ունեցող այլ հարցերով: Խորհրդի իրավասությունների մեջ մտնող հարցերով համապատասխան նյութերը պատրաստում և խորհրդի քննարկմանն է ներկայացնում աշխատանքային խումբը, որը ստեղծվել է խորհրդի ընթացիկ աշխատանքը կազմակերպելու նպատակով:



● ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆՆԻՑ ԱՊՕՐԻՆԵՒ ԶՐԿԵԼԸ

Ազատությունից ապօրինի զրկում է համարվում, օրինակ, անձի տեղաշարժը սահմանափակելը, իր ցանկությամբ որևէ տարածք լքելու հնարավորությունից զրկված լինելը և այլն:

«Քրեական օրենսգրքի 133-րդ հոդվածը պատասխանատվություն է սահմանում ազատությունից ապօրինի զրկելու համար. մարդուն ազատությունից ապօրինի զրկելը, որն առևանգելու հետ կապված չէ, պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից երկուհարյուրիսնապատիկի չափով, կամ կալանքով՝ մեկից երեք ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով:

Նույն գործողությունը, որը կատարվել է՝

- 1) մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ,
- 2) կյանքի կամ առողջության համար վտանգավոր բռնություն գործադրելով կամ դա գործադրելու սպառնալիքով,
- 3) զենքի կամ որպես զենք օգտագործվող առարկաների գործադրմամբ,
- 4) անչափահասի նկատմամբ,
- 5) ակնհայտ հղի կնոջ նկատմամբ,
- 6) երկու կամ ավելի անձանց նկատմամբ,
- 7) շահադիտական դրդումներով,


պատժվում է ազատազրկմամբ՝ երեքից հինգ տարի ժամկետով:

Եթե վերը նշված գործողությունները կատարվել են կազմակերպված խմբի կողմից կամ անգզուշությամբ առաջացրել են տուժողի մահ կամ այլ ծանր հետևանքներ՝ պատժվում են ազատազրկմամբ՝ չորսից ութ տարի ժամկետով:

● ՊՈՌԵԿՈՒԹՅԱՆ ԵՎ ՊՈՒՆԿՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՆԵՐԳՐԱՎԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

«Քրեական օրենսգիրքը պոռնկությամբ զբաղվելը քրեորեն պատժելի արարք չի համարում: Վարչական իրավախախտումների մասին «Քրեական օրենսգիրքը նախատեսում է վարչական տուգանք՝ 500 դրամից մինչև 2000 դրամի չափով՝ պոռնկությամբ զբաղվելու համար: Միջազգային պրակտիկայում «պոռնկություն» տերմինը չի օգտագործվում, այլ կիրառում են սեռական ծառայություններ մատուցողներ: ՄԱԿ-ի կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման կոմիտեն հայտնել էր այն դիրքորոշումը, որ վարչական իրավախախտումների մասին «Քրեական օրենսգրքի 179.1-րդ հոդվածը համարել է խտրական իրավական նորմ և առաջարկել Հայաստանի Հանրապետությանը վերանայել այն:

«Քրեական օրենսգիրքը պատասխանատվություն է սահմանում շահադիտական նպատակով այլ անձի պոռնկությամբ զբաղվելուն



ներգրավելը, որը պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկից մինչև հինգհարյուրապատիկի չափով, կամ կալանքով՝ մինչև երեք ամիս ժամկետով, կամ ազատագրկմամբ՝ մեկից չորս տարի ժամկետով:


Նույն արարքը, որը կատարվել է՝

- 1) մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ,
- 2) պաշտոնեական դիրքն օգտագործելով,
- 3) Հայաստանի Հանրապետության պետական սահմանը հատելով՝ անձի տեղափոխումը կազմակերպելու միջոցով,
- 4) ակնհայտ հղի կնոջ նկատմամբ,
- 5) երկու կամ ավելի անձանց նկատմամբ՝ պատժվում է ազատագրկմամբ՝ երեքից վեց տարի ժամկետով՝ գույքի բռնագրավմամբ կամ առանց դրա, որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով, կամ առանց դրա: Իսկ նույն արարքը կազմակերպված խմբի կողմից կատարվելու դեպքում պատժվում է ազատագրկմամբ՝ չորսից ութ տարի ժամկետով՝ գույքի բռնագրավմամբ կամ առանց դրա, որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով, կամ առանց դրա:

Պոռնկությամբ զբաղվելու համար հաստատություն ստեղծելը, ղեկավարելը կամ պահելը կամ որևէ հանրային հաստատություն պոռնկությամբ զբաղվելու համար օգտագործելը կամ այլ անձի պոռնկությամբ զբաղվելու համար բնակարան կամ այլ կացարան պարբերաբար տրամադրելը կամ գույքային օգուտ ստանալով՝ պոռնկությամբ զբաղվելուն այլ ձևով նպաստելը պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից չորսհարյուրապատիկի չափով, կամ կալանքով՝ մինչև երեք ամիս ժամկետով, կամ ազատագրկմամբ՝ մեկից չորս տարի ժամկետով:

Նույն արարքը, որը կատարվել է՝

- 1) մի խումբ անձանց կողմից՝ նախնական համաձայնությամբ,
- 2) պաշտոնեական դիրքն օգտագործելով,
- 3) Հայաստանի Հանրապետության պետական սահմանը հատելով՝ անձի տեղափոխումը կազմակերպելու միջոցով,
- 4) ակնհայտ հղի կնոջն օգտագործելով,
- 5) երկու կամ ավելի անձանց օգտագործելով,
- 6) անչափահասին օգտագործելով,
- 7) հոգեկան խանգարման հետևանքով իր արարքի բնույթն ու նշանակությունն ամբողջությամբ կամ մասամբ գիտակցելու կամ դա ղեկավարելու հնարավորությունից զրկված անձին օգտագործելով՝ պատժվում է ազատագրկմամբ՝ երեքից վեց տարի ժամկետով՝ գույքի բռնագրավմամբ կամ առանց դրա, որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով, կամ առանց դրա: Իսկ նույն արարքը կազմակերպված խմբի կողմից կատարվելու դեպքում պատժվում է ազատագրկմամբ՝ չորսից ութ տարի ժամկետով՝ գույքի բռնագրավմամբ կամ առանց դրա,



որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությանը զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով, կամ առանց դրա:


Քրեական պատասխանատվություն է նախատեսված նաև պոռնկագրական նյութեր կամ առարկաներ, տպագիր հրատարակություններ, կինոյի և տեսաֆիլմերի նյութեր, պատկերներ կամ այլ առարկաներ տարածելու, գովազդելու, իրացնելու, այդ նպատակով պատրաստելու համար և պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից չորսհարյուրապատիկի չափով, կամ կալանքով՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով:

Համակարգչային համակարգի միջոցով մանկական պոռնոգրաֆիայի ներկայացնելը կամ համակարգչային համակարգում կամ համակարգչային տվյալների պահպանման համակարգում մանկական պոռնոգրաֆիայի պահպանելը պատժվում են տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի չորսհարյուրապատիկից ութհարյուրապատիկի չափով, կամ կալանքով՝ առավելագույնը երեք ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երեք տարի ժամկետով: Նույն արարքը, որը կատարվել է կազմակերպված խմբի կողմից, պատժվում է ազատազրկմամբ՝ երկուսից չորս տարի ժամկետով:

● **ԿԱԼԱՆՔԻ ՏԱՎ ԳՏՆՎՈՂ ԵՎ ԴԱՏԱՊԱՐՏՎԱԾ ԿԱՆԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ**

Կարող է պատժի կրումը հետաձգել կամ ազատվել պատժի կրումից

Եթե դատապարտյալը հղի կին է կամ ունի մինչև երեք տարեկան երեխա կամ տառապում է պատիժը կրելուն խոչընդոտող ծանր հիվանդությամբ, ինչպես նաև պատժի հետագա կրումը կարող է ծանր հետևանքներ առաջացնել դատապարտյալի կամ նրա ընտանիքի անդամների համար (հրդեհ կամ այլ տարերային աղետներ, ընտանիքի միակ աշխատունակ անձի ծանր հիվանդություն, մահ կամ այլ բացառիկ հանգամանքներ), ապա պատժի կրումը հետաձգելու կամ պատժից ազատելու մասին միջնորդությունը դատարան է ներկայացնում պատիժը կատարող մարմնի կամ հիմնարկի ղեկավարը: Նշված հանգամանքները վերանալու դեպքում ազատությունից զրկելու հետ չկապված պատիժների կատարման ստորաբաժանումը միջնորդություն է ներկայացնում դատարան՝ պատժի չկրած մասից դատապարտյալին ազատելու կամ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու կամ դատավճռով նշանակված պատիժը կատարելու մասին՝ հաշվի առնելով դատապարտյալի վարքագիծը, կատարած հանցանքի բնույթն ու հասարակական վտանգավորության աստիճանը, երեխայի դաստիարակության նկատմամբ վերաբերմունքը և պատժի չկրած ժամկետը:




● **ԻՆՉ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ ԵՆ ՊԱՀՎՈՒՄ ԱԶՍՏՈՒԹՅՈՒՆԻՅ ԶՐԿՎԱԾ ԿԱՆԱՅՔ**

Կանայք պահվում են տղամարդկանցից անջատ, չափահասները՝ ան- չափահասներից: Օրենքով սահմանվում են անջատ պահելու նաև այլ դեպքեր, ինչպիսիք են շրջապատի նկատմամբ վտանգ ներկայացնող հի- վանդությունը, կյանքին կամ առողջությանը վտանգ սպառնալը և այլն:

Ինչ իրավունքներ և պարտականություններ ունի դատապարտյալը

Դատապարտյալն ունի հետևյալ հիմնական իրավունքները.

- 1) մայրենի կամ իրեն հասկանալի այլ լեզվով տեղեկություններ ստանալու իր իրավունքների, ազատությունների և պարտականու- թյունների, դատարանի նշանակած պատժի կատարման կարգի և պայմանների, դրանց փոփոխությունների, առաջարկությունների, դիմումների և բողոքների, ինչպես նաև միջազգային համապա- տասխան փաստաթղթերի մասին,
- 2) իր նկատմամբ բարեկիրթ վերաբերմունքի,
- 3) իր իրավունքների և ազատությունների խախտման վերաբերյալ դիմումներով, բողոքներով ինչպես անձամբ, այնպես էլ պաշտ- պանի կամ օրինական ներկայացուցչի միջոցով դիմելու պատիժը կատարող մարմնի կամ հիմնարկի վարչակազմ, նրանց վերադաս մարմիններ, դատարան, դատախազություն, մարդու իրավունքնե- րի պաշտպանին, պետական և տեղական ինքնակառավարման մարմիններ, հասարակական միավորումներ և կուսակցություններ, զանգվածային լրատվության միջոցներ, ինչպես նաև մարդու իրա- վունքների և ազատությունների պաշտպանության միջազգային մարմիններ կամ կազմակերպություններ,
- 4) առողջության պահպանման, այդ թվում՝ բավարար սնունդ, բժշկական օգնություն ստանալու,
- 5) սոցիալական ապահովության,
- 6) իրավաբանական օգնություն ստանալու,
- 7) անձնական անվտանգության ապահովման,
- 8) մտքի, խղձի և դավանանքի, քաղաքական կամ այլ հայացքների ազատության,
- 9) արտաքին աշխարհի հետ հաղորդակցվելու, այդ թվում՝ վարե- լու նամակագրություն, ունենալու տեսակցություններ, օգտվելու հեռախոսակապից, գրականությունից և հնարավոր լրատվական միջոցներից,
- 10) հանգստի, ներառյալ՝ բացօթյա զբոսանքի կամ մարմնամարզու- թյան և ութամյա գիշերային քնի իրավունքը,
- 11) իր անվամբ կամ ազգանվամբ կոչվելու,
- 12) անձնական ընդունելության խնդրանքով դիմելու պատիժը կա- տարող մարմնի կամ հիմնարկի ղեկավարին, այդ մարմնի կամ հիմնարկի գործունեության նկատմամբ հսկողություն և վե- րահսկողություն իրականացնող մարմիններ,



- 13) քաղաքացիաիրավական գործարքների մասնակցելու,
- 14) հնարավոր և օրենքով նախատեսված կրթություն ստանալու, ստեղծագործ աշխատանքով զբաղվելու,
- 15) պատիժը կատարող հիմնարկի խանութից կամ կրպակից կամ վարչակազմի միջոցով ձեռք բերելու լրացուցիչ սնունդ և առաջին անհրաժեշտության առարկաներ,
- 16) դրամական փոխանցումներ, հանձնուքներ և ծանրոցներ ստանալու և ուղարկելու:

Գատապարտյալը կարող է ունենալ նաև այլ իրավունքներ:

Գատապարտյալը կրում է որոշկի պարտականություններ, որոնք են.


- 1) դրսևորել օրինապահ վարքագիծ, կատարել և պահպանել պատիժը կամ պատժի կատարման հետ միացված բժշկական բնույթի հարկադրանքի միջոցները կրելու կարգը և պայմանները սահմանող իրավական ակտերի պահանջները,
- 2) բարեկիրք վերաբերմունք դրսևորել պատիժները կատարող մարմինների կամ հիմնարկների ծառայողների և աշխատողների, այդ մարմիններ կամ հիմնարկներ այցելող անձանց և մյուս դատապարտյալների նկատմամբ.
- 3) պահպանել անձնական և ընդհանուր հիգիենայի կանոնները.
- 4) խնամքով վերաբերվել պատիժները կատարող հիմնարկների գույքին.
- 5) կատարել պատիժը կատարող մարմնի կամ հիմնարկի վարչակազմի օրինական պահանջները:

Գատապարտյալն իր պարտականությունները, ինչպես նաև պատիժները կատարող մարմինների և հիմնարկների վարչակազմի օրինական պահանջները չկատարելու դեպքում ենթարկվում է օրենքով սահմանված պատասխանատվության:

Գատապարտյալն իրավունք ունի առաջարկություններ, դիմումներ և բողոքներ ներկայացնելու, որոնք կարող են լինել ինչպես գրավոր, այնպես էլ բանավոր և չեն կարող գրաքննության ենթարկվել: Գրավոր բողոքները ոչ ուշ, քան մեկ օրվա ընթացքում ուղարկվում են հասցեատերերին:

Առանց հատուկ թույլտվության պատիժը կատարելու վայր անարգել մուտքի և ելքի իրավունք ունեն՝

- 1) Հայաստանի Հանրապետության նախագահը, Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի նախագահը, Հայաստանի Հանրապետության վարչապետը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի նախագահը, Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի նախագահը, Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորը, պետական կառավարման լիազորված մարմնի ղեկավարը կամ նրա համապատասխան տեղակալը.
- 2) Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազը, նրա տեղակալները, ինչպես նաև այն դատախազները, ովքեր օրենքով սահմանված կարգով հսկողություն են իրականացնում պատիժներ և հարկադրանքի այլ միջոցներ կիրառելու նկատմամբ.



- 3) պատիժը կատարող մարմնի կամ հիմնարկի վերադաս մարմինների պաշտոնատար անձինք.
- 4) միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչները՝ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի հիման վրա.
- 5) մարդու իրավունքների պաշտպանը.
- 6) Հայաստանի Հանրապետության այն դատավորները, ովքեր օրենքով սահմանված կարգով քննում են պատիժը կատարելու հետ կապված հարցերը, դատապարտյալի իրավունքների և ազատությունների խախտման, ինչպես նաև պատիժը կատարող մարմնի կամ հիմնարկի վարչակազմի գործողությունների դեմ ներկայացված բողոքները.
- 7) պատիժները կատարելու նկատմամբ հասարակական վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդները:


Օրենքով նախատեսված դեպքերում առանց հատուկ թույլտվության պատիժը կատարելու վայր անարգել մուտքի և ելքի իրավունք կարող է տրվել նաև այլ անձանց:

● **ԽՐԱԽՈՒՍՄԱՆ ԻՆՉՊԻՍԻՄԻՋՈՑՆԵՐ ԵՆ ԿԻՐԱՌՎՈՒՄ ԴԱՏԱՊԱՐՏՅԱԼԻ ՆԿԱՏՄԱՄԲ**

Դատապարտյալի նկատմամբ կարող են կիրառվել խրախուսման միջոցներ, որոնք են զբոսանքի ժամանակի մեկ ժամով ավելացում՝ մինչև մեկ ամիս ժամկետով, հեռախոսակապից մեկանգամյա կամ մինչև մեկ ամիս ժամկետով օգտվելու թույլտվություն, ծանրոց, հանձնուք կամ փաթեթ ստանալու թույլտվություն:

● **ՏՈՒՅԺԻ ԻՆՉՊԻՍԻՄԻՋՈՑՆԵՐ ԵՆ ԿԻՐԱՌՎՈՒՄ ԴԱՏԱՊԱՐՏՅԱԼԻ ՆԿԱՏՄԱՄԲ**

Որպես տույժ դատապարտյալի նկատմամբ կարող է կիրառվել նկատողություն, տեղափոխում պատժախուց՝ մինչև տասն օր ժամկետով: Պատժախուցում գտնվելու ժամանակամիջոցում դատապարտյալին արգելվում են դրամական փոխանցումները, գրականությունից և զանգվածային լրատվությունից օգտվելը և աշխատելը: Դատապարտյալը պատժի ամբողջ ժամկետը, որպես կանոն, կրում է մեկ ուղղիչ հիմնարկում: Պատժի հետագա կրելը շարունակելու համար դատապարտյալին մեկ հիմնարկից նույն տեսակի մեկ այլ հիմնարկ տեղափոխել թույլատրվում է նրա հիվանդության, ուղղիչ հիմնարկի վերակազմակերպման կամ լուծարման, դատապարտյալի անձնական անվտանգությունն ապահովելու, ինչպես նաև տվյալ ուղղիչ հիմնարկում դատապարտյալի հետագա գտնվելուն խոչընդոտող այլ բացառիկ հանգամանքների դեպքերում:



● **ԻՆՉՊԻՍԻՆ ՊԵՏՔ Է ԼԻՆԻ ԴԱՏԱՊԱՐՏՅԱԼԻՆ ՀԱՏԿԱՑՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՐԱԾՔԸ**

Ուղղիչ հիմնարկում դատապարտյալին հատկացված բնակելի տարածքը պետք է համապատասխանի ընդհանուր բնակելի տարածքների համար սահմանված շինարարական և սանիտարահիգիենիկ չափանիշներին, ինչպես նաև ապահովի նրա առողջության պահպանումը: Ուղղիչ հիմնարկում մեկ դատապարտյալին հատկացվող բնակելի տարածության չափը չի կարող պակաս լինել չորս քառակուսի մետրից: Դատապարտյալը պետք է ապահովված լինի իր հիգիենայի պահանջները բավարարելու համար մարդկային արժանապատվությունը չնվաստացնող պայմաններով:


Դատապարտյալի հագուստը, սնունդը և այլ պայմանները

Դատապարտյալն ապահովվում է իր սեռին, տարվա եղանակին, կլիմայական պայմաններին համապատասխանող միասնական մնուշի հանդերձանքով: Դատապարտյալն իր հագուստի վրա կրում է անվանական կրծքանշան: Դատապարտյալի հանդերձանքը չպետք է որևէ ձևով ձնշող կամ նվաստացնող լինի: Դատապարտյալին տրամադրվում են քնելու անհատական տեղ և անկողնային պարագաներ: Դատապարտյալը պատիժը կրելու ընթացքում ապահովվում է օրգանիզմի կանոնավոր կենսագործունեության համար անհրաժեշտ սննդով: Սննդի որակը և սննդարարությունը սահմանված չափաբաժիններից որևէ կերպ պակասեցնելը, այդ թվում՝ որպես տույժի միջոց, արգելվում է: Հղի, կերակրող մայր, անչափահաս կամ հիվանդ դատապարտյալն ապահովվում է հավելյալ սննդով: Դատապարտյալը պետք է ապահովված լինի խմելու ջրով: Դատապարտյալն իր միջոցներով կարող է ամսվա ընթացքում ձեռք բերել սահմանված նվազագույն աշխատավարձի մինչև երեսնապատիկի չափով սնունդ և առաջին անհրաժեշտության առարկաներ, ինչպես նաև գրեմական պիտույքներ, գրքեր, թերթեր, ամսագրեր և այլ գրականություն:

Դատապարտյալի զբոսանքի տևողությունը չի կարող պակաս լինել օրական մեկ ժամից, որը կազմակերպվում է ցերեկային ժամերին՝ դրա համար նախատեսված բացօթյա տարածքում:

Դատապարտյալի մեկնումի իրավունքը

Դատապարտյալին, բացառությամբ առանձնապես վտանգավոր ռեցիդիվի կամ առանձնապես ծանր հանցագործության համար դատապարտվելու դեպքի, կարող է տրամադրվել կարճաժամկետ մեկնում անձնական բացառիկ հանգամանքների (մերձավոր ազգականի մահ կամ կյանքին սպառնացող ծանր հիվանդություն, տարերային աղետ, որը զգալի նյութական վնաս է պատճառել դատապարտյալին կամ նրա ընտանիքին) դեպքում, ինչպես նաև սոցիալական վերականգնման նպատակով:



Հաշմանդամ կամ ուղղիչ հիմնարկին կից մանկատանը երեխա ունեցող դատապարտյալին կարող է տրամադրվել կարճաժամկետ մեկնում՝ երեխային մանկատանը կամ ազգականի մոտ տեղավորելու նպատակով:

Կարճաժամկետ մեկնում տրամադրվում է մինչև յոթ օր տևողությամբ՝ չհաշված մեկնելու և վերադարձի համար անհրաժեշտ ժամանակը, որը չի կարող գերազանցել երեք օրը: Սոցիալական վերականգնման նպատակով բաց ուղղիչ հիմնարկում պատիժ կրող դատապարտյալին կարճաժամկետ մեկնում կարող է տրամադրվել մինչև մեկ ամիս տևողությամբ՝ չհաշված մեկնելու և վերադարձի համար անհրաժեշտ ժամանակը, որը չի կարող գերազանցել երեք օրը: Կիսաբաց, կիսափակ կամ փակ ուղղիչ հիմնարկում պատիժ կրող դատապարտյալին կարճաժամկետ մեկնում տրամադրվում է տարվա ընթացքում երկու անգամից ոչ ավելի:


Դատապարտյալին կարող է տրամադրվել կարճաժամկետ մեկնում ուղղիչ հիմնարկի պետի որոշմամբ՝ հաշվի առնելով դատապարտյալի անձը և նրա վարքագիծը, կատարած հանցագործության ծանրության աստիճանը և պատիժը կրելու ժամկետը: Կարճաժամկետ մեկնման ժամանակը հաշվվում է պատիժը կրելու ժամկետի մեջ: Կարճաժամկետ մեկնման հետ կապված ծախսերը հոգում է դատապարտյալը, իսկ եթե նա անվճարունակ է, ապա մեկնումների հետ կապված ծախսերը կարող են կատարվել պետության հաշվին: Սահմանված ժամկետում ուղղիչ հիմնարկ վերադառնալուց խուսափող դատապարտյալը ենթակա է քրեական պատասխանատվության:

● ԿԱՆԱՆՑ ԵՎ ԵՐԵՆԱՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՂ ԿՅԱՆՔԸ ԲԱՆՏՈՒՄ

Ուղղիչ հիմնարկում անհրաժեշտության դեպքում կարող է ստեղծվել մանկատուն՝ երեխաների բնակության և զարգացման պատշաճ պայմաններով: Դատապարտյալն ուղղիչ հիմնարկի մանկատանը կարող է տեղավորել իր մինչև երեք տարեկան երեխային և աշխատանքից ազատ ժամերին, առանց սահմանափակման, շփվել նրա հետ: Դատապարտյալին կարող է թույլատրվել երեխայի հետ համատեղ բնակություն: Դատապարտյալի համաձայնությամբ նրա մինչև երեք տարեկան երեխան կարող է հանձնվել ազգականի, ինչպես նաև հոգաբարձության և խնամակալության մարմնի որոշմամբ՝ այլ անձանց խնամքին, իսկ երեք տարին լրանալուց հետո՝ դատապարտյալի ընտրությամբ ուղարկվել մանկատուն կամ համապատասխան այլ հաստատություն: Ուղղիչ հիմնարկին կից մանկատանը պահվող երեխայի երեք տարին լրանալուց հետո ուղղիչ հիմնարկի պետը կարող է մանկատանը երեխային պահելու ժամկետը երկարաձգել մինչև ծնողի պատժի ժամկետի ավարտը, եթե պատիժը կրելուն մնացել է երկու տարուց ոչ ավելի ժամանակ:

Դատապարտյալն իրավունք ունի բուժսանհիտարական և բուժկանխարգելիչ օգնության:

Ուղղիչ հիմնարկի պետի որոշմամբ դատապարտյալն իր համաձայնությամբ առանց վարձատրության կարող է ներգրավվել ուղղիչ հիմ-



նարկի կամ դրան հարող տարածքների բարեկարգման աշխատանքներին: Դատապարտյալը չվարձատրվող աշխատանքների ներգրավվում է հերթականությամբ՝ ոչ հանգստյան ժամերին՝ օրական երկու ժամից ոչ ավելի ժամանակով: Առաջին կամ երկրորդ կարգի հաշմանդամ, հղի, կենսաթոշակային տարիքի հասած դատապարտյալին չվարձատրվող աշխատանքների ներգրավելն արգելվում է:


● ԴԱՏԱՊԱՐՏՅԱԼԻ ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ

Ուղղիչ հիմնարկի վարչակազմը միջոցներ է ձեռնարկում դատապարտյալի հիմնական և հեռակա բարձրագույն, հետբուհական մասնագիտական կրթությունը կազմակերպելու համար: Դատապարտյալի կրթությունը կազմակերպվում է ուղղիչ հիմնարկների ներքին կանոնակարգով սահմանված կարգով:

Ուղղիչ հիմնարկում կարող է կազմակերպվել դատապարտյալի նախնական մասնագիտական՝ արհեստագործական կրթություն: Մասնագիտական կրթությունը հնարավորինս պետք է լինի այնպիսին, որպեսզի աշխատանքի կատարման ընթացքում պահպանվեն կամ բարելավվեն դատապարտյալի՝ պատժից ազատվելուց հետո ապրուստի միջոց վաստակելու ունակությունները: Նախնական մասնագիտական կրթությունն անչափահաս դատապարտյալի համար իրականացվում է աշխատանքային օրվա տևողության սահմաններում:


● ՏԵՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆԸ


Ուղղիչ հիմնարկում ստեղծվում են կարձատև և երկարատև տեսակցությունների սենյակներ, կապի հնարավոր միջոցների հանգույցներ, լրատվական միջոցներից օգտվելու հնարավոր պայմաններ: Մերձավոր ազգականների կամ այլ անձանց հետ կարձատև տեսակցություն տրամադրվում է ամսվա ընթացքում առնվազն մեկ անգամ՝ մինչև չորս ժամ տևողությամբ, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի: Համատեղ բնակվելու իրավունքով և միայն մերձավոր ազգականների հետ երկարատև տեսակցություն տրամադրվում է երկու ամսվա ընթացքում առնվազն մեկ անգամ՝ մինչև երեք օր տևողությամբ: Երկարատև տեսակցություն տրամադրվում է նաև դատապարտյալի հետ ամուսնության մեջ չգտնվող այն անձի հետ, որի հետ դատապարտյալն ունի համատեղ երեխա: Դատապարտյալի խնդրանքով երկարատև տեսակցությունը կարող է փոխարինվել կարձատև տեսակցությամբ: Առանձնապես ծանր հանցագործության համար որոշակի ժամկետով ազատագրվման կամ ցմահ ազատագրվման դատապարտված անձանց տրամադրվում է տարվա ընթացքում առնվազն երեք կարձատև և մեկ երկարատև տեսակցություն, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:



Դատապարտյալին թույլատրվում է ստանալ և իր հաշվին ուղարկել ծանրոցներ, հանձնուքներ կամ փաթեթներ, առանց սահմանափակման կատարել և ստանալ դրամական փոխանցումներ, ինչպես նաև իր հաշվին վարել նամակագրություն՝ առանց նամակների, հեռագրերի թվի սահմանափակման: Ծանրոցները, հանձնուքները, փաթեթներն ու նամակներն ուղարկելու և ընդունելու, ինչպես նաև դրանք դատապարտյալին հանձնելու կարգը սահմանվում է ուղղիչ հիմնարկների քերին կանոնակարգով:

ԻՐԱՎԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ





● **ԻՐԱՎԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ**

Ցանկացած իրավունք պետք է ունենա պաշտպանության մեխանիզմ, առանց որի այդ իրավունքը պատրանք է և հետևաբար ոչ իրականացալի: Ընդ որում իրավունքների պաշտպանության մեխանիզմները պետք է լինեն արդյունավետ:

Եթե խախտվել է Ձեր իրավունքը, Դուք պետք է համապատասխան դիմում, բողոք կամ հայց ներկայացնեք դատարան կամ այդ հարցով զբաղվող այլ մարմին:

Իրավապահ մարմինները իրավունքի պաշտպանության մեխանիզմներ են, որոնք իրենց իրավասության շրջանակներում պարտավոր են պաշտպանել անձանց իրավունքները: Ոստիկանություն և դատախազություն անձինք կարող են դիմել քրեական գործի շրջանակներում իրենց խախտված իրավունքների հարցերով: Իրավական պաշտպանության մեխանիզմ է նաև մարդու իրավունքների պաշտպանը, որն իրականացնում է պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու դրանց պաշտոնատար անձանց կողմից Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, օրենքներով, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով, ինչպես նաև միջազգային իրավունքի սկզբունքներով ու նորմերով նախատեսված՝ մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների խախտման վերաբերյալ բողոքները:

Տեղեկատվական իրավունք


Իրավական պաշտպանության կարևոր տարրերից է տեղեկատվություն ստանալու իրավունքը: Առանց տեղեկատվություն ստանալու իրավունքի անձը չի կարող իրականացնել իր իրավունքների պաշտպանությունը:

Յուրաքանչյուր ոք իրավունք ունի ստանալու տեղեկություն: Տեղեկությունը անձի, առարկայի, փաստի, հանգամանքի, իրադարձության, եղելության, երևույթի վերաբերյալ օրենսդրությամբ սահմանված կարգով ստացված և ձևավորված տվյալներն են՝ անկախ դրանց տնօրինման ձևից կամ նյութական կրիչից (տեքստային, էլեկտրոնային փաստաթղթեր, ձայնագրություններ, տեսագրություններ, լուսաժապավեններ, գծագրեր, սխեմաներ, նոտաներ, քարտեզներ):

Յուրաքանչյուր անձ իրավունք ունի ծանոթանալու իր փնտրած տեղեկությանը և (կամ) դա ստանալու նպատակով օրենքով սահմանված կարգով հարցմամբ դիմելու տեղեկատվություն տնօրինողին և ստանալու այդ տեղեկությունը:

Տեղեկություն ստանալու իրավունքը կարող է սահմանափակվել, երբ այն՝

- 1) պարունակում է պետական, ծառայողական, բանկային, առևտրային գաղտնիք,
- 2) խախտում է մարդու անձնական և ընտանեկան կյանքի գաղտնիությունը, այդ թվում՝ ամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների գաղտնիությունը,



- 3) պարունակում է հրապարակման ոչ ենթակա նախնական քննության տվյալներ,
- 4) բացահայտում է մասնագիտական գործունեությամբ պայմանավորված մատչելիության սահմանափակում պահանջող տվյալներ (բժշկական, նոտարական, փաստաբանական գաղտնիք),
- 5) խախտում է հեղինակային իրավունքը և (կամ) հարակից իրավունքները:

Տեղեկության տրամադրման կարգը

Տեղեկությունը տրամադրվում է 5-օրյա ժամկետում: Եթե տեղեկությունը տրամադրելու համար անհրաժեշտ է կատարել լրացուցիչ աշխատանք, ապա այդ տեղեկությունը դիմողին է տրվում դիմումն ստանալուց հետո՝ 30-օրյա ժամկետում, որի մասին հարցումն ստանալուց հետո՝ 5-օրյա ժամկետում, գրավոր տեղեկացվում է դիմողին՝ նշելով հետաձգման պատճառները և տեղեկությունը տրամադրելու վերջնական ժամկետը:

Տեղեկատվություն տնօրինողն օրենսդրությամբ սահմանված կարգով մշակում և հրապարակում է իր կողմից տեղեկություն տալու կարգը, որը փակցնում է իր գտնվելու վայրում՝ բոլորի համար տեսանելի տեղում: Տեղեկություն տրամադրելու համար կարող է գանձվել տուրք:

● ՎԱՐՉԱԿԱՆ ԲՈՂՈՔԱՐԿՈՒՄ


Անձինք իրենց իրավունքները պաշտպանելու նպատակով իրավունք ունեն բողոքարկելու վարչական ակտերը, վարչական մարմնի գործողությունը կամ անգործությունը:

Վարչական մարմնին ուղղվող դիմումի ձևը

Վարչական մարմնին դիմումը ներկայացվում է գրավոր և պետք է պարունակի՝

- ա) դիմողի անունը, ազգանունը, իրավաբանական անձի դեպքում՝ նրա լրիվ անվանումը,
- բ) դիմողի հասցեն,
- գ) վարչական մարմնի անվանումը, որին ներկայացվում է դիմումը,
- դ) դիմումով ներկայացվող պահանջը (դիմումի առարկա),
- ե) դիմումին կցվող փաստաթղթերի ցանկը (եթե այդպիսիք ներկայացվում են),
- զ) դիմումը կազմելու տարին, ամիսը և ամսաթիվը,
- է) դիմողի ստորագրությունը:

Եթե վարչական ակտի համար օրենքով նախատեսվում է մուծել պետական կամ տեղական տուրք կամ կատարել այլ պարտադիր վճարում, ապա պետք է ներկայացվի նաև մուծման կամ վճարման կատարումը հավաստող փաստաթուղթ:



Վարչական վարույթի իրականացման կարգը

Վարչական մարմինը պարտավոր է ապահովել փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումը՝ բացահայտելով գործի բոլոր, այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքները: Վարչական մարմինն իրավունք չունի չընդունելու վարչական վարույթի մասնակիցների ներկայացրած՝ վարույթին առնչվող դիմումները և փաստաթղթերը, որոնց քննարկումը մտնում է իր իրավասության մեջ:

Վարչական մարմինը վարչական վարույթի ընթացքում պարտավոր է վարույթի մասնակիցներին և նրանց ներկայացուցիչներին հնարավորություն տալ արտահայտվելու վարչական վարույթում քննարկվող փաստական հանգամանքների վերաբերյալ: Վարչական վարույթը պետք է իրականացվի հնարավորինս սեղմ ժամկետում:

Վարչական ակտը և դրա տեսակները

Վարչական ակտը արտաքին ներգործություն ունեցող այն որոշումը, կարգադրությունը, հրամանը կամ այլ անհատական իրավական ակտն է, որը վարչական մարմինն ընդունել է հանրային իրավունքի բնագավառում կոնկրետ գործի կարգավորման նպատակով, և ուղղված է անձանց համար իրավունքներ և պարտականություններ սահմանելուն, փոփոխելուն, վերացնելուն կամ ձանաչելուն:


Վարչական ակտերը կարող են լինել բարենպաստ, որով բարելավվում է անձի վիճակը, միջամտող, որով վարչական մարմինը միջամտում, սահմանափակում է անձանց իրավունքները կամ պարտականություններ է սահմանում, զուգորդվող վարչական ակտ, երբ զուգակցվում են բարենպաստ և միջամտող ակտերին բնորոշ հատկանիշները:

Վարչական ակտի ձևերը

Վարչական ակտը ընդունվում է գրավոր և ունի որոշման, հրամանի կարգադրության կամ օրենքով սահմանված այլ ձև: Դիմումի հիման վրա հարուցված վարչական վարույթի արդյունքում կարող է ընդունվել միայն գրավոր վարչական ակտ: Օրենքով սահմանված դեպքերում վարչական ակտը կարող է լինել նաև բանավոր:

● ԴԱՏԱՐԱՆ ԴԻՄԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԸ

Համաձայն ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի՝ յուրաքանչյուր ոք ունի իր խախտված իրավունքները վերականգնելու, ինչպես նաև իրեն ներկայացված մեղադրանքի հիմնավորվածությունը պարզելու համար հավասարության պայմաններում, արդարության բոլոր պա-





հանջների պահպանմամբ, անկախ և անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր գործի հրապարակային քննության իրավունք:

Հայաստանի Հանրապետությունում գործում է եռաստիճան դատական համակարգ՝ առաջին աստյանի, վերաքննիչ և վճռաբեկ դատարաններ: Առաջին աստյանի դատարաններն են՝ ընդհանուր իրավասության դատարանները և վարչական դատարանը: Վերաքննիչ դատարաններն են՝ քրեական վերաքննիչ դատարանը, քաղաքացիական վերաքննիչ դատարանը, վարչական վերաքննիչ դատարանը:

Վարչական դատարանը և վարչական վերաքննիչ դատարանը մասնագիտացված դատարաններ են, որոնք քննում են պետական մարմինների և քաղաքացիների միջև ծագած վեճերը: Դատարան դիմելու դեպքում պետք է հիշել, որ կան դատարան դիմելու համար սահմանված ժամկետներ, որոնց բաց թողումը կարող է սահմանափակել դատարան դիմելու իրավունքը:

Դատարան դիմելու դեպքում պետք է հիշել, որ կան դատարան դիմելու հստակ ժամկետներ, որոնց բաց թողումը կարող է սահմանափակել դատարան դիմելու իրավունքը:





Հայցադիմումի ձևը


Ընդհանուր իրավասության դատարան դիմելու կարգը սահմանվում է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով: Ընդհանուր իրավասության դատարանը քաղաքացիական գործը հարուցում է միայն հայցի կամ դիմումի հիման վրա:

Որպես կանոն՝ հայցը հարուցվում է պատասխանողի բնակության (գտնվելու) վայրի դատարան: Հայցադիմումը ներկայացվում է գրավոր, որում պետք է նշվեն՝

- 1) դատարանի անվանումը, որին ներկայացվում է հայցադիմումը,
- 2) գործին մասնակցող անձանց անունը, ազգանունը, հայրանունը (այսուհետ՝ անուն), իրավաբանական անձի անվանումը, նրանց բնակության (գտնվելու վայրի) հասցեները, այդ թվում՝ հայցվոր քաղաքացու անձնագրային տվյալները, սոցիալական քարտի համարը՝ դրա առկայության դեպքում, հայցվոր իրավաբանական անձի հարկ վճարողի հաշվառման համարը և պետական գրանցման կամ պետական գրանցման վկայականի համարը,
- 3) հայցագիճը, եթե հայցը ենթակա է գնահատման,
- 4) հանգամանքները, որոնց վրա հիմնվում են հայցապահանջները,
- 5) հայցապահանջները հաստատող ապացույցները,
- 6) բռնագանձման ենթակա կամ վիճարկվող գումարի հաշվարկը,
- 7) հայցվորի պահանջները, իսկ մի քանի պատասխանողների դեմ հայց հարուցելիս հայցվորի՝ նրանցից յուրաքանչյուրին ուղղված պահանջները,
- 8) հայցադիմումին կից ներկայացվող փաստաթղթերի ցանկը:

Դատարան դիմելու համար վճարվող պետական տուրքերի չափը

Դատարան տրվող հայցադիմումների, դիմումների համար գանձվում է պետական տուրք: Գույքային պահանջների դեպքում դրա չափը կազմում է ընդհանուր գումարի 2 տոկոսը, իսկ ոչ գույքային պահանջներով՝ 4000 դրամ: Ոչ գույքային որոշ պահանջների համար սահմանված է ավելի նվազ պետական տուրք: Վերաքննիչ բողոք ներկայացնելու համար վճարվում է պետական տուրք՝ 10 000 դրամի չափով՝ գույքային պահանջներով, իսկ ոչ գույքային պահանջներով՝ պահանջի 3 տոկոսի չափով: Վճռաբեկ բողոքի դեպքում ոչ գույքային պահանջով վճարվում է 20 000 դրամ, իսկ գույքային պահանջով՝ հայցագրի 3 տոկոսի չափով, բայց ոչ պակաս 10 000 դրամից և ոչ ավելի 1 000 000 դրամից: Առանձին գործերով վերաքննիչ և վճռաբեկ բողոքներ ներկայացնելու դեպքում սահմանվում են ավելի նվազ պետական տուրքեր:



- առանց ծնողական խնամքի մնացած երեխաներին, ինչպես նաև առանց ծնողական խնամքի մնացած երեխաների թվին պատկանող անձանց,

- փախստականներին,

- Հայաստանի Հանրապետությունում ժամանակավոր ապաստան ստացածներին:

Վերոնշյալ անձանց նկատմամբ անվճար իրավաբանական օգնություն ստանալու իրավունքը կգործի 2013 թ. հունվարի 1-ից:

Անվճար իրավաբանական օգնության իրավունք կտրամադրվի նաև դատապարտյալներին, գործազուրկներին և անվճարունակ այն ֆիզիկական անձանց, որոնք կներկայացնեն իրենց անվճարունակությունը հաստատող հավաստի տվյալներ՝ սկսած 2014 թ. հունվարի 1-ից:


Կողմերի իրավունքները և պարտականությունները

Քաղաքացիական դատավարության կարգով քննվող գործերով կողմերն են հայցվորը, պատասխանողը և երրորդ անձինք: Հայցվորն այն անձն է, ով հայց՝ պահանջ է ներկայացրել դատարան: Պատասխանողն այն անձն է, ում դեմ պահանջ է ներկայացվել, երրորդ անձն այն անձն է, ում իրավունքները և շահերը շոշափվում են կոնկրետ վեճով: Կողմերն ունեն հետևյալ իրավունքները.

- 1) ծանոթանալ գործի նյութերին, քաղվածքներ անել, ստանալ դրանց պատճենները՝ հաշվի առնելով սույն օրենսգրքի 8-րդ հոդվածի և այլ օրենքների պահանջները,
- 2) հայտնել բացարկներ,
- 3) ներկայացնել ապացույցներ և մասնակցել դրանց հետազոտմանը՝ հաշվի առնելով սույն օրենսգրքի 8-րդ հոդվածի և այլ օրենքների պահանջները,
- 4) հարցեր տալ, միջնորդություններ անել, բացատրություններ տալ դատարանին,
- 5) գործի քննության ընթացքում ծագող բոլոր հարցերի վերաբերյալ ներկայացնել իրենց փաստարկները,
- 6) առարկել գործին մասնակցող այլ անձանց միջնորդությունների, փաստարկների դեմ,
- 7) բողոքարկել դատական ակտերը,
- 8) օգտվել քաղաքացիական դատավարության օրենսգրքով իրենց վերապահված այլ դատավարական իրավունքներից:

Գործին մասնակցող անձինք կրում են օրենքով սահմանված դատավարական պարտականություններ: Գործին մասնակցող անձինք պետք է իրենց դատավարական իրավունքներից օգտվեն և իրենց դատավարական պարտականությունները կատարեն բարեխղճորեն:

Գործին մասնակցող անձինք սուտ բացատրություն կամ սուտ ցուցմունք տալու համար ենթակա են պատասխանատվության՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:



Դատավարության մասնակիցները, ինչպես նաև ներկաները նիստերի դահլիճում պարտավոր են պահպանել կարգը և ենթարկվել դատավորի կարգադրություններին, որի խախտումը պատասխանատվություն է առաջացնում:

«-ում դատավարության լեզուն հայերենն է, դատական լսումները, ապացույցները, դիմումները և այլ փաստաթղթերը ներկայացվում են հայերեն լեզվով կամ պատշաճ թարգմանությամբ:

● **ԻՐԱՎԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄԵՆԱՆԻԶՄՆԵՐԸ**

Եթե Դուք բավարարված չեք ներպետական դատարանների որոշմամբ, ապա կարող եք դիմել իրավունքների պաշտպանության միջազգային մեխանիզմների (նման մեխանիզմ է, օրինակ, Մարդու իրավունքների եվրոպական դատարանը), ինչպես նաև Միացյալ ազգերի կազմակերպության համապատասխան մարմիններին:


Պետք է հիշել, որ միջազգային մեխանիզմներին դիմելու համար պետք է սպառնալիք պաշտպանության ներպետական բոլոր միջոցները, այսինքն՝ բոլոր դատական ատյանները, այլապես ձեր բողոքը քննարկման առարկա չի դառնա: Դիմելու ժամկետը վեց ամիս է՝ սկսած ներպետական դատական ատյանի վերջին որոշման օրվանից: Դիմելու համար անհրաժեշտ է, որ թույլ տրված լինի կոնվենցիայով ամրագրված իրավունքի խախտում:

Դատարանի պաշտոնական լեզուներն են անգլերենը և ֆրանսերենը, սակայն դիմումները կարող են հանձնվել անդամ երկրների պաշտոնական լեզուներից որևէ մեկով: Դիմումի ընդունելիության պարագային պետք է կիրառվի Դատարանի պաշտոնական լեզուներից որևէ մեկը: Սակայն Պալատի/Մեծ պալատի նախագահը կարող է որոշում կայացնել տվյալ գործի քննարկումը շարունակել դիմումի ներկայացման լեզվով:

Եվրոպական դատարան դիմելու համար սահմանված դիմումի ձևը կարող եք գտնել www.coe.int, www.coe.am կայք էջերում:


*Դատարանի հասցեն է՝
The Registrar
European Court of Human Rights
Council of Europe
F-67075 Strasbourg Cedex*

Կանանց իրավունքների պաշտպանության միջազգային մեխանիզմ է նաև կանանց նկատմամբ խտրականության բրորո ձևերի վերացման կոմիտեն (CEDAW), որի գործունեությանն ու իրավասությանը կարող եք ծանոթանալ www.un.org/womenwatch/daw/cedaw/committee.com կայքում:




ՆՈՐՄԱՏԻՎ-ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. ՀՀ Սահմանադրություն
2. ՀՀ աշխատանքային օրենսգիրք
3. ՀՀ ընտանեկան օրենսգիրք
4. ՀՀ քաղաքացիական օրենսգիրք
5. ՀՀ քրեական օրենսգիրք
6. «Առողջապահության մասին» ՀՀ օրենք
7. «Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենք
8. «Պետական նպաստների մասին» ՀՀ օրենք
9. «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենք
10. «Բնակչության սանիտարահամաձարակային անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենք
11. «Դեղերի մասին» ՀՀ օրենք
12. «Թմրամիջոցների և հոգեմետ նյութերի մասին» ՀՀ օրենք
13. «Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենք
14. «Հոգեբուժական օգնության մասին» ՀՀ օրենք
15. «Մարդու իմունային անբավարարության վիրուսից առաջացած հիվանդության կանխարգելման մասին» ՀՀ օրենք
16. «Մարդուն օրգաններ կամ հյուսվածքներ փոխպատվաստելու մասին» ՀՀ օրենք



17. «Մարդու վերարտադրողական առողջության և վերարտադրողական իրավունքների մասին» ՀՀ օրենք
18. «Քաղաքացիական կացության ակտերի մասին» ՀՀ օրենք
19. «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենք
20. Պետրոսյան Գևորգ, Հայաստանի Հանրապետության աշխատանքային իրավունք, ընդհանուր մաս, ԵՊՀ հրատ., Ե., 2009
21. Ղարախանյան Գ., Հայաստանի Հանրապետության ընտանեկան իրավունք, խմբ.՝ Տ. Կ. Բարսեղյան, Եր. համալս. հրատ., Ե., 2005
22. ՀՀ քաղաքացիական իրավունք, խմբ. Ռ. Գ. Պետրոսյան, Գ. Հ. Ղարախանյան, ԵՊՀ հրատ., 2-րդ մաս, Ե., 2001
23. ՀՀ սահմանադրական իրավունք, դասագիրք բուհերի համար, ԵՊՀ, 2003
24. ՀՀ սոցիալական ոլորտի իրավական ակտերի ժողովածու, Ե., 2004.
25. Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքներ, Ասբյորն Էյդեի, Կատարինա Կրաուզեի և Ալան Ռոզասի խմբագրությամբ, Ե., 2009, դասագիրք 2-րդ, լրամշակված հրատարակություն
26. GRINGO ցանցում ընդգրկված ՀԿ-երի կողմից մշակված «Փախստականների ուղեցույց», 2008
27. ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի տարեկան զեկույցներ, 2005, 2007, 2008, 2010



ՁԵՐ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻՆ ԱՌՆՉՎՈՂ ՀԱՐՑԵՐՈՎ ԿԱՐՈՂ ԵՔ ԴԻՄԵԼ

Պետական մարմիններ

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն
Հասցե՝ 0010, Երևան, Հանրապետության հրապարակ, Կառավարական
տուն 3

Ընտանիքի, կանանց և երեխաների հիմնահարցերի վարչություն
Հեռ.՝ 56-53-21, էլ.փոստ՝ lala.ghazaryan@mss.am

Կանանց հիմնահարցերի բաժին
Հեռ.՝ 56-53-21, էլ.փոստ՝ armine.tanashyan@mss.am

Մոր և մանկան առողջության պահպանման վարչություն
Հեռ.՝ 52-15-59, էլ.փոստ՝ ksaribekyan@moh.am

Մայրական և վերարտադրողական առողջության պահպանման բաժին
Հեռ.՝ 52-15-59, էլ.փոստ՝ gavagyan@moh.am

ՀՀ մարդու իրավունքների պաշտպան
Հասցե՝ 375002, Երևան, Պուշկինի փող. 56ա
Հեռ.՝ 537651
էլ. փոստ՝ ombuds@ombuds.am

ՀՀ հանրային պաշտպանի գրասենյակ
Հասցե՝ Երևան, Կորյունի 8, բն. 5
Հեռ.՝ 58-60-15,

Օգտակար հղումներ

ՀՀ նախագահ՝ www.president.am

ՀՀ կառավարություն՝ www.gov.am


ՀՀ Ազգային ժողով՝ www.parliament.am

ՀՀ սահմանադրական դատարան՝ www.concourt.am, www.court.am

ՀՀ նախարարություններ

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն՝ www.mss.am


ՀՀ առողջապահության նախարարություն՝ www.moh.am



- ՀՀ արդարադատության նախարարություն՝ www.justice.am
- ՀՀ արտաքին գործերի նախարարություն՝ www.armeniaforeignministry.com
- ՀՀ բնապահպանության նախարարություն՝ www.mnp.am
- ՀՀ գյուղատնտեսության նախարարություն՝ www.minagro.am
- ՀՀ էկոնոմիկայի նախարարություն՝ www.mineconomy.am
- ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարություն՝ www.minenergy.am
- ՀՀ կրթության և գիտության նախարարություն՝ www.edu.am
- ՀՀ մշակույթի նախարարություն՝ www.mincult.am
- ՀՀ պաշտպանության նախարարություն՝ www.mil.am
- ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն՝ www.msy.am
- ՀՀ սփյուռքի նախարարություն՝ www.mindiaspora.am
- ՀՀ տարածքային կառավարման նախարարություն՝ www.mta.gov.am
- ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն՝ www.mtc.am
- ՀՀ քաղաքաշինության նախարարություն՝ www.mud.am
- ՀՀ ֆինանսների նախարարություն՝ www.minfin.am

Պետական կառավարման այլ մարմիններ

- Հայաստանի կենտրոնական բանկ՝ www.cba.am
- Ազգային անվտանգության ծառայություն՝ www.sns.am
- Անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե՝ www.cadastre.am
- Հայաստանի փրկարար ծառայություն՝ www.ema.am
- Հարկային պետական ծառայություն՝ www.taxservice.am
- Մաքսային պետական կոմիտե՝ www.customs.am
- ՏԿՆ միգրացիոն գործակալություն՝ www.dmr.am
- Պետական գույքի կառավարման վարչություն՝ www.privatization.am
- Քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչություն՝ www.aviation.am
- ՀՀ գլխավոր դատախազություն՝ www.genproc.am
- ՀՀ ոստիկանություն՝ www.police.am



Հեղինակ-փորձագետներ



ԻՌԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ

Իռեն Վախթանգի Սարգսյանը Մոսկվայի նոր իրավաբանական ինստիտուտի Երևանյան մասնաձյուղի, ինչպես նաև Երևանի «Մանց» համալսարանի շրջանավարտ է: Իրավաբանական գիտությունների թեկնածու է:

Աշխատում է ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանում՝ որպես դատավորի օգնական: Կատարել է դասախոսական աշխատանք: Անդամակցում է փաստաբանների պալատին: Հանրային խորհրդի Պետաիրավական հարցերի հանձնաժողովի անդամ է:


Հեղինակ է 4 գիտական հոդվածների, որոնք իրապարակվել են տարբեր գիտական հանդեսներում:

Ուսանել և վերապատրաստվել է մի շարք միջազգային ծրագրերով, այդ թվում՝ Հնդկաստանի ԹԱԹԱ ինստիտուտում, Քաղաքական դասընթացների Երևանյան դպրոցում, Եվրոպայի խորհրդի ամառային ժողովրդավարական համալսարանում:



ԼԻԱՆԱ ՄԱՆՈՒԿՅԱՆ

1996 թ. ավարտել է Երևանի «Գլաժոր» կառավարման համալսարանի միջազգային իրավունք ֆակուլտետը՝ ստանալով իրավաբան-միջազգայնագետի որակավորում: 1999 թ. մինչ օրս ՀՀ փաստաբանների պալատի անդամ է: Մասնագիտացել է քաղաքացիական և ընտանեկան իրավունքների պաշտպանության ոլորտներում: Մասնակցել է միջազգային վերապատրաստման ծրագրերի: Փորձագիտական ուսումնասիրություններ և վերլուծություններ է կատարել մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում, մասնակցել է մարդու իրավունքների իրազեկման մի շարք ծրագրերի:




ՄԵՐԻ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Մերի Խաչատրյանը Երևանի տնտեսա-իրավագիտական համալսարանի իրավաբանական ֆակուլտետի շրջանավարտ է: 2000 թ. ապրիլից աշխատում է «Ա. Դ. Սախարովի անվ. մարդու իրավունքների պաշտպանության հայկական կենտրոն» հասարակական կազմակերպությունում՝ որպես իրավաբան: Առավելապես մասնագիտացել է քաղաքացիական, սոցիալական և վարչական ոլորտներում: 2005 թվականից մինչ օրս իրավաբանական ծառայություններ է մատուցում նաև բնապահպանական ոլորտի հասարակական կազմակերպություններին և ՀՀ-ում գործող Օրիուս կենտրոններին: Ընգրկված է իրավունքի իրազեկման մի շարք մարզային ծրագրերում: 2006 թ. նոյեմբերից փաստաբան է, ՀՀ փաստաբանների պալատի անդամ:



ԼԻԶԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Ավարտել է Երևանի պետական համալսարանի իրավաբանական ֆակուլտետը, Հայաստանում Ամերիկյան համալսարանը և Ֆլեթչերի իրավունքի և դիվանագիտության դպրոցը: 1999 թվականից մինչ օրս ՀՀ փաստաբանների պալատի փաստաբան է, աշխատել է տարբեր հասարակական կազմակերպություններում՝ մարդու իրավունքների պաշտպանության բնագավառում: Մասնագիտանում է քաղաքացիական, միջազգային իրավունքի, կանանց իրավունքների, ինչպես նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարան դիմելու բնագավառներում: Մասնակցել է մարդու իրավունքներին վերաբերող տասնյակ սեմինարների և կոնֆերանսների, վերապատրաստում է անցել ՄԱԿ-ում:



ԱՐՄԱՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Ավարտել է Երևանի «Գլաճոր» կառավարման համալսարանը՝ ստանալով իրավաբան-միջազգայնագետի որակավորում: Աշխատել է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության իրավաբանական ինստիտուտում՝ որպես բաժնի վարիչ, այնուհետև տեղափոխվել է դատարանների նախագահների խորհուրդ՝ որպես ավագ խորհրդական, և ղեկավարել է Հայաստանում առաջին անգամ ստեղծված դատավորների վերապատրաստման կենտրոնը: Ակտիվորեն ընդգրկված է եղել դատաիրավական բարեփոխումների գործընթացներում: Աշխատել է նաև ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում:


Բազմաթիվ դասընթացներ է վարել մարդու իրավունքների իրացման և պաշտպանության խնդիրների վերաբերյալ:

2007 թվականից անդամակցում է ՀՀ փաստաբանների պալատին:

Վերապատրաստվել է մի շարք միջազգային ծրագրերով:

Որպես անկախ իրավագետ-փորձագետ մասնակցել է օրենքների փորձաքննության, ինչպես նաև կազմակերպությունների կարողությունների զարգացման և կառավարման աշխատանքներին:

Հեղինակ է 7 գիտական հոդվածների, որոնք հրատարակվել են գիտական հանդեսներում: Հայաստանում առաջին անգամ հրատարակված «Դատավորի սեղանի գիրք» ձեռնարկի համահեղինակն է:




ԳԱՅԱՆԵ ՄԱՐՈՒՔՅԱՆ

2000 թ. ընդունվել է ԵՊՀ իրավաբանական ֆակուլտետը, 2010 թ. ստացել է իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան, իսկ 2013 թ. ԲՈՀ-ի կողմից շնորհվել է դոցենտի գիտական կոչում: Աշխատել է ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում նախ որպես քաղաքացիների ընդունելության բաժնի մասնագետ, այնուհետև՝ որպես քաղաքացիական, սոցիալ-տնտեսական և մշակութային իրավունքների բաժնի ավագ մասնագետ:


Դասավանդում է ՀՊՃՀ փիլիսոփայության, հասարակագիտության և իրավագիտության ամբիոնում, ինչպես նաև հայկական պետական մանկավարժական համալսարանում:

ՀՀ փաստաբանների պալատի անդամ է 2012 թ-ից:



Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Առաջաբան.....	3
ԸՆՏԱՆԻՔԸ ԵՎ ԿԱՆԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ.....	5
ԱՄՈՒՍՆՈՒԹՅՈՒՆ	6
Ամուսնության կնքման կարգը և պայմանները	7
Ամուսնության գրանցումը	7
Ամուսնություն օտարերկրյա քաղաքացիների, քաղաքացիություն չունեցող անձանց, օտարերկրյա պետությունում մշտապես բնակվող ՀՀ քաղաքացիների հետ	9
Ամուսինների իրավունքները և պարտականությունները	10
Անձնական իրավունքներ.....	10
Գույքային իրավունքներ.....	11
Ընդհանուր համատեղ գույքի բաժանումը	12
Ամուսինների՝ միմյանց ապրուստի միջոցներ հոգալու պարտավորությունները.....	13
Ամուսնական պայմանագիր.....	14
Ամուսնության դադարումը	15
Ամուսնալուծություն	16
Ամուսնալուծությունը ՔԿԱԳ մարմիններում.....	16
Ամուսնալուծությունը դատական կարգով	17
Ամուսնության անվավերությունը	19
ԾՆՈՂՆԵՐԻ ԵՎ ԶԱՎԱԿՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.....	21
Երեխայի սերման փաստի հաստատումը.....	24
Երեխայի լքման փաստի հաստատումը	25
Երեխայի անվան և ազգանվան որոշումը.....	26
Ծնողական իրավունքների սահմանափակումը և դրանցից զրկումը.....	26
Ծնողների ու զավակների ալիմենտային պարտավորությունները	29
Ընտանիքի մյուս անդամների ալիմենտային պարտավորությունները.....	30
Ալիմենտի վճարման կարգը.....	31



ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅՈՒՆ 34

Երեխաների որդեգրումը (դատերագրումը)..... 36

Երեխայի խնամքի հանձնումը..... 40

ԿԱՆԱՆՑ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ 43

Աշխատանքային հարաբերությունների ծագումը 44

Տեղեկատվություն ստանալու իրավունքը 46

Աշխատանքային պայմանագիր 46

Փորձաշրջան 48

Աշխատանքային պայմանները 49

Աշխատաժամանակը և հանգստի ժամանակը 50

- Աշխատաժամանակը 50
- Հանգստի ժամանակը 52

ԱՐՁԱԿՈՒՐԴ 53

Արձակուրդի տրամադրման կարգը..... 54

Ամենամյա արձակուրդի տեղափոխումը 55

Ամենամյա արձակուրդի վճարումը..... 56

Չվճարվող արձակուրդ 56

Ուսումնական արձակուրդ..... 56

Հղիության և ծննդաբերության արձակուրդ 57

Երեխայի խնամքի լրացուցիչ արձակուրդ 58

Անաշխատունակության թերթիկով վճարումները 58

Աշխատավարձ 58

Աշխատանքային հարաբերությունների դադարումը 60

Աշխատանքային պայմանագրի լուծման կարգը 63

Աշխատանքային պայմանագրի լուծումը բացառող հանգամանքները..... 65

Կազմակերպության վերակազմակերպումը 67


Արձակման նպաստ և վերջնահաշվարկ 67

Աշխատանքային վեձեր..... 68

- Աշխատանքային վեձերով ծախսեր..... 69
- Աշխատանքային հարաբերությունների դադարման վերաբերյալ վեձերը 70
- Պահանջի իրավունքը աշխատանքից անօրինական ազատելու դեպքում 70
- Աշխատանքային վեձը քննող մարմինը 70
- Աշխատանքային վեձի քննության ժամկետը 71
- Պահանջ ներկայացնելու ժամկետը և դատական ծախսերը..... 71

ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՁԵՌՆԵՐԵՑՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՆԵՐՈՒՄ 73

Ո՞ր դիմել կազմակերպության պետական հաշվառման կամ գրանցման համար..... 74




Ինչպիսի՞նք պահանջների պետք է համապատասխանեն ներկայացվող փաստաթղթերը	75
Ի՞նչ ժամկետներում է իրականացվում պետական գրանցումը կամ պետական հաշվառումը.....	76
Ի՞նչ պետք է բովանդակի դիմումը.....	77
Իրավաբանական անձանց տեսակները.....	78
Իրավաբանական անձի ստեղծումը.....	79
Իրավաբանական անձանց պետական գրանցումը.....	80
Իրավաբանական անձի լուծարումը.....	81
Ինչպե՞ս սկսել շահույթ հետապնդող կազմակերպության գրանցումը.....	82
Անհատ ձեռնարկատիրոջ հաշվառման պայմանները.....	83
Անհատ ձեռնարկատիրոջը հաշվառումից հանելը.....	84
Անհատ ձեռնարկատիրոջը հաշվառումից հանելու ժամկետները.....	85

ԿԻՆԸ ԵՎ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ 87

Կանանց իրավունքները բժշկական օգնություն և սպասարկում, ինչպես նաև տեղեկատվություն ստանալիս	89
Տեղեկացված համաձայնություն	91
Կանանց օրգաններ և/կամ հյուսվածքներ փոխպատվաստելը	91
Կանանց անձնական կյանքի անձեռնմխելիության իրավունքը.....	94
Վերարտադրողական առողջության իրավունքը.....	96
Արհեստական բեղմնավորում.....	97
Փոխնակ մայրություն.....	97
Հղիության արհեստական ընդհատում (աբորտ).....	98
ՄԻԱՎ-ի խնդիրը	99
Սահմանափակ հնարավորություններով անձանց իրավունքները	101
Հոգեբուժական օգնության տեսակները.....	103
Քաղաքացուն անգործունակ կամ սահմանափակ գործունակ ձանաչելը.....	105
• Դիմումի քննության կարգը	106
Բժշկական ծառայությունների փոխհատուցման համավճարային մեխանիզմների մասին.....	107
• Բնակչության անմիջական մասնակցությունը բժշկական օգնության և սպասարկման ֆինանսավորման գործում	107
• Ոչ պաշտոնական համավճար	108
• Պաշտոնական համավճար	108

ԲՈՒՆՈՒԹՅՈՒՆԸ ԸՆՏԱՆԻՔՈՒՄ ԵՎ ԿԱՆԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ..... 111

Ի՞նչ է բռնությունը	112
--------------------------	-----




ԸՆՏԱՆԵԿԱՆ ԲՈՒՆՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ	113
Հոգեբանական բռնություն	113
Ֆիզիկական բռնություն	113
Սեռական բռնություն	113
Տնտեսական բռնություն.....	114
Ինչ է կանխարգելիչ կամ պաշտպանական կարգադրությունը.....	115
Ո՞ւմ կարելի է դիմել բռնության դեպքում	115
Ինչ պատասխանատվություն է նախատեսված ընտանեկան բռնության համար	116
Թրաֆիքինգի գոհերի պաշտպանության ներպետական մեխանիզմները	118

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՍՈՒԲՍԻԴԱՎՈՐՈՒՄ (ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆ)..... 121

Սոցիալական աջակցություն	122
Սոցիալական աջակցություն տրամադրելու մասին որոշումների կայացումը և դրանց բողոքարկման կարգը	125
Պետական նպաստներ	127
Ընտանեկան նպաստ և միանվագ դրամական օգնություն	128
• Փաստաթղթերի ընդունման և քննարկման ընթացակարգը	129

ԿԻՆԸ ԵՎ ԺԱՌԱՆ ԳԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ 135

Ժառանգության հասկացությունը, ժառանգներ	136
Ժառանգության հիմքերը, ըստ օրենքի ժառանգություն.....	136
Ժառանգություն ըստ կտակի, կտակի ձևը, կտակի նոտարական վավերացումը.....	138
Ովքեր կարող են հանդես գալ կտակ կազմելիս որպես վկա.....	139
Ժառանգների բաժինները կտակված գույքում, պայմանով կտակ, ենթաժառանգներ նշանակելը, ժառանգությունից զրկելը.....	140
Կտակը վերացնելը, փոփոխելը և լրացնելը	140
Փակ կտակ.....	141
Նոտարի վավերացրած կտակներին հավասարեցված կտակները	141
Կտակի անվավերությունը	142
Կտակը կատարելը: Կտակակատարը.....	142
Կտակային հանձնարարություն և կտակային հանձնարարություն կատարելը.....	143
Կտակային հանձնարարությունից հրաժարվելու իրավունքը.....	145
Ժառանգության պարտադիր բաժնի իրավունք	145
Ժառանգությունը ներկայացման իրավունքով	145
Անարժան ժառանգներին ժառանգությունից մեկուսացնելը	146
Ամուսնու իրավունքները ժառանգության դեպքում	146
Որդեգրվածների և որդեգրողների ժառանգությունը.....	147
Սաղմնավորված, սակայն դեռ չծնված կամ անչափահաս ժառանգի չահերի պաշտպանությունը ժառանգությունը բաժանելիս	147



Անժառանգ գույքի տնօրինումը 147

Ժառանգությունն ընդունելու իրավունքը փոխանցելը
(ժառանգության տրանսմիսիա) 148

Ժառանգության բացումը, բացման ժամանակը և վայրը 148

Ըստ օրենքի ժառանգությունն ընդունելը, ժամկետները 149

Ժառանգություն ձևակերպելը, ժառանգության իրավունքի վկայագիր,
ժառանգության իրավունքի վկայագիր տալու ժամկետը 150

Ժառանգությունն ընդունելը սահմանված ժամկետի ավարտից հետո..... 151

Ժառանգությունից հրաժարվելու իրավունք, ժառանգությունից
հրաժարվելը՝ հօգուտ այլ անձի..... 151

Ժառանգության բաժինների ավելացումը..... 152

Ժառանգության բաժանելը, ժառանգության նկատմամբ ժառանգների
ընդհանուր սեփականությունը..... 153

Ժառանգությունը բաժանելիս դրա զանգվածի մեջ մտնող որոշակի գույքի
նկատմամբ ժառանգի նախապատվության իրավունքը 153

Ժառանգության բաժանելը ժառանգների համաձայնությամբ և դատարանով 154

Ժառանգությունը պահպանելը և կառավարելը..... 155

Ժառանգության հետ կապված ծախսերը հատուցելը 156

Պարտատերերի կողմից պահանջներ ներկայացնելու կարգը և
ժառանգների պատասխանատվությունը 156

Ընդհանուր համատեղ սեփականության ներքո գտնվող
գույքի ժառանգությունը..... 157

Աշխատավարձի, թոշակների, նպաստների և վնասի հատուցման
վճարների չմուծված գումարների ժառանգությունը..... 158

Սահմանափակ շրջանառունակություն ունեցող գույքը ժառանգելը 158

Պետական պարգևներ և շքանշաններ ժառանգելու անթույլատրելիությունը..... 158

Հուշանշանների և այլ նշանների հավաքածուներ ժառանգելը..... 159

Ժառանգության զանգվածի մեջ չեն մտնում..... 159

**ԿԱՆԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ԸՍՏ ՔՐԵԱԿԱՆ
ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ 161**

Սեռական անձեռնմխելիության և սեռական ազատության դեմ
ուղղված հանցագործություններ..... 162

Իճնչ է սեռական հանցագործությունը..... 162


Ո՞վ կարող է հանդես գալ որպես տուժող..... 163

Ո՞վ կարող է քրեական պատասխանատվության ենթարկվել
բռնաբարության համար..... 163

Է՞րբ է սեռական ակտը համարվում կամավոր 163

Իճնչ է սեքսուալ բնույթի բռնի գործողությունը 164


Ո՞վ կարող է հանդես գալ որպես տուժող..... 164



Ի՞նչ է սեռական հարաբերության, համասեռամոլության կամ սեքսուալ բնույթի այլ գործողություններ կատարելուն հարկադրելը	164
Հղիության ընդհատում	165
Ո՞ր հաստատություններն իրավունք ունեն կատարելու հղիության արհեստական ընդհատում	166
Ինպե՞ն է կատարվում հղիության ընդհատումը	166
Ի՞նչ պատասխանատվություն է սահմանված ապօրինի արբորտի համար.....	166
Անձի իրավունքների և ազատության դեմ ուղղված հանցագործություններ	167
Անձի ազատության, պատվի և արժանապատվության դեմ ուղղված հանցագործություններ	168
Թրաֆիքինգ	169
• Ո՞րն է համարվում շահագործում	170
Ազատությունից ապօրինի զրկելը	172
Պռոնկության և պռոնկության մեջ ներգրավելու համար սահմանված պատասխանատվությունը	172
Կալանքի տակ գտնվող և դատապարտված կանանց իրավունքները	174
Ի՞նչ պայմաններում են պահվում ազատությունից զրկված կանայք.....	175
• Ի՞նչ իրավունքներ և պարտականություններ ունի դատապարտյալը	175
Խրախուսման ինչպիսի՞ միջոցներ են կիրառվում դատապարտյալի նկատմամբ	177
Տոյժի ինչպիսի՞ միջոցներ են կիրառվում դատապարտյալի նկատմամբ	177
Ինչպիսի՞ն պետք է լինի դատապարտյալին հատկացված բնակելի տարածքը	178
• Դատապարտյալի հագուստը, սնունդը և այլ պայմանները	178
• Դատապարտյալի մեկնումի իրավունքը	178
Կանանց և երեխաների համատեղ կյանքը բանտում.....	179
Դատապարտյալի կրթությունը	180
Տեսակցությունների իրավունք	180

ԻՐԱՎԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԵՎ ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ 183

Իրավական պաշտպանության ազգային մեխանիզմները	184
• Տեղեկատվական իրավունք	184
• Տեղեկության տրամադրման կարգը	185
Վարչական բողոքարկում.....	185
• Վարչական մարմնին ուղղվող դիմումի ձևը	185
• Վարչական վարույթի իրականացման կարգը	186
• Վարչական ակտը և դրա տեսակները	186
• Վարչական ակտի ձևերը	186
Դատարան դիմելու իրավունքը	186



- Հայցադիմումի ձևը188
- Դատարան դիմելու համար վճարվող պետական տուրքերի չափը188
- Անվճար իրավաբանական օգնություն հանրային պաշտպանի գրասենյակի միջոցով.....189
- Կողմերի իրավունքները և պարտականությունները190

Իրավական պաշտպանության միջազգային մեխանիզմները191

Նորմատիվ-իրավական ակտերի և գրականության ցանկ 192

Ձեր իրավունքներին առնչվող հարցերով կարող եք դիմել 194

Տպագրությունը՝ օֆսեթ: Չափսը՝ 70x100 1/16:
Թուղթը՝ օֆսեթ: Ծավալը՝ 13 տպ. մամուլ:
Տպաքանակը՝ 2500 օրինակ:



ԶԱՆԳԱԿ
ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ՀՀ, 0051, Երևան, Կոմիտասի պող. 49/2
Հեռ.՝ (+37410) 23-25-28, ֆաքս՝ (+37410) 23-25-95
Էլ. փոստ՝ info@zangak.am
Էլ. կայքեր՝ www.zangak.am, www.book.am, www.dasagirq.am

ԻՐԱՎԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՈՒ ԿԱՆԱՆՑ ՅԱՄԱՐ

Իրավական տեղեկատվուի էլեկտրոնային տարբերակը տեղադրված է
«Միջազգային համագործակցության գերմանական ընկերություն»
ՍՊԸ-ի (GIZ GmbH) էլ. կայքում՝
www.giz.de/law-caucasus

«Ժողովրդավարության և իրավունքի կենտրոն»
հասարակական կազմակերպության կայքում՝
www.cdl.am